RAA
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
5
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Արքեպիսկոպոս Մեսրոպ Աշճյան (Մուղնի), պրոֆ. դր. Ռ. Հովհաննիսյան (Լոս Անջելես), պրոֆ. դր. Ա. Մութաֆյան (Փարիզ), պրոֆ. դր. Հ. Հոֆրիխսեր (Քայզերսլաութերն), պրոֆ. դր. ժ. Փիփըր (Ասխեն), դր. Գ. Գևոնյան (Փարիզ), պրոֆ. դր. Լ. Զեքիյան (Վենետիկ), պրոֆ. դր. Մ. Հասրաթյան (Երևան)

Աշխատությունը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ

RAA ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք Ե

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

MAYORS OF TIFLIS (TBILISI)

SAMVEL KARAPETYAN

МЭРЫ ТИФЛИСА (ТБИЛИСИ)

САМВЕЛ КАРАПЕТЯН

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 941(479.22)+941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Վր)+63.3(2Հ)
Կ-294

Կ-294 Կարապետյան Ս.
Թիֆլիսի քաղաքագլուխները
Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
հրատ., 2003, 128 էջ

Աշխատությունը ներկայացնում է Անդրկովկասի գլխավոր քաղաքներից մեկի՝ Թիֆլիսի քաղաքագլուխների պատմությունը: Հնարավորինս հանգամանորեն շարադրված է շուրջ 800 տարիների ընթացքում (ԺԲ դարից մինչև 1917 թ.) պաշտոնավարած 47 քաղաքագլուխների ինչպես կենսագրական, այնպես էլ պաշտոնավարության շրջանը լուսաբանող նյութերը: Ուշագրավ և հատկանշական է քաղաքագլուխներից 45-ի ազգությամբ հայ լինելու հանգամանքը: Քննության են առնված նաև քաղաքի կառավարմանն ու քաղաքային խորհրդին առնչվող նյութերը:

Հասցեագրվում է հայ և վրաց ժողովուրդների, Թիֆլիսի քաղաքաշինության զարգացման և ականավոր հայ գործիչների պատմությամբ հետաքրքրվող մասնագետներին և ընթերցող լայն շրջաններին:

The present work treats the history of the mayors of Tiflis, one of the main citites in Transcaucasia. It includes biographical data as well as materials regarding the period of the governance of 47 mayors who governed Tiflis for more than 800 years (from the XII c.-1917). It is interesting to note that 45 of the mayors were Armenians in origin. The work also investigates materials concerning the government of the city and the municipal council.

The book is addressed to the general reader as well as to specialists interested in the history of the Armenian and Georgian peoples, prominant Armenian personalities and the development of town planning and architecture in Tiflis.

Կ $\frac{0505000000}{703(02)-2003}$ ԳՄԴ 63.3(2Վր)+63.3(2Հ)

ISBN 5-8080-0520-5

©Սամվել Կարապետյան 2003
©«Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հասարակական կազմակերպություն (RAA)

Աշխատությունը հրատարակվում է
Ռազմիկ և Վիոլետ Թադևոսյանների
հովանավորությամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 5

ՆԱԽԱԲԱՆ 6
Մելիքների հասույթն ու արտոնությունները 8
Տփղիսի (Թիֆլիսի) բնակչությունը 9
Թիֆլիսը 1801-1840 թթ. 11
Թիֆլիսի կառավարումը 1840-1864 թթ. 12
Համքարների ապստամբությունը 14
Ազգային փոխհարաբերությունները քաղաքային խորհրդում (դումայում) 1880-ական թթ. վերջին և 1890-ական թթ. սկզբին 20
Քաղաքային վարչությունը 1890-ական թթ. 22
Ժամանակակից վրաց մամուլը Թիֆլիս-Թբիլիսիի քաղաքագլուխների մասին 26

ՏՓՂԻՍԻ (ԹԻՖԼԻՍԻ) ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ ԺԲ-ԺԳ ԴԱՐԵՐՈՒՄ 27
Վասակ ամիրա (շահապ) Արծրունի 27
Քուրդ ամիրա (շահապ) Արծրունի 27
Շաղին (Բաղին) 29

ՏՓՂԻՍԻ (ԹԻՖԼԻՍԻ) ԲԵՀԲՈՒԴՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ ԺԷ-ԺԸ ԴԱՐԵՐՈՒՄ 30
Մելիք Էնալ 30
Մելիք Բայանդուր 30
Մելիք Խոջա-Բեհբուդ 31
Մելիք Աշխարհբեկ 32
Մելիք Ավթանդիլ 32
Մելիք Ամիր Բեհբուդյանց 32
Մելիք Ասլամազ Ամիրյան Բեհբուդյանց 32
Մելիք Գիորգ Ասլամազյան Բեհբուդյանց 33
Մելիք Զուրաբ Գիորգյան Բեհբուդյանց 33
Մելիք Աշխարհբեկ Բ. Բեհբուդյանց 34
Մելիք Աղա Աշխարհբեկյան Բեհբուդյանց 35
Մելիք Անտոն 37
Մելիք Սահակ Շերգիլյանց 37
Մելիք Ավետիք Աղայան Բեհբուդյանց 37
Մելիք Դարչի Ավետիքյան Բեհբուդյանց 38

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1840-1875 ԹԹ.) 45
Հովհաննես (Իվան) Իզմիրյանց 45
Ստեփան Գաբրիելյան Խատիսյանց 45
Մովսես Տեր-Գրիգորյանց (Տեր-Գրիկուրով) 45
Հովհաննես Սիմոնյանց Շաղինյանց 46
Թովմա Դավթյան Փրիղոնյանց 48
Զաքարիա Ստեփանյան Ամիրաղյանց 48
Հովսեփ Աֆանասյան Միրիմանյանց 48
Ավետիք Աստվածատրյան (Բոգդանի) Սվեչնիկով 48
Սողոմոն Դավթյան Սարաջև 49
Անդրեյ Դավթյան Մանանով 49
Վարդան Աստվածատրյան Արշակունի 50
Սողոմոն Զաքարյան Աբիսողոմյանց 52
Սողոմոն Միրիմանյան Միրիմանյանց 53
Գևորգ (Եգոր) Գրիգորյան Փրիղոնյանց 53
Գալուստ Հարությունյան Շերմազան-Վարդան-յանց 54
Երեմիա Գևորգյան Արծրունի 63
Նիկողայոս Հովհաննիսյան Ալաղաթյանց 67
Դմիտրի Թումանյանց 67
Յազոն Դմիտրյան Թումանյանց 68

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1875-1917 ԹԹ.) 70
Դմիտրի Իվանի Ղիփիանի 70
Անտոն Սողոմոնյան Ղորղանյանց 72
Ալեքսանդր Ստեփանյան Մատինյանց 73
Նիկողայոս Արղության-Երկայնաբազուկ 80
Պողոս Ալեքսանդրյան Իզմայիլյանց 83
Գեվորգ Գրիգորյան Եվանգուլյանց 89
Ալեքսանդր Միքայելյան Արղության-Երկայնա-բազուկ 91
Քրիստափոր Ավակումյան Վերմիշյանց 92
Վասիլի Նիկոլայևիչ Չերքեզով 95
Ալեքսանդր Հովհաննիսյան Խատիսյանց 98

ՎԵՐՋԱԲԱՆ 103
Անձնանունների ցանկ 108
Տեղանունների ցանկ 113
Օգտագործված գրականության ցանկ 115
Գունավոր լուսանկարների ցանկ 119

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սերունդներս, որ վայելում ու հպարտանում ենք անցյալներում արարված արժեքներով, պարտավորված ենք ճանաչել այդ արժեքների հեղինակներին:

Տփղիս (Թիֆլիս, Թբիլիսի) քաղաքը կերտող առաջին դեմքերին՝ քաղաքագլուխներին ճանաչելը, նրանց մաքառումներին ու ճակատագրերին տեղյակ լինելը հարգանքի մի յուրատեսակ դրսևորում է, որ սերունդներն ի վիճակի են ու պարտավոր մատուցել նրանց հիշատակին:

Պարտքի ճիշտ այս գիտակցումն է, որ պատճառ և խթան է հանդիսացել սույն աշխատության կայացման համար:

Որևէ քաղաքի կառուցապատումը, քաղաքաշինության օրենքների համեմատ զարգացումն ու բարգավաճումն ուղղակիորեն պայմանավորված, կախված ու շաղկապված է քաղաքի առաջին դեմքի՝ քաղաքագլխի ծավալած գործունեության հետ:

Աշխարհիս շատ քաղաքներ քաղաքաշինական խնդիրների իրենց մտածված, հաճախ ինքնատիպ ու յուրահատուկ լուծումներով, աչք շոյող արտաքինով նախ և առաջ ու մասնավորապես պարտական են իրենց իսկ քաղաքագլուխներին:

Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին, որը Անդրկովկասի հնագույն ու խոշոր քաղաքներից է, իր պատմության վերջին շուրջ մեկ հազարամյակում կառավարվել է իրար հաջորդած ու հարազատ քաղաքին անհունորեն նվիրված այնպիսի քաղաքագլուխներով, որ նման գործիչների գոյությունն իրավամբ բարեբախտություն կարող էր համարվել ցանկացած քաղաքի համար:

«Կովկասի Փարիզ»՝ ահա այն բնութագիրը, որով հաճախ հիշվում էր Թիֆլիսն արդեն ԺԹ դարի վերջին, և դա այն դեպքում, երբ մեկ դար առաջ գրավվելով Աղա-Մուհամմատ խանի կողմից՝ ամբողջովին թալանվել, հրկիզվել ու ավերվել էր:

Դեռևս 1870-ականներին նկատվել ու շեշտվել է այն հանգամանքը, թե Տփղիս-Թիֆլիսը «Հայաստանի նախասենյակը, գաւիթն է»-ր և որ «Հայը խլեց Թիֆլիսը ո՛չ վրացոց, այլ պարսից, թուրքաց և գերմանացոց ձեռքէն և այդ՝ոչ թէ անօրէնութեամբ, նենգ հնարներով ու մռայլ գիշերուայ ժամանակ, ո՛չ, ո՛չ, այլ արդար վաստակով, արդար փողերով, արթուն խելքով ու պայծառ օրուայ միջոցին»:

ԺԹ-Ի դարերում Թիֆլիսում ստեղծված հասարակական, վարչական, բնակելի ու ինժեներական կառույցներն իրենց ճարտարապետական ու գեղարվեստական հատկանիշներով նշված ժամանակաշրջանի համար իրավամբ ներկայանում են իբրև կառուցողական մտքի համամարդկային ձեռքբերումներ ու նվաճումներ:

Այն փաստը, որ այսօր տերը չենք բազում դարերի ընթացքում քրտնաթոր աշխատանքի շնորհիվ արարած բյուր արժեքների, առիթ, պատճառ ու անհրաժեշտություն ունենք սույն աշխատությամբ երևույթի հետադարձ քննական հայացքի:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԺԲ դարի երկրորդ կեսից մինչև 1917 թ., ահա այն ժամանակահատվածը, որի ընթացքում Տփղիսում պաշտոնավարած 47 քաղաքագլուխների պատմությունը ներկայացնում ենք ստորև: Նշված ժամանակաշրջանը կարելի է ներկայացնել երեք բաժիններով.

1. ԺԲ-ԺԳ դարեր, երբ քաղաքագլուխները հայտնի էին քաղաքի շահաբ կամ ամիրա կոչումներով.

2. ԺԷ դարի սկզբներից մինչև 1801 թ., երբ քաղաքը կառավարվում էր մելիքի կամ մելիք-տանուտիրոջ (վրաց՝ მამასახლისი=քաղաքի հայր, տանուտեր) կողմից.

3. 1840-1917 թթ., երբ այդ պաշտոնը ուղղակի կերպով հայտնի էր քաղաքագլուխ (ռուս՝ городской голова) կոչումով:

Ամենայն հավանականությամբ և համաձայն առկա որոշ նյութերի՝ մինչև ԺԲ դարի երկրորդ կեսը և ԺԳ-ԺԷ դարերի միջակայքում ևս Տփղիս-Թիֆլիսն ունեցել է իր քաղաքագլուխները՝ իշխանը, ամիրապետը, ավագը, մելիքը, մելիք-տանուտերը, բայց, ցավոք, այդպիսի տվյալները խիստ կցկտուր են, և այդ աղբյուրների հանրագումարը, այնուամենայնիվ, քննվող հարցի առնչությամբ ամբողջական պատկեր չի ապահովում[1], ուստի խնդրո առարկա նյութի քննությունը սկսում ենք միայն ԺԲ դարի երկրորդ կեսից:

Նշված ժամանակաշրջանում և մինչև ԺԲ դարի վերջը Տփղիսի ամիրայության պաշտոնում հանդես են եկել Մահկանաբերդի Արծրունյաց իշխանական տան ներկայացուցիչները: Այդ շրջանում միմյանց հաջորդել են Վասակ և Քուրդ ամիրա եղբայրները:

Տևական ընդմիջումից հետո՝ միայն ԺԷ դարի սկզբներին, մելիքի կոչումով երևան են գալիս Տփղիս քաղաքի և համանուն գավառի կառավարումը ստանձնած նոր դեմքեր՝ Բեհբուդյան տան շառավիղները:

Գրավոր բազմաթիվ աղբյուրներ փաստում են, որ Բեհբուդյանները քաղաքի կառավարումն իրենց ձեռքն էին առել առնվազն ԺԷ դարի կեսերից, սակայն, համաձայն տոհմի վերջին ներկայացուցիչ մելիք Դարչիի՝ 1802 թ. մայիսի 21-ին գեներալ Կնորինգին հղած մի գրության՝ նրանք քաղաքի մելիքության պաշտոնը ստանձնել էին սկսած միայն 1714 թ-ից. «300 տարի է, ինչ հայ ժողովրդի պետականության դադարումից հետո մեր նախնիները գաղթել են Թիֆլիս: Այդ ժամանակներից մինչ այժմ տարբեր իշխանությունների օրոք մենք մշտապես հարգանք ենք վայելել. 1714 թ-ից հետո վրաց թագավորները մեր նախնիներին հաստատել են որպես մելիք, մամասախլիս և նացվալ. տարբեր ժամանակներում, երբ Վրաստանը ենթարկվել էր Թուրքիայի և Պարսկաստանի բռնատիրությանը նրանք ոչ միայն չէին զրկվել պատիվներից և կոչումներից, այլև իրենց աշխատանքի, հերոսության և ջանասեր ծառայության համար տիրապետողներից հաստատվել էին իրենց դիրքերում, ինչպես վկայում են թուրքական սուլթանի, պարսից շահերի և վրաց թագավորների հրովարտակները...»[2]:

---

1. Օրինակ, հետազոտող Վեյդենբաումը նշել է, որ քաղաքի մելիքի գոյությունը փաստված է վրացական ԺԵ-ԺՋ դարերի վավերագրերում և ի մասնավորի՝ 1684 թ.: Նկարագրելով թագավորության շրջանի Թիֆլիսը՝ Վեյդենբաումը նշել է. «Ինչպես երևում է, քաղաքի գլխավոր դեմքը մելիքն էր: 15-16-րդ դդ. վրացական վավերագրերից պարզվում է, որ նրա ազդեցության ներքո գտնվում էր ոչ միայն Թիֆլիսը, այլ նաև թիֆլիսյան հողերը, այսինքն՝ մերձակա գյուղերը: Նրա պաշտոնը հաստատում էր թագավորը: Թիֆլիսյան հողերի բոլոր ազնվականներն ու ոչ ազնվականները, ասված է Շահ Սուլեյմանի մի հրամանագրում (1684 թ.), պետք է ճանաչեն մելիքին, ենթարկվեն նրա պահանջներին ու կարգադրություններին և չխուսափեն թագավորի շահերին ծառայելուց» (բնագրում՝ “Главным лицом в городе был, по-видимому, мелик. Из грузинских актов 15 и 16 столетий видно, что в его ведении находился не только Тифлис, но и тифлисския земли, т. е. окрестныя селения. Он утверждался в должности царем. Все знатные и незнатные жители тифлисских земель, сказано в одном повелении шаха Сулеймана (1684 г.), должны признавать мелика, повиноваться его требованиям и распоряжениям и не уклоняться от служения шахским интересам“. **Вейденбаум Е.**, Путеводитель по Кавказу, Тифлис, 1888, стр. 313): Տե՛ս նաև **Լեո**, Երկերի ժողովածու, չորրորդ հատոր, Երևան, 1984, էջ 78-79:

2. “Акты собранные Кавказскою археографическою коммиссиею”, том I, Тифлис, 1866, էջ 475 (բնագրում՝ “300 тому лет, как предки наши по прекращении состояния народа Армянскаго переселены в Тифлис. С того времени понине при разних сею землею владетельствах ползовались мы завсегда надлежащими почестями; потом 1714 года царями Грузинскими пожалованы предки наши в Тифлисе меликами, мамасахлисами и нацвалами; когда-жь Грузия в разныя времена подвергалась державам Турецким и Персидским, не толко не лишались они своих почестей и чинов; но по трудам своим, подвигам и усердной своей службе получали они от держав вищшее состояния своего утверждение, как явствует в грамотах Турецкаго султана, персидских шахов и Грузинских царей”): Տե՛ս նաև **Լեո**, Երկերի ժողովածու, չորրորդ հատոր, Երևան, 1984, էջ 78:

Բեհբուդյան մելիքները (մոքալաքներն առհասարակ) վայելում էին վրաց թագավորների հովանավորությունը: Նրանց շնորհած արտոնությունները հավասարազոր էին վրաց ազնվականությանը տրված արտոնություններին. «Հայք կամ մոքալաքներն մեծ արտօնութիւններ կը վայելէին Տփղիսի մէջ: Վրաց թագաւորներն անձամբ ամէն կերպ օժանդակութիւն կը մատուցանէին իրենց: Քրէական յանցանաց համար մոքալաքներն մահուան պատժի չէին ենթարկուեր, ինչպէս միւս հասարակ դասակարգն, այլ դրամական տուգանք միայն կը տուժէին: Վրաց Վախթանգ արքային օրինադրութեան համեմատ՝ մոքալաքի եւ Վրաց երկրորդ կարգի ազնուականի արեան գինը նոյն էր: Այն աղետալի ժամանակներն որ Վրաստան պարտաւոր էր Պարսից Շահերուն կոյսեր և պատանիներ տալ իբրեւ հարկ, որ արբաք կը կոչուէր, Հայք ազատ էին այս տուրքէն, դրամական վճարի փոխարէն: Հայերն որոշ տուրք (մախթա) կը վճարէին թագաւորին. կարող էին պետական պաշտօնի մէջ մտնել, եւ նոյն իսկ քանի մի պաշտօններու համար իրենց առավելութիւն կը տրուէր: Նոքա առ հասարակ և արուեստներով զբաղէին: «Քաղաքացիներուն» այս արտօնութիւնները աչքի առաջ ունենալով ալ՝ Վրացիք քաղաքացի չգրուեցան: Երբ Ռուսերն տիրեցին Տփղիսի՝ մի Վրացի գերդաստան միայն մոքալաք գրուեցաւ...»[3]:

Քանի որ մինչև 1864 թ. Թիֆլիսի մելիքներն ու քաղաքագլուխները բացառապես բնիկ քաղաքացի (մոքալաք) տոհմերի ներկայացուցիչներ էին, կարծում ենք արժե ստորև մեջբերել մարմնական պատժից ազատելու վերաբերյալ 1859 թ. հունիսի 7-ին բարձրագույնս հրամանագրված տոհմական առաջին կարգի քաղաքացիների (մոքալաքների) ցուցակը: Ի դեպ, ցուցակում ընդգրկված 79 ազգատոհմերից 14-ը նրանք էին, որոնց ներկայացուցիչները տարբեր ժամանակներում հանդես էին եկել իբրև քաղաքագլուխ (ընդգրծված են մուգ տառատեսակով): Ահա նրանք. «1. **Աբիսողոմովներ**. Ստեփան Հասրաթով, Հարություն Գասպարով, 2. **Աբիսողոմովներ.** Ստեփան Շաքարով և Սողոմոն Շաքարով, 3. Ամիրանով, 4. Հախնազարով, 5. Բայսողոլով, 6. Բաստամով, 7. Բեգիրղանյան, 8. Բուզգուլով, 9. Գարսոն, 10. Գզիրբեժոն, 11.Գուլակով, 12. Գուլիբաշով, 13. Գուլուլով, 14. Գուրգենբեկով, 15. Դիլակբերով, 16. **Եվանգուլով**, 17. Հեջուրով, 18. Զաքարբեկով, 19. Զոհրաբով, 20. **Իզանշադինով**, 21. Իզդանով, 22. **Իզմիրով**, 23. Իփրումով, 24. Կալինաանի, 25. Ղամազով, 26. Ղամբարով, 27. Քափանակով, 28. Քեփինով, 29. Քեթխուդով, 30. Քիշմիշն, 31. *Կուզանովներ:* Դավիթ Գեուրգով, Կարապետ Գեուրգով, Միքայել Գեուրգով, Օսեփ Սանվելով, Սողոմոն Սանվելով, Նաստիդ Խաչատուրով, Ալեքսեյ Ստեփանով, Գաբրիել Օհանեսով, Գրիգոր Ոսկին, Գեուրգ Ասատուրով, Իժան Ասատուրով և Հակոբ Մաթոսով, 32. Կուզանով Ստեփան Զալին, 33. Կուկուջանով, 34. Մալակով, 35. **Մանանով**, 36. Մանգոն, 37. Մանդենով, 38. **Մատինով**, 39. **Մելիք Զուրաբով**, 40. **Մելիք Սահակով**, 41. **Մելիք Շերմազանով**, 42. Մեսանտլով, 43. Միրզոն, 44. **Միրիմանով**, 45. Մուքոն, 46. Մուշրիբով, 47. Նազարբեկով, 48. Օկոն, 49. Պարկուզատով, 50. Փիրով, 51. Փիթոն, 52. Փորակով, 53. **Փրիդոնով**, 54. Փուղին, 55. Ռոտինով, 56. **Սարաջն**, 57. Թավլդարով, 58. Թակոն, 59. Թամամշն, 60. Թաթոն, 61. Տեր-Ասատուրով, 62. Տեր-Ղազարով, 63. Տեր-Պողոսով, 64. Տեր Շմավոն Տեր-Իսան, 65. Յուզբաշևներ: Եսայի Շաքարով, Գևորգ Շաքարով, Գաբրիել Շաքարով, 66. Յուզբաշևներ: Սողոմոն Իսան և Սկրտում Իսան, 67. Ուստա Իասով, 68. Խանկալամով, 69. Խարազով, 70. **Խատիսով**, 71, Խախուտով, 72. Խուդադով, 73. Ցուգադուգով, 74. Ծուրինով, 75. Չաոլան Բաբանասով, 76. Չիթախով, 77. Շահբուդաղով, 78. Շերգիլով, 79. Շիոն»[4]:

Ինչ վերաբերում է բնիկ քաղաքացի տոհմերի ցուցակում վրացիների՝ համարյա իսպառ բացակայության հանգամանքին, ապա այդ խնդիրն իր ժամանակին պատճառաբանվել է այսպես. «Բնիկ վրացիների հակվածությունը քաղաքային կյանքի, առևտրաարդյունաբերական գործունեության հանդեպ այնքան

3. **Տիւրեան Կ.**, Շաբաթ մի՛ Տփղիս (ուղևորի յիշատակարանէն), «Հանդես Ամսօրեայ», 1890, էջ 155:

4. “Акты собранные Кавказскою археографическою коммиссиею”, том XII, Тифлис, 1904, էջ 226-227 (բնագրում՝ “1. ***Абесаломовы:*** Степан Асратов и Арутин Гаспаров, 2. ***Абесаломовы:*** Степан Шакаров и Согомон Шакаров, 3. Амиранов, 4. Ахназаров, 5. Байсоголов, 6. Бастамов, 7. Безирганов, 8. Бузгулов, 9. Гарсоев, 10. Гзирбежоев, 11. Гулагов, 12. Гулипашов, 13. Гулулов, 14. Гургинбегов, 15. Дилакберов, 16. **Евангулов**, 17. Еджубов, 18. Захарбегов, 19. Захрабов, 20. **Изаншадинов**, 21. Изданов, 22. **Измиров**, 23. Ипрумов, 24. Калинаани, 25. Камазов, 26. Камбаров, 27. Капанаков, 28. Кепинов, 29. Кетхудов, 30. Кишмишев, 31. *Кузановы:* Давид Геурков, Карапет Геурков, Михаил Геурков, Осеп Санвелов, Соломон Санвелов, Наскид Хечатуров, Алексей Степанов, Габриел Оганезов, Грикур Оскиев, Геурк Асатуров, Ижан Асатуров и Акоп Матузов, 32. Кузанов Степан Залиев, 33. Кукуджанов, 34. Малаков, 35. **Мананов**, 36. Мангоев, 37. Манденов, 38. **Матинов**, 39. **Мелик Зурабов**, 40. **Мелик Сааков**, 41. **Мелик-Шармазанов**, 42. Месантлов, 43. Мизоев, 44. **Мириманов**, 45. Мунтоев, 46. Муширибов, 47. Назарбегов, 48. Окоев, 49. Паркузатов, 50. Пиров, 51. Питоев, 52. Пораков, 53. **Придонов**, 54. Пугиев, 55. Ротинов, 56. Сараджев, 57. Тавлдаров, 58. Такоев, 59. Тамамшев, 60. Татоев, 61. Терасатуров, 62. Терказаров, 63. Терпогосов, 64. Тершмоан Тер Исаев, 65. *Узбашевы:* Исай Шакаров, Геурк Шакаров, Гаприел Шакаров, 66. *Узбашевы:* Согомон Исаев и Микиртум Исаев, 67. Устаиясов, 68. Ханкаламов, 69. Харазов, 70. **Хатисов**, 71. Хахутов, 72. Худадов, 73. Цугадузов, 74. Цуринов, 75. Чаолан Бабанасов, 76. Читахов, 77. Шабудагов, 78. Шергилов, 79. Шиоев”).

թույլ էր, որ չնայած բոլոր օգուտներին և առավելություններին, մոքալաքների դասը բաղկացած էր գրեթե միայն հայերից...»[5]:

Սկսած 1640-ական թվականներից մինչև 1801 թ., երբ Վրաստանը միավորվեց Ռուսաստանի հետ, Թիֆլիսի մելիքության պաշտոնը ժառանգական իրավունքով վարել են Բեհբուդյան իշխանները: Հիշյալ ժամանակահատվածում իրար են հաջորդել հիշյալ տոհմից 15 մելիքներ (քաղաքագլուխներ):

ՄԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՄՈՒՅԹՆ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. Քաղաքի մելիքները, բացի հավաքվող հարկերի իրենց բաժնից, տիրապետում էին նաև անշարժ կալվածքների: Դրանցից էր «մելիքենց» իջևանատունը, որը Թիֆլիսի հայապատկան 14 իջևանատներից (ընդամենը 17-ն էր) գլխավորն էր[6]: «Մելիքենց» անվամբ էր հայտնի նաև քաղաքի 8 բաղնիքներից գլխավորը. «Մելիքենց, որ պատկանի Հայկազն իշխան Բէհբուդեանց, և գլխաւորն է բոլոր բաղնիսների մէջ, թէ շինութիւնով և թէ ջրով»[7]:

Եկամտի նշանակալի աղբյուր էին հարկերը: Դրանց չափերն ավելի մեծ էին այն ժամանակ, երբ մեկ-տեղվում էին մելիքի և մամասախլիսի պաշտոնները: Դրա վերաբերյալ մելիք Դարչի Բեհբուտյանցը նշել է. «Ինչքան որ եկամուտ է ունեցել Թիֆլիսի մելիքը, նույնքան էլ՝ մամասախլիսը: Առաջներում այս պաշ-տոնները եղել են տարբեր մարդկանց ձեռքին, և ամեն մեկը ստացել է իր եկամուտը, իսկ երբ այս երկու պաշտոնները շնորհվել են իրենց նախնիներին, այդ դեպքում երկուսն էլ օգտվել են եկամտից: Թիֆլիսում ապրող պետական վաճառականներից և գյուղացիներից, ամեն ամուսնացածից տարեկան գանձվել է 1 ռ. 20 կոպ, այս գումարից ցարական հարկը կազմել է 1 ռ. 5 կոպ, իսկ 15 կոպեկը ստացել են մելիքն ու մամա-սախլիսը: Թիֆլիսում ամեն մի անշարժ գույքի վաճառքի դեպքում առուծախի փաստաթուղթը պետք է հաստատվեր մելիքի և մամասախլիսի կողմից: Եթե գույքը բարձր գնի չէր, փաստաթղթի հաստատման համար երկու պաշտոնյաներին հասնում էր 2 չերվոնեց, իսկ ավելի բարձր գնի դեպքում հարկն առավել էր: Գույքի հետ կապված ցանկացած տարաձայնություններ լուծում էին մելիքն ու մամասախլիսը, իսկ հարկերը գանձվում էին ըստ վերը նշված հողվածի: Վաճառականների և այլ անձանց գործերի ցանկա-ցած գործավարության և հաստատման համար նրանք ստանում էին իրենց եկամուտը: Երբ որ Թիֆլիսի քաղաքացի եղբայրների մեջ առկա էր որևէ գույքի բաժանման կամ միացման խնդիր, ապա այդ դեպքում մելիքն ու մամասախլիսը ստանում էին ինչ-որ իր՝ 30-40 ռուբլի արժողությամբ, կամ էլ երբեմն ավելի քիչ՝ կապված նրանց կարողության չափի հետ: Կախված կարողության չափից՝ այդ պայմանագրերը հաստա-տելու համար յուրաքանչյուր եղբորից գանձվում էր 2 չերվոնեց կամ ավելին՝ առավել մեծ կարողության դեպքում: Թիֆլիսի վաճառականները, օրենսդրական որոշմամբ, օտար երկրներից ժամանելիս իրենց կա-րողության չափով մելիքին և մամասախլիսին նվերներ էին մատուցում: Թիֆլիսի մոուրավը մաքսից ստա-նում էր իր բաժին հարկը, իսկ մելիքն ու մամասախլիսն օգտվում էին վերոհիշյալից: Թիֆլիս մտնող չոր ձկան ամեն մի սայլաբեռից մելիքն ու մամասախլիսը ստանում էին 15 կոպեկ: Գործում էր մի դրույթ, ըստ որի արհեստավորները պարտավոր էին որոշ տոների մելիքին ու մամասախլիսին հատկացնել 120 ռ. ար-ժողությամբ ինչ-որ մի բան...»[8]:

---

5. **Бакрадзе Д.**, **Берзенов Н.**, Тифлис в историческом и этнографическом отношениях, СПБ, 1870, էջ 88 (բնագրում՝ "Нерасположение природных Грузин к городской жизни, к Торговой промышленной деятельности, было так сильно, что не смотря на все выгоды и преимущества сословие мокалаков состояло почти из одних Армян...").
6. Ստորագրութիւն Թիֆլիզոյ, «Գարուն», 1866, N 4, էջ 249:
7. Նշվ. հոդվածը, «Գարուն», 1866, N 2, էջ 102:
8. "Акты ...", том I, Тифлис, 1866, էջ 196 (բնագրում՝ "Сколько имел доходу мелик Тифлисский, столькожь и мамасахлис. В прежния времена чины сии были у разных людей и каждый получал особенно свои доходи; а когда оба сии чины были пожалованы предкам нашим, тогда обеих должностей доходами пользовались вместе. В Тифлисе жительствующих государственных купцов и крестьян с каждаго женатаго получалось в год по 1р. 20к.; из сего числа поступало в царские доходы по 1р. 5к., а по15к. получали мелик и мамасахлис. При продаже в Тифлисе всякаго недвижимаго имения следовало утвердить купчую мелику и мамасахлису. Если имение бывало неважной цены, то для утверждения купчей по двум сим чинам получалось 2 червонца; если-же имение бывало важной цены, то тогда получалось больше. В Тифлисе какие только бывали споры в разсуждении имения, то по решении тех дел подписки бывали утверждаемы от мелика и мамасахлиса и доходами по случаю сему пользовались сообразно вышеписанной статье. Какия только от мелика и мамасахлиса бывали изследываемы дела купцов и других, то по приличию каждаго дела за утверждение онаго и за труды пользовались они доходом. Когда из Тифлисских граждан братья между собою делились или соединялись, тогда мелик и мамасахлис полу-чали по сему случаю от них какую либо вещь, стоющую 30 или 40 руб., а иногда и менее сего, смотря на их движимое и недвижимое имение и состояние. По сему же разделу и соединению братьев мелик и мамасахлис, для утверждения их договоров получали, смотря на их состояние, по маловажному имению с каждого брата 2 червонца, а с достаточных больше сего. Тифлисские купцы, приезжая из чужих земель, каждый в силу учреждения мелику и мамасахлису привозил по состоянию своему подарок, ибо Тифлисский моурав имел учрежденные из пошлин доходы, а малику и мамасахлису было предоставлено пользоваться оным. Сколько привозилось в Тифлис сухой рыбы, то с каждаго воза мелик и мамасахлис получали 15 коп. Тифлиские ремесленники имели положение в некоторые праздники отдавать что либо мелику и мамасахлису, что и составляло каждый по 120 руб.").

Այսուհանդերձ, մելիքի տարեկան եկամուտները՝ կախված այդ պաշտոնի միջամտության առիթների հետ, անկայուն էին, որի պատճառով եկամտի չափը ստուգապես անհնարին էր հաշվարկել:

Մելիքի գլխավոր արտոնություններից էր նաև քաղաքի բոլոր 5 դարպասների (մուտքերի) բանալիները իր մոտ պահելը. «...Քաղաքը ունէր հինգ դուռն՝ 1, դէպ ի հարաւ, ուր է թագաւորական այգին (ботанический сад) և ասվում է Գանջու դուռն, ըստ որում Գանջու քարվանը էն կողմից ներս կգար. 2, դէպ ի արևելք բաղանիսների կամուրջի գլխին, և կոչվում էր Երևանու դուռն, այս տեղից էլ Երևանու քարվանն էր ներս գալիս, և դռան կըշտին էր մաքսատունը (ռախտարխանէն, տամօժնեայ). 3-դ և 4-դ դէպ ի արևմուտ, մէկն Ջկրաշէն եկեղեցու մեծ քուչի գլխին, Ջէյդլենց և Տէր Ասատուրովենց տներու մէջ տեղը, և ասվում էր Ծաւկիսու դուռն, իսկ միւսը Աւթանդիլ Կուկուջանեանցի տանը մօտ, և կոչւում էր Դեղոմի դուռն, և 5-դ դէպ ի հիւսիս ջրի միւս կողմն Մէտէխի և Ճիպլինենց քարավանսարայի մէջ տեղը, որի անունն էր Հալվաբարու դուռն: Դռներն էին երկաթէ, և երեկոյեանները կփակէին, որոց բանալիքները կպահէր քաղաքապետը, որ մելիք էր կոչւում»[9]:

Հնուց ի վեր՝ և մասնավորապես մինչև 1801 թ., որքան հայտնի է, Թիֆլիսի բոլոր մելիքներն էլ հայազգի էին: Այս երևույթը, օրինակ, պատմաբան Ծ. Չխեթիան բացատրել է քաղաքում հայ բնակչության թվային գերազանցությամբ. «Այստեղ մենք պետք է ընդգծենք, որ վրաց թագավորների օրոք Թբիլիսիի մելիք (քաղաքագլուխ) ավանդաբար հայ էր նշանակվում: Սա խոսում էր այն մասին, որ պետական բարձր իշխանությունը հաշվի էր նստում Թբիլիսի քաղաքի բնակչության մեծամասնությունը կազմող հայերի հետ և քաղաքագլուխ նշանակում հայի: ԺԸ դարի վերջին Թբիլիսիի թագավորության շրջանի վերջին մելիքն էր Դարչո Բեհբուտովը»[10]:

Առկա տվյալները, սակայն, հուշում են, որ միայն վրաց թագավորները չէին, որ հայազգի անհատներին քաղաքագլուխ էին նշանակում: Գոնե ԺԷ-ԺԸ դարերի համար այդպիսի վկայություն հայտնի չէ (օրինակ՝ Մելիք Բայանդուրը քաղաքի իշխանությունը ստացել էր պարսից Շահ-Աբաս Փոքրից, իսկ Բեհբուդյաններն այդ պաշտոնը վարել են ժառանգաբար): Վրաց թագավորներին, թերևս, միայն վերապահված է եղել ժառանգաբար քաղաքագլխի պաշտոնում ամեն անգամ հորը փոխարինող որդու իրավունքների վերահաստատման դերը:

ՏՓղԻՍԻ (ԹԻՖԼԻՍԻ) ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ. Սկզբնաղբյուրները փաստում են, որ Թիֆլիսում հայազգի բնակչությունը մեծամասնություն է կազմել ոչ միայն ԺԹ դարում, այլև դրանից առաջ, անգամ՝ միջնադարում: Օրինակ՝ Ռամուսիոյի ԺՋ դարում կատարված իտալական թարգմանության մեջ թիֆլիսաբնակ ազգությունների շարքում նախ և առաջ հիշված են հայերը. «Այս նահանգում կա մի գեղեցիկ քաղաք կոչված Թիֆլիս, և շրջակայքը կան շատ ամրոցներ ու պարսպապատ գյուղեր: Այնտեղ բնակվում են քրիստոնյաներ՝ հայեր, վրացիներ, և քիչ սարակինոսներ ու հրեաներ, բայց ոչ շատ»[11]:

1629 թ. մի ձեռագրի հիշատակարանում պարզապես նշված է. «...ի Տպխիս Հայոց քաղաք...»[12]:

1745 թ. վրաց արքայազն Վախուշտին նույնպես շեշտել է հայերի թվական գերակշռությունը. «...Տփղիսի բնակիչներն են՝ Բերդում և Սեյդաբադում պարսիկ-մահմեդականները, իսկ բերդից դուրս առավելապես հայերն ու նվազ չափով վրացիները...»[13]:

1770 թ. կապիտան Յազիկովը Վրաստանի մասին կազմած զեկուցագրում նշել է. «...իրենց ասելով այնտեղ հաշվում են հինգ հազար տուն, բնակիչների մեծ մասը հայեր են և կաթոլիկներ, առաջիններն իրենց ձեռքում են կենտրոնացրել առևտուրը և հարուստ առևտրականները շատ են, իսկ որքան բնակիչ կար քաղաքում. դա ասել հնարավոր չէ, նրանք՝ իրենք չեն իմանում, սակայն բավականին մարդաշատ քաղաք է...»[14]:

---

9. Ստորագրութիւն Թիֆլիզոյ, «Գարուն», 1866, N 1, էջ 62:

10. **Чхетия Ш.**, Армяне в Тбилиси в шестидесятых годах XIX века, “ИФЖ’, Ереван, 1958, N 3, էջ 161-162 (բնագրում՝ “Здесь мы должны подчеркнуть, что меликом городским головой Тбилиси при грузинских царях традиционно назначался армянин. Эта говорит о том, что высшая государственная власть, считаясь с тбилисским армянским населением, составлявшим в городе большинство, назначала городским головой армянина. Последним царским меликом в Тбилиси к концу XVIII в был Дарчо Бебутов...”):

11. **Հակոբյան Հովհ.**, Ուղեգրություններ, հ. Ա., Երևան, 1932, էջ 55:

12. «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հատոր Բ, Երևան, 1978, էջ 321:

13. «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Գ, Երևան, 1955, էջ 83:

14.”Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии”, том 1 (с 1768 по 1774 г.), под редакцией **Цагарели А. А.**, СПБ, 1891, էջ 187 (բնագրում՝ ”...в нем считается по их сказкам пять тысячь дворов, жители по большой части армяне и католики, первыя главный торг производят и много есть богатых купцов, а сколько числом в городе людей,- того сказать не можно, потому, что они и сами не знают...”).

Սա այն իրողությունն էր, որը պայմանավորել էր վրաց թագավորների, պարսիկ շահերի և թուրք սուլթանների կողմից ինչպես՝ մելիքի, այնպես էլ՝ մամասախլիսի պաշտոնները հայերին շնորհելը[15]:

Ամբողջ ԺԹ դարում և Ի դարի սկզբներին թիֆլիսաբնակ ազգությունների թվում հայերը պահպանել էին հարաբերական մեծամասնություն: Առանձնապես 1860-ական թվականներից հետո իրականացված վիճակագրությունների արդյունքները ներկայացնում են հետևյալ պատկերը.

Տարեթիվ	հայեր	%	վրացիներ	%	ռուսներ	%	այլ ազգ.	%	ընդամենը
1803[16]									11777
1848[17]	14194	46,1							30814
1851[18]									34888
1864[19]	28404	47,3	14878	24,8	12462	20,7	4341	7,2	60085
1865[20]	31180	47,2	14786	22,4	12142	18,4	7934	12,0	66042
1875[21]	36974	45,0	21295	25,9	19424	23,7	4363	5,3	82056
1876[22]	37601	41,0	22156	24,2	20198	22,0	11713	12,8	91668
1880[23]	38509	45,0	22285	26,0	19804	24,0			
1885[24]									104024
1891[25]	55553	38,1	38357	26,3	36113	24,3	15708	10,8	145731
1895[26]	66201	40,8	34623	21,3	28983	17,8	32544	20,0	162351
1896[27]									163012
1897[28]	46713	32,0	40526	27,7	39213	26.8	19712	13,5	163012
1905[29]	84170	35,0	54558	22,7	57191	23,8	44404	18.5	240323
1910[30]	124901	40,9	54120	17,7	67086	22,0	59100	19,4	305207
1914[31]									344629
1916[32]	142019	40,9	37584	10.8			167163		346766
1922[33]	85262	36,6	80072	34,4	38326	16,5	29114	12,5	232774
1926[34]	112000	39,0							
1959[35]	149000	21,0	330000	48,0	126000	18,0			
1979[36]	153000	14,0	653000	62,0	129000	12,0			

15. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մելիքի կամ քաղաքագլխի պաշտոնը հայազգի անհատին վստահելը պայմանավորված չէր սոսկ հայերի մեծամասնությամբ: Դիցուք XIX վերջերին կամ XX դարի սկզբին հայերն այլևս մեծամասնություն չէին, և պաշտոնն էլ նշանակումով չէր, այլ՝ ընտրությամբ, բայց, ինչպես կտեսնենք ստորև, այդ ոլորտը շարունակաբար կենտրոնացած էր ազգությամբ հայ անհատների ձեռքում (բացառությամբ 2 դեպքի): Երևույթի խորքային պատճառների մասին իր տեղում:

16. **Ениколопов И.**, Первая перепись в Тифлисе, “Вечерний Тбилиси”, 1970, N 15, 20 января:

17. “Кавказский Календарь на 1850 г.”, Тифлис, 1849, էջ 91:

18. “Кавказский Календарь на 1852 г.”, Тифлис, 1851, էջ 91, 404:

19. “Кавказ”, 1865, N 16, էջ 83-84: Տե՛ս նաև “Известия Тифлисской Городской Думи”, 1910, N 11, էջ 17:

20. «Երեւակ», հանդէս ութօրեայ, 1866, N 134, էջ 397:

21. “Кавказский Календарь на 1882 г.”, Тифлис, 1881, էջ 314:

22. “Известия ...”, նույն տեղում:

23. “Кавказский Календарь на 1882 г.”, Тифлис, 1881, էջ 315:

24. “Кавказский Календарь на 1886 г.”, Тифлис, 1885, էջ 117:

25. «Նոր -Դար», 1893, N 218, էջ 1:

26. “Кавказ”, 1896, N 88, էջ 2: Նաև՝ «Մշակ», 1896, N 39, էջ 3: «Նոր -Դար», 1896, N 59, էջ 1:

27. “Кавказский Календарь на 1898 г.”, Тифлис, 1897, էջ 22-23:

28. “Известия ...”, նույն տեղում:

29. “Кавказский Календарь на 1908 г.”, Тифлис, 1907, էջ 325:

30. “Известия ...”, նույն տեղում: Նաև՝ “Закавказье”, 1911, N 68:

31. “Кавказский Календарь на 1915 г.”, Тифлис, 1914, էջ 188:

32. “Кавказский Календарь на 1917 г.”, Тифлис, 1916, էջ 190-193: Վրացիների թվաքանակի մեջ մտնում են 1476 վրացի մահմեդականները:

33. «Մարտակոչ», 1923, N 105, 30 հունիսի:

34. Նույն տեղում:

35. Նույն տեղում:

36. **Թոքաձե Անզոր**, Թիֆլիսի ազգաբնակչությունը, «ობოლოსი», 1989, 13.VI:

Աղյուսակից հստակ երևում է, որ ԺԹ դարի երկրորդ կեսին և Ի դարի սկզբին, բայց հատկապես խորհրդային կարգերի հաստատումից հետո Թիֆլիսի հայ բնակչության թվաքանակը շարունակաբար նվազել է (նվազման երևույթը ցարդ կանգ չի առել):

Հարկ է նշել, որ ԺԹ դարի առաջին կեսին քաղաքաբնակ հայերի տեսակարար կշիռը շատ ավելի բարձր է եղել, քան, օրինակ 1864 թ., երբ այն կազմել էր 47,4 %: Այդ է փաստում 1821 թ. վերաբերող մի վկայություն, համաձայն որի՝ քաղաքի 3368 ծխերից (տուն) հայեր էին 2951-ը, իսկ վրացիներն ու ռուսները միասին՝ ընդամենը 417 ծուխ[37]: Այսինքն՝ 1821 թ. հայերը կազմում էին ծխաթվերի 87.6 %-ը:

ԹԻՖԼԻՍԸ 1801-1840 ԹԹ. Երբ 1801 թ. ռուսական իշխանությունները դադարեցրին քաղաքի վերջին մելիք Դարչի Ավետիքյան Բեհբուդյանցի պաշտոնավարությունն ու վայր դրին նրա իրավունքները, միաժամանակ, մինչև 1840 թ. Թիֆլիսն այլևս քաղաքագլուխ չունեցավ: Ամբողջ 4 տասնամյակ քաղաքը գտնվում էր կայսեր կողմից ռազմական գծով նշանակում ստացած երկրամասի կառավարիչների հոգածության ներքո: Արդեն այդ տարիներին սկիզբ է դրվում քաղաքի բարեկարգման լայնածավալ աշխատանքների:

Համեմատության մեջ դնելով անցած մի քանի տարիների ընթացքում քաղաքի կրած փոփոխությունները՝ գերմանացի Մորից Ֆոն Կոցեբուե 1817 թ. գրել է. «Ճանապարհները բոլոր նահանգներում անգործածելի էին, և Թիֆլիսն իսկ թաղված էր ցեխի մեջ: Այս քաղաքը իր ներկա բարգավաճ վիճակը պարտական է գեներալ Երմոլովին: Կարճ ժամանակվա ընթացքում նա կառուցել է տներ, մայթել է փողոցներ, և բացել է հրապարակներ, որպեսզի ոտը շարժի քաղաքի նեղ ու աղտոտ փողոցներից: Կարճ խոսքով, ով որ մի տարի առաջ հեռացել է Թիֆլիսից, հիմա չպիտի ճանաչի այդ: Երբ բնակիչները վերջապես զգացին թե շատ ավելի հաճելի է ապրել տների քան ցեխակույտի մեջ...»[38]:

Բարեկարգման ընթացող աշխատանքների մեկ այլ վկան՝ անգլիացի նկարիչ-հնագետ Ռոբերտ Կեր Փորտըրը, նույն՝ 1817 թ. նշել է. «...կառավարիչը իր բնակարանն ընտրել է քաղաքի կենտրոնից հեռու մի բերդի կողքին, գետի դիմաց, Կովկասյան լեռների գեղեցիկ տեսարանով...: Այս շենքը, ինչպես նաև զինաբանը, հիվանդանոցը, եկեղեցիներն ու շրջակայքի մի քանի վիլլաները՝ միակ շենքներն են քաղաքի մեջ, որոնք հիշեցնում են որևէ կերպով Եվրոպա: Մնացածը զուտ ասիական է, բայց բոլորովին տարբեր այն գաղափարից, որ Եվրոպայում ունեն Արևելքի մասին. — զվարթ մինարեթներ, գունավոր գմբեթներ և ոսկեզօծ որմեր: Այստեղ կա միայն ցած հողե կտորներով տների հավաքածու, կառուցված հողե աղյուսից, խառնված քարի ու ցեխի հետ, դռներն ու պատուհանները չափազանց փոքր, վերջիններս ծածկված թղթով, որովհետև ապակի շատ քիչ են գործածում, թանկության ու հազվագյուտ լինելու պատճառով...: Փողոցները առանց բացառության նեղ են և ճանապարհի նախնական վիճակի հետևանքով, անհանդուրժելիորեն ցեխոտ են՝ անձրևոտ և փոշոտ՝ չոր եղանակին: Սակայն, նորին գերազանցությունը, կառավարիչը, ջանաղիր է վերջ տալու այս անհարմարության, հրամայելով որ փողոցները մայթեն. և այս լավ գործը արդեն սկսել են: Նույնպես նա ուրիշ բարեփոխություններ է կատարում, հրաման տալով որ բոլոր կիսաքանդ տները վերանորոգվեն և կամ բոլորովին քանդվեն և նրանց տեղը նորերը շինվեն վայելուչ և ավելի առողջապահական պլանով...»[39]: Շարունակելով բնակարանների, խանութների, շուկայի, մարդկանց վարք ու բարքի բավականին ուշագրավ նկարագրությունները՝ Ռ. Կեր Փորտըրն իր խոսքն ավարտում է այսպես. «Այս է Թիֆլիսը 1817 թվին: Բայց եթե ներկա ընդհանուր կառավարչի պլանը՝ տների կառուցման մասին, լիովին իրագործվի, մի քանի տարի հետո այսպես չպիտի լինի Թիֆլիսը: Հասարակական շենքերի բարեփոխման տեսակետից ինչ-որ արդեն իրագործել է նորին գերազանցությունը, հույսեր են տալիս ապագայի մասին...»[40]:

Տակավին 1835 թ. գերմանացի դր. Էյխվալդն իր «Ուղևորություն ի Կովկաս» (”Reise in der Kaukasus”) աշխատության մեջ, անդրադառնալով Թիֆլիսի բարեկարգության վիճակին, նշել է. «Թիֆլիս մինչեւ անգամ չի համապասխաներ կէս-եւրոպական քաղաքի: Անձրեւային ժամանակ Թիֆլիսի փողոցները չափազանց ցեխոտ են, իսկ չոր ժամանակ եւ մանաւանդ երբ քամի կայ, փոշին ամպերու պէս կը պատէ քաղաքն: Ամեն տեսակ աղբ անարգել փողոցները կը թափուի եւ շատ անգամ կը պատահի որ անցորդները կ’ողողուին վերէն վար թափուող աղտեղութեանց մէջ եւ կ’երթան վարձատրութիւն պահանջել իրենց ապականեալ զգեստներու համար:... Մի քանի փողոցներու կողքերը կան մայթեր ու սալայատակներ, որ

37. “Братская помощь пострадавшим в Турции армянам”, 2-ое издание, Москва, 1898, էջ 553:
38. **Հակոբյան Հովի.**, Ուղեգրություններ, հ. Ջ, Երևան, 1934, էջ 501:
39. Նշվ. աշխ., էջ 713-714:
40. Նշվ. աշխ., էջ 72:

բոլորովին անխնամ եւ կոշտ կոպիտ կերպիւ շինուած են: Երեւանեան հրապարակն է լաւագոյն եւ ընդարձակ հրապարակը, սակայն գրեթէ ամբողջապէս խորտուբորտ: Քաղաքը բոլորովին զուրկ է ջրանցքներէ, ջրամբարներէ, ծառուղիներէ, մի խօսքով անդ չկայ այն ինչ որ կարենայ յիշեցնել մարդուս եւրոպական քաղաքներու հաճոյքները կամ հասկացողութիւն մը տայ ասիական շքեղութեան եւ պերճանաց մասին...»[41]:

Ընդհանուր առմամբ մինչև 1840 թ., երբ հաստատվեց քաղաքի կառավարման նոր կարգը, ռուս զինվորական կառավարիչների ջանքերով իրականացվող Թիֆլիսի բարեկարգման համալիր միջոցառումները գրանցեցին աննախընթաց առաջընթաց: Ինչ վերաբերում է քաղաքի կառավարման համար քաղաքագլուխ ունենալու խնդրին, ապա, տակավին 1810 թ. Վրաստանի կառավարիչ Ախվերդովը բարձրագույն իշխանությանն էր ներկայացրել մի զեկույց՝ Թիֆլիսում վրաց իշխանների կամ ազնվականների գլխավորությամբ քաղաքապետություն (մագիստրատ) հիմնելու առաջարկով[42], որը սակայն, կյանքի չէր կոչվել:

ԹԻՖԼԻՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 1840-1864 ԹԹ. Վարչարարության նոր ձևը, որը հղացել ու նախաձեռնել էր Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար և Կովկասի քաղաքացիական վարչության կառավարիչ Ե. Ա. Գոլովինը (1838-1842), ըստ էության, միտում ուներ քաղաքի կառավարման կերպը բարեփոխելու միջոցով էլ ավելի խթանել առաջընթացը. «Նրա օրոք մշակվել է նաև Թիֆլիսի քաղաքային հասարակական վարչության կանոնադրությունը, որն արժանացել է Բարձրագույնի հաստատմանը 1840 թ. ապրիլի 10-ին և ուժի մեջ մտել նույն թվականի օգոստոսի 10-ին[43]: Այդ կանոնադրությամբ քաղաքին իրավունք է տրվել ձևավորել քաղաքային վարչություն՝ բաղկացած քաղաքագլխից և 6 անդամից: Քաղաքագլուխն ընտրվում էր քաղաքաբնակ ամբողջ հասարակության կողմից, իսկ անդամներն ընտրվում էին երեք դասից՝ սեփականատերերից, վաճառականներից և արհեստավորներից, յուրաքանչյուրից 2 անդամ: Յուրաքանչյուր դասից ընտրվում էր 10 ներկայացուցիչ, և հարկերը բաշխվում էին այդ 30 ընտրվածների ներկայությամբ, ընդ որում հարկահավաքությունը հանձնարարված էր 6 հոգու, յուրաքանչյուր դասից 2-ական անդամի: Քաղաքային հասարարական վարչության որոշումներն ի կատար էին ածվում 6 ավագանու՝ ուստաբաշիի օգնությամբ, որոնցից ընտրվում էր 2-ը՝ ամեն դասից, իրենց 2-ական օգնականներով»[44]: Նշված կարգով 1840 թ. Թիֆլիսի առաջին քաղաքագլուխ ընտրվում է Հովհաննես Իզմիրյանցը:

1841 թ. հաստատվում է նահանգական քաղաք Թիֆլիսի կառավարման համակարգը, որի ժամանակ ձևավորվում է քաղաքագլխի և պաշտոնատար այլ անձանց մասնակցությամբ ու նահանգապետի նախագահությամբ գործող շինարարական հատուկ կոմիտե[45]:

Սկսած 1840 թ., երբ հաստատվում է քաղաքի հասարակական կառավարման կանոնադրությունը, Թիֆլիսում քաղաքագլխի պաշտոնը հաջորդաբար վարում են քաղաքի բնիկ (մոքալաք) հայտնի հայ գերդաստանների ներկայացուցիչները[46]: Այդ ավանդույթն առաջին անգամ խախտվում է միայն 1864 թ., երբ քաղաքագլուխ է ընտրվում ոչ տեղացի (եկվոր, ախալմոսուլ) Գալուստ Շերմազանյանցը:

---

41. **Պ. Տ.**, Թիֆլիս կէս դար առաջ եւ այժմ, «Մասիս», 1886, էջ 611:
42. **Джабарь М.**, 35-летие Тифлисской гор. думы, "Тифлисский Листок", 1909, N 298, էջ 3:
43. Այդ վկայության համաձայն քաղաքի հասարակական կառավարման նոր կարգի հաստատումն ու գործադրումը տեղի էր ունեցել 1841 թ. օգոստոսի 21-ին (**Джабарь М.**, նշվ. հոդվածը, նույն տեղում):
44. **Чрелаев С.**, Тифлис в XIX столетии, "Тифлисский Листок", 1901, N 291 (բնագրում՝ "При нем разработано и положение о городском общественном управлении в Тифлисе, которое удостоилось Высочайшаго утверждения 10-го апреля 1840 года и вошло в действие с 21 августа того же года. Этим положением городу предоставлено было право образовать городскую управу в лице городского головы и 6 членов. Голова избирался целым обществом городских обывателей, членов же избирали три сословия: домовладельцы, торговцы и ремесленники, по два члена от сословии. Каждое сословие избирала по 10 представителей и раскладка повинностей происходила в присут. всех этих 30 избранных лиц, при чем внимание повинностей поручено было 6 сборщикам, по 2 человека от каждаго сословия. Постановления городского общественнаго управления приводилось в исполнение при помощи 6 старост,- устабаши, - избиравшихся сословиями в числе 2 человек с 2 помощниками от каждаго..."): Տե՛ս նաև **Джабарь М.**, 35-летие Тифлисской гор. думы, Тифлисский листок, 1909, N 298, էջ 3:
45. **Джабарь М.**, նշվ. հոդվածը, նույն տեղում:
46. Ի դեպ, անդրադառնալով 1840-60-ականների քաղաքագլուխներին՝ Շ. Չխեթիան, առանց պաշտոնավարության տարիները նշելու, թվարկել է նրանց անունները. «1840 թ. Թիֆլիսում «Քաղաքային հասարակական վարչության կանոնադրության» ստեղծման օրվանից, տարիներ շարունակ քաղաքագլխի պաշտոնը զբաղեցնում էին հայ խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչները: Թբիլիսիի առաջին քաղաքագլուխն էր Իվան Իզմիրովը: Այնուհետև այդ պաշտոնը զբաղեցրին Ս. Խատիսովը, Մ. Տեր-Գրիկուրովը, Ի. Շադինովը, Ֆ. Փրիդոնովը, Զ. Ամիրաղովը, Ի. Միրիմանովը, Ա. Սվեչնիկովը, Ս. Սարաջևը, Ան. Մանանովը, Վ. Արշակունին, Ս. Աբիսողոմովը, Ե. Արծրունին, Ն. Ալդաթովը, Դ. Թումանովը (1869-1871)», ("Со дня создания "Положения о городском общественном управлении в Тифлисе" в 1840 г. в течение многих лет должность городского головы занимали представители крупной армянской буржуазии. Первым городским головой Тбилиси был Иван Измиров. Затем эту должность занимали: С. Хатисов, М. Тер-Грикуров, И. Шадинов, Ф. Придонов, З. Амирагов, И. Мириманов, А. Свечников, С. Сараджев, Ан. Мананов, В. Аршакуни, С. Абесаломов, С. Мириманов, Ег. Придонов, К. Шермазан-Вартанов, С. Абесаломов, Е. Арцруни, Н. Алдатов, Д. Туманов (1869-1871)" (նշվ. հոդվածը, էջ 166):

Քաղաքային հասարակական կանոնադրության հաստատումից (1840) հետո մի քանի տարիների կտրվածքով վարչության աշխատակազմը ներկայացրել է հետևյալ պատկերը.

Տարեթիվ	Քաղաքագլուխ	Քաղաքային վարչության անդամներ		Պետական քարտուղար
		Քաղաքացի (մոքալաք) անդամներ	Նորեկ (ախալմոսուլ) անդամներ	
1845[47]	Ստեփան Գաբրելյան Խատիսյանց	Ալեքսանդր Հովսեփյան Թամամշյանց, Զաալ Զաքարյան Զաալյանց, Հովսեփ Հովհաննիսյան Տեր-Հովհաննիսյանց (պատգամավոր գավառից)	Իսահակ Հովհաննիսյան Մայսուրյանց, Հովհաննես Դավթյան Սուլթանյանց	Վասիլի Իվանովիչ Ռակովիչ
1849[48]	Թովմա Դավթյան Փրիդոնյանց	Զաքարիա Պետրոսյան Թամամշյանց, Հովհաննես Ստեփանյան Ալադաթյանց, Պետրոս Հովհաննիսյան Համբարձումյանց, Ավետիք Հովհաննիսյան Ծատրյանց, Ավթանդիլ Ալեքսեյի Հախվերդյանց, Աղա Ռնազի Ռնազով		Պյոտր Վասիլևիչ Սոկոլովսկի
1850[49]	Զաքարիա Ստեփանյան Ամիրաղյանց	Զաքարիա Սինասյան Գուլասպյանց, Իսահակ Մկրտչյան Թանդոյանց, Ստեփան Անդրեյի Ջաղաթյանց, Հակոբ Միքայելյան Ջամոյանց, Թովմա Սարգսյան Իսկանդարյանց, Ղազար Աբրահամյան Վարդանյանց		Պյոտր Վասիլևիչ Սոկոլովսկի

Հարկ է նշել, որ թեև 1840-1864 թթ. Թիֆլիսի քաղաքագլուխներ էին ընտրվել բացառապես բնիկ քաղաքացիներ (մոքալաքներ), բայց արդեն 1840-ականներին նորեկների ներկայությունն առկա էր քաղվարչության կազմում: Օրինակ՝ քաղաքագլուխ Ստ. Խատիսյանցի պաշտոնավարության ժամանակ (1845) քաղվարչակազմի 6 անդամներից երկուսը նորեկ (ախալմոսուլ) էին:

Տարիների ընթացքում քաղաքի կառավարման համակարգը հագեցվում էր ժամանակի պահանջներից բխող վարչական նոր մարմիններով: Դրանցից էր Կովկասի փոխարքա իշխան Մ. Վորոնցովի (1844-1854 թթ.) մտահղացմամբ 1847 թ. կազմավորված առևտրային ոստիկանությունը[50]: Առհասարակ Մ. Վորոնցովի բուռն գործունեության առանցքը, ինչպես դիպուկ կերպով նկատել է 1850 թ. քաղաք այցելած «Սյուլյուկ»-ը, այն էր, որ ունևոր դասը առավելագույնս ընդգրկվեր քաղաքի կառուցապատման ու բարեկարգման աշխատանքների մեջ. «...իշխան Վոռոնցովը և նրա կողակիցը շատ հետամուտ էին խառն պակների և հայի կիտած զուտ ոսկին քար ու կիր դարձնելու»[51]:

Հատկանշական է, որ մինչև 1875 թ. ազգությամբ հայ էին ոչ միայն իրար հաջորդած քաղաքագլուխները, այլև քաղաքային վարչության անդամների մեծ մասը: Խնդրո առթիվ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար ստորև մեջբերում ենք Թիֆլիսում քաղաքի հասարակական կառավարման կանոնադրության հաստատումից (1840) մինչև քաղաքային ինքնավարության հաստատումն (1870) ընկած ժամանակահատվածում մի շարք տարիների կտրվածքով քաղվարչակազմի անդամների ցուցակները.

Տարեթիվ	Քաղաքագլուխ	Քաղաքային վարչության անդամներ		Պետական քարտուղար
		Քաղաքացի (մոքալաք) անդամներ	Նորեկ (ախալմոսուլ) անդամներ	
1851[52]	Հովսեփ Աֆանասյան Միրիմանյանց	Զաքարիա Դավթյան Սարաջև	Պետրոս Հովհաննիսյան Համբարձումյանց, Ղազար Վարդանյան Վարդանյանց	Պյոտր Վասիլևիչ Սոկոլովսկի
1852[53]	Հովսեփ Աֆանասյան Միրիմանյանց	Հեջուբ Գաբրիելյան Հեջուբյանց Հովսեփ Ստեփանյան Անանյանց, Սողոմոն Պետրոսյան Սարգսյանց	Ավթանդիլ Հախվերդյանց, Մկրտիչ Կասումյանց, Ավետիք Թարխանյանց	Պյոտր Վասիլևիչ Սոկոլովսկի
1853[54]	Ավետիք Աստվածատրյան Սվեչնիկով	Իսահակ Նիկիտայի Փուղինյանց, Հեջուբ Գաբրիելյան Հեջուբյանց, Ասատուր Կիրիլյան Խալաթյանց	Հովսեփ Միքայելյան Ջամոյանց, Վարդան Ղազարյան Սպարապետյանց	Պյոտր Վասիլևիչ Սոկոլովսկի
1854[55]	Ավետիք Աստվածատրյան Սվեչնիկով	Սողոմոն Միրոնի Միրիմանյանց, Հեջուբ Գաբրիելյան Հեջուբյանց, Ստեփան Անդրեյի Ջաղաթյանց	Պետրոս Հովհաննիսյան Համբարձումյանց, Հովսեփ Միքայելյան Ջամոյանց, Սարգիս Եգանյանց	Պյոտր Վասիլևիչ Սոկոլովսկի

47. “Кавказский Календарь на 1846 г.”, Тифлис, 1845, էջ 167:
48. “Кавказский Календарь на 1850 г.”, Тифлис, 1849, отделение четвертое, էջ 11:
49. “Кавказский Календарь на 1851 г.”, Тифлис, 1850, отделение пятое, էջ 13:
50. **Джабарь М.**, նշվ. հոդվածը, նույն տեղում:
51. **Սիլիկ**, Ճանապարհորդութեան տպաւորութիւններ, «Փորձ», 1879, N 10, էջ 96:
52. “Кавказский Календарь на 1852 г.”, Тифлис, 1851, էջ 561:
53. “Кавказский Календарь на 1853 г.”, Тифлис, 1852, էջ 511:
54. “Кавказский Календарь на 1854 г.”, Тифлис, 1853, էջ 592:
55. “Кавказский Календарь на 1855 г.”, Тифлис, 1854, էջ 628:

1855[56]	Ավետիք Աստվածատրյան Սվեչնիկով	Արտեմ Եգորյան Բաբաևասյանց, Իսահակ Մարտինի Թանդոյանց, Զաքարիա Մինասյան Գուլասպյանց	Պետրոս Հովհաննիսյան Համբարձումյանց, Գրիգոր Մելիքյանց, Սարգիս Մուրադյանց	
1856[57]	Սողոմոն Դավթյան Սարաջև	Սողոմոն Մովսիսյան Իստամբոյանց, Արտեմ Եգորյան Բաբաևասյանց, Գրիգոր Պետրոսյան Սարգսյանց, Համբարձում Նիկիտայի Էնֆիաձյանց, Ավետիք Գրիգորյան Ջանշյանց (բնակարանների գծով պատգամավոր)	Սիմոն Դավթյան Մղեբրյանց, Գրիգոր Հայրապետյան Սարգսյանց, Գեորգի Ամիլախվարով (բնակարանների գծով պատգամավոր)	Գրիգոր Հովհաննիսյան Իզմիրյանց
1857[58]	Անդրեյ Դավթյան Մանանով	Աստվածատուր Սվեչնիկով, Եղիս. Գաբրիելյան Եղիսուրով, Սողոմոն Գաբրիելյան Բայսողոլյանց, Համբարձում Նիկիտայի Էնֆիաձյանց	Պետրոս Հովհաննիսյան Համբարձումյանց, Հակոբ Բարսեղյան Միքելյանց	Գրիգոր Հովհաննիսյան Իզմիրյանց
1858[59]	Վարդան Աստվածատրյան Արշակունի	Ավետիք Գրիգորյան Ջանշյանց, Սողոմոն Գաբրիելյան Փարունբեկյանց, Զաքարիա Գերասիմի Միրիմանյանց	Արտեմ Դավթյան Խեչումյանց, Գրիգոր Նիկողոսյան Մկրտումյանց, Միքայել Ավետիքյան Տուգուրելով	Գրիգոր Հովհաննիսյան Իզմիրյանց
1859[60]	Վարդան Աստվածատրյան Արշակունի	Ավետիք Գրիգորյան Ջանշյանց, Բաղդասար Ալաղաթյանց (պատվավոր քաղաքացի), Զաքարիա Գերասիմի Միրիմանյանց	Ղազար Վարդանյանց, Միքայել Ավետիքյան Տուգուրելով	Միխայիլ Ֆյոդորովիչ Ֆյոդորով

Տարեցտարի աճող ու զարգացող Թիֆլիսն արդեն 1858 թ. ոմն ականատեսին ներկայացել է անհամեմատ ավելի բարեշեն, քան թեկուզ 2-3 տասնամյակ առաջ. «Թիֆլիս, կամ ըստ մեզ Տփխիս, հին Վրաստանի մայրաքաղաքը, իրաւամբ կրնայ համարուիլ եւ այժմ մայրաքաղաք բովանդակ Կովկասեան եւ Անդրկովկասեան աշխարհին, եւս եւ Հայաստանի եւ Վրաստանի միանգամայն: Նորաշէն մասը իւր կանոնաւոր շէնքերովը, ուղղագիծ փողոցներովը, ծառազարդ ճեմելիքներովը, մեծափարթամ վաճառանոցներովը (որ քերվանսարայ կըսուին), եւ գիշերային կանթեղներովը իսկոյն կցուցնէ թէ եւրոպական բարեկարգ տէրութեան մը ձեռք է, եւ թէ բնակիչներուն մէջ հարուստը աղքատներէն շատ ավելի բազմաթիւ է, բայց հին մասին վրայ եւս յայտնապէս կերեւնան արեւելեան շատ քաղաքաց մեծամեծ պակասութիւնները. այսինքն նեղ, ծուռ եւ աղտեղի փողոցներ, մանր մանր խանութներ, խառնափնդոր շինուածքով տներ...»[61]:

Քաղաքի զարգացմանը զուգընթաց, սկսած 1860 թ-ից՝ Թիֆլիսի քաղաքային վարչության կազմը համալրվում է այնպիսի նոր պաշտոնատարներով, ինչպիսիք էին՝ քաղվարչության քարտուղարը, քաղվարչությանը կից որբախնամ դատարանի քարտուղարը, գանձապահը և քաղաքամասերի կոմիսարները: Կառավարման այդ ձևը գոյատևում է մինչև 1867 թ.:

ՀԱՄՔԱՐՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 1865 Թ. Քաղաքագլուխ Գալուստ Շերմազանյանցը քաղաքի բարեկարգությանը միտված իր ձեռնարկումները կյանքի կոչելու նպատակով 1865 թ. քաղաքաբնակ առևտրաարհեստավորական խավի՝ առանձնապես ունևոր հատվածին փորձում է նոր հարկատեսակներ պարտադրել: Նախաձեռնության դեմ ընդվզելով, բայց հատկապես նորընծա քաղաքագլխի՝ նորեկ (ախալմոսուլ) լինելու հանգամանքը շահագործելով (նման իրողության հետ բնիկ քաղաքացի՝ մոքալաք հայերը ոչ մի գնով չէին կարողանում հաշտվել)՝ հրահրվում է համքարների ապստամբությունը: Արդյունքում սպանվում է հարկահավաք Բաժբեուկ Մելիքյանցը, իսկ քաղաքագլուխը ստիպված լքում է քաղաքը[62]:

Որպես հետևանք համքարների աննախադեպ ապստամբության՝ 1866 թ. Կովկասի փոխարքա իշխան Մ. Նիկոլաևիչը (1862-1882 թթ.) ընդունում և հաստատում է քաղաքի կառավարման լրացված և վերամշակված նախագիծը:

Մինչ նշված բարեփոխությունները քաղաքային վարչությունը գործել է հետևյալ բաժանմունքներով.

56. “Кавказский Календарь на 1856 г.”, Тифлис, 1855, էջ 620:
57. “Кавказский Календарь на 1857 г.”, Тифлис, 1856, էջ 522:
58. “Кавказский Календарь на 1858 г.”, Тифлис, 1857, էջ 426:
59. “Кавказский Календарь на 1859 г.”, Тифлис, 1858, էջ 452:
60. “Кавказский Календарь на 1860 г.”, Тифлис, 1859, էջ 10:
61. «Մասեաց Աղաւնի եւ Ծիածան Հայաստանեայց», 1860, Բ, էջ 28-29:
62. Ապստամբության մանրամասները տե՛ս սույն աշխատության Գ. Շերմազանյանցին նվիրված բաժնում (էջ 58-60):

Տարեթիվ	Ախոռապետ	Քաղվարչության անդամներ		Պետերբուրգում	Քաղվարչության քարտուղար	Քաղվարչության նախագահ և նրա տեղակալ	Գանձապահ	Չորս քաղաքամասերի կոմիսարներ			
		Քաղաքացի (մոքալաք) անդամներ	Նորեկ (ախալմոսուլ) անդամներ					1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1860[63]	Սողոմոն Զաքարյան Աբիսողոմյանց	Սողոմոն Մովսիսյան Իստամանյանց, Ստեփան Մեբուրնուքյանց	Հովհաննես Մամիկոնյանց, Հակոբ Միքելյանց	Մ ի խ ա յ ի լ Ֆեոդորովիչ Ֆեոդորով	Լեոնիդ Բաբաթով			Գ.Գ. Մորիմանյանց	Ֆիլիպ Իոսիֆ. Չիլվախեն	Դմիտրի Հովսեպի Բերին	
1861[64]	Սողոմոն Միրիմանյան Միրիմանյանց	Եղիա Հովհաննիսյան Փուղինյանց, Գաբրիել Ավելի Շադինյանց, Գրիգոր Հակոբյան Հախնազարյանց	Պետրոս Հովհաննիսյան Համբարձումյանց, Եղիա Մինասյան Դիդարյանց, Միքայել Իսահակյան Նալբանդյանց	Միխայիլ Ֆեոդորովիչ Ֆեոդորով	Լեոնիդ Բարաթով	Հովսեփ Գաբրիելյան Պոմպոնյանց	Մովսես Պողոսյան Արտության-Երկայնաբազուկ	Գրիգոր Գաբրիելյան Միրիմանյանց	Ֆիլիպ Իոսիֆ. Չիլվախեն	Դմիտրի Հովսեպի Բերին	Ղազիմագ Դավթյան Ղազիմագյանց
1862[65]	Եղիա Գրիգորյան Փրիդոնյանց	Ալեքսանդր Գրիգորյան Բաբանասյանց, Ստեփան Վահրամյան Աստվածատրյանց, Գրիգոր Հակոբյան Հախնազարյանց	Պետրոս Հովհաննիսյան Համբարձումյանց, Միքայել Եսայան Նալբանդյանց, Գևորգ Մելք. Դիդարյանց	Միխայիլ Տիմ. Դեմենտև, Միխայիլ Ֆեոդորովիչ Ֆեոդորով	Լեոնիդ Գերմանոզ Բարաթով (ազգ. բնակ. ֆրանցի պատմագրաստ)	Հովսեփ Գաբրիելյան Պոմպոնյանց	Մովսես Պողոսյան Արտության-Երկայնաբազուկ	Գրիգոր Գաբրիելյան Միրիմանյանց	Ֆիլիպ Իոսիֆ. Չիլվախեն	Դմիտրի Հովսեպի Բերին	Ղազիմագ Դավթյան Ղազիմագյանց
1863[66]	Եղիա Գրիգորյան Փրիդոնյանց	Ալեքսանդր Գրիգորյան Բաբանասյանց, Ստեփան Վահրամյան Աստվածատրյանց, Գրիգոր Հակոբյան Հախնազարյանց	Պետրոս Հովհաննիսյան Համբարձումյանց, Միքայել Եսայան Նալբանդյանց, Հովհաննես Հովսեփյան Սահպով	Միխայիլ Տիմոֆ. Դեմենտևան, Միխայիլ Ֆեոդորովիչ Ֆեոդորով	Միխայիլ Դմիտրի Կիկոձե	Գրիգոր Հովսեփյան Մելիքյանց	Մովսես Պողոսյան Արտության-Երկայնաբազուկ	Գրիգոր Գաբրիելյան Միրիմանյանց	Ֆիլիպ Իոսիֆ. Չիլվախեն	Դմիտրի Հովսեպի Բերին	Ղազիմագ Դավթյան Ղազիմագյանց
1864[67]	Գալուստ Հարությունյան Շերմազանյանց	Ա. Գ. Բաբանասյանց	Հ. Էնֆենջյանց, Գ. Մկրտումյանց, Ի. Մամիոով, Ա. Դ. Խեչումյանց, Ա. Բաբայանց, Հ. Դ. Վարդանյանց	Ա. Օ. Դիժինցա-Կովվախ	Մ. Դ. Կիկոձե	Գ. Հ. Մելիքյանց	Մ. Պ. Արտության-Երկայնաբազուկ	Գ. Գ. Միրիմանյանց	Ֆ. Ի. Չիլվախեն	Դ. Հ. Բերին	Գ. Դ. Ղազիմագյանց
1865[68]	Սողոմոն Զաքարյան Աբիսողոմյանց	Ն. Ի. Միլով, Հ. Ա. Տեր-Ղազարյանց, Հ. Մանթաշյանց	Կ. Մամիկոնյանց, Ս. Ա. Տեր-Մելքիսեթյանց	Ա. Օ. Դիժինցա-Կովվախ	Մ. Դ. Կիկոձե	Գ. Հ. Մելիքյանց	Ջ. Ս. Եմինովտյանց (հաշվապահ)				
		Ա.լ L. Զիսեվոմամ	Ս. Ս. Շոլկոև, Հ. Պ. Մարգարյանց	Մ. Դ. Կիկոձե			Ք. Ա. Արարատյանց (հաշվապահ)	Ա. Հ. Մելիքյանց	Ֆ. Ի. Չիլվախեն	Օ. Բաժբեուկ-Մելիքյանց	Գ. Դ. Ղազիմագյանց
1867[69]	Երեմիա Գևորգյան Արծրունի	Ն. Ե. Զուբալով, Ա. Ն. Օնիկով, Մ. Հ. Շադինյանց, Ա. Գ. Բաբանասյանց, Ջ. Ս. Նարիմանյանց, Ս. Հ. Շաբուրյանց									

63. “Кавказский Календарь на 1861 г.”, Тифлис, 1860, էջ 12:
64. “Кавказский Календарь на 1862 г.”, Тифлис, 1861, էջ 340:
65. “Кавказский Календарь на 1863 г.”, Тифлис, 1862, էջ 359-360:
66. “Кавказский Календарь на 1864 г.”, Тифлис, 1863, էջ 311:
67. “Кавказский Календарь на 1865 г.”, Тифлис, 1864, էջ 15-16:
68. “Кавказский Календарь на 1866 г.”, Тифлис, 1865, էջ 18:
69. “Кавказский Календарь на 1868 г.”, Тифлис, 1867, էջ 40:

Համաձայն 1866 թ. ընդունված նոր կանոնադրության՝ ընտրողները բաժանվում էին հասարակական 4 խավի: Առաջին խավի մեջ մտնում էին տոհմիկ ազնվականները, երկրորդում՝ «անճնապես» ազնվականները և տոհմիկ քաղաքացիները, երրորդում՝ քաղքենիները և չորրորդում՝ քաղաքային որևէ պարտավորություն ունեցող անձինք: Յուրաքանչյուր խավին իրավունք էր տրված ընտրել 100-ական ներկայացուցիչ, որոնք քաղաքային հասարակական խորհրդին մասնակցելու համար իրենցից ընտրում էին 25-ական իրավասու և 8 թեկնածու: Այդպիսով, քաղաքային խորհուրդը բաղկացած էր 100 իրավասուներից, որոնք էլ իրենցից ընտրում էին ոչ միայն քաղաքի կառավարման համակարգի բոլոր պաշտոնատար անձանց, այլև քաղաքագլխին: Վարչությունը կազմվում էր քաղաքագլխից և վերը նշված 4 խավերից ընտրված ութ անդամներից[70]:

Այս կարգով իրավասուների առաջին ընտրությունները տեղի էին ունեցել 1866 թ. դեկտեմբերին[71]:

1868 թ. քաղվարչության կազմը պաշտոնատարների համալրման արդյունքում ներկայացրել է հետևյալ պատկերը[72].

Քաղաքագլուխ - գեներալ-մայոր Երեմիա Գևորգյան Արծրունի:

Կառավարության անդամ – Նիկոլայ Խարիտոնովիչ Տվերդոխլեբովիչ:

Ընտրական անդամության տոհմիկ ազնվականներ – Տիմ. Նիկիտ. Բելոյ, Նիկողայոս Ե. Զուբալով, ազնվական՝ Թովմա Թ. Քեթխուդյանց, տոհմական պատվավոր քաղաքացի՝ Ալեքսանդր Գրիգորյան Բաբանասյանց:

Տոհմիկ քաղաքացի (մոքալաք) - Զաքարիա Սարգսյան Նարիմանյանց, Սողոմոն Հովհաննիսյան Շաբուրյանց:

Քաղաքացի – Սող. Ստեփ. Շելկոեզով, Հովհաննես Գրիգորյան Մարգարյանց:

Քարտուղար – Միխայիլ Դմ. Կիկոձե:

Հաշվապահ - Քրիստափոր Ավետիքյան Արարատյանց:

Քաղաքային կոմիսարներ - Արտ. Հովհաննիսյան Մելիքյանց, Ֆիլ. Ի. Չիքվաիձե, Միքայել Աթարբեգյան Բաժբեուկ-Մելիքյանց, Ղորխմազ Դավթյան Ղայթմազյանց:

Առևտրային տեսուչ – Միքայել Նիկողայոսյան Սունդուկյանց:

Բնակարանային կոմիտե - Ադամ Անդր. Կվյատկովսկի, Իվան Բորիսովիչ Բուչկին, ազնվական՝ Ալեքսանդր Նիկողայոսյան Շաղինյանց, Հարություն Գրիգորյան Բաբանասյանց, տոհմիկ քաղաքացիներ՝ Գրիգոր Նիկողայոսյան Սկրտումյանց, Ավետիք Ռոստոմյան Թարխանյանց, քարտուղար՝ Պլատոն Միխ. Միխայլով, հաշվապահ՝ Մովսես Պողոսյան Արղության-Երկայնաբազուկ:

Քաղաքային որբանոց - Բարսեղ Արտ. Վարդանյանց, պետխորհրդական՝ Գաբրիել Ն. Տեր-Ասատրյանց, քարտուղար՝ Գրիգոր Հովսեփյան Մելիքյանց, Ջհանգիր Ստեփանյան Ենիկոլոպյանց:

Քաղաքային երդվյալ գնահատողներ – քաղաքացի՝ Հովսեփ Ստեփանյան Անանյանց, տոհմ. պատվ. քաղաքացի՝ Իլար. Պարակով, Նիկողայոս Գաբրիելյան Շաղինյանց:

Կալվածների հրապարակային վաճառքի երդվյալ վկաներ – տոհմիկ քաղաքացի՝ Ալեքսանդր Մարտիրոսյան Ծովյանց, Բ. Ե. Բաստամյանց, քաղաքացի՝ Շաքար Սարգսյան Դեդունյանց:

Թիֆլիսի աճուրդային մաս - դր. Ստեփան Եղիա Բաստամյանց (վարիչ), քաղաքացի՝ Սիմեոն Եղիա Զարգարյանց, Իսահակ Պ. Չելիև:

Առաջին վարչություն - ավագ՝ Նիկողայոս Հովհաննիսյան Ալադաթյանց, Հարություն Եգանյանց, Գասպար Իսահակյան Սահակյանց, Ստեփան Գերասիմյան Ստեփանյանց, Գրիգոր Բեժան. Կոնիև:

Ավագանի – Կարլ Քրիստիան. Կուգլեր, Պողոս Հովհաննիսյան Ավալյանց, Գրիգոր Սիմեոնյան Շարիմանյանց, Միքայել Գրիգորյան Լազարյանց:

Նախագահողներ - Բեժան Զաքարյան Ենիկոլոպյանց և Հերման Վալլինգ:

Երկրորդ վարչություն - ավագ, քաղաքացի՝ Բարսեղ Հարությունյան Ղալամքարյանց, Եղիա Գաբրիելյան Ավետիսյանց, Գևորգ Առաքելյան Տեր-Աբրահամյանց, Եգոր Արտեմովիչ Պիշնով, Դավիթ Պողոսյան Դեմուրյանց, Զաքարիա Գրիգորյան Դավթյանց, Հովհաննես Ալեքսանդրյան Ազիզյանց:

Ավագանի – Հովհաննես Պողոսյան Բոյախչյանց, Խեչո Մարտիրոսյան Հովսեփյանց, Հովհաննես Ն. Տեր-Նիկողոսյանց, Միքայել Հովսեփյան Մեհրաբյանց:

Թիֆլիսի արհեստավորաց վարչություն - ավագ, քաղաքացի՝ Ստեփան Պետրոսյան Ջանյանց, արհեստավորաց ավագ (ուստաբաշի)՝ Խլեբնիկյանց, քաղաքացիներ՝ Պետրոս Յուզբաշյան, կոշկակար՝ Հաջի-Սերոբ Տերջանյանց, Գիգոլ Աղաջանյանց, մուշտակագործ և գլխարկագործ՝ Գեո Ծովյանց, դերձակ՝ Շաքար Վարդան-Բաբյանց, ատաղձագործ՝ Զաքարիա Պետրոսյանց, կառապան՝ Անդր. Կոտրին, ներկարար՝ Գալուստ Մարտիրոսյանց, հանքագործ՝ Աբրամ Բիբիլաուրի, աղամանդագործ՝ Ալեքսանդր Կարա-

---

70. **Джабарь М.**, նշվ. հոդվածը, նույն տեղում:

71. Նույն տեղում:

72. “Кавказский Календарь на 1869 г.”, Тифлис, 1868, էջ 25-27:

խանյանց, վարսավիր՝ Հովհաննես Ջամասպյանց, զինագործ՝ Սողոմոն Կագարով, հաստոցագործ՝ Հարություն Ստեփանյանց, ներկագործ՝ Սարգիս Անտոնյանց, տրեզագործ՝ Կարապետ Ալավերդյանց, աղյուսագործ՝ Սիմեոն Մանթաշյանց, կաշեգործ՝ Գրիգոլ Ասկիլով:

Պաշտոնների հաստիքային այս համակարգն իր կենսունակությունը պահպանել է մինչև 1875 թ.[73], որից հետո ժամանակ առ ժամանակ կրել որոշ փոփոխություններ.

Տարեթիվ	Քաղաքագլուխ	Փոխքաղաքագլուխ	Վարչաթղթաց ամանակներ	Քաղ. (նաև՝ Դատական) քարտուղար	Գործավարներ				Քաղ. ճարտարապետ	Քաղաշխատողների գործակալներ	Քաղտեխնիկներ	Քաղհսկիչ	Վարչ. գիտակից հաշվապահ	Գործադիր ծառայողներ	Առևտրական վերահսկիչներ	Որբերի դատարան
					1	2	3	4								
1875[74]	Յ. Գ. Թումանյանց (8.12. 1874-01.12.1875), Ղ. Ի. Գիփիանի (14.12.1875-ից)	Լ. Կ. Էլիմիդզյանց (22.01 1875-ից)	Ի. Ն. Խանջին, Հ. Գ. Պոմպոն (22.01.1875-ից)	Լ. Յ. Մելերյանց (22.01.1875-ից)									Ն. Ա. Պապյանց, գանձապահ՝ Ի. Ե. Մատրախով	Հ. Զ. Ապամանգյանց, Ֆ. Ի. Չիքվանիե, Մ. Ա. Քոչարյանց, Ե. Ա. Չծշկյանց, Ն. Մ. Գալոյբև, Ա. Մ. Շահվերդյանց	Հ. Ա. Շադինյանց, Պ. Ն. Քաբաճապյանց	Լ. Մ. Բեհբուդյանց, անդամներ՝ Ա. Ե. Բարամեանց, Ե. Ի. Փուրնիով, Թ. Գ. Սալիբյանց
1876[75]	Գ. Ի. Գիփիանի	Լ. Կ. Էլիմիդզյանց (մինչև 23.02.1876)	Ի. Ն. Խանջին, Գ. Ս. Խաոիպյանց, Ա. Ա. Թամամշյանց, Պ. Լ. Ալիսագյանց	Լ. Յ. Մելերյանց (մինչև 20.12.1876)	Հ. Ի. Տեր-Մտեփանյանց	Մ. Պ. Արտության-Երկայնաբազուկ	Ա. Ա. Զալեմովի						Ն. Ա. Պապյանց, օգնականներ՝ Զ. Ա. Եմիկուզյանց, Ն. Զ. Նազարյանց, գանձապահ՝ Ի. Ե. Մատրախով	Ս. Ե. Դիդրյանց, Ֆ. Ի. Չիքվանիե, Մ. Ա. Քոչարյանց, Լ. Լ. Սեբերյանակյանց, Ա. Մ. Շահվերդիևյանց	Ֆ. Ռ. Յադին, Մ. Ն. Սուրմուկյանց
1877[76]	Գ. Ի. Գիփիանի	Ս. Ե. Դաւսիեանցյանց (30.12.1876-ից)	Ի. Ն. Խանջին, Ա. Ս. Մատինյանց, Պ. Ղ. Ալիսագյանց	Պ. Ա. Իգնատիյանց (15.01.1877-ից)	Հ. Ի. Տեր-Մտեփանյանց	Մ. Պ. Արտության-Երկայնաբազուկ	Ա. Ա. Զալեմովի	Ն. Հ. Աճառյանց	Ե, Տ. Բեկով	Յ. Ա. Ալեքսեև	Վ. Դմ. Կարցով	Ե. Ա. Չծշկյանց	Ն. Ա. Պապյանց, օգնականներ՝ Զ. Ա. Եմիկուզյանց, Ն. Զ. Նազարյանց, Պ. Դմ. Սոկոլով, Ի. Ե. Մատրախով	Ս. Ե. Դիդրյանց, Ֆ. Ի. Չիքվանիե, Մ. Ա. Քոչարյանց, Լ. Լ. Սեբերյանակյանց, Ա. Մ. Շահվերդիևյանց	Ֆ. Ռ. Յադին, Մ. Ն. Սուրմուկյանց	Պ. Ն. Բարամեանց, Պ. Յուզբաշյանց, Վ. Խաչատրյանց, բեկնաձուցներ՝ Ս. Բարխուդարյանց, Պ. Ստեփանյանց	Ն. Ն. Շաճշյանց, անդամներ՝ Հ. Զ. Ապամանգյանց, Պ. Ն. Բարամեանց, Գ. Գ. Խաոիպյանց, Մ. Ս. Բումիաթյանց	Լ. Մ. Բեհբուդյանց, անդամներ՝ Ա. Ե. Բարամեանց, Ե. Ի. Փուրնիով, Թ. Գ. Սալիբյանց

73. “Кавказский Календарь на 1870 г.”, Тифлис, 1869, էջ 28-30: Նաև՝ “Кавказский Календарь на 1871 г.”, Тифлис, 1870, էջ 28-29: Նաև՝ “Кавказский Календарь на 1872 г.”, Тифлис, 1871, էջ 29-31: Նաև՝ “Кавказский Календарь на 1873 г.”, Тифлис, 1872, էջ 30-31: Նաև՝ “Кавказский Календарь на 1874 г.”, Тифлис, 1873, էջ 32-34: Նաև՝ “Кавказский Календарь на 1875 г.”, Тифлис, 1874, էջ 26-28: **Джабарь М.**, ձշվ. հոդվածը, նույն տեղում:

74. “Кавказский Календарь на 1876 г.”, Тифлис, 1875, էջ 28: Տե՛ս նաև “Известия Тифлисской городской Думы”, N 4, Тифлис, 1911, էջ 18:

75. “Кавказский Календарь на 1877 г.”, Тифлис, 1876, էջ 30:

76. “Кавказский Календарь на 1878 г.”, Тифлис, 1877, էջ 30:

1878[77]	Դմ. Ի. Վիսիիանի
	Մ. Ե. Դոլուխանովցանց
	Ի. Ն. Խոմճցին, Ա. Ս. Մոսինյանց, Պ. Ղ. Ալխազյանց
	Պ. Ա. Իզմնայիլյանց
	Ք. Թ. Արվանով
	Մ. Պ. Արծրունթյան-Երվանյանց-բազուկ
	Ա. Ա. Չալենկի
	Հ. Դ. Միշչանոմյանց
	Պ. Ն. Զաբլոցկի
	Յ. Ա. Ալեքսեև
	Ա. Գ. Գեղամիոով
	Ե. Ա. Շնչկյանց
	Ն. Զ. Նազարյանց, օգնականներ՝ Պ. Դ. Սոկոլով, Ն. Ա. Պարոն-Սարգսյանց, գանձապահ՝ Ի. Ե. Սարախով
	Ե. Դիդարյանց, Ֆ. Ի. Շիքվաիե, Մ. Ա. Քոչարյանց, Լ. Լ. Սեղբրյակյանց, Ա. Մ. Շահվերդյանց
	Փ. Ռ. Յիսրլի, Մ. Ն. Սոսինցկակց
	Պ. Ն. Բաբաեանյանց, Ս. Բաղիեուդարյանց, Ա. Չեքոյբյանց

1875 թ. հունվարի 1-ից 72 իրավասուների կազմով Թիֆլիսում գործադրության մեջ է մտնում ողջ Ռուսաստանի քաղաքների համար դեռևս 1870 թ. մշակված քաղաքների ինքնակառավարման նախագիծը:

Քաղվարչության հաստիքային համակարգն ու պաշտոնատար անձինք 1870-ական թթ. վերջերին ներկայացված էին հետևյալ կերպ.

Տարեթիվ		
Քաղաքագլուխ		
Փոխքաղաքագլուխ		
Վարչության անդամներ		
Քաղ. (նաև՝ Դատական) քաղաղամասի պատասխ		
Դումայի կից գործադրներ		
Վարչության գործակատարներ		
Քաղաքի գլխավոր ինժեներ		
Քաղաքի ճարտարապետ		
Տեղամասերի տեխնիկներ		
Վարչ. գլխավոր հաշվապահ		
Գանձապահ		
Գործարքի ծառայողներ		
Քաղաքի գործերով վարաեխած պատ		
Հին գործերի կարգավորող ծառայողներ (արխիվարիուս)		
Առևտրական վերահսկիչներ		
Ամորտիզի գրասենյակ		
Որթերի դատարան		
1879[78]	Դմ. Ի. Վիսիիանի (մինչև 09.04.1879), Ա. Ս. Դոդրամջյանց (28.011879, հրաժարվել՝ 15.02.1879), Ա. Ս. Մաահինյանց (11.03.1879-ից)	Մ. Ե. Դոդրիսահամյանց (մինչև 01.06.1879), Ա. Ա. Թաանանշյանց (08.10.1879-ից)
1880[79]	Ա. Ս. Մաահինյանց	Ա. Ա. Թաանանշյանց
	Ն. Ա. Պապդամց, Ե. Ե. Խոսրև	Պ. Ա. Իզմայիլյանց
	Ա, Ս. Տրեոդակով	Ա. Ս. Տրեոդակով
	Հ. Դ. Աիշաարումյանց, Ե. Դ. Տեր-Ավեքսանդրյանց	Ա. Լ. Սիկաանդև
	Ա. Գ. Օզեդով	Նլ. Ն. ժերեեցով, Հոլի. Հ. Աղումանյանց, Ս. Վ. Դավիդով
	Ն. Զ. Նազարյանց, օգնականներ՝ Ա. Ա. Զալեմնի, Ի. Զ. Գոզրեերիև, Գ. Ա. Ղդրամնյանց	Գ. Ն. Շաոիճյանց
	Մ. Ա. Քոչարյանց, Ս. Ե. Դիդարյանց, Ֆ. Ի. Շիքվաիե, Գ. Ա. Շիկաանի, Ն. Հ. Ղդրամնյանց	Ա. Յ. Կաանանի
	Փ. Ռ-Յիսրլի, Կ. Մ. Շիուկով	Պ. Ն. Բաբաանայանց, գնահատողներ՝ Ս. Բաղիեուդարյանց, Ա. Չեքոյբյանց
	Ն. Ն. Շահշյանց, աճդամներ՝ Պ. Ն. Բաբաանայանց, Դ. Գ. Խաոիխյանց, Մ, Մ. Բումիաթյանց	Ն. Ն. Շահշյանց, աճդամներ՝ Պ. Ն. Բաբաանայանց, Դ. Գ. Խաոիխյանց, Մ, Մ. Բումիաթյանց

77. “Кавказский Календарь на 1879 г.”, Тифлис, 1878, էջ 24:

78. “Кавказский Календарь на 1880 г.”, Тифлис, 1879, էջ 28: Տե՛ս նաև “Известия Тифлисской городской Думы”, N 4, էջ 18:

79. “Кавказский Календарь на 1881 г.”, Тифлис, 1880, էջ 28:

1881[80]	Ա. Ս. Մատինյանց	Ա. Ա. Թամամշյանց	Ն. Ա. Պապյանց, Ե. Ե. Խոսրոև	Պ. Ա. Իզմայիլյանց	Ա. Ս. Տեռոյանով	Հ. Դ. Միշպարոնյանց, Ն. Գ. Տեր-Մարգարյանց	Ա. Լ. Սիլյանդեր	Ա. Գ. Օզերով	Հովհ. Հ. Ադոնցյանց, Ա. Հ. Հեջուրյանց, Ս. Վ. Դավիդով	Ն. Զ. Նազարյանց, օգնականներ՝ Ի. Զ. Գոգոբերիձե, Գ. Հ. Ղորղանյանց, Ն. Ա. Պարոն-Մարգարյանց	Ի. Հ. Տեր-Միքելյանց	Մ. Ա. Քոչարյանց, Ս. Ե. Գիդարյանց, Ֆ. Ի. Չիքվաիձե, Ս. Գ. Կորիձեվի	Գ. Ա. Չիկոռանի	Վ. Ս. Մոիսև	Փ. Ռ. Ֆիալին	Պ. Ն. Բաբաճանյանց, գահատոմներ՝ Գ. Խատիսյանց, Ա. Հեջուրյանց	Ն. Ն. Շանշյանց, անդամներ՝ Պ. Ն. Բաբաճանյանց, Գ. Գ. Խատիսյանց, Ե. Ի. Տեքումյանց, Պ. Հովի. Անիրյանց, գործավար՝ Ա. Մ. Շահվերդյանց

1880-ական թթ-ից մինչև 1890-ական թթ. սկիզբը քաղխորհրդում ձևավորվել էր ընդդիմություն, որն ըստ էության կազմվել էր վրացազգի իրավասուներից: Վերջիններիս՝ քաղխորհրդում նկատելի դիրքեր զբաղեցնելու ուղղությամբ գործադրած ճիգերը մնացել էին անարդյունք քաղաքագլուխներ Ա. Մատինյանցի և Պ. Իզմայիլյանցի պաշտոնավարության շրջանում. «...օպպոզիցիան կազմում էին վրացիք, որոնց մէջ էին վրացոց ականաւոր գործիչներ՝ Նիկոլաձե, Ջուբալով, Չելոկաեւ, Ի. Մաչաբելի և այլք: Եւ ահա Մատինեան-Իզմայլեան արշաւանքի զոհերը, որ պէտք է լինէին ընդդիմադրականները առհասարակ, այդ անգամ վրացիք էին լինելու, որովհետև նոքա էին կազմում ընդդիմադիր կուսակցութիւնը նախկին խորհրդարանում: Շնորհիւ այդ հանգամանքի՝ կռիւը ընտրութիւնների ժամանակ ստացել էր կերպարանք հայերի կռւի ընդդէմ վրացոց: Բայց դա միայն թւում էր: Մատինեան-Իզմայլեան և ընկ. կազմել էին ընտրողական մի ցուցակ այն անձերից, որոնց ահագին մեծամասնութեան վրայ նոքա վստահ էին. և նոցա հետևող մեծամասնութիւնը հայոց դրամատէր կամ տնատէր շրջանն էր, որին և, 1892-ի քաղաքային նոր կանոնադրութեամբ, վճռողական ձայն է տրւած քաղաքային ընտրութիւնների համար»[81]:

1880-ական թթ., երբ պաշտոնավարում էր քաղաքագլուխ Ա. Մատինյանցը, քաղվարչությունն ունեցել է հետևյալ կազմը.

Տարեթիվ	Քաղաքագլուխ	Վարչության անդամներ	Քաղաքի ինժեներ	Քաղաքի ճարտարապետ
1883[82]	Ա. Ս. Մատինյանց (վերընտրվել է 23.01.1883)	Ա. Ա. Թամամշյանց (փոխքաղաքագլուխ՝ մինչև 04.06.1883), Պ. Ա. Իզմայիլյանց (փոխքաղաքագլուխ՝ 17.10.1883-ից), Ն. Ա. Պապյանց (վերընտրվել է 31.01.1883), Ե. Ե. Խոսրոև (վերընտրվել է 31.01.1883)	Ա. Լ. Սիլյանդեր	Ա. Ե. Օզերով
1884[83]	Ա. Ս. Մատինյանց	Պ. Ա. Իզմայիլյանց (փոխքաղաքագլուխ), Ն. Ա. Պապյանց, Ե. Ե. Խոսրոև	Ա. Լ. Սիլյանդեր	Ա. Ե. Օզերով
1885[84]	Ա. Ս. Մատինյանց	Պ. Ա. Իզմայիլյանց (փոխքաղաքագլուխ), Ն. Ա. Պապյանց, Ե. Ե. Խոսրոև		Ա. Պ. Շիմկևիչ

80. “Кавказский Календарь на 1882 г.”, Тифлис, 1881, էջ 38:
81. **Արասխանեանց Ա.**, Քաղաքային ընտրութիւնների առիթով, «Մուրճ», 1897, N 1, էջ 140-141:
82. “Кавказский Календарь на 1884 г.”, Тифлис, 1883, էջ 32: Տե՛ս նաև “Известия Тифлисской городской Думы”, N 4, էջ 18, 19, 20:
83. “Кавказский Календарь на 1885 г.”, Тифлис, 1884, էջ 37:
84. “Кавказский Календарь на 1886 г.”, Тифлис, 1885, էջ 31:

Հետագա տարիներին քաղվարչակազմը ենթարկվելվել է որոշ փոփոխությունների և լրացումների.

Տարեթիվ	Քաղաքագլուխ	Վարչության անդամներ	Քաղաքի ճարտարապետ	Քաղաքային տեխնիկներ	Քաղաքի հարկային	Քաղաքային վարչ. գործակիցներ	Քաղաքային փաստաբան	Գլխավոր հաշվապահ	Գանձապահ	Քաղաք. դատարանի հավատարմատար
1886[85]	Ա. Ս. Մատինյանց	Պ. Ա. Իզմայիլյանց (փոխքաղաքագլուխ), Ն. Ա. Պապյանց, Ե. Ե. Խոսրոև		Ն. Շ, Փիրոյանց-Յարությանց, Ն. Ե. Յուրիմով, Պ. Կ. Գոռհարդտ		Ն. Գ. Տեր-Մարգարյանց, Հ. Գ. Ախշարումյանց, Գ. Գ. Ղուլյանց		Ն. Չ. Նազարյանց	Ի. Հովի. Տեր-Միքելյանց	Հ. Տիգրանյանց
1887[86]	Ա. Ս. Մատինյանց (վերընտրվել է՝ 13.01.1891-ից, մինչև 01.03.1891)	Պ. Ա. Իզմայիլյանց (փոխքաղաքագլուխ), Ն. Ա. Պապյանց (վերընտրվել է 12.01.-1887-01.11.1890), Ե. Ե. Խոսրոև (վերընտրվել է 12.01.1887, 21.01.1891, 21.11.1893)	Ա. Պ. Շիմկևիչ	Ն. Շ, Փիրոյանց-Յարությանց, Ա. Ա. Մելիք-Բեգլարյանց, Պ. Կ. Գոռհարդտ	Հ. Ն. Մարկոսյանց	Հ. Ա. Վերմիշյանց, Հ. Գ. Ախշարումյանց, Գ. Գ. Ղուլյանց	Ի. Ս. Տեր-Ստեփանյանց, օգնական՝ Ս. Բ. Իսրայելյանց			

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ (ԴՈՒՄԱՅՈՒՄ) 1880-ԱԿԱՆ ԹԹ. ՎԵՐՋԻՆ ԵՎ 1890-ԱԿԱՆ ԹԹ. ՍԿԶԲԻՆ. 1886 թ. վիճակագրական տվյալներով Թիֆլիսի բնակչության միայն 47 %-ը կազմող հայերը Քաղաքային Խորհրդում ունեին ձայների 72 %-ը: Ուշագրավ է, որ բնակչության 28 %-ը կազմող վրացիները քաղխորհրդում ունեին միայն ձայների 4 %-ը, իսկ 21 % կազմող այլ ազգերը (ռուս, գերմանացի, լեհ, հույն և այլն) նույն թվականին ունեին ձայների 24 %-ը[87]:

Հայազգի իրավասուների թվական գերակշռության պայմանը, օրինակ, Կ. Տյուրյանը մեկնաբանել է այսպես. «Ասկէ ուղղակի կը հետեւի նաեւ՝ որ քաղաքին դրամական ոյժերն Հայք մեծաւ մասամբ կը կազմեն: Վաճառականութիւնն ինչպէս եւ շահաղիտական ամէն ձեռնարկութիւնները գլխաւորաբար Հայոց ձեռքն են: Տփղիսեցի հայ դրամատեարք այնպիսիներուն չեն նմանիր, որոնք երբեք կարծես չեն կարող խմբիլ ընդարձակ դրամական ձեռնարկութեան մի շուրջը: Տփղիսի դրամատները (banque) հայոց դրամագլուխներով են հիմնուած: «Տփղիսի առեւտրական բանկն (Тифлисский Комерческий банк), «Փոխադարձ վարկի ընկերութիւնը» (Общество взаимнаго кредита), «Քաղաքային կրեդիտային ընկերութիւնը (Городское Кредитное Общество), «Քաղաքային հրդեհի դէմ ապահովագրութեան ընկերութիւնը» Հայերն են հիմնած և իրենք են բաժնատերք մեծաւ մասամբ: Վերջին ընկերութիւնը դեռ նորերս հիմնուեցաւ. մտածեցին, ինչու՞ ամեն տարի ահագին գումար վճարել զանազան ռուս կամ օտար ընկերութեանց. լաւագոյն է, որ այն դրամն ալ իրենց մէջ մնայ...»[88]:

Դեռևս 1890 թ. ոչ միայն քաղաքագլուխն ու իր օգնականը, այլև Քաղաքային Խորհրդի անդամների գերակշիռ մասն ազգությամբ հայեր էին. «Ընտրեալ եւ ընտրող լինելու համար հարկաւոր է որոշ գումարի անշարժ կայք ունենալ, կամ ճշտագոյնս՝ որոշ տուրք տալ քաղաքային գանձարանին: Թէեւ Տփղիսի ազգաբնակութեան կէսը միայն Հայ էր, բայց ընտրեալներու՝ հետեւաբար եւ ընտրողներու, ինչպէս նաեւ քաղաքին մէջ որոշ տուրք վճարողներու ստուարագոյն մասը Հայ է...»[89]:

Հայտնի է, որ նույն թվականին Քաղաքային Խորհրդի համար ընտրված 72 անդամներից հայ էին 38-ը , 22-ը՝ վրացի, 11-ը՝ ռուս և 1-ը՝ գերմանացի[90]:

1890-ական թթ. սկզբին՝ հատկապես 1893 թ. մայիսի 16-ին կայացած ընտրություններից հետո, հայերի և վրաց-ռուսական խմբակցության միջև հարաբերություններն աննախադեպ սրվել էին: Հիմնական պատ-

85. “Кавказский Календарь на 1887 г.”, Тифлис, 1886, էջ 28:
86. “Кавказский Календарь на 1888 г.”, Тифлис, 1887, էջ 67: Տե՛ս նաև “Известия Тифлисской городской Думы”, N 4, նույն տեղում:
87. **Туманов Г. М.**, Заметки о городском самоуправлении на Кавказе, Тифлис, 1902, էջ 3:
88. **Տիւրեան Կ.**, Շաբաթ մ՚ի Տփղիս, «ՀԱ», 1890, էջ 202-203:
89. **Տիւրեան Կ.**, նշվ. հոդվածը, էջ 202:
90. «Մուրճ», 1890, էջ 1757:

ճառն այն էր, որ Թիֆլիսի բնակչության 1/3-ըդից փոքր-ինչ ավելի մաս կազմող հայերը քաղաքային խորհրդում դարձյալ զբաղեցրել էին 2/3-ըդից ավելի ձայներ: Մնացած ազգությունների ներկայացուցիչները միասին խորհրդում ներկայացվել էին միայն ձայների 1/3-ըդ մասով: Այս իրողությունը բողոքի ալիք էր առաջ բերել մասնավորապես վրացի և ռուս թեկնածուների և նրանց պաշտպանող կուսակցությունների շրջանում: Բավական է նշել միայն, որ, օրինակ, 1893 թ. մայիսի 16-ին ընտրված 80 իրավասուներից ազգությամբ վրացի ընտրվել էր միայն մեկ անձ՝ իշխան Կոլուբանսկին, ռուս էին 16-ը, գերմանացի՝ 3-ը, հայ՝ 63-ը[91]:

Ընտրությունների արդյունքներից դժգոհ վրացազգի տարբեր գործիչներ գտնում էին, որ հայերն անհամեմատ ավելի քիչ ձայներով պետք է ներկայացված լինեին քաղաքային խորհրդում: Այսպես, Յ. Գոգեբաշվիլին նշել էր, որ հայ իրավասուների թվաքանակը պետք է կազմեր 1/3-ըդից փոքր-ինչ ավելի[92]: Ի. Ճավճավաձեի գլխավորած ռուս-վրացական կուսակցությունը հայ իրավասուների համար նախատեսում էր 22 տեղ, ռուսների համար՝ 23, վրացիներին՝ 28 տեղ[93]: Ինչ վերաբերում է ազգությամբ ռուս իրավասուների քաղաքային խորհրդարանում փոքր թիվ կազմելուն, ապա խնդրո առթիվ իր տեսակետը հայտնած «Կավկազ» ռուսերեն թերթի խմբագիր մոլի ազգայնական Վելիչկոն մի առիթով նշել էր. «Ռուս տարրի քիչ մասնակցութեան մասին այդ գործում խօմ ասելն աւելորդ է. դա ուղղակի հրէշաւոր երևոյթ է ինքն ըստ ինքեան... բոլորը, ինչ այստեղ քաղաքակրթութեան դրոշմ է կրում, ստեղծած է ռուսաց փողերով, նախաձեռնութեամբ կամ հովանաւորութեամբ ռուսաց կառաւարութեան, ռուսաց սուինի պաշտպանութեան ներքոյ. և յանկարծ, շատ տարիների ընթացքում, Թիֆլիսի ինքնավարութեան մէջ ռուսաց տարրը կազմում է այնքան տարօրինակ, այնքան անբացատրելի փոքրամասնութիւն: Դա ծաղր է...»[94]: Ավելորդ չէ ցույց տալ նաև, թե ինչ տրամաբանությամբ էր «Կավկազ»-ի պրն. խմբագիրը հիմնավորում վրացիների և ռուսների ավելի մեծ թվով ընտրվելու անհրաժեշտությունը. «...հայերը, ասում է նա, չպէտք է մոռանան, որ Թիֆլիսը նախկին վրաց թագաւորութեան մայրաքաղաքն էր... ռուսներին պէտք է ընտրել, որովհետև Ռուսիայի հովանաւորութեամբ է մեր երկրում լուսաւորութիւն մտել...»[95]:

Ինչ վերաբերում է Քաղաքային Խորհրդի ընտրությունների ժամանակ վրացազգի իրավասուների նկատելի փոքրամասնության հանգամանքին, ապա ժամանակին այդ երևույթը մեկնաբանվել է հետևյալ կերպ. «Վրացիները՝ քարթլեցի և կախեթցի, ամենից քիչն էին քաղաքացի: Նրանք նախ և առաջ հողագործ էին, հետո՝ ռազմիկ: Գյուղատնտեսությունը և զինվորական ծառայությունը ի սկզբանե Արևելյան Վրաստանի բնակիչների սիրված զբաղմունքն էր: Ժամանակը շատ բան է փոխում. աստիճանաբար վրացիների տարբեր դասակարգերից զատվում է բուրժուազիան ձևավորող տարրը: Հանդիպում են վրացի-գործարարներ, ազատ մասնագիտությունների տեր անձինք: Բայց այդպիսիները դեռևս քիչ են: Նրանցից շատերն անգամ Թիֆլիսում չունեն ընտրության իրավունք»[96]:

Ինչևէ, 1893 թ. մայիսի 16-ի ընտրությունները բեկանվել էին[97]: Վերընտրությունը կայացել էր մայիսի 30-ին. «...մայիսի 30-ին ընտրուելու ցանկութիւն յայտնեցին միմիայն 92 հոգի, մինչդեռ մայիսի 16-ին նոցա թիւն էր 175 հոգի: Դորա գլխաւոր պատճառը այն է, որ երկրորդ ընտրութիւններին, երկու հոգու (Գ. Յերետելիի և պ. Կոլուբանսկիի) բացառութեամբ բոլոր վրացի թեկնածուները, համախոհ վճռով՝ յետ վերցրին իրանց քւետուփերը, իբր թէ նեղացած այն բանից, որ մայիսի 16-ին նոցանից ընտրւել էին միայն 6 հոգի և իբր թէ նոյնը պէտք է պատահէր նաև մայիսի 30-ին: Յետ կանգնեցին նաև ռուսներից ոմանք և հայ երիտասարդական ցուցակից բոլոր նոքա, որոնք մայիսի 16-ին բաւականաչափ քւէներ չստացան ընտրւած լինելու համար: Ուզենալով հիացնել ամենքին վրացիք, սակայն, միայն պախարակւեցին հանրային կարծիքից, քանի որ նոցա արարքը հաւասար էր կռւի դաշտից փախչելուն...»[98]:

Ն. Նիկոլաձեն, անդրադառնալով 1893 թ. ընտրությունների արդյունքներին, որին մասնակցել էր 120 վրացի և 80 ռուս ընտրող (ընդամենը՝ 200), հայտարարել էր, թե իբր «ողջ հայ հասարակությունը, ինչպես մեկ մարդ» իրենց ձայները տվել էին ազգությամբ հայ իրավասուներին, մինչդեռ իրականում միայն 7 վրա-

---

91. **Արամխանեանց Ա.**, Քաղաքային ընտրութիւնների առիթով, «Մուրճ», 1897, N 1, էջ 145, N 5, էջ 699:
92. **Гогебашвили Я.**, Правда о Тифлисе, Тифлис, 1897: Տե՛ս նաև «Մուրճ», 1897, N 5, նույն տեղում:
93. «Մուրճ», 1897, նույն տեղում:
94. **Արամխանեանց Ա.**, Քաղաքային ընտրութիւնների առիթով, «Մուրճ», 1897, N 1, էջ 146:
95. Նշվ. հոդվածը, էջ 147:
96. **Туманов Г. М.**, Заметки по городском самоуправлении на Кавказе, Тифлис, 1902, էջ 5 (բնագրում՝ "Грузины-карталинцы и кахетинцы-менъе всего горожане. Они прежде всего люди земли, затъмъ люди оружия. Сельское хозяйство и военная служба искони были любимыми занятиями жителей восточной Грузии. Время многое измъяетъ; понемногу изъ разныхъ классовъ грузинскаго населения выдъляется извъстный элементъ въ буржуазию. Встръчаются грузины-коммерсанты, лица свободныхъ профессий. Но ихъ пока мало. Большинсво ихъ не имъетъ даже избирательнаго ценза въ Тифлисъ").
97. «Մուրճ», 1893, էջ 820-823: Տես նաև «Մուրճ», 1897, N 5, էջ 688-689:
98. «Մուրճ», 1893, էջ 823:

ցազգի թեկնածուներ ստացել էին 400-ից ավելի ընտրողական քվե (հետևում է, որ նրանցից յուրաքանչյուրը ստացել էր 200-ից ոչ պակաս հայ ընտրողի քվե), 12 վրացի թեկնածուներ էլ 325-ից ավելի քվե (հետևաբար, նրանցից յուրաքանչյուրը ևս ստացել էր ոչ պակաս, քան 125 հայ ընտրողի ձայն)[99]:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. Սինչ գնալով ավելի ու ավելի սուր բնույթ էր ստանում ընտրվող իրավասուների և մանավանդ քաղաքագլխի՝ որ ազգին պատկանելու խնդիրը, քաղաքային վարչությունը, ժամանակի պահանջների համեմատ ենթարկվելով հաստիքային հերթական համալրումների և փոփոխությունների, շարունակում էր աշխատել առօրեական բուռն ընթացքով, և 1892 թ. հաստատվում է քաղաքային նոր կանոնադրությունը[100], որով նահանգային իշխանությունների կողմից ուժեղացվում էր քաղաքային ինքնակառավարման վրա գոյություն ունեցող հսկողությունն ու սահմանափակում վերջինիս իրավունքները[101]: Ըստ այդմ քաղվարչությունը 1896 թ. ունեցել է աշխատակիցների հետևյալ կազմը.

Տարեթիվ	Քաղաքագլուխ	Վարչության անդամներ	Քաղաքի ճարտարապետ	Քաղաքային տեխնիկներ	Քաղաքի հաշիվ	Քաղաքային վարչության գործավարներ	Քաղաքային գանձապետ	Գլխավոր հաշվապահ	Գանձապետ
1896[102]	Ն. Բ. Արղության-Երկայնաբազուկ (25.03.1891-10.07.1893, վերընտրվել՝ 24.04.1895-05.11.1896)	Ա. Ա. Իվանենկո (անդամ՝ 03.06.1891, վերընտրվել է՝ 21.11.1893, 16.10.1895, փոխքաղաքագլուխ՝ 21.02.1894-ից), Ե. Ե. Խոսրոև, Պ. Մ. Արղության-Երկայնաբազուկ (21.11.1893, վերընտրվել՝ 16.10.1895-07.10.1896), Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկ (11.11.1896-ից մինչև 24.03.1901, վերընտրվել՝ 03.12.1907), Ք. Ա. Վերմիշյանց (07.10.1896-ից)				Գ. Գ. Ղուլյանց, Ֆ. Ի. Բեկ, Վ. Լ. Վեյման	Ի. Ս. Տեր-Սահակյանց	Ն. Զ. Նազարյանց, օգնական՝ Ս. Գ. Ալրամյանց	Ի. Հովի. Տեր-Միքելյանց

1897 թ. մայիսի 18-ին կայացած քաղաքային իրավասուների ընտրություններին մասնակցել էր 177 թեկնածու: Նրանցից ընտրվել էր 57-ը (37 հայ, 8 վրացի, 10 ռուս, 2 գերմանացի)[103]: Նույն թվականի հունիսի 1-ին կայացած լրացուցիչ ընտրությունների արդյունքում ընտրվել էր ևս 29 իրավասու (18 հայ, 9 ռուս, 2 վրացի)[104], ընդամենը՝ 86 անձ, որոնցից 55-ն ազգությամբ հայ էին, 19-ը՝ ռուս, 10-ը՝ վրացի և 2-ը՝ գերմանացի:

Ժամանակի մամուլի էջերում տեղ գտած բազմաթիվ հրապարակումները վկայում են, որ հերթական քառամյա ժամանակաշրջանի համար քաղաքային խորհրդարանի՝ վերը նշված հարաբերակցությամբ ազգային կազմ ունենալու փաստն առաջվանից ավելի էր բորբոքել ընդդիմության որոշ շրջանակների կրքերը[105]: Նույն Ն. Նիկոլաևն այս անգամ արդեն նշել էր, թե մեծ թվով իրավասուներ ձայների մեծամասնությամբ հաստատվեցին միայն այն պատճառով, որ ազգությամբ հայ էին՝ անտեսելով այն հանգամանքը, որ առավելագույն ձայն ստացած Կ. Ն. Ռեյտերը, այնուհետև Մալինինը, Օպոչինինը, Բուրհարտը և Իվանենկոն, որոնք բնավ էլ հայեր չէին, անցան ձայների ճնշող մեծամասնությամբ[106]:

1890-ական թթ. վերջերին և 1900-ական թթ. սկզբին Քաղաքային Խորհրդի վարչակազմն ունեցել է հետևյալ պատկերը.

---

99. **Туманов Г. М.**, նշվ. աշխ., էջ 14-16:
100. **Արամյանեանց Ա.**, Քաղաքային ընտրութիւնների առիթով, «Մուրճ», 1897, N 1, էջ 141:
101. **Туманов Г. М.**, նշվ. աշխ., էջ 32:
102. "Кавказский Календарь на 1897 г.", Тифлис, 1896, էջ 120-121:
103. «Մուրճ», 1897, N 5, էջ 683, 701:
104. Նշվ. հոդվածը, էջ 702:
105. **Սարգսեան Լ.**, Ներքին տեսութիւն, «Մուրճ», 1901, N 4, էջ 220-227:
106. **Туманов Г. М.**, նշվ. աշխ., էջ 16:

Տարեթիվ	Քաղաքագլուխ	Վարչության անդամներ						
		Փոխքաղաքագլուխ	Անդամներ	Քաղ. (նաև՝ Դուման) քարտուղար	Քաղաքային գործավարներ	Գլխավոր հաշվապահ	Գանձապահ	Քաղաքային փաստաբան
1897[107]	Գ. Գ. Եվանգուլյանց (06.11. 1897-ից)	Ա. Ա. Իվանենկո (մինչև 02.11. 1898)	Ե. Ե. Խոսրոև (վերընտրվել է 22.12.1897), Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկ, Ք. Ա. Վերմիշյանց	Ս. Ֆ. Չրեկաև	Ֆ. Ի. Բեկ, Վ.Լ. Վեյման, Գ.Գ. Ղուլյանց	Ն.Զ. Նազարյանց, օգնական՝ Ս. Գ. Ադամյանց	Ի. Ի. Տեր-Միքելյանց	Ի. Ս. Տեր-Ստեփանյանց
1899[108]	Գ. Գ. Եվանգուլյանց	Մ. Ս. Շեստակով (22.03.1899-ից)	Ե. Ե. Խոսրոև, Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկ, Վ. Ն. Չերքեզով	Ս. Ֆ. Չրեկաև	Ֆ. Ի. Բեկ, Վ. Լ. Վեյման, Գ. Գ. Ղուլյանց	Ն. Զ. Նազարյանց, օգնական՝ Տ. Գ. Երմիշյանց	Ս. Տ. Տեր-Ստեփանյանց	Ի. Ս. Տեր-Ստեփանյանց, օգնական՝ Գ. Զ. Քամալյանց
1900[109]	Գ. Գ. Եվանգուլյանց (մինչև 16.09.1901)	Մ. Ս. Շեստակով (մինչև 21.02.1900), Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկ (24.02.1901-ից)	Մ. Ս. Շեստակով, Ե. Ե. Խոսրոև, Վ. Ն. Չերքեզով	Ս. Ֆ. Չրեկաև	Ի. Հ. Սաաոսաազով, Վ. Լ. Վեյման, Գ. Գ. Ղուլյանց	Տ. Գ. Երմիշյանց, օգնական՝ Ա. Դ. Խոսրոագյանց	Ս. Տ. Տեր-Ստեփանյանց	Ի. Ս. Տեր-Ստեփանյանց, օգնական՝ Գ. Զ. Քամալյանց
1902[110]		Մ. Ս. Շեստակով (16.09.1901-ից)	Ե. Ե. Խոսրոև (վերընտրվել է 07.01-28.03.1902), Տ. Հ. Էնֆիաջյանց, Վ. Ն. Չերքեզով, Ն. Պ. Կոկչան (22.04.1902-ից, վերընտրվել՝ 23.01.1906)	Վ. Լ. Վեյման	Ն. Ֆ. Արվանիտակի, Ի. Հ. Սաաոսաազով, Պ. Մ. Յակիմով, Ա. Ք. Արվանյանց	Տ. Գ. Երմիշյանց, օգնական՝ Ա. Դ. Խոսրոագյանց	Ս. Գ. Ադամյանց	Ի. Ս. Տեր-Ստեփանյանց, օգնական՝ Գ. Զ. Քամալյանց

Մինչև Առաջին աշխարհամարտը Թիֆլիսի Քաղաքային Խորհուրդն ընդհանուր առմամբ շարունակում էր պահպանել իրավասուների ազգային կազմի այն հարաբերակցությունը, որը ձևավորվել էր 1880-ական թթ. ի վեր: Այդ են փաստում 1902, 1907, 1911, 1917 թթ. տեղի ունեցած քաղաքային իրավասուների ընտրությունների արդյունքները:

1902 թ. Քաղաքային Խորհրդի ընտրություններում հաղթանակած 80 իրավասուներից հայ էին 51-ը (63,75 %), վրացի՝ 15-ը (18,75 %), ռուս՝ 9-ը (11,25 %), գերմանացի՝ 2-ը, լեհ՝ 2-ը և մահմեդական՝ 1-ը[111]:

1907 թ. 60 անդամից բաղկացած Թիֆլիսի Քաղաքային Խորհուրդն ըստ ազգությունների ներկայացված էր հետևյալ կերպ՝ 41 հայ (68,33 %), 7 վրացի (11,66 %), 5 ռուս (8,33 %), 3 հրեա, 2 գերմանացի, 1 հույն և 1 օս[112]:

1911-1915 թթ. քառամյակի համար՝ Քաղաքային խորհրդի ընտրությունների ընթացքում ընտրվել էր 75 իրավասու և 22 թեկնածու, որոնցից 53-ը հայ էին (54,63 %), 19-ը՝ վրացի (19,58 %) և 25-ը՝ ռուս և այլ ազգությունների ներկայացուցիչներ[113]:

1917 թ. Քաղաքային Խորհրդի ընտրված 120 իրավասուներն ըստ ազգությունների բաշխվում էին հետևյալ կերպ՝ 48 հայ (40,0 %), 39 վրացի (32,5 %), 27 ռուս (22,5 %), 4 մահմեդական և 2 հրեա[114]:

---

107. “Кавказский Календарь на 1898 г.”, Тифлис, 1897, էջ 125: Տե՛ս նաև “Известия Тифлисской городской Думы”, N 4, էջ 18, 19, 20:
108. “Кавказский Календарь на 1900 г.”, Тифлис, 1899, էջ 138-139:
109. “Кавказский Календарь на 1901 г.”, Тифлис, 1900, էջ 149-150:
110. “Кавказский Календарь на 1903 г.”, Тифлис, 1902, էջ 149-150:
111. «Մուրճ», 1902, N 11, էջ 189:
112. “Закавказье”, 1907, 14 июля:
113. “Известия Тифлисской Городской Думы”, Тифлис, 1911, N 12, էջ 22:
114. «Համբաւաբեր», 1917, N 30, էջ 607:

Հարմար ենք գտնում ստորև ներկայացնել նաև նշված ժամանակաշրջանում մի շարք տարիների կտրվածքով Քաղաքային վարչության աշխատակազմի պատկերն ամբողջացնող հետևյալ աղյուսակը.

Տարեթիվ	Քաղաքագլուխ	Վարչության անդամներ						
		Փոխքաղաքագլուխ	Անդամներ	Քաղ. (նաև՝ Գանձապետ) քարտուղար	Քաղաքային գործակատար	Գլխավոր հաշվապահ	Գանձապետ	Քաղաքային ինժեներ
1903[115]	Ն. Բ. Արղության-Երկայնաբազուկ (վերընտրվել է՝ 24.02.1903)	Մ. Ս. Շեստակով (մինչև 13.10.1903)	Նախագահ՝ Ն. Վ. Արղության-Երկայնաբազուկ, անդամներ՝ Տ. Հ. Էնֆիաջյանց, Վ. Ն. Չերքեզով, Ն. Պ. Կոկչան	Վ. Լ. Վեյման	Ն. Ֆ. Արվանիտակի, Ի. Հ. Սաատսազով, Պ. Մ. Յակիմով, Ա. Ք. Արվանյանց	Տ. Գ. Երմիշյանց, օգնական՝ Ա. Ղ. Խարազյանց	Ս. Գ. Արամյանց	Ի. Ս. Տեր-Ստեփանյանց, օգնական՝ Գ. Զ. Քանանյանց
1904[116]	Ն. Բ. Արղության-Երկայնաբազուկ (մինչև՝ 03.05.1904), Ք. Ա. Վերմիշյանց (11.10.1904-ից)	Վ. Ն. Չերքեզով (22.03.1904-ից)	Նախագահ՝ Վ. Ն. Չերքեզով, անդամներ՝ Տ. Հ. Էնֆիաջյանց, Վ. Ն. Չերքեզով, Ն. Պ. Կոկչան, Ն. Ե. Արղության-Երկայնաբազուկ (03.02.1904-ից)		Ղ. Ա. Տեր-Միհայսյանց, Ի. Հ. Սաատսազով, Պ. Մ. Յակիմով, Ա. Ք. Արվանյանց	Տ. Գ. Եր--միշյանց, օգնական՝ Ա. Ղ. Խարազյանց	Ս. Գ. Արամյանց	Ի. Ս. Տեր-Ստեփանյանց, օգնական՝ Գ. Զ. Քանանյանց
1905[117]	Ք. Ա. Վերմիշյանց (մինչև 14.09.1905)	Վ. Ն. Չերքեզով (մինչև 29.10.1907)	Տ. Հ. Էնֆիաջյանց, Ն. Պ. Կոկչան, Ն. Ե. Արղության-Երկայնաբազուկ	Ֆ. Ի. Բեկ	Ղ. Ա. Տեր-Միհայսյանց, Ի. Հ. Սաատսազով, Պ. Մ. Յակիմով, Ա. Ք. Արվանյանց	Տ. Գ. Երմիշյանց, օգնական՝ Ա. Ղ. Խարազյանց	Ս. Գ. Արամյանց	
1908[118]	Վ. Ն. Չերքեզով (29.10.1907-ից)	Ա. Հ. Խատիսյանց (07.01.1908-ից)	Ն. Պ. Կոկչան, Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկ, Ն. Ե. Արղության-Երկայնաբազուկ (վերընտրվել է՝ 10.03.1908)	Ֆ. Ի. Բեկ		Տ. Գ. Երմիշյանց, օգնական՝ Գ. Մ. Օտյանց	Ս. Գ. Արամյանց	
1909[119]	Վ. Ն. Չերքեզով (մինչև 14.-07.1910)	Ա. Հ. Խատիսյանց (մինչև 15.11.1910)	Ն. Պ. Կոկչան (վերընտրվել է՝ 21.12.1909), Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկ, Ն. Ե. Արղության-Երկայնաբազուկ	Ս. Ա. Դաադուրյանց		Տ. Գ. Երմիշյանց, օգնական՝ Գ. Մ. Օտյանց	Ս. Գ. Արամյանց	
1912[120]	Ա. Հ. Խատիսյանց (20.09. 1910)		Մ. Ն. Աթաբեկյանց, Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկ, Ն. Ե. Արղության-Երկայնաբազուկ, Գ. Դ. Ժուրուլի (31.01.1911-ից)	Ս. Ա. Դաադուրյանց		Ա. Մ. Բոցշիկ, օգնական՝ Գ. Մ. Օտյանց, Գ. Ի. Կարև	Ս. Գ. Արամյանց	
1915[121]	Ա. Հ. Խատիսյանց		Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկ, Մ. Ն. Աթաբեկյանց, Գ. Դ. Ժուրուլի, Մ. Ա. Ջաբար	Ս. Ա. Դաադուրյանց		Ա. Մ. Բոցշիկ, օգնական՝ Գ. Մ. Օտյանց, Յ. Ֆ. Ջանաղով	Ս. Գ. Արամյանց	

115. “Кавказский Календарь на 1904 г.”, Тифлис, 1903, էջ 153-154:
116. “Кавказский Календарь на 1905 г.”, Тифлис, 1904, էջ 153-154: Տե՛ս նաև “Известия Тифлисской городской Думы”, N 4, նույն տեղում:
117. “Кавказский Календарь на 1906 г.”, Тифлис, 1905, էջ 111:
118. “Кавказский Календарь на 1909 г.”, Тифлис, 1908, էջ 60:
119. “Кавказский Календарь на 1910 г.”, Тифлис, 1909, էջ 62:
120. “Кавказский Календарь на 1913 г.”, Тифлис, 1912, էջ 97:
121. “Кавказский Календарь на 1916 г.”, Тифлис, 1915, էջ 127-128:

Ինչպես վկայում են Թիֆլիսի զարգացման պատմությանն առնչվող բազմահազար վավերագրերը, Քաղաքային Վարչությունը, թե՛ հասարակական կառավարման (1840) և թե՛ ինքնակառավարման (1875) կանոնադրությունների հաստատումից ի վեր, հակառակ այն հանգամանքին, որ համալրված է եղել մերթ ճնշող, մերթ հարաբերական մեծամասնություն կազմող ազգությամբ հայ իրավասուներով և գրեթե մշտապես կառավարվել է հայազգի քաղաքագլխի նախագահությամբ, մշտապես ու աներկբայորեն հետապնդել է քաղաքի զարգացման ու բարգավաճման խնդիրը (այդ են փաստում նաև մի շարք քաղաքագլուխների և իրավասուների Քաղաքային Խորհրդին կտակած խոշոր չափի նյութական ավանդները): Միաժամանակ հարկ է նշել, որ նույն այդ գործիչների ճնշող մեծամասնությունը, անմնացորդ նվիրվելով քաղաքի հոգսերին, անտարբեր և հեռու է մնացել ազգային խնդիրներից՝ իրեն դրսևորելով իբրև զուտ վարչական պաշտոնյա: Այս իրողությունը նկատի առնելով է, որ «Հովիտ»-ի թղթակիցը, 1914 թ. անդրադառնալով Չերքեզովի պաշտոնավարության շրջանին, միանգամայն դիպուկ կերպով նշել է. «Ի՞նչ վնաս կրեց հայութիւնը Չէրքէզովի քաղաքագլուխ լինելու ժամանակ: Ոչինչ: Վերջապէս ի՞նչ կապ կարող է ունենալ քաղաքային վարչութիւնը ազգի հետ, ազգային շահերը և քաղաքայինը միանգամայն տարբեր են: Ամենայետ ընկած փոքր հայկական գիւղում մի դպրոց ու բաղանիք չեմ փոխիլ Թիֆլիզի քաղաքային վարչության բոլոր հայ անդամների հետ՝ իրենց իրաւասուներով»[122]:

Այո, ազգային դպրոցից, հետևաբար ինքնաճանաչողության հնարավորությունից հեռու մնալու և պետական (ռուսական) դպրոցներում ու գիմնազիաներում կրթություն ստանալու հետևանքով ապազգայնացած և ի վերջո օտարացած հայ քաղաքագլուխներն ու իրավասուները նույնիսկ մեծ ցանկության դեպքում ի վիճակի չէին նեցուկ և օգտակար լինել հարազատ ժողովրդին: Այդպիսիները, ինչպես դիպուկ կերպով նշել է ժամանակի հայ մամուլը, վեր էին ածվել ոչ թե «ազգության, այլ մարդկության» անդամի:

Ինչ վերաբերում է Քաղաքային Վարչության տնտեսական կացությանը, ապա այն գրեթե երբեք (սկսած 1840 թ-ից) չի կարողացել ինքնաբավ լինել: Նյութական վիճակի առումով խիստ մտահոգիչ 1907 թ-ին, օրինակ, տիրող կացությունը հետևյալն էր. «Ներկայումս քաղաքը ծանր պարտքերի մէջ է ընկած, քաղաքային գանձարանումը տիրում է տօրրիչելեան դատարկութիւնը. բազմաթիւ ծառայողներ դորանց թւում և քաղաքային ուսումնարանների ուսուցչուհիներ և ուսուցիչներ, որոնք ամառնային արձակուրդներին մտադիր են քաղաքից դուրս գնալու օդափոխութեան և հանգստութեան՝ իրանց ծանր աշխատանքներից յետոյ օրերով և շաբաթներով մաշում են քաղաքային վարչութեան շէմքը իրանց հասանելի ռօճիկները ստանալու, սակայն միշտ վերադառնում են ձեռնունայն և առանց գոյութիւն ստանալու, որովհետև քաղաքի դրամարկղը դատարկ է...»[123]:

Հայտնի է նաև, որ ոչ բոլոր քաղաքային իրավասուներն (ձայնավորներ) էին բարեխիղճ իրենց պարտավորությունների մեջ. «...քաղաքիս 80 իրաւասուներից մինչև անգամ 40 հոգի դժուարանում են հաւաքուել նիստ կայացնելու, որի հետևանքը այն է լինում, որ հերթական նիստերը յետաձգւում էին ամիսներով և հերթական խնդիրներն էլ մնում էին առանց քննութեան և վճիռների...»[124]:

1917 թ. Թիֆլիսի բազմադարյան պատմության ընթացքում վերջին հայազգի քաղաքագլուխ Ա. Խատիսյանի հրաժարականից և մասնավորապես Անդրկովկասյան հանրապետությունների անկախության ձեռքբերումից հետո (1918) Թիֆլիսի քաղաքագլուխների և Քաղխորհրդի իրավասուների պատմությունը թևակոխեց բոլորովին նոր շրջան: Ճիշտ է, դեռևս 1919 թ., օրինակ, քաղաքագխի պաշտոնակատարի պարտականությունը վստահված էր ազգությամբ հայ Մ. Աթաբեկյանին[125], և խորհրդային տարիներին էլ՝ մինչև իսկ 1960-ական թթ., քաղաքապետի տեղակալը հաճախ հայազգի էր, այնուամենայնիվ, արդեն 1921 թ-ից ի վեր և առ այսօր Թիֆլիս-Թբիլիսին կառավարվում է բացառապես վրացազգի քաղաքագլուխներով:

1960 թ. քաղաք այցելած Հայր Վահան Հովհաննիսյանը խորհրդային շուրջ քառասնամյա ժամանակահատվածում որոշ փոփոխություններ կրած Թբիլիսիի վերաբերյալ նշել է. «...Շինարարական նորութիւնները շատ քիչ էին. արդէն Կովկասի փոխարքայական քաղաք՝ ունէր իր շքեղ պալատները, պողոտաները եւ ծառազարդ պուրակները: Վրացիները լաւ գիտեն թէ Թիֆլիզն Հայերը շինած են: Երբ 1801-ին Ռուսիոյ ձեռքն անցաւ՝ հսկայ գիւղ մ'էր. շնորհիւ գաղթող հայերու, Սիւնիքի մելիքներու, Մանթաշեանի մը, Արամեանցի մը եւ այլ հայ հարուստներու՝ Վրաստան ունեցաւ իր գեղեցիկ Թիֆլիզը. իսկ վրացիները զայն զարդարեցին համակրելի կինտոներով»[126]:

---

122. «Հովիտ», 1914, N 18, էջ 284:
123. «Հովիտ», 1907, N 20, էջ 309:
124. «Հովիտ», 1907, N 23, էջ 355:
125. «Տարազ», 1919, N 7, էջ 50:
126. **Վահան Հ. Յովհաննիսեան**, Ինչպէս տեսայ Հայաստանը, «Բազմավէպ», 1961, էջ 217-218:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎՐԱՑ ՄԱՍՈՒԼԸ ԹԻՖԼԻՍ-ԹԲԻԼԻՍԻԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԻ ՄԱՍԻՆ. Հատկապես վերջին տարիներին մերօրյա վրաց մամուլը սկսել է հաճախակի անդրադառնալ Թիֆլիս-Թբիլիսիի քաղաքագլուխների պատմությանն առնչվող խնդիրներին և տպագրել տարբեր հոդվածներ ու արխիվային տեղեկանքներ[127]: Դրանց հեղինակները՝ լրագրող թե պատմաբան, ակնհայտորեն իրազեկ չլինելով արծարծված նյութին, փաստորեն հրապարակել են արտառոց հորինումներով ու սխալներով լեցուն հոդվածներ: Մասնավորապես պատմաբան Ջ. Ամիրանաշվիլին, ձեռքի տակ ունենալով միայն 1849-1917 թթ. պաշտոնավարած քաղաքագլուխների խիստ թերի և ըստ այդմ պատահական մի ցանկ, առանց մասնագիտական քննության այն ներկայացրել է իբրև «պերճախոս արխիվային տեղեկանք»: Մինչդեռ, եթե հեղինակը ցուցաբերեր մասնագիտական բարեխղճություն և «տեղեկանքը» հրապարակելուց առաջ համադրեր խնդրո առարկա թեկուզև մի քանի այլ վավերագրերի հետ, ապա անշուշտ կպարզեր, որ մինչև 1849 թ. (սկսած 1840 թ-ից) Թիֆլիսն արդեն իսկ ուներ 4 քաղաքագլուխ (Հ. Իզմիրյանց, Ս. Խատիսյանց, Մ. Տեր-Գրիգորյանց և Հ. Շաղինյանց), և փոխանակ ցանկից բաց թողնելու ևս 8 քաղաքագլուխների անունները (Ս. Սարաջև, Ս. Աբիսողոմյանց, Ե. Փրիղոնյանց, Գ. Շերմազանյանց, Յ. Թումանյանց, Ա. Ղորղանյանց, Ա. Արղության-Երկայնաբազուկ, Ք. Վերմիշյանց), ստիպված չէր լինի «քաղաքագլուխ դարձնել» ոմն Միխեիլ Սերգոյի Շեստակովին և Տիգրան Ամբարցումի Էնկիցիանցին (Էնֆիաջյանց ազգանվան ամիրանաշվիլյան ընկալու՞մ), որոնք երբևէ քաղաքագլուխ չեն ընտրվել:

Հարկ է նշել, որ նույն ժամանակաշրջանի համար (1849-1917 թթ.) քաղաքագլուխների անհամեմատ ավելի թերի մի ցանկ էլ հրապարակել է ոմն Գիորգի Ջինճարաձե[128], որի մեկնաբանությունը ավելորդ ենք գտնում:

Ի դեպ, Ջ. Ամիրանաշվիլին, հանիրավի «հրաժարվելով» վրացի քաղաքագլուխ Վասիլի Չերքեզովից, ափսոսանք է հայտնում այն բանի համար, թե Թիֆլիսի քաղաքագլուխների պատմության մեջ (մինչև 1917 թ.) իբր եղել է ազգությամբ միայն մեկ վրացի քաղաքագլուխ, որն էր՝ Դմիտրի Ղիփիանին:

Ինչ վերաբերում է առանձին հրճվանքով ներկայացված 1921-1998 թթ. ընկած ժամանակահատվածում պաշտոնավարած քաղաքագլուխների ցանկին[129], որոնք այլևս բացառապես վրացազգի էին, ապա պատմաբան Ջ. Ամիրանաշվիլու գնահատմամբ դրանում վրացիները պարտական էին փրկարար Հոկտեմբերյան հեղափոխությանը[130]:

---

127. Տե՛ս **ჯინჭარაძე გიორგი**, რამ დაბვამხო ქართველობა?, "შანსი", 2000, N 1 (**Ջինճարաձե Գ.**, Ի՞նչը քայքայեց Վրաստանը, «Շանսի», 2000, N 1): **ამირანაშვილი ჯემალ**, მრავლისმეფველი საარქივო ცნობა, "ასავალ დასავალი", 2000, N 36, 13-19. (**Ամիրանաշվիլի Ջ.**, Պերճախոս արխիվային տեղեկանք», «Ասավալ Դասավալի», 2000, N 36, 13-19 դեկտեմբերի): "ასავალ დასავალი", 2001, N 10, 5-11 მარტი («Ասավալ Դասավալի», 2001, N 10, 5-11 մարտի):

128. **ჯინჭარაძე გიორგი**, նշվ. հոդվածը, նույն տեղում:

129. Ըստ Ջ. Ամիրանաշվիլու 1921-1988 թթ. ընթացքում Թիֆլիս-Թբիլիսիի քաղաքագլխի պաշտոնը հաջորդաբար վարել են հետևյալ անձերը. «1921 թ. Թոդրիա Սիլիբիստրո Էսի, 1921 թ. Գեգեճկորի Ալեքսանդր Ալեքսանդրի, 1921 թ. Ղողոբերիձե Լևան Դավթի, 1922 թ. Դումբաձե Վլադիմեր Էլիզբարի, 1923 թ. Սուխիշվիլի Վլադիմեր Պավլեի, 1928 թ. Բոլքվաձե Իվանե Բեժանի, 1930 թ. Մելաձե Պավլե Գիորգիի, 1931 թ. Մաչայիձե Բագրատ Տիմոթեի, 1934 թ. Բաքրաձե Վալերիան Սինասի, 1934 թ. Ջուղելի Սիմոն Պիլատի, 1935 թ. Նիորաձե Միխեիլ Տրիփոնի, 1937 թ. Բուջիաշվիլի Կոտե Դիմիտրիի, 1937 թ. Գվիչիանի Միխեիլ Միխեիլի, 1938 թ. Կոճլամազաշվիլի Իոսեբ Դիմիտրիի, 1943 թ. Գոչաշվիլի Գիորգի Ալեքսանդրի, 1949 թ. Լելաշվիլի Միխեիլ Միխեիլի, 1951 թ. Ջամբախիձե Գիորգի Նիկոփորի, 1952 թ. Ջավախիշվիլի Գիվի Դիմիտրի, 1953 թ. Գեգեշիձե Գիորգի Անդրեասի, 1953 թ. Մաղրաձե Միխեիլ Կոնդրատի, 1956 թ. Մելաձե Ալեքսանդր Էրաստի, 1965 թ. Բուխրաշվիլի Շոթա Էփրեմի, 1973 թ. Ջաներլիձե Թամազի Բեսարիոնի, 1973 թ. Լոբժանիձե Բախվա Թեդորեի, 1979 թ. Գաբունիա Գուրամ Դիմիտրիի, 1982 թ. Սարալիձե Բորիս Էրաստի, 1984 թ. Մեսխիշվիլի Ջաուր Շիոյի, 1987 թ. Անդրիաձե Իրակլի Օնիսիմի, 1991 թ. Վաշաձե Թամազ Միխեիլի, 1992 թ. Լիթանիշվիլի Օթար Անտոնի, 1993 թ. Գաբաշվիլի Կոստանտինե Վլադիմերի, 1993 թ. Լեկիշվիլի Նիկոլոզ Միխեիլի, 1995 թ. Շոշիթայիշվիլի Բադրի Շալվայի, 1998 թ. Ջոդելավա Իվանե Իվանեի» (**ამირანაშვილი ჯემალ**, նշվ. հոդվածը, նույն տեղում):

130. **ამირანაშვილი ჯემალ**, նույն տեղում:

ՏՓՂԻՍԻ (ԹԻՖԼԻՍԻ) ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ ԺԲ-ԺԳ ԴԱՐԵՐՈՒՄ

ՎԱՍԱԿ ԱՐԾՐՈՒՆԻ

Վրաց Դեմետրե թագավորի (1125-1156) և նրան հաջորդած Դավթի օրոք (1156) Տփղիսի քաղաքագլուխն էր (շահապ, ամիրա) Մահկանաբերդի Արծրունյաց իշխանական տոհմից սերած Վահրամի որդի Վասակ իշխանը: Սա վայելել է Դավիթ թագավորի համակրանքը: Հանգամանք, որը նախանձի տեղիք է տվել վրաց իշխանների շրջանում, որոնք, չարութ յունից կուրացած, թունավորել էին թագավորին. «Իսկ իբրեւ մեռաւ թագաւորն Վրաց Դեմետրէ՝ թագաւորեաց փոխանակ նորա Դաւիթ որդի նորա, այր բարեմիտ՝ մանաւանդ առ իշխանսն Հայոց, որք էին ընդ ձեռամբ նորա. և զի յոյժ մեծարէր պատուով զշահապ քաղաքին Տըփխեաց՝ զՎասակ որդի Վահրամայ իշխանի և զեղբարս նորա զՔուրդն կոչեցեալ և զՍարգիս, և այնքան բարեսրտութիւն ցուցանէր՝ մինչ զի առաքէր և կոչէր զթագաւորն Կիւրիկէ որդի Դաւթի թագաւորի Բագրատունւոյ, և խոստանայր նմա դարձուցանել ի նա զժառանգութիւն նորա, զոր նախնեացն իւրոց հանեալ էր ի նոցանէ, և այնպէս պարգեւօք յղարկէր զնա, ժամաղիր եղեալ նմա: Կամէր և ժողովս առնել և յաղագս հաւատոյ զճշմարիտն գիտել, և այնպէս պատուել զուղղափառութիւն: Զայսպիսի կամս իբրեւ գիտացին իշխանքն Վրաց՝ յոյժ նախանձաբեկ եղեն, մանաւանդ Որբելեանքն կոչեցեալ ազգ, և դեղ մահու արբուցեալ սպանին զթագաւորն Դաւիթ, և սուգ մեծ և բազմաժամանակեայ արարեալ աշխարհին Վրաց և Հայոց, և թագաւորեցուցին զԳիորգի եղբայր նորա ընդ նորա»[131]:

Ցավոք, Դավթին հաջորդած Գիորգի թագավորը (1156-1184), ականջալուր բամբասանքներին, ավելի է խորացնում անվստահության մթնոլորտը և պատճառ դառնում Վասակի՝ Տփխիսից հեռանալուն. «Իբր թագաւորեաց Գիորգի կամեցաւ ըմբռնել զիշխանն Վասակ, զի մախանս ունէր ընդ նմա, զի մինչ քաղաքապետն էր՝ ոչ մեծարէր զնա իբրեւ զեղբայր իւր զԴաւիթ, և ոչ ծառայէր նմա սպաս տանելով. չարախօսելով և այլոց իշխանացն Վրաց, յաղագս այսորիկ փախստական եղեալ Վասակայ իւրովք եղբարբքն հանդերձ, և երթեալ ի Թիոդուպօլիս, որ այժմ ասի Կարնոյ քաղաք: Եւ ամիրային որ կոչէր Սալտուխ՝ խնդութեամբ և մեծարանօք ընկալեալ զնոսա. զի յորժամ ըմբռնեցաւ Սալտուխն ի զօրացն Վրաց, մինչ պաշարեալ էր զքաղաքն Անի և ածաւ առ թագաւորն Դեմետրէ ի Տփխիս, բազում սպասակալութիւն արարեալ էր նմա Վասակ. յաղագս այսորիկ պատուեալ զնոսա պարգեւօք և շնորհեաց իշխանութիւն գիւղօրէից բազմաց: Եւ անդ լինելով ամս ինչ մեռաւ Վասակ, և թաղեցաւ յեկեղեցւոջն որ կոչի Աստուածածին՝ ի քաղաքին»[132]:

Կարին (Էրզրում). Սբ. Աստվածածին եկեղեցին, որի բակում թաղվել է Տփղիսի ամիրա Վասակ Արծրունին

ՔՈՒՐԴ ԱՐԾՐՈՒՆԻ

Հաջորդել է եղբորը՝ Վասակ Արծրունուն. «...Վասակն ու Քուրդն ամենասերտ կապեր ունեին

131. Հայապատում. պատմիչք եւ պատմութիւնք Հայոց յօրինեալ եւ հաւաքեալ ի **Հ. Ղեւոնդեանց Վ. Մ. Ալիշան**, Վենետիկ, Ս. Ղազար, 1901, էջ 389: Տե՛ս նաև **Ամատյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ե, Երևան, 1962, էջ 51 («Վասակ որդի Վահրամ իշխանի, եղբայր Սարգսի և Քուրդի. շահապ կամ քաղաքապետն էր Տփղիսի. սրան շատ էր սիրում վրաց Դավիթ թագավորը. Վրաց իշխանները նախանձելով, չարախոսեցին Գիորգի թագավորի մոտ. Վասակն իր եղբայրների հետ փախավ Կարին, ուր Սալտուխ ամիրան սիրով ընդունեց, որովհետև ինքն էլ բարերարված էր Վասակից, երբ գերի էր ընկած Վրաց ձեռքը՝ Տփղիս: Վասակը ստացավ Սալտուխից Կարնո բազմաթիվ գյուղերի իշխանությունը, որ մի քանի տարի վարելուց հետո մեռավ»): Նաև՝ **Մարգարյան Հ. Գ.**, Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հատոր ԺԸ, Պէյրութ, 1998, էջ 19-20:

132. **Հ. Ղեւոնդ Վ. Մ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 389-390:

վրացական արքունիքի հետ և հաջորդաբար վարեցին Տփխիսի քաղաքապետի պաշտոնը»[133]:

Քուրդ ամիրայի անվան՝ մեզ հայտնի առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1176 թ.: Այն պահպանվել է Սևանա կղզու վանքի փայտե դռան վրա[134]:

Քուրդ Արծրունու գործունեությունը քաղաքագլխի պարտավորություններից զատ ներառել է նաև պետական նշանակության խնդիրներ, ընդհուպ երկրի պաշտպանությունը: Հայտնի է, օրինակ, որ 1178 թ. «մեծ շահաստանն Տփխիս»[135]-ի տերը վրաց թագավորի հրամանով հետապնդել էր կենտրոնախույս Օրբելի իշխանների զորախմբին ու իր իսկ հայրենական գավառի՝ Մահկանաբերդի տարածքում հալածել վերջիններիս. «...ամիրապետն Տփխեաց Քուրդն անուանեալ, հասանէ ի կիրճս՝ ճանապարհի նոցա՝ իւր սեփհականն գաւառն Մահկանաբերդն կոչեցեալ...»[136]:

1181 թ. «...յամիրութե(ան) Քրդին...» վերաշինվել էր Սանահինի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու ժամատունը[137]:

Մինչև 1184 թ-ին վերաբերող Մորո-Ձորո վանքի մի անթվակիր արձանագրության մեջ դարձյալ հիշվում է «...ամիր Քուրդս...», որը բարեխոսելով վրաց Գիորգի Գ թագավորի մոտ՝ վանքն ազատել էր հարկերից[138]:

Տփղիսի ամիրա Քուրդ Արծրունու տապանաքարը Հաղպատի Սբ. Նշան եկեղեցու գավթում

1197 թ. Քուրդ ամիրան հիշվում է Նոր Գետիկ (Գոշավանք) վանքի Սբ. Աստվածածին եկեղեցու օծման մասին պատմող արձանագրության մեջ, որից հայտնի է դառնում, որ ի պատիվ Արզուխաթունի հայր Քրդի՝ երկու ժամ պատարագ էր մատուցվել. «...:Բ: (2) հաւր Արզուխաթունի՝ Քրդին բարեպաշտին, անխափան...»[139]:

Քուրդ ամիրայի անվան հիշատակությանը հանդիպում ենք նաև 1214 թ. նրա դստեր՝ Արզուխաթունի կառուցած Դաղի վանքի կաթողիկե եկեղեցու շինարարական արձանագրության մեջ. «...իշխանաց իշխան Քրդին...»[140]:

Քուրդ ամիրան, որը փաստորեն վախճանված պետք է լիներ 1180-ական թթ. վերջերին կամ 1190-ականների սկզբին, թաղվել է Հաղբատի վանքում: Նրա հիշատակին զետեղված ուղղանկյունաձև, պարզ ու հասարակ սալատապանը գտնվում է Հաղբատավանքի Սբ. Նշան եկեղեցուն արևմուտքից կից գավթի ներսում և կրում հետևյալ անթվակիր արձանագրությունը՝ «Քուրդ ամիրա»[141]:

Քուրդ Արծրունուց են սերել պատմական այնպիսի հայտնի դեմքեր, ինչպիսիք են՝ որդին՝ Սաղուն

---

133. **Շահնազարյան Ա.**, Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990, էջ 41:

134. Եռատող արձանագրությունն է. Ի թվ(ին) հայոց ՈՒԵ(1176) նորոգեցավ դուռն ս(ուր)ք / եկեղեցոյս հրամանաւ իշխանաց իշխան Քրդին եւ / ձեռամբ Յոհաննիսի հիւսանն, որք ընթեռնոյք յիշեսջիք («Հայերեն արձանագրությամբ առարկաներ», աշխատասիրությամբ **Եվգինե Մուշեղյանի**, Երևան, 1964, էջ 60):

135. «Ե-ԺԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1988, էջ 224:

136. Նույն տեղում: Այդ մասին նաև՝ «Գիորգիի հրամանով Թբիլիսի քաղաքապետ Ամիր-Քուրդ Արծրունին հետապնդեց Լիպարիտի ջոկատին, Մահկանաբերդի գավառում հասավ և կիրճում փակելով ապստամբների ճանապարհը, փախուստի մատնեց նրանց» (**Մարգարյան Հ.**, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 187: Տե՛ս նաև «Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը», էջ 119: Նաև՝ «Յիշատակարանք ձեռագրաց», էջ 472):

137. **Ղաֆադարյան Կ.**, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 104 («*ՈԼ թիւ: Ի ժամանակս յաղթող թագաւորին Գեորգա եւ յամիրիսպասալարութեն Սարգսի եւ որդոց իւրոց Զաքարէի եւ Իւանէի եւ յամիրաութե **Քրդին**, ես՝ Յվ., առաջնորդ սբ. ուխտիս շինեցի գերբեմն լեալ զեկեղեցիս աւգնութբ **Ամիր Քրդին** եւ վարդապետի մեծի Գրիգորի եւ Քի Այ...*»):

138. «Դիվան Հայ Վիմագրության», պրակ 6, Երևան, 1977, էջ 139: Վիմագրերի ժամանակագրության ճշտումը կատարել է Ս. Ավագյանը (տես՝ Վիմագրական պրպտումներ, Երևան, 1986, էջ 81-82): Առաջին արձանագրությունը փորագրված է եկեղեցու հյուսիսային խաչաթևի արևմտյան մասում. *Կամաւն Այ և ողորմութբ թագաւորին Գիաւրգէ ես՝ **Ամիր Քուրդս** առի գիր ազատութե. ի թագ[աւորէ] սբ. Ածածնիս Մորո ձոր[ո] հաւրն Յովանիսի...*, իսկ երկրորդը՝ նույն թաղի արևելյան մասում. *Աննւամբ ամենակալին Այ, ես՝ Գիաւրգի թագաւորաց թագ[աւոր] եւոու զՄորո ձորո վանքս հաւրն Յովանիսի և արարի ազատ յամենայն հարկէ, **Ամիր Քրդին** հոգցողու[եամ]բ...*:

139. Նշվ. աշխ., էջ 65:

140. **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 108:

141. **Ղաֆադարյան Կ.**, Հաղբատ, Երևան, 1963, էջ 188:

Ա-ն, սրա որդին՝ Շերբարոքը, վերջինիս որդին՝ Սադուն Բ-ն[142], դուստրը՝ Խաչենի իշխան Վախտանգ Բ-ի կին Արզու-խաթունը և ուրիշներ[143]:

ՇԱԴԻՆ (ՔԱԴԻՆ)

Վրաստանում մոնղոլների դեմ ծայր առած ապստամբության շրջանում (1259-1260), երբ թագավորում էին Գիորգի Լաշայի որդի Դավիթ Է. Ուլուն (1247-1270) և Ռուսուդանի որդի Դավիթ Զ. Նարինը (1230-1293), Տփղիսի կառավարիչ է հիշվում ազգությամբ հայ ոմն Շադին կամ Բադին. «...[Երբ Արղունը] մտավ Տփղիս, նրան ընդառաջ գնացին Վրաստանի բոլոր իշխանավորներն ու իշխաններն և ոմն Բադին, որը հայ էր ծագումով...»[144]:

142. **Հովսեփյան Գ.**, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, Բ, Երևան, 1987, էջ 69:

143. Մահկանաբերդցիների (Մահկանաբերդի Արծրունիներ) տոհմածառը տես՝ **Մարգարյան Հ. Գ.**, Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում, «ՀՀՀ», հատոր ԺԸ, Պէյրութ, 1998, էջ 33:

144. **Մելիքսեթ-բեկ Լ.Մ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 59: Հմմտ. «...Մտան Թփղիս և անդ դիմավորեցին Վրաստանի բոլոր իշխաններն ու էրիսթավները ազգությամբ հայ ոմն Շադին, որի ապավինությանը թողեց Թփղիսը, ինչպես և բուն թագավորությունը» («Վրաց ժամանակագրություն», թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները **Պարույր Մուրադյանի**, Երևան, 1971, էջ 117):

ՏՓՂԻՍԻ (ԹԻՖԼԻՍԻ) ԲԵՀԲՈՒԴՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ ԺԷ-ԺԸ ԴԱՐԵՐՈՒՄ

ՄԵԼԻՔ ԷՆԱԼ

Քաղաքի կալվածական, առևտրային գործերին առնչվող մի շարք վավերագրերում Էնալը՝ որպես քաղաքի մելիք, հիշվում է սկսած 1646 թ-ից մինչև 1673 թ.[145], բայց պաշտոնավարության այդ ժամանակահատվածն ընթացել է ընդհատումներով: Մասնավորապես հայտնի է, որ 1650 թ. քաղաքի բացակայությունը հնարավորություն չի ընձեռում հաստատել կամ ժխտել այդ հանգամանքը:

Մելիք Էնալի տոհմագրության առումով ուշագրավ է նրա թոռների միջև 1717-1719 թթ. ծագած վեճի (կապված հայրենական կալվածքի՝ մի բաղնիքի և նրա ջրի հետ) մասին պատմող վավերագիրը, որտեղ հիշվում են մելիք Էնալի որդիները՝ Ռոս-



Տփղիսը մելիք Էնալի պաշտոնավարության տարիներին (նկ. Ժ. Շարդենի, 1673 թ.)

մելիքությունը ստանձնել էր մելիք Բայանդուրը, իսկ, օրինակ, 1662 թ. վախճանվել էր այդ պաշտոնում գտնված խոջա մելիք Բեհբուտը:

Մելիք Էնալի պաշտոնավարության ընթացքում տանուտերն (մամասախլիս) էր Ասլամազը, իսկ վերջինիս օգնականներն էին (նացվալ) Շերմազանը (1646-1658) և Դավիթը (1666-1678)[146]:

Հարկ է նշել, որ մելիք Էնալի՝ Բեհբուդյան տոհմից սերված լինելու վերաբերյալ վկայությունների տոմն ու Քայխոսրոն (վերջինս տանուտիրոջ օգնականն էր 1701-1714 թթ.), առաջինի որդի Դանիելը և երկրորդի որդիներ Կարապետը, Բաղին, Հովսեփն ու Գևորգը[147]:

ՄԵԼԻՔ ԲԱՅԱՆԴՈՒՐ

Ջաքարիա Քանաքեռցու մի վկայության համաձայն 1650 թ-ից Տփղիսի մելիքն էր Բայանդուրը: Քաղաքապետ է նշանակվել պարսից Շահ-Աբաս Փոքրի (1642-1666) կողմից. «Լուաւ զայս թագաւորն Սանի-Աբաս, այսինքն փոքր Շահ-Աբաս, և կոչեաց զԲայանդուրն, և ետ նմա իշխանութիւն մեծ Տփխիս քաղաքին. եղև այս ի ՌՂԹ թուին»[148]: Բայանդուրի՝

145. Թվակիր վավերագրերը վերաբերում են 1646, 1648, 1658, 1659, 1666, 1672, 1673 թթ. (დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნიკო ბერძენიშვილმა** და **მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962, էջ 12-13, 14, 19, 21, 22, 25, 28, 29, 30, 31, 32):

146. Ի դեպ, մի վկայության համաձայն վրաց թագավոր Վախթանգ Ե Շահնավազը (1658-1675) հրամանագրով 1667 թ. Թիֆլիսի մելիքի կոչում էր շնորհել Շերմազան Եվանգուլյանցին ("Вечерний Тбилиси", 1958, N 135, 22 октября):

147. Նշվ. աշխ., էջ 112-113:

148. **Զաքարեայ սարկավագի** Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 98:

քաղաքի մելիք կարգվելու տարին (1650), ինչպես տեսնում ենք, համընկնում է Մելիք Էնալի պաշտոնավարության մեզ հայտնի շրջանին (1646-1673): Այս հանգամանքը հուշում է, որ մելիք Էնալի պաշտոնավարությունն ընթացել է ընդմիջաբար:

Աղբյուրների սակավությունը հնարավորություն չի ընձեռում նաև պնդելու կամ ժխտելու մելիք Բայանդուրի՝ Բեհբուդյան տոհմից սերված լինելը, սակայն այն փաստը, որ նրա հաջորդները Բեհբուդյան իշխանական տան ներկայացուցիչներ էին, թույլ է տալիս ենթադրելու, որ մելիք Բայանդուրը ևս Բեհբուդյան էր:

տոհմական գերեզմանոցում եկեղեցի կառուցելու, դրանից վեր այգի տնկելու և Մախաթ լեռան լանջով ջրանցք կառուցելու վերաբերյալ[150]:

1655 թ. Խոջա-Բեհբուդը կառուցել է Ծիրանավոր Սբ. Աստվածածնի եկեղեցին[151], որը հետագայում հիմնադրի անունով կոչվել է Խոջիվանք:

Խոջա-Բեհբուդի մի ավիրատվության շնորհիվ Սբ. Էջմիածինը Թիֆլիսում իբրև սեփականություն ձեռք էր բերել 3 կրպակ («...խոջայ Բեհբուտի տված Գ. դուքան կէր Սուրբ Էջմիածնայ, վախմիաթ տված...»)[152]:

Տփղիս. Խոջիվանքի տեսքը հարավ-արևմուտքից, վանքի Սբ. Աստվածածին եկեղեցին քանդման նախօրեին՝ 1935 թ., եկեղեցուն արևմուտքից կից սրահ-տապանատունը և Բեհբուդյան ազգատոհմին պատկանող շիրմաքարեր, Խոջիվանքի եկեղեցու շինարարության մասին պատմող արձանագրությունը (1655 թ.)

ՄԵԼԻՔ ԽՈՋԱ-ԲԵՀԲՈՒԴ

Եղբայրն էր Խատին, կինը՝ Լալին, որդիները՝ Ասլանն ու Աշխարհբեկը:

Խոջա-Բեհբուդի մասին առաջին վկայություններից մեկը վերաբերում է 1651 թ. «Յուլիս ԺԸ(18)-ումն ես Ջաքարիայ որ եկի Թվլիս, զառաւխանէն Թվլիս Ըռստամխան էր: Ջառաբին էր խոջայ Բէհբուդ»[149]:

1654 թ. Քարթլիի թագավոր Ռոստոմը (1638-1658) բավարարել էր Խոջա-Բեհբուդի խնդրանքը՝ արդեն իսկ գոյություն ունեցող Բեհբուդյանների

Ինչպես նկատելի է, խոջա Բեհբուդի՝ Թիֆլիսի մելիք եղած լինելու մասին վերոհիշյալ վկայություններում որևէ տեղեկություն չկա, և Թիֆլիսի քաղաքագլուխների կարգին նրան դասելու միակ հիմքն է մահվան առնչությամբ տրված հետևյալ հաղորդումը. «1662-350. Խոջա-Մելիք Բեբութը (Բեբութա) վախճանվեց հուլիսի 7-ին...»[153]: Ո՞ր թվականին և

149. **Ջաքարիա Ագուլեցու** օրագրությունը, Երևան, 1938, էջ 37:

150. დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნიკო ბერძენიშვილმა** და **მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962, էջ 17:

151. Վիմագրի վերծանությունը տես՝ **Мурадян П. М.**, Армянская эпиграфика Грузии, Երևան, 1988, էջ 96:

152. «Կալվածագրեր», կազմեց՝ **Աբրահամյան Հ.**, Երևան, 1941, էջ 130:

153. **Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 169:

ումի՞ց էր խոջան մելիքության իրավունք ստացել, հայտնի չէ, բայց պարզ է, որ դա տեղի է ունեցել նրա կյանքի վերջին տարիներին:

ՄԵԼԻՔ ԱՇԽԱՐՀԲԵԿ

Մելիք Աշխարհբեկը մելիք Խոջա-Բեհբուդի որդին էր և Ասլանի եղբայրը: Հայտնի է, որ 1664 թ. մելիքի եղբայր Ասլանը Թիֆլիսում գտնվող երեք խանութ նվիրել էր Սբ. Էջմիածնի վանքին: Նույնպիսի նվիրատվությամբ հանդես էր եկել նաև ինքը՝ մելիք Աշխարհբեկը: Այդ մասին վկայում է Սիմեոն կաթողիկոսը (1763-1780). «…Զայս երեք խանութս խոճա-Բէհբութի որդի Ասլանն տայ սրբոյ Աթոռոյս ի ձեռն Ջուղայեցի Յակովբ Կաթուղիկոսին[154] ի ՌՇԺԳ թուոջն մերում: Գիտ զվախնամայն Վրացերէն: Աստի ի վեր ընթացեալ դէպ ի Նորաշէն յաշպազ-խանի փողոցումն խանութ մի ևս գոյ սրբոյ Աթոռոյս, որոյ աջ կողմն Ղարանին խանութն է, և ձախն Ապովենց, զայս խանութս ևս մէլիք Աշխալբեկն է տուեալ յիշատակ սրբոյ Աթոռոյս, որ եղբայր է նոյն Ասլանին…»[155]:

Հավանական է, որ Մելիք Աշխարհբեկը Թիֆլիսի մելիքությունը ստանձնել է 1662 թ.՝ հոր՝ մելիք Խոջա-Բեհբուդի մահվանից հետո: Նրա պաշտոնավարման վերջնաժամկետն անհայտ է: Իր հաջորդը մելիք Ամիրն էր, որը պաշտոնավարել է ԺԷ դարի վերջերին:

ՄԵԼԻՔ ԱՎԹԱՆԴԻԼ

Գրավոր աղբյուրներում մելիք Ավթանդիլի վերաբերյալ վկայություններ կան սկսած 1678 թ-ից: Քաղաքի կալվածական, առևտրային գործերին առընչվող մի շարք վավերագրերում մելիք Ավթանդիլը հիշվում է մինչև 1698 թ.[156]: Չի բացառվում, որ Ավթանդիլը մելիք Էնալի որդիներից մեկը լիներ: Ավթանդիլի պաշտոնավարության շրջանում տանուտերեր են հիշվում Նազարը (1678), Գիորգին (1683-1694) և Պապը (1696, 1698), իսկ վերջիններիս օգնականներ՝ Դավիթն (1678) ու Գասպարը (1683):

ՄԵԼԻՔ ԱՄԻՐ ԲԵՀԲՈՒԴՅԱՆՑ

Տանուտեր-մելիք Ամիր Բեհբուդյանցի կենսագրության մասին ձեռքի տակ եղած տվյալները կցկտուր են: Հայտնի է, որ ապրել է ԺԷ դարի երկրորդ կեսին և գլխավորել Սբ. Նշան եկեղեցու կառուցումը. «Այս եկեղեցին կառուցված է քաղաքացի (մոքալաք) Ամիր Մամասախլիսի ծախքով, որի տոհմից այժմ կենդանի է Ջուրաբ Մելիքովը»[157]: Վերոհիշյալ եկեղեցու շինարարությանը մասնակցել է նաև Ամիրի որդին՝ Ասլամազը. «Տանուտէր Ամիր և որդի տանուտէր Ասլամազն շինեցին ս. Նշանիս ս. Նիկողայոսի եկեղեցին իւր ժամատնով և շրջապատով...»[158]:

1677 թ. մի հրովարտակում հիշատակություն կա Բեհբուդյաններին պատկանող մի բաղնիքի մա-

Տփղիս. հայր և որդի մելիք Ամիր և Ասլամազ Բեհբուդյանների կառուցած Սբ. Նշան եկեղեցին (նկ. 1989 թ.)

սին[159]: Այդ բաղնիքն այն կալվածքներից էր, որին ժառանգաբար տիրել էին Բեհբուդյան տան շառավիղները. «...Բեհբուտի բաղնիքը (ևս Մելիքի) պատկանում էր վերջին թագավորի օրոք քաղաքագլուխ Դարչի Բեհբուտովին»[160]:

ԱՍԼԱՍԱԶ ԱՍԻՐՅԱՆ ԲԵՀԲՈՒԴՅԱՆՑ

Տանուտեր Ասլամազն ապրել է ԺԷ-ԺԸ դարերում: Նա հոր հետ միասին մասնակցել է Սբ. Նշան եկեղեցու նախնական վերաշինության գործին[161]: Հետագայում կնոջ հետ իրականացրել է նույն եկեղեցու վերանորոգումը. «Տանուտէր Ասլամազը և կողակից Շահրուբանը վերստին նորոգեցին եկեղեցին...»[162]:

154. Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ 1655-1680 թթ.:
155. Ջամբռ համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի **Սիմէօնէ կաթուղիկոսէ Երեւանցւոյ**, Վաղարշապատ, 1873, էջ 207-208:
156. Թվակիր վավերագրերը վերաբերում են 1678, 1683, 1684, 1686, 1694, 1696 թթ. დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნოკო ბერძენიშვილმა** და **მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962, էջ 32, 38, 41, 42, 44, 53, 57), 1698 թ. (**Մարտիրոսյան Վ. Մ.**, Վրաց իրավունքի հուշարձանները վիրահայության մասին, «ԼՀԳ», 1991, N 5, էջ 158-159):
157. **Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, նշվ. աշխ., էջ 267:
158. ՀՀՊՊԿԱ, ֆ. 332, ց. 1, գ. 102, թ. 8:
159. **Бакрадзе Д.**, **Берзенов Н.**, Тифлис в историческом и этнографическом отношениях, СПБ, 1870, էջ 117:
160. Նշվ. աշխ., էջ 118 (բնագրում՝ "...баня Бебута (Мелика – то же, ибо позднейший владелец ея кн. Дарчи Бебутов, при последнем царе был городским меликом"):
161. ՀՀՊՊԿԱ, ֆ. 332, ց. 1, գ. 102, թ. 8:
162. Նույն տեղում:

Տփղիսը մելիք Գիորգիի պաշտոնավարության տարիներին (նկ. Ժ. Տուրնեֆորի, 1701 թ.)

Սբ. Նշան եկեղեցու հարավային մուտքի արձանագրությունը, որտեղ հիշվում է մելիք Զուրաբը

ԳԻՈՐԳԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ԲԵՀԲՈՒԴՅԱՆՑ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Քաղաքի մելիքության պաշտոնում հիշվում է սկսած 1699 թ-ից մինչև 1711 թ.[163]: Գիորգիի մելիքության պաշտոնը վարելու ընթացքում տանուտերեր են հիշվում Պապը (1696-1706, 1712) և Փարսադանը (1705-1712, 1714), իսկ վերջիններիս օգնական՝ Քայխոսրոն (1701-1714):

1703 թ. վերակառուցել է հոր և պապի կողմից կառուցված Սբ. Նշան եկեղեցին, որի օծման տարում էլ (1711) վախճանվել է. «ՄԷլիք Գիորգին վերստին շինեց և նորոգեց ս. Նշանը հիմքից, մեծացրեց կամարաձև և գեղեցիկ յօրինուածքով ՌՃԾԲ թուին. ՌՃՂ-ին[164] օրհնեցին և պատարագ մատուցին և այդ տարի մեռաւ մէլիք Գիօրգին»[165]: Մելիք Գիորգի նախաձեռնությամբ փոփոխության էր ենթարկվել նաև Սբ. Նշան եկեղեցու շրջապատը. «Տանուտէր Գիօրգին եկեղեցու պարիսպը յետ քաշեց»[166]:

1709 թ. Թիֆլիսում գտնվող էջմիածնապատկան 3 կրպակների հետգնման առթիվ կազմված պայմանագրի ներքո վկայություն տված անձանց թվում առաջինն էր քաղաքի մելիքը. «Ես՝ Մէլիք Գիօրգիս վկայ եմ (կնիք)»[167]:

Մելիքի կողակիցն էր Խամփերվանը, որդիներն էին Զուրաբն ու Պապը[168]:

ԶՈՒՐԱԲ ԳԻՈՐԳՅԱՆ ԲԵՀԲՈՒԴՅԱՆՑ

Մելիք Զուրաբը շառավիղն էր ղեռևս ԺԷ դարի առաջին կեսից Տփղիսի տանուտեր-մելիքներ Ամիրի, Ասլամազի և Գիորգիի: Սրա կենսագրությունն ու գործունեությունը լուսաբանող տվյալները նույնպես խիստ կցկտուր են: Քաղաքի մելիքության պաշտոնը ստանձնել է հոր մահից (1711) հետո՝ 1712 թ.[169]: Հայտնի է, որ 1713 թ-ից հետո (1715[170]-1732) մելիք Զուրաբը քաղաքի կառավարման գործում հանդես է եկել տանուտիրոջ պաշտոնով, բացառությամբ 1735 թ. վերաբերող մի տեղեկության, երբ նա վերստին հիշվում է որպես մելիք:

Մասնավորապես Կարսի և Թավրիզի ուղղությամբ թուրքական բանակների առաջխաղացման մասին պատմող 1735 թ. մի վկայագրում, ի թիվս այլոց, հիշվում է նաև մելիք Զուրաբը. «...Թիֆլիսի մելիքն է Վրաստանի հայ Զուրաբ Գիորգիևը...»[171]: Զուրաբ Բեհբուդյանցը վախճանվել է 1742 թ.[172]: Այդ մասին է վկայում վրաց անանուն ժամանակագիրը. «1742-430 Իմամ-ղուլի-խանը… առանց որևէ հանցանքի փայտի հարվածներով մահացրեց մելիք Զուրաբին ու նրա որդի Ավթանդիլին»[173]:

1833 թ., երբ Հովհաննես ավագ քհն. Զառափյանցը նորոգել էր Սբ. Նշան եկեղեցու հարավային դուռը, նույն մուտքի ճակատին թողած արձանա-

163. დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნიკო ბერძენიშვილმა** და **მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962, էջ 59-62, 65, 67, 70-72, 75, 77, 80, 85, 86, 88:

164. 1703 թ. վերակառուցված եկեղեցին անհնար է, որ օծված լիներ 1741 թ., բացի այդ, մինչև 1741 թ. Տփղիսի մելիք են հիշվում Գիորգիի որդի Զուրաբը, Աշխարհբեկ Բ-ն և Աղան, որոնք այդ պաշտոնը ստանձնել էին հաջորդաբար, ուստի բնագրում «ՌՃՂ» (1741) ակնհայտ վրիպում է: Հարկ է ուղղել՝ ՌՃԿ (1711):

165. ՀՀՊՊԿԱ, ֆ. 332, ց. 1, գ. 102, թ. 8:

166. Նույն տեղում:

167. «Կալվածագրեր», կազմեց՝ **Աբրահամյան Հ.**, Երևան, 1941, էջ 131:

168. Նույն տեղում:

169. დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნიკო ბერძენიშვილმა** და **მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962, էջ 89:

170. 1715 թ., ի թիվս այլ վկաների, Զուրաբը հիշվում է նոյեմբերի 10-ին կազմված մի դատավճռում. «Աստծո առջև մենք սույնի վկաներն ենք. ...տանուտեր Զուրաբ (կնիք՝ վրացերեն, տանուտեր Զուրաբ)» (**Մարտիրոսյան Վ. Մ.**, Վրաց իրավունքի հուշարձանները վիրահայության մասին, «ԼՀԳ», 1991, N 5, էջ 160):

171. "Армяно-Русские Отношения во втором тридцатилетии XVIII века", сборник документов, том III, Ереван, 1978, էջ 46 (բնագրում՝ "...в Тифлисе меликом грузинский армянин Зураб Гиоргиев..."):

172. **Думин Станислав**, **Князь Чиковани Юрий**, Князья Царства Грузинского, том IV, Москва, 1998, էջ 132:

173. **Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, նշվ. աշխ., էջ 169:

գրության մեջ, ի թիվս այլոց, մաղթել է հիշել նաև մելիք Զուրաբին[174]:

ԱՇԽԱՐՀԲԵԿ Բ. ԲԵՀԲՈՒԴՅԱՆՑ

Տփղիսի մելիք Աշխարհբեկը Խոջա Բեհբուդի թոռն էր: Հավանական է, որ մելիք Աշխարհբեկը մելիք Զուրաբի որդին էր կամ էլ եղբայրը:

1712 թ. Վախթանգ Զ-ն և կինը՝ Ռուսուդանը, Աշխարհբեկին էին վերադարձրել Բեհբուդյանների այն ապարանքը, որը նրանցից վերցրել էր Գիորգի թագավորն ու տվել Էլչ Բուդդա բեկին[175]:

1712-1713 թթ., երբ քաղաքի մելիքն էր Զուրաբը, տանուտեր է հիշվում Աշխարհբեկը[176]: Սկսած 1714 թ-ից մինչև ողբերգական վախճանը՝ 1734 թ., Աշխարհբեկը հանդես է եկել որպես Տփղիսի մելիք[177]: Պաշտոնավարման ընթացքում Աշխարհբեկը հաճախ համատեղել է նաև տանուտիրոջ պաշտոնը (1724-1728, 1733)[178]:

Մելիք Աշխարհբեկը հիշվում է նաև 1714 թ. Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցուն առնչվող մի պայմանագրի վավերացման կապակցությամբ. «Ի թուին ՌՂԹ-ին շինեալ է խօջայ Նազարն և զկնի շինութեանն եկեղեցւոյ բոլոր իշխանութիւնն յանձնեալ է ի ձեռս հանգուցեալ մելիք Աշխարբէգին Բեհբուտեան հաստատուն գրով, որոյ սոյն գրով թիվն է 1714»[179]: 1715 թ., ի թիվս այլ վկաների, նա հիշվում է նոյեմբերի 10-ին կազմված մի դատավճռում. «Աստծո առջև մենք սույնի վկաներն ենք. մելիք Աշխարհբեկ (կնիք՝ վրացերեն, մելիք Աշխարհաբեգ), տանուտեր Զուրաբ (կնիք՝ վրացերեն, տանուտեր Զուրաբ)»[180]:

1717 թ. մելիք Աշխարհբեկն իրենց պալատին կից սկսում է Տփղիսի Կուսանաց վանքի շինարարությունը. «Իշխան Բե[հ]բուդովների պալատին կից, անմիջապես ժայռի վրա կառուցված են վանական եկեղեցի, տներ և խցեր կույս վանականների բնակության համար, որը քարուկրով շինել է իշխան Աշխար[հ]բեկ Բե[հ]բուդովը 1717 թվին, հանուն առաքելապատիվ նախավկա և սարկավագապետ սուրբ Ստեփանոսի...»[181], բայց այն ավարտել

Մելիք Աշխարհբեկի հիմնած Կուսանաց Սբ. Ստեփանոս եկեղեցին

չի հասցնում. «Իշխան Մելիք Աշխարհբէգը չէ կարողանում իրագործել իր այդ միտքը: Իբրև զինուորական խիստ զբաղուած էր վրաց, պարսից և տաճկաց կռիւներով: 1724 թուին տաճիկների արշաւանքի ժամանակ սպանւում է այս իշխան Բեհբութեանցը և անկատար մնում նրա փափագը»[182]:

1722 թ. սեպտեմբերի 6-ին Վախտանգ Զ-ի՝ Տփղիսի բնակչությանը ուղղված հրովարտակում առանց անունը նշելու հիշվում է. «մեր քաղաքի կառավարիչ և մելիք-տանուտեր…»-ը[183], որն անկասկած նույն Աշխարհբեկն էր, քանի որ, օրինակ, 1724 թ. ապրիլին այլ վավերագրում հիշվում է. «…քաղաքի մելիք-տանուտեր Աշխարհբեգը…»[184]:

Մելիք Աշխարհբեկ Բեհբուդյանցի գործունեության մասին մի որոշակի լույս է սփռել նրա թոռը՝ Հովսեփ Բեհբուդյանցը, երբ մի առիթով կաթողիկոսին գրել է. «Գուցե լուեալ և ձեր՝ թէ հաւն (պապ) իմ Մելիք Աշխարհ-բէկն որպիսի ջատագովութիւն ունեցեալ է առ ազգն մեր առ ժամանակս Օսմանցւոց զիարդ ապրեցուցեալ ի յուրացութենէ զքրիստոնեայ հայս, յորում ժամանակի քանի վրացի թագաւորք ուրացեալ են զՔրիստոսն, նաև քանի զեկեղեցիս ազատեալ է ի կամելն սոցա առնել մզկիթ, ապա ըստ հաւատարիմ վկայից և զանճն իր իղեալ մեռանի դառն մահուամբ»[185]: Մելիք Աշխարհբեկի «դառն մահվան» մանրամասները գտնում ենք ինչպես վրաց ժամանակագրության մեջ. («…Իսադ-փաշան կախաղանի հանեց Տփխիսի Մելիք Աշխարհբեկին սեպտեմբերի 10-ին»)[186], այնպես էլ Կրետացու պատմության մեջ, որտեղ նշված է նաև կատարվածի տարեթիվը (1734). «…Իսակ փաշայն,

174. **Мурадян П. М.**, Армянская эпиграфика Грузии, Тбилиси, Ереван, 1988, էջ 70:

175. დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნიკო ბერძენიშვილმა** და **მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962, էջ 93-94:

176. Նշվ. աշխ., էջ 95, 97, 98, 100, 101:

177. Նշվ. աշխ., էջ 104, 106, 110, 114, 117, 119, 121, 123, 126, 128, 158, 166:

178. Նշվ. աշխ., էջ 131, 132, 133, 141, 143, 144, 145, 146, 148, 149, 150-151, 154, 161, 162, 164: Տե՛ս նաև **Մարտիրոսյան Վ. Մ.**, նշվ. հոդվածը, էջ 162:

179. ՀՀՊՊԿԱ, ֆ. 332, ց. 1, գ. 102, թ. 4:

180. **Մարտիրոսյան Վ. Մ.**, նշվ. հոդվածը, էջ 160:

181. **Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, նշվ. աշխ., էջ 269:

182. **Խուցեան Խորեն քհն.**, Թիֆլիսի Ս. Ստեփանոս Կուսանաց անապատի պատմութիւնը, Թիֆլիս, 1914, էջ 15: Ի դեպ, 1724 թ-ը՝ իբրև մելիք Աշխարհբեկի սպանվելու տարեթիվ, չի հաստատվում ժամանակի աղբյուրագիտական այլ տվյալներով: Մելիք Աշխարհբեկի մահվան ստույգ տարեթիվն է 1734 թ.:

183. Նշվ. հոդվածը, էջ 161:

184. Նշվ. հոդվածը, էջ 162:

185. **Գեղամեանց Եղիշէ ա. ք.**, Պատմական քաղուածներ, «Հովիտ», 1910, N 12, էջ 182:

186. **Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, նույն տեղում:



Տփղիսի հատակագիծը մելիք Աղա Բեհբուդյանցի պաշտոնավարության շրջանում (գծանկարը՝ Վախուշտիի, 1735 թ.)

զԱշխալ բէկն որ էր մելիք Թիֆլիզոյ՝ ի մէր ազգի, վասն ոչ ինչ պատճառի ետ խեղդել զնա և առաջին դռանն արկանել՝ մինչև էառ ԾՌ (50000) ղուրուշ, և ապա ետ հրաման թաղել»[187]:

Աշխարհբեկի որդիներից հիշվում են Աղան, Բեհբուդը, Ստեփանը, Խատին և Խոջա-զաղան, որոնցից առաջինը ժառանգաբար ստանձնել է քաղաքի մելիքությունը:

ԱՂԱ ԱՇԽԱՐՀԲԵԿՅԱՆ ԲԵՀԲՈՒԴՅԱՆՑ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Առկա գրավոր աղբյուրները ցույց են տալիս, որ Աղան քաղաքի մելիք է հռչակվել հոր՝ Աշխարհբեկի եղերական սպանությունից հետո (1734) և ընդհատումներով (1746 թ-ից մինչև 1751 թ. քաղաքի մելիք է հիշվում Անտոնը[188], իսկ 1751-1760 թվականներին՝ Սահակ Շեր-

187. **Աբրահամ Կրետացի**, Պատմություն, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, 1973, էջ 36:

188. დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნიკო ბერძენიშვილმა** და **მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962, էջ 204, 207, 216, 218, 221, 223, 229:

գիլյանը[189]) կառավարել մինչև իր մահը՝ 1768 թ.: Աղա Բեհբուդյանցի անվան բազմաթիվ հիշատակություններ հանդիպում ենք կալվածաառևտրային բովանդակություն ունեցող մի շարք վավերագրերում[190]:

Անչափահաս արքայազն Հերակլին (Թեյմուրազ Բ-ի որդուն) ուղեկցել է պարսից Նադիր Շահի արքունիքը[191]:

1736 թ. կաթողիկոս Աբրահամ Կրետացին, նկարագրելով Մուղանում իր հանդիպումը պարսից շահի հետ, ներկաների թվում հիշատակում է նաև Տփղիսի քաղաքագլուխ մելիք Աղային. «Իսկ զիս առեալ Թիֆլիզու Աշխալ բէկի որդին Աղայ անուն, որ էր քալանթար և մելիք Թիֆլիզու՝ ի նոյն տեղեաց, և տարաւ ի վրանն իւր պատիւ…»[192]:

1737-1739 թթ. մասնակցել է Նադիր Շահի հնդկական արշավանքին և քաջության համար շահից պարգև ստացել ադամանդակիր թուր, նաև միսկարբաշու պատվավոր աստիճան[193]:

Համաձայն վրաց ժամանակագիր Պապունա Օրբելիանու վկայության՝ 1744 թ. մելիք Աղան գլխավորել է Կարսի ամրացման աշխատանքները. «[Պարսից] արքան ապսպրել էր քաղաք [Տփղիս]ից չորս հարյուր հոգի աշխատավոր, որոնց առաջնորդեց քաղաք [Տփղիս]ի Մելիք աղան, և հասան Ղարս, մի ամիս աշխատեցին ու ետ վերադարձրին...»[194]:

1753 թ. հուլիսի 16-ին վրաց թագավորներ Թեյմուրազ Բ-ն և Հերակլ Բ-ն հաստատել էին Աղա Բեհբուդյանցի ճորտերի ցուցակը[195]:

Հայտնի է, որ 1758 թ. փետրվարին Աղան Թիֆլիսում Մանգոյանց Օհանեսի Պետրոս, Հովսեփ, Ստեփան և Մովսես որդիներից իր համար գնել էր վերջիններիս պատկանած հողամասերը[196], իսկ 1766 մարտի 22-ին Պապունաշվիլի Սամադավլե, Դավիթ և նրանց ազգական Ջազայից՝ Օքրողանայից մինչև Թիֆլիս ընկած հատվածում գտնվող այգիների մի մասը[197]:

1760-ական թթ. մինչև իր մահը Աղա Բեհբուդյանցը քաղաքի մելիքության պաշտոնը վարել է որդու՝ Ավետիքի հետ մեկտեղ: Այդ տարիներին Աղան համատեղել է մելիքի և տանուտիրոջ պաշտոնները[198]:

Մելիք Աղայի հետ նամակագրական սերտ կապերի մեջ է եղել Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոնը: Հայտնի են մելիքին հղված մի քանի նամակները՝ գրված 1764 («...ի Թիֆլիզ գրեալ առ Միրշքեար բաշի Մէլիք Աղայն...»)[199], 1766 («Թուղթ ևս՝ առ Միրշքեարբաշի պարոն Աղա Մէլիքն»)[200] թվականներին: 1766 թ. շարադրված մեկ այլ նամակում Սիմեոն կաթողիկոսը մելիք Աղային և նրա որդուն՝ Ավետիքին, հորդորում էր հավատարիմ մնալ հայոց եկեղեցուն ու անսասան պահել հավատքը. «Առ միրշքեարբաշի Մէլիք Աղայն յանձնարարութիւն վասն Զաքարիա վարդապետին[201] և պատուէր որդւոյն նորին Աւետիքին, մնալ միշտ հարազատ սրբոյ Աթոռոյս»[202]: Ջանց առնելով բազմաթիվ այլ փաստեր՝ հարկ է նշել, որ ինչպես մելիք Աղան, այնպես էլ նրա ժառանգները (նաև նախնիները) թաղվել են Խոջիվանքի իրենց տոհմական գերեզմանատանը: Հանգամանք, որն ուղղակի փաստում է հանգուցյալների Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ լինելը, ու թեև վերջին նամակը, իրոք, վկայում է, որ մելիքը, տեղի տալով վրաց Հերակլ արքայի ճնշումներին, հայտնվել էր անելանելի վիճակում, այնուամենայնիվ, հավատարիմ է մնացել իր դավանանքին և կամ շատ կարճ ժամանակից կրկին վերադարձել մայր եկեղեցու գիրկը: Այլապես մահվանից հետո կամփոփվեր ուղղափառների (հունադավանների) գերեզմանոցում[203]:

Աղա Բեհբուդյանցի կինը՝ Մարիամը, Կուսանաց մատուռի տեղում կառուցել է եկեղեցի[204]:

Աղա Բեհբուդյանցի եղբայրներն էին Բեհբուդն ու Ստեփանը: Ունեցել է 3 որդի՝ Ավետիք, Հովհաննես և Հովսեփ: Վերջինս հոր մասին մի առիթով կաթողիկոսին գրել է. «...հայրն իր Մելիք Աղայն լեալ է միշտ սիրող ազգին իւրոյ և պատուաղիր նմին...»[205]:

Վախճանվել է 1768 թ. սեպտեմբերի 18-ին[206] և թաղվել Խոջիվանքի գերեզմանոցում:

---

189. Նշվ. աշխ., էջ 231, 232, 234, 235, 237, 238, 244, 246, 249, 250, 252-255, 258, 261, 263, 265, 266, 267, 269, 273, 274, 276, 278, 279, 281-282, 285-286:
190. Նշվ. աշխ., էջ 169, 170, 172, 174, 176, 178, 179, 181, 182, 184, 185, 190, 191, 192, 194, 196, 197, 199, 201, 208, 210, 293, 298, 301, 304, 306, 308, 309, 311, 314, 316, 317, 320, 322:
191. **Աբրահամ Կրետացի**, նշվ. աշխ., էջ 36:
192. Նշվ. աշխ., էջ 110:
193. Նույն տեղում:
194. **Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, նշվ. աշխ., էջ 119:
195. დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნიკო ბერძენიშვილმა** და **მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962, էջ 256-257:
196. Նշվ. աշխ., էջ 278-280:
197. Նշվ. աշխ., էջ 296-297:
198. Նշվ. աշխ., էջ 293, 301, 304, 306, 308, 309, 311, 314, 316, 317, 320:
199. «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Գ, Սիմէոն Կաթողիկոսի յիշատակարանը, հրատ. **Գիւտ քահանա Աղանեանց**, Թիֆլիս, 1894, էջ 97:
200. Նշվ. աշխ., էջ 419:
201. Զաքարիա վարդապետը Թիֆլիսի հայոց առաջնորդ էր:
202. «Դիւան Հայոց Պատմութեան», նշվ. հատորը, էջ 534:
203. Կարծում ենք, միտումնավոր և ոչ ճշմարիտ է մելիքի կենսագրության հակիրճ շարադրանքում տեղ գտած հետևյալ ձևակերպումը. «Աղա (Մելիք-Աղա) (?-1768), Վասիլի անվամբ անցել է ուղղափառության» (“Aга (Мелик-Aга) (?-1768), перешел в православие с именем Василий...”). տես՝ **Думин Станислав**, **Князь Чиковани Юрий**, նշվ. աշխ., էջ 131:
204. **Խուցեան Խորեն քհն.**, նշվ. աշխ., էջ 16:
205. **Գեղամեանց Եղիշէ ա. ք.**, նշվ. հոդվածը, էջ 182:
206. **Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, նշվ. աշխ., էջ 170:

ԱՆՏՈՆ

Մելիք Անտոնի մասին տոհմագրական, կենսագրական տվյալներ հայտնի չեն: Կալվածական և առևտրային մի շարք վավերագրերում Անտոնը քաղաքի մելիքության պաշտոնում հիշվում է սկսած 1746 թ-ից մինչև 1751-ը: Նրա պաշտոնավարության շրջանում տանուտերն էր Պապը[207]:

ՍԱՀԱԿ ՇԵՐԳԻԼՅԱՆՑ

Մելիք Սահակի մասին ևս կենսագրական տվյալներ հայտնի չեն: Համաձայն տոհմագրական համառոտ տվյալների՝ նրա հոր անունն էր Մելքո, երկու եղբայրներինը՝ Խատի և Էստատ, իսկ որդիներինը՝ Շաքար, Գևորգ, Դավիթ, Շերմազան[208]:

Կալվածական և առևտրային մի շարք վավերագրերում Սահակ Շերգիլյանցը քաղաքի մելիքության պաշտոնում է հիշվում 1751-1760 թթ.: Նրա պաշտոնավարության շրջանում տանուտիրոջ պարտականությունը շարունակել է կատարել Պապը[209]:

Հարկ է նշել, որ մելիք Սահակից են սերել 1859 թ. հունիսի 7-ին տոհմական առաջին կարգի քաղաքացու կարգավիճակում հաստատված Մելիք-Սահակյանները[210]:

ԱՎԵՏԻՔ ԱՂԱՅԱՆ ԲԵՀԲՈՒԴՅԱՆՑ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Ավետիքը, որը 1749 թ. պետք է մանուկ հասակում լիներ, հիշվում է Բեհբուդյանց գերդաստանին պատկանած գույքի ներքին վերաբաշխմանը վերաբերող մի վավերագրում, որի համաձայն Ավետիքն ամուսնության առիթով պետք է հորից ստանար մի շարք բնակելի տներ[211]:

Տփղիսի մելիքի պաշտոնը ստանձնել է հոր մահից (1768) հետո:

Մելիք Ավետիքը, նույնիսկ առավել քան իր հայրը, սերտ հարաբերություն ուներ Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ: Մելիքին հղված նամակների բովանդակությունից պարզվում է, որ կաթողիկոսը ճանաչում էր մելիքի ընտանիքի անդամներին, ուրախանում նրանց հաջողություններով և ցավակցում դժբախտությունների ժամանակ: Մեզ հասած նամակներն ունեն 1769[212], 1770[213], 1774[214], 1775 («Թուղթ ևս առ Մէլիք Աւետիքն և նորին եղբայր Սիրիշկեար Իւանէն»)[215], 1777 («Թուղթ ևս առ Մելիք Աւետիքն մխիթարութիւն վասն մահուան կնոջն...»)[216] 1778[217] և այլ թվագրումներ:

Որպես քաղաքի առաջին դեմք՝ 1771 թ. մելիք (պոլիցմեյստեր) Ավետիքն իր տանը հյուրընկալել էր Վրաստանում ռուսական ջոկատի հրամանատար գեներալ-մայոր Ա. Սուխոտինին[218]:

1772 թ. դեկտեմբերի 15-ին կազմված «դատավճիռ պայտար Գևորգի և Հովսեփի գույքաբաժանման գործի մասին» վավերագիրը հաստատողների շարքը գլխավորել է նաև մելիք Ավետիքը[219]:

1774 թ. մելիք Ավետիքը հիշվում է առևտրական մի գործարքի առիթով (մելիքից տուն էր գնել Իեսե Բարաթաշվիլին)[220]:

1780 թ. մի վավերագրից պարզվում է, որ մելիք Ավետիքը, իր նախնիների նման մինչ այդ թվականը վարելով Թիֆլիսի հայոց եկեղեցիների երեցփոխի պաշտոնը, հրաժարվել է[221]:

1781 թ. մելիք Ավետիքը հիշվում է տպագրիչ Պողոս Արապյանին աջակցելու վերաբերյալ վրաց Հերակլ թագավորից ստացած մի գրության առնչությամբ[222]:

1782 թ. օգոստոսի 2-ին «Թուղթ ի Թիֆլիզ առ մելիք Աւետիքն» օրհնության կոնդակ էր հղել Ղուկաս կաթողիկոսը: Առիթը մելիքի ջանքերով Հավլաբարի դաշտում գտնվող Ծիրանավոր Սբ. Աստվածածին անապատի (Խոջիվանք) նորոգումն էր. «...անապատին Ծիրանաւոր կոչեցելոյ, որ ի լուսահոգին նախնեացն ձերոց ի դաշտին Հալուաբարու կառուցեալ է յանուն սրբուհւոյ, Աստուածածնին և ի

---

207. დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნიკო ბერძენიშვილმა და მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962, էջ 204, 207, 216, 218, 221, 223, 229:

208. დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნიკო ბერძენიშვილმა და მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962, էջ 250:

209. Նշվ. աշխ., էջ 231, 232, 234, 235, 237, 238, 244, 246, 249, 250, 252-254, 255, 258, 261, 263, 265, 266, 267, 269, 273, 274, 276, 278, 279, 281-282, 285-286: Տե՛ս նաև **Մարտիրոսյան Վ. Մ.**, նշվ. հոդվածը, էջ 162-163:

210. "Акты собранные Кавказскою археографическою комиссиею", том XII, Тифлис, 1904, էջ 226-227:

211. დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნიკო ბერძენიშვილმა და მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962, էջ 339:

212. «Դիւան Հայոց Պատմութեան», գիրք Ը, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, 1767-1776, հրատ. **Աղանեանց Գ-իտ քահանայ**, Թիֆլիս, 1908, էջ 97, 105: Ի դեպ, 1869 թ. սեպտեմբերի 24-ին կազմված «Դատավճիռ վիճելի ճանապարհների մասին» վավերագրում ևս հիշվում է մելիք-տանուտեր Ավետիքը (**Մարտիրոսյան Վ. Մ.**, նշվ. հոդվածը, էջ 166:):

213. Նշվ. աշխ., էջ 131-132, 138:

214. Նշվ. աշխ., էջ 266:

215. Նշվ. աշխ., էջ 322, 390:

216. «Դիւան Հայոց Պատմութեան», գիրք ԺԱ, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, մասն III, 1777-79, հրատ, **Աղանեանց Գ. ա. ք.**, Թիֆլիս, 1913, էջ 14:

217. Նշվ. աշխ., էջ 275. 280:

218. "Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии", том 1 (с 1768 по 1774 годы), под редакцией **Цагарели А. А.**, СПБ, 1891, էջ 480:

219. **Մարտիրոսյան Վ. Մ.**, նշվ. հոդվածը, էջ 167:

220. **Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, նշվ. աշխ., էջ 165:

221. «Դիվան Հայոց Պատմության. Ղուկաս Կարնեցի», նոր շարք, հատոր Ա, աշխատասիրությամբ **Վարդան Գրիգորյանի**, Երևան, 1984, էջ 97, 126-127:

222. **Ճեմճեմեան Հ. Սահակ**, Նամականի Պօղոս Արապեան տպագրիչի, «Բազմավէպ», 1982, էջ 28:

Տփղիսը ԺԸ դարում (գործ՝ Սերգեևի)

Խոջիվանք. ընդհանուր տեսքն արևմուտքից

բազում ամաց հետէ անմարդաբնակ եղեալ, այժմոյս շինացեալ է նորապէս...»[223]:

Տակավին մելիք Աղայի կենդանության օրոք ծայր առած կրոնական ճնշումները նոր դրսևորում էին ստացել նաև մելիք Ավետիքի պաշտոնավարության օրոք: Հայահոծ Թիֆլիսի բնակչությանը դավանափոխության ճանապարհով յուրացնելու նպատակով վրաց արքան ժամանակ առ ժամանակ սաստկացնում էր կրոնական ճնշումները: Անշուշտ, պարտադրանքի ծանրությունը նախ և առաջ ծառանում էր ազգի աշխարհիկ և հոգևոր պատասխանատուների վրա, քանի որ, ինքնին հասկանալի է, առաջնորդներին դավանափոխելուց հետո նրանց հետևող ժողովրդական զանգվածները լուրջ դիմադրություն ցույց տալ չէին կարող: Բարեբախտաբար, մելիք Ավետիքն իր ազգասիրական մղումներով բնավ չի զիջում իր նախնիներին և հանդես է գալիս որպես նրանց արժանի հաջորդ ու պատվով դիմագրավում է փորձությանը: Դեպքերի ընթացքին հետևած Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցին, տեսնելով մելիք Ավետիքի բռնած դիրքը, 1782 թ. հայտնում է իր գոհունակությունն ու շնորհակալությունը. «Թուղթ ի Թիֆլիզ առ Մելիք Աւետիքն, շնորհակալութիւն վասն հարազատութեանց, մանաւանդ՝ վասն ջանիցն՝ որ հանդերձ բազմութեամբ քաղաքին ջանայր ընդդէմ Ախթարմայից՝ առ ի դարձուցանել զնոսա, եւ կամ նկուն առնել: Որում եւ Արքայն լինէր ջատագով, տալով զսաստիկ թուղթ՝ եւ զվերակացուս՝ ի դարձուցանել զնոսա...»[224], նաև «Թուղթ ի Թիֆլիզ առ մելիք Աւետիքն, շնորհակալութիւն վասն սիրոյն և հարազատութեանն՝ զոր ցուցեալ էր գրով ի ձեռն տէր Աբրահամին, եւ վասն նորին գրեալ էր զյանձնարարութիւնս, զի յուխտ էր եկեալ աստ: Եւ վասն մեր ճորտիցն որք անդ՝ գրեցաւ սմա յանձնարարութիւն»[225]:

1783 թ. մելիք Ավետիքը հիշվում է առևտրատնտեսական հարաբերությունների առնչությամբ[226]: 1784 թ-ին Ղուկաս կաթողիկոսը մելիք Ավետիքին մխիթարական հեռագիր է հղում եղբոր՝ միրիշքար Հովհաննեսի (Իվանե) մահվան առիթով[227]:

Մելիք Ավետիքը վախճանվել է 1795 թ.: Համենայն դեպս, նույն թվականին վերաշինված Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու արձանագրության մեջ նշված է, որ. «Ի ՌՄԽԴ թուին հանգուցեալ տէր-Գրիգորին Նորաշէնու սկզբին է արարեալ նորոգ շինութեանն հրամանաւ հանգուցեալ մելիք Աւետիքին Բէհբուդեան»[228]:

Հանգուցյալի անվան հիշատակմանը հանդիպում ենք նաև արքայազն Գեորգիի 1796 թ. մայիսի 10-ին Շահամիր Շահամիրյանին հղված նամակում. «...սակայն խղճալի մելիք Աւետիքն, նախ քան զպատահմունս այս վաղճանեալ էր...»[229]:

ԴԱՐՉԻ ԱՎԵՏԻՔՅԱՆ ԲԵՀԲՈՒԴՅԱՆՑ

Ծնվել է 1764 թ.[230]: Մինչև 1795 թ., երբ վախճանվել էր հայրը՝ մելիք Ավետիքը, Դարչիի կենսագրական մանրամասներն անհայտ են: Հոր մահվանից հետո, նախնյաց սովորության համաձայն, Թիֆլիսի մելիքության պաշտոնը ստանձնել է որդին՝ 31-ամյա մելիք Դարչին: Այդ պաշտոնում նրա անվան առաջին հիշատակություններից մեկը (1799) վերաբերում է

223. «Դիվան Հայոց Պատմության. Ղուկաս Կարնեցի», նոր շարք, հատոր Ա, էջ 336:

224. «Դիւան Հայոց Պատմության», գիրք Դ, էջ 376:

225. Նշվ. աշխ., էջ 380:

226. Մատենադարան, ձեռ. 2803, թ. 193ա: Տե՛ս նաև **Մարտիրոսեան Վ.**, Հայերը Վրաստանի առեւտրատնտեսական կեանքում, «Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան», Երևան, 1996, էջ 148:

227. «Դիւան Հայոց Պատմութեան», նշվ. հատորը, էջ 404:

228. **Мурадян П. М.**, նշվ., աշխ., էջ 75:

229. Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800 гг., сборник документов, том IV, Ереван, 1990, էջ 428:

230. Ծննդյան տարեթիվը ճշտվում է համաձայն բեկորված տապանաքարի երկլեզվյան (ռուսերեն, վրացերեն) արձանագրության, որտեղ նշված է, որ 1832 թ. վախճանված մելիք Դարչին 68 տարեկան էր, ուստի ծնվել էր 1764 թ. (ակնհայտ է, որ՝ 1761 թ. իբրև մելիքի ծննդյան տարեթիվ ընդունողները (տես՝ **Думин Станислав**, **Князь Чиковани Юрий**, նշվ. աշխ., էջ 131) սխալվում են:

Տփղիսի հատակագիծը 1785 թ. (հեղ. Ա. Պիշչևիչ)

Տփղիսը ԺԸ դարի վերջին

Մեյդանի Սբ. Գևորգ եկեղեցու նորոգության խնդրին: Հերակլ արքայից ստացված հրովարտակի մեջ մասնավորապես հիշված էին. «Քարծր Սրբազան Տէր Յովսէփ Արքեպիսկոպոս Երկայնաբազուկ-Արդութեան: Ապա՛ մեր դասաւորքն, քաղաքի մէլիք Դարչիի և չորս Հաղբատայ ժողովուրդք քէթխուդայք...»[231]:

Ամենայն հավանականությամբ, քաղաքական անկայուն իրավիճակի բերումով (Աղա-Մահմատ խանի արշավանքը և այլն) Ամենայն Հայոց Ղուկաս կաթողիկոսը միայն 1798 թ. էր հղել այն գրությունը, որտեղ ցավակցում էր Դարչիին հոր մահվան կապակցությամբ և շնորհավորում մելիքության պաշտոնը ստանձնելու առիթով. «...Գիտութիւն լիցի ազնուականութեան քում: Ջի յամի թուականութեան մերոյ ՌՄԽԴ. յորում փոխեցեալ էր ի կենաց աստի գերազնիւ սիրելին մեր իմաստնախոհ և բարեհամբաւ Մէլիք Աւետիք Աղայն որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ, և ընդ նախնեաց բարեպաշտ իշխանացն դասակարգեցէ ...իսկ և իսկ գրել ետուք զթուղթ մի առ սիրելիդ ի մխիթարութիւն յաղագս վախճանի հօր քոյ բարեպաշտի, և ի շնորհաւորութիւն քոյդ յաջորդաբար մէլիքութեան, և թուղթ մի առ միրիշքարբաշի Պարոն Հովսեփն և Պարոն Արսէնիոսն...»[232]:

Մելիք Դարչիին վիճակվել էր Թիֆլիսի կառավարման դժվարին մի ժամանակահատված, քանի որ տակավին 1798 թ. Թիֆլիսն ավերակ էր. «...Մայրաքաղաք Թիֆլիսը ներկայացնում էր մի ավերակույտ...»[233]: Ի դեպ, Հերակլի որդի Գիորգին, ժառանգելով Վրաստանի գահը (1798), Թիֆլիսում բնակություն հաստատեց մելիք Դարչիի տանը. «Գիորգի թագավորը այցելելով ավերված մայրաքաղաքը, պետք է բնակություն հաստատեր քաղաքի միակ կանգուն տանը, որն էր իշխան Բեհբութովի տունը: Այդտեղ էլ երկու փոքրիկ սենյակներում ապրեց մինչև իր վախճանը»[234]:

Քաղաքացիների շրջանում մելիք Դարչին վայելում էր վստահություն և ժողովրդականություն: Հանգամանք, որ նկատել և այդ մասին մասնավորապես նշել են (1800) ռուս իշխանավորները. «...ժողովրդին դա հայտարարվել է մելիք իշխան Դարչիի միջոցով և ընդունվել մեծ երախտապարտությամբ...»[235]: Ներկայացնելով Վրաստանի քաղաքացիական կառավարման գործերը՝ 1801 թ. գեներալ-մայոր Լազարևը իր «Վրաստանի նկարագրություն» ուսումնասիրության մեջ նշել է. «...առուծախի փաստաթղթերը վավերացվել էին թագավորի կողմից, բացառությամբ Թիֆլիսի բնակիչների, որոնց մոտ դեռևս տեղի մամասախլիս կամ ոստիկանապետ մելիք Դարչին էր դնում իր կնիքը...»[236]: Հիացած մելիք Դարչիի կազմակերպչական և քաղաքացիական գործերի ղեկավարման արդյունավետությամբ՝ նույն թվականին գեն. Լազարևը գեներալ-լեյտենանտ Կնորինգին հղած գրության մեջ նշել է. «...Թիֆլիսի մելիք իշխան Դարչի Բեհբութովը և նրա հորեղբայր Ավետ Բեհբութովը, որոնք վայելում են տեղի բնակիչների համակրանքն ու վստահությունը, հավաստիացնելով, որ իսկական փոփոխություններից ավելի զորեղին անցնելը նրանց իսկ օգտին է, տեղաբնիկներին պահում էին պարիակների և անդորրության մեջ: Դեռ ավելին, մելիք Դարչին, չհամբերելով քաղաքը շուտափույթ

231. «Դիւան Հայոց Պատմութեան», գիրք Թ, Հովսեփ կաթողիկոս Արղութեան, մասն առաջին, 1778-1800, հրատ. **Աղանեանց Գ. ք.** , Թիֆլիս, 1911, էջ 215-217:

232. «Դիւան Հայոց Պատմութեան», գիրք Դ, էջ 669:

233. **Эзов Г. А.**, Сношения Петра Великого с Армянским народом, СПБ, 1898, էջ CVIII (բնագրում՝ "...Столичный город Тифлис представлял груду развалин..."):

234. **Дубровин Н.**, Ист. войны и владыч. русск. на Кавказе, том III, гл. XI, էջ 231 (բնագրում՝ "Царь Георгий, поселившись в разоренной столице, должен был поместиться в единственно уцелевшем доме кн. Бебутова, где и прожил до самой своей смерти в двух весьма маленьких комнатах"): Նաև՝ **Эзов**, նշվ. աշխ., էջ CVIII-CIX: Նաև՝ **А. К.**, Что говорит истирия, "Тифлисский листок", 1910, N187, էջ 2:

235. "Акты...", том I, Тифлис, 1866, էջ 191 (բնագրում՝ "...народу же оное объявлено чрез их мелика князя Дарчи и принято с большею благодарностию..."):

236. Նշվ. աշխ., էջ 193 (բնագրում՝ "...купчия же скреплялись царем самим, исключая Тифлисских жителей, у коих еще и здешний мамасахлис или род полицеймейстера мелик Дарчи прикладывает свою печать..."):



Տփղիսի հատակագիծը 1800 թ. (կազմող՝ պորուչիկ Վ. Չույկո)

տեսնել գործող կարգ ու կանոնի մեջ, անդադար ինձանից պահանջում էր նրա նշույլը, որը և իրագործվում է գահաժառանգի հրամանով. քաղաքը բաժանվում է մի քանի մասերի, յուրաքանչյուրը՝ 10-ական, նշանակված են տասնապետներ և մասնավորականներ, որոնք վերահսկում են մաքրությանը, և տեղաբնիկների կողմից դա կատարվում է այնպիսի հաճույքով, որը դժվար էր և սպասել Ասիական կոպիտ խառնվածքից...»[237]: Նույն թվականի մայիսի 31-ին գեն. Կնորինգի՝ գեն. Լազարևին հղած փոխադարձ գրության մեջ դարձյալ շեշտվում էին մելիք Դարչիի վարչարարական արժանիքները. «...Աստիկանական կարգ ու կանոնի պետ տեղի մելիք իշխան Դարչի Բեհբութովի և նրա օգնական նացվալ Սկրտում Սուրղունովի պաշտոնավարման վերաբերմամբ, համաձայն եմ, հիմք ընդունելով Ձեր գնահատականը, քանի որ նրանց վարքագիծը, մասնավոր կանոնները և հասարակության շահերի նկատմամբ եռանդը Ձեզ հայտնի են...»[238]:

Մելիք Դարչին նամակագրական սերտ կապի մեջ էր նաև Ղուկասի հաջորդ՝ Դավիթ կաթողիկոսի հետ: 1802 թ. գրված մի նամակում կաթողիկոսը մե-

Տփղիսի հատակագիծը 1809 թ.

լիքին դիմել է այսպես. «...տերամբ քրիստոսիւ զօրացեալ բարեշուք և փառազարդ ազատազնեայ և մեծատոհմ Մելիք Դարչին աղայիդ»[239]:

Դեռևս 1801 թ. գեն. Լազարևը, պետական պարգևատրման արժանի անձանց վերաբերյալ իր կարծիքը հայտնելով գեն. Կնորինգին, նշել էր. «...ինչ վերաբերում է խաչերին, ապա իմ կարծիքով, այդ պարգևատրմանն առավել արժանի են իշխաններ Իգնատ Թումանովը, Դարչի Բեհբութովը և Սողոմոն Արղության-Երկայնաբազուկը...»[240]:

Վրաստանի Ռուսաստանի հետ միավորվելուց (1801) և ռուսական օրենքների՝ Վրաստանում տարածվելուց հետո ժառանգական իրավունքներով

---

237. Նշվ. աշխ., էջ 325 (բնագրում՝ "...Князь Дарчи Бебутов, Тифлисский мелик, и дядя его князь Авет Бебутов, кои пользуясь привязанностию и доверенностию здешних обывателей, внушили им всю их пользу, от настоящей перемены могущую произойти для них, и удержали здешних обывателей в повиновении и тишине; сверх того мелик Дарчи, имея нетерпение поскорее видеть в городе существующий порядок, непрестанно требует от меня завести хотя тень онаго, что по приказанию наследнаго царевича и выполняется: город разделен на несколько частей, каждая на десятки, определены десятские и частные, кои наблюдают чистоту и порядок, и оне делается с таким удовольствием от обывателей, что я никак ожидать не мог грубому Азиятскому нраву..."):

238. Նշվ. աշխ., էջ 422 (բնագրում՝ "...Касательно определения к управлению должности начальника полицейскаго порядка, мелика здешняго князя Дарчи Бебутова и под ним в помощники ему нацвала Микиртума Сургунова, я согласен, полагаясь на удостоение ваше, поколику их поведение, частныя правила и ревность к пользам общественным вам больше известны..."): Ցույց տալու համար, թե ինչպիսին էր Թիֆլիսի ներքին կյանքում և հատկապես հայ հոգևորականության վրա մելիք Դարչիի ունեցած ազդեցությունը, տեղին ենք համարում մեջբերել հետևյալ քաղվածքը. «Նա տէր էր համարում իր պապերից շինած Թիֆլիսի Կուսանաց Վանքի, Նորաշէն, Մողնի և քանի մի այլ եկեղեցիների թէ՛ քաղաքում և թէ՛ գիւղերում: Նրանից է կախված այդ եկեղեցիներում քահանայ նշանակելը, և աւագութիւն տալը: Նա հրամայում է առաջնորդին այս ինչ տիրացուին քահանայ ձեռնադրել և իշխանի այդ հրամանը անմիջապէս պիտի գործադրուէր: Քահանաների վրայ բարկանալիս՝ իշխան Դարչին նրանց ապտակում էր. երբեմն էլ չիբուխը (ծխամորճ) նրանց վրայ կոտրատում: Երբ քահանաները գործով նրա մօտն էին գնում ժամանակ առ ժամանակ՝ ժամերով նա նրանց սպասեցնել էր տալիս իր դռանը և ապա կամ կանչում էր ներս կամ, որ աւելի յաճախ էր պատահում, ծառայի միջոցաւն էր յայտնում նրանց իր հրամանները: Եթէ առաջնորդի հետ տեսնուել էր ուզում, ծառայ էր ուղարկում և նրան իր մօտ կանչում: Եւ Վրաստանի հայոց առաջնորդ արքեպիսկոպոսը իշխան Դարչիին ներկայանալիս՝ դեռ փողոցում փիլոն կամ շուրջառ էր ձգում վրան և բաւականի ժամանակ դռանը սպասելուց յետոյ՝ ներս էր մտնում խոնարհ ողջոյն տալիս չիբուխ քաշող իշխանին և չէր համարձակւում նստել, մինչև որ իշխանը չհրամայէր: Նա սեփականացրել էր իրան առաջնորդի հոգևոր իրաւունքները և ինքն էր որոշում հաս ու չհաս պսակները, ամուսնալուծութեան վճիռներ էր կայացնում. վճռում էր կտակների, հոգեբաժինների և կողոպտների գործերը. իրաւունք էր տալիս ննջեցեալներին եկեղեցիների գաւիթներում թաղելու, վերցնում էր մի քահանայի ծուխը և տալիս ուրիշին: Երբ իշխանը ցանկութիւն էր յայտնում ժամ գնալու, քահանաները իրաւունք չունէին ժամասացութիւնը սկսել մինչև նրա գալը, և այլն: Եկեղեցիները երէցփոխաններ չունէին, ուստի նրանց եկամուտները ամբողջապէս իշխան Դարչիի ձեռքն էին անցնում: Եւ նա ծախսում է գործադրում էր ըստ իր հաճոյքին, առանց երբէք հաշիւ տալու առաջնորդին, քահանաներին կամ ժողովրդին» (**Գեղամեան Եղիշէ ա. ք.**, Պատմական քաղվածներ, «Հովիտ», 1910, N8, էջ 120):

239. «Դիւան Հայոց Պատմութեան», գիրք Զ, Դաւիթ կաթուղիկոս, մասն առաջին, 1801-2, հրատ, Գիւտ աւագ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1904, էջ 295:

240. "Акты...", том I, Тифлис, 1866, էջ 529-532: Նաև՝ **Эзов**, նշվ. աշխ., էջ CXII (բնագրում՝ "...что касается до крестов, то по моему мнению, князья Игнатий Туманов, Дарчи Бебутов и Соломон Аргутинский Долгоруков более всех заслуживают этой награды..."):

Բեհբուդյանների իջևանատունը (քարավանատունը) Կուրի աջ ափին (լուս. ԺԹ դարի վերջ)

Մելիք Դարչի Բեհբուդյանցի եղբորորդի գեներալ Բարսեղ Հովսեփյան Բեհբուդյանցը (1791-1858)

Թիֆլիսը կառավարող քաղաքապետ մելիք Դարչին իր իրավունքները վայր է դնում: Արդեն 1802-ին նա հիշվում է իբրև «Թիֆլիսի ժամանակավոր ավագ ոստիկանապետ...»[241]: Մելիքի հնարավոր դժգոհությունները կարծես մեղմելու միտումով նույն թվականի օգոստոսի 25-ի հրամանագրով, ի թիվս այլոց, մելիք Դարչին պարգևատրվում է Սբ. Աննայի 2-րդ կարգի արծաթե մեդալով. «Պետական խորհրդականների թվում է Թիֆլիսի նախկին մելիք կամ քաղաքապետ իշխան Դարչի Բեհբուդովը...»[242]: Կառավարական այլ վավերագրում նշվել է, որ մելիք Դարչին, որը Թիֆլիսի (որն այդ ժամանակ գրեթե զուտ հայաբնակ էր) ողջ հայ ժողովրդի ղեկավարն էր («Իշխան Բեբուտով Դարչին մելիք էր և մամասախլիս, այսինքն՝ Թիֆլիսում բնակվող բոլոր հայերի գլխավոր դատավորն ու կառավարիչը»)[243], մեծապես նպաստել է Վրաստանը Ռուսաստանին միացնելու գործին[244]:

1803 թ. որոշվում է մելիք Դարչիի տարեկան աշխատավարձի չափը. «Մելիք իշխան Դարչի Բեհբութով...: Քանի որ նա վաղուց էր օգտվում Թիֆլիսի վաճառականության եկամտաբեր կառավարումից, իմ կարծիքով չպետք է ծառայի, չպետք է ստանա 600 ռուբլուց ավելի և ինչպես ինձ թվում է, կարելի է պարգևատրել պետական ծառայողի կոչումով՝ 600 ռուբլով...»[245]:

Չնայած ռուսաց տերության կողմից մելիք Դարչիին ցուցաբերված պատիվներին, շքանշաններին ու կոչումներին՝ այնուամենայնիվ, վերջինս դժգոհ էր, իսկ պատճառը նախ և առաջ նախկին եկամուտներից զրկվելն էր. «վրացոց թագաւորութեան ժամանակ՝ որ ժառանգաբար վարում էր Թիֆլիսի մելիքի կամ նահանգապետի, ևս և մամասախլիսի կամ տանուտիրոջ պաշտօններն էր վարում և առաջնակարգ դեր խաղում ամբողջ քաղաքում ամենքին հրամայելով և ամենքի վրայ իշխելով: Դարչին՝ ի շնորհս իր կրկին պաշտօններին՝ շատ մեծ եկամուտ ունէր ժողովրդից մինչև ռուսաց Վրաստան գալը: Այնուհետև մելիքութեան պաշտօնը հանդերձ իր եկամուտներով՝ վերացաւ, և Դարչին թէև ռուս կառավարութիւնից ստացաւ աստի-

241. “Акты...”, նշվ. հատորը, էջ 686 (բնագրում՝ ”...Тифлисским временным обер-полицеймейстером...”):

242. “Акты...”, նշվ. հատորը, էջ 763 (բնագրում՝ ”В статские советники: бывший Тифлисский мелик или градоначальник княз Дарчи Бебутов...”):

243. Նշվ., աշխ., էջ 401 (բնագրում՝ ”Князь Бебутов Дарчи, был мелик и мамасахлис, то есть главный судья и правитель всего Армянскаго народа, живущаго в Тифлисе”):

244. Նույն տեղում:

245. “Акты...”, том II, Тифлис, 1868, էջ 43 (բնագրում՝ ”Мелик Кн. Дарчи Бебутов... Послику оный давно пользовался выгодным управлением Тифлисскаго купечества, по мнению моему не имеет нести службы, не следует ему иметь более 600 руб; чином же, как мне кажется, можно наградить к. с. ... 600”):

ճան, չին, թոշակ, շքանշաններ, նոյնիսկ ատենի աւագ անդամ էլ կարգուեցաւ, բայց նիւթական շատ կորուստ ունեցաւ և դժուարութեամբ էր կարողանում իր օջախի նախկին շուքը պահպանել»[246]:

Գործն այնտեղ էր հասել, որ 1805 թ. մելիք Դարչին, իր համար ստեղծված կացությունից դժգոհ, միաժամանակ հարել էր Վրաստանում ծայր առած հակառուս շարժմանը, որի համար ռուսական իշխանությունները կարևոր էին համարել նրան որոշ ժամանակով հեռացնել Թիֆլիսից՝ փոխադրելով «պատվավոր» աքսորավայր՝ Ռուսաստան. «Պետական ծառայող, Թիֆլիսի նախկին մելիք իշխան Դարչի Բեհբութով: Չհիշատակելով կասկածանքի պատճառները, Վրաստանի հանգստության համար հարկ է նրան ետ կանչել Ռուսաստան:

Կարծիք. Հավատարիմ էր, ինչը որ հաստատվեց անցյալ տարվա վերջին խառնաշփոթին, երբ լինելով Վրաստանի ղեկավար, գերազանցապես մասնակցել է բոլոր գաղտնի հաղորդակցություններին»[247]:

1807 թ. Դարչի Բեհբուդյանցը հիշվում է ոմն Ալխազյանցի հետ մի այգու պատճառով ծագած վեճի կապակցությամբ[248]:

1814 թ-ից ի վեր, այսինքն՝ սկսած այն պահից, երբ Վրաստանի Հայոց թեմական առաջնորդ է նշանակվում Ներսես Աշտարակեցին, մելիք Դարչիի առջև ծառանում են նոր խնդիրներ: Սովորույթի ուժով դեռևս զգալի ազդեցություն ու արտոնություններ ունեցող Դարչիի և թեմական առաջնորդի միջև ծայր առած հակամարտությունը գնալով ավելի ու ավելի է խորանում. «...Ներսէս Աշտարակեցին Թիֆլիզ առաջնորդ գալու օրիցը՝ իշխան Դարչիի մտցրած սովորութիւններին բոլորովին հակառակ ընթացք բռնեց: Ի մեծ զարմանս իշխանին՝ Ներսէսը հէնց առաջին անգամ այցելած միջոցին՝ ներկայացաւ նրան առանց փիլոնի և առանց ստրկական խոնարհութեան: Այնուհեև գործ պատահած ժամանակ՝ առաջնորդը ինքն էր պահանջում իշխանին իր մօտ և ոչ թէ ինքը գնում նրա տունը: Եւ իշխանի եկած միջոցին՝ առաջնորդը նրան ընդունում էր նոյն ձևով, ինչպէս և միւս այցելուներին և չէր ճանապարհ ճգում մինչև դուռը: Ներսէսը վճռաբար յայտնեց իշխանին, որ ինքը չէ կարող նախորդ առաջնորդների ժամանակ մտցրած սովորութիւնները ընդունել և նրանց հպատակել...»[249]: Հայտնի մի շարք

Մելիք Դարչի Բեհբուդյանցի տապանաքարի (1832 թ.) բեկորները (լուս. Ս. Դարչինյանի)

դիպվածներն ու մանրամասները ցույց են տալիս, որ անցնող տարիների հետ մելիք Դարչին, շարունակելով հակադրվել թեմական առաջնորդ Ներսես Աշտարակեցուն, անընդհատ կորցնում էր իր երբեմնի ազդեցությունը՝ ավելի ու ավելի հայտնվելով ոչ

246. **Գեղամեանց Եղիշէ ա. ք.**, Պատմական քաղուածներ, «Հովիտ», 1910, N 8, էջ 119:

247. "Акты...", том II, էջ 178 (բնագրում՝ "К. с., бывший Тифлисский мелик кн. Дарчи Бебутов. Не упоминая о причинах подозрения, считает нужным для спокойствия Грузии вызвать его в Россию. Мнение: Верностю исполнен и доказал то в последнее замешательство прошлого года, будучи бывшим правителем Грузии преимущественно употребляем во все тайныя сношения"):

248. "Акты...", том III, Тифлис, 1869, էջ 16:

249. Նշվ. հոդվածը, N 9, էջ 134:

Թիֆլիսը 1830-ական թթ. (գործ՝ Ն. Չերնեցովի)

թե կարգադրողի, այլ խնդրողի կամ բողոքողի դերում[250]:

Վերջին անգամ իշխան Դարչիին իր իրավունքների չափը ստիպված ճանաչել տվեց նաև կուսակալ Ռտիշչևը՝ բացատրելով, որ «... թէ՝ յետ այսու նրա յամառութիւնը և ընդդիմութիւնը կը համարուի ոչ միայն իբրև արհամարհանքի առ հայոց եկեղեցին և նրա պետը, այլև որպէս անհնազանդութիւն բարձրագոյն կամաց Ն.Կ.Մ. և ընդդիմութիւն ռուսաց տէրութեան»[251]:

Դարչի Ավետիքյան Բեհբուդյանցը վախճանվել է 1832 թ., 68 տարեկան հասակում և թաղվել Խոջիվանքում գտնվող Բեհբուդյանների տոհմական գերեզմանոցում: 1937-38 թվականներին, երբ Թբիլիսիի քաղաքային իշխանությունների կարգադրությամբ ոչնչացվեց այդ գերեզմանոցը, Դարչի Բեհբուդյանցի երկլեզվյան արձանագրությամբ շիրմաքարը, թեև երկու մասի ջարդվեց, այնուամենայնիվ, գոնե այդ վիճակում պահպանվեց:

Տապանաքարի 7 տող ռուսերեն և 10 տող վրացերեն արձանագրությունը, որ ներկայացնում ենք ստորև, հրատարակվում է առաջին անգամ.

П раху
покоющегося здесь колле-
жского советника Тифли-
ского мелика князя Дарчия
Бебутова, скончавшагося [29]-го
февраля, 18[32] года на 68 году
от рождения.

Թարգմ. Աստ հանգչի շիրիմ կոլեգիական խորհրդական, Թիֆլիսի մելիք, իշխան Դարչի Բեհբուդովը, ի 1832 ամի, 68 ամաց հասակի:

აქა ქუჱშე ლოდის ამის დაიდუა სხეული ტფი/ლისის მელიქისა კოლლეჟსკი სოვეტნიკისა თავადისა მელიქ / ავეტიქას ძისა დარჩი ბებუდოვისა გარდაცუალებულისა თებერვლის ...სა ჩყლბ-სა შობითგან თვსით 68 სა წელი/ც და მით მგლოიარედ დამტევებელისა ერთის ძისა რომელ/მანცა ჟამათ რაოდენმე დაუვიწყარად სხვისათვის / და სდვნილოდი ესე ვითარცა ნიში უთლმოწიწებიფს (՞) / თფლსისა მოვლეოლბეს უსრულიბწ (՞) ღირ ბნილისედი (՞) ღთ / .... ნესლსა (՞) ამისა და ... მოლვლენაბისნო წართქ/მას ... (՞) გვიდრეთ

Թարգմ. Աստ, տապանի ներքո հանգչում է Տփիլիսի մելիք, կոլեգիական խորհրդական, իշխան մելիք Ավետիքի որդու՝ Դարչի Բեբուդովի մարմինը, վախճանված 1832-ի փետրվարի ...ին, ծննդից 68 տարեկան, թողնելով սուգ...:

Ծանոթ. Տապանագրի վրացերեն հատվածի վերծանության հեղինակն է Պավել Չոբանյանը:

250. Նշվ. հոդվածը, էջ 134-136:
251. **Գեղամեանց Եղիշէ ա. ք.**, նշվ. հոդվածը, 1910, N 13, էջ 199:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1840-1875 ԹԹ.)

ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԻՎԱՆ) ԻԶՄԻՐՅԱՆՑ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Սերում է Տփղիսի հայոց բնիկ տոհմից, որն ուներ առաջին կարգի քաղաքացիության տիտղոս[252]: Հ. Իզմիրյանցն առաջինն էր, որ քաղաքագլուխ ընտրվեց Թիֆլիսի կառավարման հասարակական կանոնադրության հաստատումից (1840) հետո: Քաղաքագլխի պաշտոնը ստանձնել է 1840-1843 թթ.:

Պաշտոնավարության սկզբնական շրջանի մի դրվագը, որը լուսաբանել է քաղվարչության քարտուղար Ստ. Ֆյոդր. Չրելաևը, հետևյալն է. «Թիֆլիսում առաջին քաղաքագլուխ ընտրվեց Իվան Իզմիրովը, որը պաշտոնը ստանձնելով անմիջապես հարց բարձրացրեց զինվորական բնակարանային ծառայությունը դրամականով փոխարինելու վերաբերյալ: Առաջարկը հիմնավորեց այն ըմբռնումով, թե բնիկները չեն սիրում, որ իրենց մոտ բնակվող կողմնակի անձինք իրենց ընտանեկան կյանքի վկան լինեն: Երկրամասի բարձրագույն իշխանությունը հարգում է այդ միջնորդությունը և թույլատրում, անցկացնել անշարժ կայքի գնահատում, կարգավորելու համար տնատերերի բնակարանային բավարարման հարցերը զինվորական և քաղաքացիական աստիճանավորների հետ»[253]:

Հ. Իզմիրյանցի վարչական գործունեությունից հայտնի է, որ նա մեկն էր իր ժամանակի այն մտավորականներից, ով ելնելով հասարակության շահերից՝ ձգտել էր օրենքի ուժով սահմանափակել համքարների միահեծան ինչ-ինչ իրավունքները, որ հենված էին սովորույթի ուժի վրա: Այդ կապակցությամբ նա մի նախագիծ էր հեղինակել և իբրև առաջարկ՝ այն հղել Կովկասի փոխարքա Վորոնցովին[254]:

ՍՏԵՓԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԽԱՏԻՍՅԱՆՑ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Սերում է Տփղիսի բնիկ հայոց տոհմական առաջին կարգի քաղաքացիության շնորհում ունեցող Խատիսյանց (Խատիսով) գերդաստանից[255]: 1820-ական թթ. նպաստել է «Ներսիսյան» հոգևոր դպրոցի կայացման գործին[256]:

Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնը վարել է 1843-1844 թթ.: 1845 թ. Ս. Խատիսյանցը հիշվում է այն 9 անձանց թվում, ովքեր ստանձնել էին արքունի նորահիմն թատրոնի շինարարական աշխատանքների ղեկավարման գործը[257]:

ՄՈՎՍԵՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՑ (ՏԵՐ-ԳՐԻԿՈՒՐՈՎ)

Ծննդյան տարեթիվն ու կենսագրությանն առընչվող մանրամասները մնում են անհայտության մեջ: Քաղաքագլխի պաշտոնը վարել է 1845-1846 թթ.: Մ. Տեր-Գրիգորյանցի պաշտոնավարման ժամանակ 1845 թ. հուլիսի 2-ին հրի ճարակ են դարձել Թիֆլիսի առևտրական շարքերը[258]:

1845 թ. սեպտեմբերի 20-ին բացվում է ռուսական առաջին թատրոնը[259]:

Նրա օրոք՝ 1846 թ. մարտին, Թիֆլիսում բացվում է ձիարշավարան, իսկ սեպտեմբերի 3-ից սկսում է գործել դպրոցը[260]:

---

252. “Акты ... “, том XII, Тифлис, 1904, էջ 227:

253. **Чрелаев С.**, Тифлис в XIX столетии, “Тифлисский листок”, 1901, N 291 (բնագրում՝ “ Первым городским головой в Тифлисе был избран Иван Измиров, который сейчас же по вступлении в должность возбудил вопрос о замене натуральной военной квартирной повинности денежною, мотивируя свое предложение тем соображением, что туземцы не любят, чтобы посторония лица, квартирующия у них, были свидетелями их семейной жизни. Ходатайство это было уважено высшей властью в крае, тогда же было разрешено произвести оценку недвижимых имуществ для раскладки между домовладельцами сбора на квартирное довольствие военных и гражданских чинов“):

254. “Тифлисские Амкары, из записок **Юрия Федоровича Ахвердова**”, Тифлис, 1883, էջ 30-31:

255. “Акты ...”, том XII, Тифлис, 1904, էջ 227:

256. **Երիցեանց Ադէքսանդր Դ.**, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի որ ի Թիֆլիզ, հ. Ա, Թիֆլիս, 1898, էջ 56:

257. “Акты ...”, том XI, Тифлис, 1888, էջ 880:

258. “Акты ...”, том X, Тифлис, 1885, էջ 830:

259. “Кавказский Календарь на 1892 г.”, Тифлис, 1891, էջ 27:

260. “Акты ...”, том X, Тифлис, 1885, նույն տեղում:

1846 թ. արքունի թատրոնի կառուցման վերաբերյալ պատրաստված փաստաթղթի տակ, ի թիվս ճարտ. Սկուդիերիի, Բելոյի, աշխղեկ ինժեներգնդապետ Սոնինի, կա նաև Մ. Տեր-Գրիգորյանցի ստորագրությունը[261]:

1846 թ-ից հայերեն և ռուսերեն լեզուներով սկսում է հրատարակվել «Կովկաս» թերթը[262]: Նույն թվականի մայիսի 5-ին Կանացի բարեգործական ընկերության կողմից բացվում է Սբ. Նինայի անվան ուսումնական հաստատությունը[263], իսկ սեպտեմբերի 3-ին հիմնադրվում է Կովկասյան Հողաչափական դպրոցը[264]:

Թիֆլիս. Արքունի (պետական) թատրոնի շենքը

Թիֆլիս. Միքայելյան կամուրջը

Հետքաղաքագլխյան տարիներին Մ. Տեր-Գրիգորյանցի հիմնական գործունեության առարկան եղել է «Միքայելյան» կամրջի շինարարությունը: 1848 թ. հունվարի 17-ին Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովի համաձայնությամբ Մ. Տեր-Գրիգորյանցը Իվան Խուբովի և պարսկահպատակ ուստա Մեհբի-Աղա-Հյուսեինի օղլու հետ՝ իբրև կապալառու, պայմանագրով ստանձնում է կամրջի շինարարությունը. «...մենք ստանձնում ենք Թիֆլիս քաղաքում, Կուր գետի երկու բազուկներին կառուցել քարե երկու կամուրջ, որոնցից մեկը՝ եռաթռիչք, գետի ձախ ափին, իսկ մյուսը՝ միաթռիչք, աջ ափին...»[265]:

Գործերի ընթացքը, սակայն, հանգեցրել էր նրան, որ արդեն 1849 թ. Մ. Տեր-Գրիգորյանցը կապալառուի պաշտոնում մնացել էր միայնակ. «Այնինչ կապալառուների միջև շարունակվող տարաձայնությունները չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել գործի հաջողության վրա: 1849 թ. հուլիսին կամրջի շինարարության ժամանակ պայմանադիր կողմերը Շրջանային VIII վարչությանը ներկայացրել են մի խնդրագիր, ըստ որի՝ ներքին համաձայնությամբ կամրջի շինարարությունը հանձնում են իրենցից մեկին՝ Թիֆլիսի քաղաքացի Մովսես Տեր-Գրիգորովին, որը պարտավոր է ավարտել կառուցման համար իրենց վերցրած կապալը: Դրան հետևում էր ղեկավարության համաձայնությունը, և այդպիսով, 1849 թ. սեպտեմբերի 9-ին կապալի միակ պատասխանատուն մնում էր միայն Մովսես Տեր-Գրիգորովը...»[266]: 1850 թ., սակայն, Մ. Տեր-Գրիգորյանցը վախճանվում է՝ անավարտ թողնելով ոչ միայն կամրջի շինարարությունը, այլև կառույցի նյութական հաշիվները բավականին խճողված վիճակում (պարտք ուներ)[267]:

Թաղվել է Բեթղեհեմի Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի առջև՝ Տեր-Գրիգորյանցների տոհմական գերեզմանոցում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԻՄՈՆՅԱՆ ՇԱԴԻՆՅԱՆՑ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնը վարել է 1847-1848 թթ.: 1855 թ. հունվարի 10-ին ընտրվել է քաղաքային ավագանու անդամ[268]:

1856 թ. Հ. Շաղինյանցը պայմանագրով ստանձնում է Թիֆլիսի ռուսական թատերախմբի հովանա-

261. "Акты ...", том XII, Тифлис, 1904, էջ 885: Ի դեպ, այդ փաստաթուղթը փոխարքա Վորոնցովը հաստատել էր 1846 թ. նոյեմբերի 4-ին: Թատրոնի շենքը հիմնադրվեց 1847 թ. ապրիլի 15-ին (ճարտ. Սկուդիերի) և կառուցվեց Գաբրիել Թամամշյանցի ծախսով (նույն տեղում):

262. "Кавказский календарь на 1850 г.", Тифлис, 1849, էջ 27: Տե՛ս նաև նույն տեղում:

263. Նույն տեղում:

264. Նույն տեղում:

265. "Акты ...", том XI, Тифлис, 1888, էջ 822 (բնագրում՝ "...мы принимаем на себя построить в гор. Тифлисе чрез два рукава р. Куры два каменные мосты, из коих один к левому берегу о трех арках, а другой к правому берегу об одной арке...").

266. "Акты ...", том XI, Тифлис, 1888, էջ 824 (բնագրում՝ "Между-тем несогласия между подрядчиками продолжались, что не могло не отразиться на успешности самаго дела. В июле 1849 года контрагенты по постройке моста подали в правление VIII Округа прошение, в котором заявили, что, по состоявшемуся между собою соглашению, они постройку моста передают одному из них, Тифлисскому гражданину Моисею Тер-Грикурову, который и обязывается кончить взятый ими подряд. На это последовало согласие начальства и, таким образом, с 9-го сентября 1849 года ответственным лицом по подряду остался один Моисей Тер-Грикуров...").

267. Նշված աշխ., էջ 825:

268. "Акты ...", том XI, Тифлис, 1888, էջ 968:

Թիֆլիսի հատակագիշը ԺԹ դարի կեսերին

վորությունն ու տնօրինությունը. «...Մայիսի 7-ի պայմանագրի համաձայն Թիֆլիսի թատրոնը դրվել է նահանգային քարտուղար Իվան Շադինովի անմիջական տնօրինության ներքո, որն ամբողջական պատասխանատվությամբ երկու տարվա համար ստանձնել է ռուսական թատերախմբի խնամատարությունն ու պետական ունեցվածքը»[269]:

Ավելի ուշ Հ. Շադինյանցի անվանը հանդիպում ենք հայ թատրոնի գործիչների շարքում: Մասնա-

269. "Акты ...", том XI, Тифлис, 1888, էջ 935 (բնագրում՝

վորապես 1862 թ. նա ընդգրկված էր Հակոբ վարժապետ Կարինյանցի հիմնած թատերական խմբակի կազմում[270]:

ԹՈՎՄԱ ԴԱՎԹՅԱՆ ՓՐԻԴՈՆՅԱՆՑ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Կենսագրական բնույթի տվյալներ նույնպես չունենք: Քաղաքագլուխ է ընտրվել 1848 թ. և պաշտոնավարել մինչև 1849 թ.[271]:

ՋԱՔԱՐԻԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՄԻՐԱՂՅԱՆՑ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Անհայտության մեջ են նաև կենսագրության առնչվող մանրամասները: Քաղաքագլխի պաշտոնը վարել է 1850-1851 թթ.[272]:

1850 թ. մարտի 6-ին Թիֆլիսում բացվել է Անդրկովկասյան առաջին ցուցահանդեսը՝ նվիրված բնամթերքներին, արհեստագործական և արդյունաբերական իրերին[273]:

Զ. Ամիրաղյանցի պաշտոնավարության տարիներին՝ 1850-1851 թթ., Թիֆլիսում հրատարակվել է «Արարատ» շաբաթաթերթը (խմբ. Գաբրիել Պատկանյան)[274]:

Զ. Ամիրաղյանցի վարչաքաղաքական վարկանիշը բարձր է եղել նաև հետքաղաքագլխյան տարիներին: Մասնավորապես 1855 թ. ապրիլի 5-ին թուրքական զորքերի հնարավոր ներխուժմանը դիմագրավելու նպատակով գեն. Մուրավյովի առաջարկությամբ թիֆլիսաբնակներից կազմավորված թվով 6 աշխարհազորային ջոկատներից (դրուժինա) 5-րդի հրամանատար է նշանակվել նախկին քաղաքագլուխ Զ. Ամիրաղյանցը. «Ջոկատի հրամանատարն է Թիֆլիսի մոքալաք Զաքարիա Ամիրաղովը...»[275]:

ՀՈՎՍԵՓ ԱՖԱՆԱՍՅԱՆ ՄԻՐԻՄԱՆՅԱՆՑ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Սերում է առաջին կարգի քաղաքացիության տիտղոս կրող Տփղիսի հայոց բնիկ տոհմից[276]: 1840-ական թթ. վերջերին գործել է ձկնարդյունաբերության ոլորտում[277]: Քաղաքագլխի պաշտոնը ստանձնել է 1851 թ.: Պաշտոնավարել է նաև 1852-ին[278]:

Հ. Միրիմանյանցի պաշտոնավարության շրջանում՝ 1851 թ. հունվարի 1-ին, առաջին անգամ թատերական ներկայացումները բեմականացվել են վրացերեն լեզվով[279]: Նույն թվականի նոյեմբերի 9-ին Թիֆլիսի թատրոնում տեղի է ունեցել իտալական օպերային առաջին բեմադրությունը[280]:

Ուներ պատվավոր քաղաքացու կոչում[281]: Վերջինիս վերաբերյալ ունենք 1854 թ. վկայությունը. «...տոհմական պատվավոր քաղաքացի Հովսեփ Միրիմանով...»[282]:

ԱՎԵՏԻՔ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ (ԲՈԳԴԱՆԻ) ՍՎԵՉՆԻԿՈՎ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Կրում էր պատվավոր քաղաքացու տիտղոս: Քաղաքագլուխ է ընտրվել 1853 թ.[283]: Նույն թվականի աշնանը, երբ սկսված ռուս-թուրքական պատերազմի թատերաբեմ մեկնելու համար Թիֆլիս էին ժամանել բանակային կազմավորումները, քաղաքագլուխ Ա. Սվեչնիկովը կազմակերպում է բանակի սպասարկման և հյուրասիրման գործը. «1853 թ. սեպտեմբերի 27: Քաղաքագլուխ Սվեչնիկովը Ալեքսանդրովյան հրապարակում կազմակերպել է Ձերդ մեծություն իշխան Մ. Ս. Վորոնցովի անվան 3-րդ գումարտակի, իսկ Կարլ Մորիջի թիֆլիսյան լավագույն հյուրանոցում՝ գումարտակի սպաների, ինչպես նաև զինվորական և քաղաքացիական որոշ ղեկավարների հյուրասիրությունը»[284]:

Նրա օրոք՝ 1853 թ. նոյեմբերի 8-ին, տեղի է ունեցել Կովկասի փոխարքա Միքայել Սեմյոնովիչ Վորոնցովի պատվին կառուցված և նրա անունը կրող հնգաթռիչք կամրջի բացումը[285]:

"...Тифлисский театр, по контракту 7-го мая сего года, отдан уже в непосредственное распоряжение губ. секр. Ивана Шадинова, обязавшагося содержать Русскую труппу в течении двух лет, с полною его ответственностью за все казенное имущество...")։

270. **Պռոշեանց Պ.**, Հայոց թատրոնի սկզբնաւորութիւնը Թիֆլիսում, «Թատրոն», N 1, Թիֆլիս, 1893, էջ 56: Տես նաև՝ **Երեմեան Ա.**, Ռուսահայ թատրոնի պատմութիւն, «Բազմավէպ», N 9-10, 1934, էջ 372:

271. "Кавказский Календарь на 1850 г.", Тифлис, 1849, отделение четвертое, էջ 11:

272. "Кавказский Календарь на 1851 г.", Тифлис, 1850, отделение пятое, էջ 13:

273. "Кавказский Календарь на 1892 г.", Тифлис, 1891, էջ 28:

274. Հայ պարբերական մամուլը. մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ **Քաթլոյան Մ. Ա.**, Երևան, 1986, էջ 27:

275. "Акты ...", том XI, Тифлис, 1888, էջ 207 (բնագրում՝ "Начальник дружины, Тифлисский мокалак Закарий Амирагов..."): Արդյո՞ք Գորու քաղաքագլուխ (հիշ. 1803 թ.) Եսայի Ամիրաղյանցն ու Զաքարիա Ամիրաղյանցը տոհմակիցներ են, դժվարանում ենք պնդել ("Акты ...", том 2, էջ 71-72):

276. "Кавказский Календарь на 1852 г.", Тифлис, 1851, էջ 561:

277. "Акты ...", том XI, Тифлис, 1888, էջ 638-639:

278. "Кавказский Календарь на 1853 г.", Тифлис, 1852, էջ 511:

279. "Кавказский календарь на 1892 г.", Тифлис, 1891, էջ 28:

280. Նույն տեղում:

281. "Кавказский Календарь на 1853 г.", նույն տեղում:

282. Նշվ. աշխ., էջ 638 (բնագրում՝ "...потомственный почетный гражданин Иосиф Мириманов...")։

283. "Кавказский Календарь на 1854 г.", Тифлис, 1853, էջ 592:

284. "Акты ...", том XI, Тифлис, 1888, էջ 874 (բնագրում՝ "27-го сентября 1853 года. Городской голова Свечников угощал 3-й баталион имени е. св. кн. М. С. Воронцова полка, на Александровской площади, а офицеры баталиона и также некоторые из Тифлисских военных и гражданских начальников были приглашены им на обед в лучшую Тифлисскую гостиницу Карла Мориджи")։

285. "Кавказский календарь на 1857 г.", Тифлис, 1856, էջ 512:

1853 թ. մայիսի 13-ին հաստատվել է քաղաքի Առևտրական դատարանի կանոնադրությունը[286]:

1855 թ. հունվարի 10-ի քաղաքային իրավասուների ընտրության ժամանակ Ա. Սվեչնիկովը կրկին հաղթել է ու վերընտրվել քաղաքագլուխ. «Հունվարի 10-ի նիստի ընթացքում տեղի ունեցավ առաջին ավագների ընտրությունը: Ընտրվեց պատվավոր ավագ՝ քաղաքագլուխ Ավետ Բոգդանի Սվեչնիկովը...»[287]:

1855 թ. ապրիլի 14-ին հաստատվել է Թիֆլիսի քաղաքային հասարակական վարչությանը կից որբերի հարցերով զբաղվող գործող դատարանի վերաբերյալ կանոնադրությունը[288]:

Շարունակվող պատերազմով պայմանավորված և անսալով գեն. Մուրավյովի առաջարկությունը՝ 1855 թ. ապրիլի 5-ին Ա. Սվեչնիկովը կազմակերպում է աշխարհազորային կամավորներից բաղկացած վեց ջոկատ (դրուժինաներ): Դրանցից 3-րդի հրամանատարությունն էլ ստանձնում է անձամբ. «Ջոկատի հրամանատարն էր Թիֆլիսի քաղաքագլուխ, պատվավոր քաղաքացի Ավետիք Սվեչնիկովը...»[289]:

Քաղաքագլխի պաշտոնավարության շրջանում և, հավանաբար նաև մինչ այդ, Ա. Սվեչնիկովը մեկն էր այն սակավաթիվ հայերից, որը երկրի տնտեսության մեջ ուներ իր նշանակալից տեղն ու դերը. «Հայ վաճառականների թվում հատուկ ուշադրության են արժանի այնպիսի մարդիկ, ինչպիսիք են օրինակ՝ Սալիանում թե իրենց, թե կառավարության համար շահավետ եկամուտով ձկնագործության վարձակալումը իրենց ձեռքում կենտրոնացրած պատվավոր քաղաքացիներ Արշակունին և Միրիմանովը, տեղի քաղաքագլուխ Սվեչնիկովը և ...»[290]:

Ա. Սվեչնիկովը քաղաքագլխի պաշտոնը վարել է մինչև 1856 թ. նոր ընտրությունները: Ի դեպ, նույն թվականին, երբ ռուս-թուրքական պատերազմի հետևանքով մթերքների գները Թիֆլիսում նկատելի աճել էին, և առանց այն էլ աղքատ դասակարգը հայտնվել էր ծանր կացության մեջ Թիֆլիսի պատվավոր քաղաքացիներից թվով 87 անձ, այդ թվում և Ա. Սվեչնիկովը (300 ռուբ.) հոգուտ թշվառների կազմակերպել էր դրամական հանգանակություն[291]:

Խաղաղ տարիներին Ա. Սվեչնիկովն իրեն դրսևորել է մշակույթի ոլորտում: 1863 թ. սկզբին նա եղել է հայոց թատրոնի հոգաբարձության կազմում[292]:

ՍՈՂՈՄՈՆ ԴԱՎԹՅԱՆ ՍԱՐԱՋԵՎ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Սերում է Տփղիսի տոհմական պատվավոր քաղաքացու կոչում ունեցող գերդաստանից: Նախքան քաղաքագլուխ ընտրվելը՝ 1850-ական թթ. սկզբին, Ս. Սարաջևը գործել է ձկնարդյունաբերության ոլորտում[293], իսկ 1855 թ., երբ ընթանում էր ռուս-թուրքական պատերազմը, Ս. Սարաջևին վստահվել էր հնարավոր վտանգի դեպքում Թիֆլիսի պաշտպանությունն ապահովելու նպատակով կազմակերպված աշխարհազորայինների վեց ջոկատներից առաջինի հրամանատարությունը. «Ջոկատի հրամանատարն էր Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնակատար, տոհմական պատվավոր քաղաքացի Սողոմոն Սարաջևը...»[294]:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 1856 թ. Ս. Սարաջևը պարգևատրվել է Սբ. Ստանիսլավի անվ. 3-րդ աստիճանի շքանշանով. «Թիֆլիսի քաղաքագլուխ, տոհմական պատվավոր քաղաքացի Սարաջևը պարգևատրվել է Սբ. Ստանիսլավի անվան 3-րդ աստիճանի շքանշանով»[295]:

Քաղաքագլխի պաշտոնը վարել է 1856-ից[296] մինչև 1857 թ. նոր ընտրությունները:

ԱՆԴՐԵՅ ԴԱՎԹՅԱՆ ՄԱՆԱՆՈՎ

Ծննդյան տարեթիվն ու կենսագրական մանրամասներ հայտնի չեն: Սերում է բնիկ տփղիսեցի հայոց տոհմից[297], որն ուներ առաջին կարգի քաղաքացիության պատվանուն[298]: 1855 թ. հունվարի 10-ին ընդգրկվել է քաղաքային ավագանու կազմում[299]: Քաղաքագլուխ է ընտրվել 1857 թ.[300] և պաշտոնավարել մինչև 1858 թ. հերթական ընտրությունները:

---

286. “Кавказский календарь на 1892 г.”, Тифлис, 1891, էջ 28:
287. “Акты ...”, Նշվ. աշխ., էջ 968 (բնագրում՝ ”Января 10-го. В собрании происходило избрание первых старшин. Избраны: почетным старшиною - городской голова Авет Богданович Свечников...”):
288. “Кавказский календарь на 1892 г.”, Тифлис, 1891, էջ 29:
289. “Акты ...”, նշվ. աշխ., 1888, էջ 207 (բնագրում՝ ”Начальник дружины, Тифлисский городской голова, почетный гражданин Аветик Свечников...”):
290. “Акты ...”, том X, Тифлис, 1885, էջ 97 (բնագրում՝ ”Между Армянами-торговцами есть лица, которыя заслуживают особеннаго внимания, как-то: почетные граждане Аршакуни и Мириманов, содержащие с выгодою и для себя и для правительства огромный рыбный откуп в Сальянах; здешний голова Свечников и...”):
291. “Акты ...”, том XI, Тифлис, 1888, էջ 697:
292. **Պռոշեանց Պ.**, Հայոց թատրոնի սկզբնաւորութիւնը Թիֆլիսում, «Թատրոն», 1893, N 1, էջ 48:
293. “Акты...”, том XI, Тифлис, 1888, էջ 693:
294. Նշվ. աշխ., էջ 206 (բնագրում՝ ”Начальник дружины, и.д. Тифлисскаго городского головы, потомственный почетный гражданин Соломон Сараджев...”):
295. “Акты...”, том XI, Тифлис, 1888, էջ 715 (բնագրում՝ ”Тифлисский городской голова, потомств. почетн. гражд. Сараджев; получил орд. св. Станислава 3-ей степ.”):
296. “Кавказский Календарь на 1857 г.”, Тифлис, 1856, էջ 522:
297. Ի դեպ, 1805 թ. Մանանով ազգանունով հիշվում է թիֆլիսեցի ոմն հայ վաճառական, որը, անշուշտ, քաղաքագլուխ Մանանովի ազգակիցն էր, գուցե և՝ հայրը (տե՛ս “Акты ...”, том II, էջ 216-217):
298. “Акты ...”, том XII, էջ 227:
299. “Акты ...”, том XI, էջ 968:
300. “Кавказский Календарь на 1858 г.”, Тифлис, 1857, էջ 426:

ՎԱՐԴԱՆ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Ծննդյան տարեթիվն անհայտ է: Ուներ տոհմական պատվավոր քաղաքացու տիտղոս: Գործել է տնտեսության, վարչական և կառուցապատման ոլորտներում: Մասնավորապես ձկնարդյունաբերության ասպարեզում հանդես է եկել դեռևս 1840-ական թթ. վերջերից[301]: Նրա գլխավորած ընկերությունը Սալիանի ձկնորսատեղիի բաժնետեր էր[302]: Արտադրանքը Շամախու զինվորական նահանգապետին ներկայացնելուց հետո («Սալիանի արդյունաբերության կառավարիչը 1853 թ. Շամախիի զինվորական նահանգապետ գեներալ-մայոր Չիլյանին է ներկայացրել «Божьяго-Промысла»-ի կողմից արտադրած ձկնկիթի հերմետիկ փակված մի քանի թիթեղյա տուփեր և խնդրել դրանք առաքել Պետերբուրգ...»)[303] իրականացվում է հավանության արժանացած արտադրանքի առաքումը Ռուսաստան. «Արշակունին 1854 թ. գարնանը Աստրախանի վրայով Պետերբուրգի Բարձրագույն Դուռ է առաքել «Божьяго-Промысла»-ի արտադրած 200 տուփ ձկնկիթը, որը տեղ էր հասել լավ տեսքով: Ք. Դռան նախարար կոմս Ադլերբերգերը 1855 թ. մարտին Շամախիի ռազմական նահանգապետից կրկին խնդրել է նախորդ տարվա նման Բարձրագույն Դուռ առաքել հերմետիկ փակված թիթեղյա մոտ 10 տուփերով ձուղպաթաղանթի ձկնկիթ: Այդ պատվերն իր ժամանակին իրականացվել է նույն Արշակունու կողմից»[304]: Ի դեպ, արդեն 1854 թ. Վ. Արշակունին անդրկովկասյան ձկնարդյունաբերությունն իրենց ձեռքում կենտրոնացրած երեք անձերից մեկն էր. «Անդրկովկասյան ձկան ու ծովաշան արդյունաբերությունը ներկայումս գտնվում է տոհմական պատվավոր քաղաքացիներ Հովսեփ Միրիմանովի և Վարդան Արշակունու և Աստրախանի 1-ին գիլդիայի վաճառական Գաբրիել Տեր-Միքելովի ձեռքում, տարեկան 166.480 ռ. վարձավճարով»[305]:

Վ. Արշակունին Թիֆլիսի այն մեծահարուստներից էր, որոնք իրենց կարողություններով անհրաժեշտության դեպքում մշտապես ծառայել են ի շահ հասարակության: Այսպես, 1853 թ. Վ. Արշակունին նախկին քաղաքագլուխ Հովսեփ Միրիմանյանցի հետ մեկտեղ կազմակերպել է ռուս-թուրքական պատերազմի առնչությամբ Թիֆլիս ժամանած բանակի մի մասի հյուրասիրությունը. «Պատվավոր քաղաքացիներ Միրիմանովը և Արշակունին Ալեքսանդրովյան հրապարակում կազմակերպել էին թագավորական մեծություն գահաժառանգ արքայորդի Վիրտեմբերգի գնդի դրագունական 8 հեծելավաշտերի և Դոնի N 7 հրետամարտկոցի, իսկ Ազնվականական ժողովի դահլիճում՝ սպաների հյուրասիրությունը»[306]:

1855 թ. Թիֆլիսում գտնվող պարսից դեսպանության անձնակազմին ևս հյուրասիրել է Վ. Արշակունին. «...հունիսի 2-ին գեներալ Մուրավյովի բարեհաճությամբ պատվավոր քաղաքացի Արշակունին Շերմազան-Վարդանովների տանը դեսպանության պատվին կազմակերպել էր ճաշկերույթ, որին մասնակցում էին բոլորը, բացառությամբ գեն. Մուրավյովի, իշխան Բեհբութովի և դեսպանի...»[307]:

1856 թ. Վ. Արշակունին, ի թիվս 87 ևս հարուստների, (բոլորը պատվավոր քաղաքացիներ) մասնակցել է ռուս-թուրքական պատերազմի հետևանքով ծանր կացության մեջ հայտնված աղքատ դասակարգին օգնելու նպատակով կազմակերպված հանգանակությանը (ընդամենը հավաքված 7246 ռուբլուց Վ. Արշակունու ներդրումն էր 500 ռուբ. կամ ևս հարուստների միջին գումարից շուրջ 5 անգամ ավելի)[308]:

Նույն թվականի օգոստոսին Կովկասի պաշտոնաթող տեղապահ գեն. Մուրավյովին հրաժեշտ տալու համար ներկայացած շուրջ 30 պատվավոր անձերից դարձյալ Վ. Արշակունին էր, որն ի պա-

---

301. “Акты ...”, том XI, էջ 638-639:

302. Նշվ. աշխ., էջ 639:

303. Նշվ. աշխ., էջ 966 (բնագրում՝ ”Управляющий Сальянским промыслом, почетный гражданин Аршакуни, в 1853 году представил Шемахинскому военному губернатору, ге.-м. Чиляеву, несколько жестянок, герметически закупоренных, с икрою приготовления Божьяго-Промысла и просил отослать их в Петербург ...”):

304. Նույն տեղում (բնագրում՝ ”Весною 1854 года Аршакуни отправил чрез Астрахан в Петербург к Высочайшему Двору 200 банок икры с Божьяго-Промысла, доставленной в хорошем виде. Министр Двора, гр. Адлерберг, в марте 1855 года вновь просил Шемахинскаго военнаго губернатора о даставлении к Высочайшему Двору, по примеру прошлого года, до 10-ти п. паюсной икры в жестяных-же, герметически закупоренных банках. Заказ этот своевременно был исполнен тем-же Аршакуни”):

305. Նշվ. աշխ., էջ 638 (բնագրում՝ “Закавказские рыбные и тюленьи промыслы состоят ныне в откупном содержании у потомственных почетных граждан Иосифа Мириманова и Вартана Аршакуни и Астраханского 1-ой гильдии купца Гавриила Тер-Микелова, с платою по 166.480 р. с. в год”): Ի թիվս այլոց, Վ. Արշակունու տնտեսական գործունեության ծավալները պետական նշանակություն ունեին. “Между Армянами-торговцами есть лица, которыя заслуживают особеннаго внимания, как-то: почетные граждане Аршакуни и Мириманов, содержащие с выгодою и для себа и для правительства огромный рыбный откуп в Сальянах” (“Акты ...”, том X, Тифлис, 1885, էջ 97):

306. Նշվ. աշխ., էջ 874 (բնագրում՝ “Почетные граждане Мириманов и Аршакуни угощали на Александровской площади 8 эскадронов драгунскаго его кор. выс. наследнаго принца Виртембергскаго полка и Донскую N 7-й батарею, а офицеров - в зале Дворянскаго Собрания”):

307. Նշվ. աշխ., էջ 569 (բնագրում՝ ”2-го июня ген. Муравьев изволил давать 5в честь посольства большой обед. 5-го июня, в доме братьев Шермазан-Вартановых, почетным гражданином Аршакуни дан был в честь посольства обед, на котором присутствовали все, за исключением ген. Муравьева, кн. Бебутова и самого посла...”):

308. Նշվ. աշխ., էջ 697:

տիվ գեներալի՝ իր հաշվին տվել է ճոխ ճաշկերույթ. «Գարտիսկարյան կայարանում, որտեղ գեներալ Մուրավյովին հրաժեշտ էր տալիս մոտ 30.000 մարդ, պատվավոր քաղաքացի Արշակունին իր ընկերների հետ միասին կազմակերպել էր ճոխ ճաշկերույթ»[309]:

1857 թ. փետրվարի 24-ին, երբ Ներսես Աշտարակեցու ածյունը Թիֆլիսից փոխադրվում էր Սբ. Էջմիածին, սգո հանդեսի բոլոր մասնակիցներին Վ. Արշակունին հրավիրել է ճաշի: Նախօրեին քաղաքագլխի ներկայությամբ Արշակունին համքարներին դրամ է բաժանել: Դրամ և հաց են ստացել նաև տեղի բանտարկյալները[310]:

Նույն թվականին Պետերբուրգի ֆիզիկայի դիտարանի գլխավոր տնօրեն, իսկական պետական խորհրդատու Կունֆերի առաջարկությամբ Վ. Արշակունուն շնորհվել է հիշյալ հաստատության թղթակից անդամի կոչում: Ապագա քաղաքագլուխ Վ. Արշակունին մի քանի տարի շարունակ օդերևութաբանական հետազոտություններ է կատարել Անդրկովկասի գլխավոր ճկնորսատեղի համարվող Բոժե-Պրոմիսլում, որով և շոշափելի ծառայություն է մատուցել գիտությանը[311]:

Տոհմական պատվավոր քաղաքացի Վարդան Արշակունին քաղաքագլուխ է ընտրվել 1858 թ.[312] և պաշտոնավարել մինչև 1860 թ.:

1858 թ., երբ Վ. Արշակունին արդեն քաղաքագլուխ էր, ի թիվս բարձրաստիճան այլ պաշտոնյաների, Մցխեթում դիմավորել է Կ.Պոլսից Էջմիածին վերադարձող Ամենայն Հայոց Մատթեոս կաթողիկոսին. «Այն տեղն ընդ առաջ եկաւ յունիսի 14-ին նաեւ Թիֆլիզու քաղաքապետը, եւ յետոյ քաղաքին

Քաղաքագլուխ Վարդան Արշակունու տունը

համքար ըսուած արհեստաւորաց գլխաւորները, երկու հարիւր ձիաւորէն աւելի»[313]:

1861 թ. Վ. Արշակունին հերթական անգամ հանդես է եկել նվիրատվությամբ (500 ռ.), այս անգամ ի նպաստ Վարագ վանքում Խրիմյան Հայրիկի ջանքերով հիմնադրված դպրոցի և տպարանի[314]: 1866 թ. հրապարակված մի հաղորդման մեջ նշված է, որ նրա տունը Թիֆլիսում առաջինն էր իր գեղեցկությամբ. «1836 թւին Թիֆլիզու երևելի շինութիւնքը համարվում էին Փոխարքայի տունը, Կովկասեան զօրքի շտաբը, զինուորների բնակարանը, Ներսիսեան հին ուսումնարանը, զինուորական և քաղաքական նահանգապետների տները, իսկ այժմ այնպիսի շինութիւնք կան եւրոպական ձևով՝ որք գերազանցում են նրանց և օր ըստ օրէ աւելանում են, մանաւանդ

309. Նշվ. աշխ., էջ 715 (բնագրում՝ "На Гартискарской станции, куда провожало ген. Муравьева около 30-ти чел., почетным гражданином Аршакуни с товарищами приготовлен был раскошный обед...")։
310. "Кавказ", 1857, N17, 28 февраля.
311. "Кавказ", 1857, N12, 10 февраля.
312. "Кавказский Календарь на 1859 г.", Тифлис, 1858, էջ 452:
313. «Մասեաց Աղաւնի եւ Ծիածան Հայաստանեայց», 1860, Բ, էջ 28:
314. **Լէօ**, Գրիգոր Արծրունի, հատոր 3, Թիֆլիս, 1905, էջ 11:

սերնդական պատուաւոր քաղաքացի Վարդան Արշակունոյ տունը, որ առաջինն է Թիֆլիզումը...»[315]:

Վարդան Արշակունին վախճանվել է 1862 թ.[316]:

Հանգուցյալի թողած կտակի համաձայն 500 հազար ռուբլուց ավելի պետք է հատկացվեր ի նպաստ որբ և աղքատ երեխաների համար բացվելիք ուսումնարանի[317]:

ՍՈՂՈՄՈՆ ՋԱՔԱՐՅԱՆ ԱԲԻՍՈՂՈՄՅԱՆՑ

Ծննդյան տարեթիվն ու կենսագրական մանրամասներն անհայտ են: Սերում է բնիկ տփղիսեցի հայոց տոհմից, որն ուներ առաջին կարգի քաղաքացու կոչում[318]:

Ս. Աբիսողոմյանցի՝ մեզ հայտնի հասարակական գործունեությունը սկիզբ է առնում կրթական ոլորտից: 1831 թ. հունվարի 12-ին նա հաստատվել է Ներսիսյան դպրոցի «Կոմիտէտ Բարեկարգութեան ուսումնարանի Հայոց Տփխիսայ» անդամության կազմում[319]:

1838 թ. Աբիսողոմյանցը (Ե. Արծրունու գլխավորությամբ) մասնակցել է առևտրական ընկերության ստեղծման աշխատանքներին[320]: Ի թիվս այլոց՝ 1841 թ. Ս. Աբիսողոմյանցը հանդես է եկել իբրև Վրացա-Իմերեթական նահանգի պատգամավոր[321]:

1844 թ. հունիսին Վերայի հայոց գերեզմանատանը եկեղեցի կառուցելու առնչությամբ Նիկոլայ Ա կայսեր և ՆԳ նախարարության թույլտվությունը ստանալուց հետո շինարարական աշխատանքներին հետևելը վստահվել է նաև Թիֆլիսի տոհմական վաճառական Ս. Աբիսողոմյանցին (Աբիսալամյանց)[322]:

1845 թ. «առևտրային խորհրդական» Ս. Աբիսողոմյանցն ընդգրկվել էր արքունի նորահիմն թատրոնի 9 հոգուց բաղկացած վարչության կազմում[323]: Ի դեպ, ընդառաջելով փոխարքա Վորոնցովի առաջարկին՝ Ս. Աբիսողոմյանցը հանձն է առել թատրոնի շենքն իր միջոցներով կառուցել (ճարտ. Իվանով), բայց նախագիծը չհավանելով՝ հրաժարվել է հովանավորել. «Սկզբում թատրոնի համար շենք կառուցելու ցանկություն հայտնեց առևտրային



Քաղաքագլուխ Ս. Աբիսողոմյանցի ծնողներ Շուշանի և Զաքարիայի հիշատակին կերտված տապանաքարի բեկորները (լուս. Ս. Դարչինյանի)

խորհրդական Սոլոմոն Աբեսալոմովը ճարտարապետ Իվանովի հետ համատեղ, բայց վերջինիս կողմից նախագծի կազմումից հետո նրանք բաժանվեցին...»[324]: Ընդ որում, Ս. Աբիսողոմյանցը նախապես խոստացել էր թատրոնի շենքի կառուցմանը հատկացնել 200.000 ռուբ., բայց նախագիծը տեսնելուց հետո ասել է, թե այդպիսի շինության համար ինքը 50.000-ից ավելի չի տա[325]:

Խորանալով ձկնարդյունաբերության ոլորտում՝ Ա. Աբիսողոմյանցի հիմնադրած ընկերությունը (1854 թ.) մասնաբաժին ուներ Սալիանի ձկնորսատեղիում[326]:

Հիմնականում կրթության, մշակույթի և առևտրի ոլորտներում աչքի ընկած Ս. Աբիսողոմյանցը 1855 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, համաձայն գեն. Մուրավյովի առաջարկության, ստանձնում է Թիֆլիսում կազմավորված աշխարհազորային 6 ջոկատներից 2-րդի հրամանատարությունը. «Ջո-

315. Ստորագրութիւն Թիֆլիզու, «Գարուն», 1866, N4, էջ 249:
316. "Известия Тифлисской Городской Думы", N 5-6, Тифлис, 1914, էջ 27:
317. Նույն տեղում:
318. "Акты ...", том XII, էջ 226-227:
319. **Երիցեանց Ա.**, Պատմութիւն 75-ամեայ..., էջ 241:
320. "Акты ...", том IX, Тифлис, 1884, էջ 52:
321. Նշվ. աշխ., էջ 28:
322. **Абовян Х.**, Раны Армении, Ереван, 1977, էջ 307 (ծանոթ.):
323. "Акты ...", том XI, էջ 880 (բնագրում՝ "...9) коммерции советник С. З. Абесаломов"):
324. "Акты ...", том XI, էջ 882 (բնագրում՝ "Первоначально изъявил желание воздвигнуть здание для театра коммерции сов. Соломон Абесаломов, совместно с архитектором Ивановым, но, по составлении последним плана, они разошлись..."):
325. Նշվ. աշխ., էջ 883:
326. "Акты ...", том XI, էջ 639:

կատի հրամանատարն էր առևտրային խորհրդական Սոլոմոն Աբիսողոմոնովը...»[327]:

Ս. Աբիսողոմյանցը չորս տարվա ընդմիջումով երկու անգամ ընտրվել է քաղաքագլուխ՝ 1860-1861 և 1865-1866 թվականներին:

Նրա պաշտոնավարության շրջանում՝ 1860 թ. հոկտեմբերի 5-ից Թիֆլիսի և Փոթիի միջև սկսել է գործել հեռագրակապ[328]:

Թաղվել է Աբիսողոմյանցների տոհմական գերեզմանատանը՝ Սբ. Նշան եկեղեցու բակում:

1980-ական թթ. սկզբին Թբիլիսիի Արվեստի թանգարանում կոտրատված վիճակում գտնվել է տարիներ առաջ Ս. Նշան եկեղեցու բակի գերեզմանոցից փոխադրված մի տապանաքար, որը 1855 թ. Ս. Աբիսողոմյանցը երկլեզվյան՝ հայերեն և վրացերեն արձանագրությամբ կերտել էր տվել իր ծնողների հիշատակին[329]:

ՍՈՂՈՄՈՆ ՄԻՐԻՄԱՆՅԱՆ ՄԻՐԻՄԱՆՅԱՆՑ

Ծննդյան թվականն ու կենսագրական մանրամասներն անհայտ են: Սերում է տոհմական առաջին կարգի քաղաքացու շնորհում ունեցող Միրիմանյանց գերդաստանից[330]:

1855 թ. ընթացող ռուս-թուրքական պատերազմի հետևանքով առկա վտանգի պայմաններում Ս. Միրիմանյանցը նշանակվել է Թիֆլիսում կազմավորված աշխարհազորային 6 ջոկատներից 4-րդի հրամանատար. «Ջոկատի հրամանատարն էր Թիֆլիսի մոքալաք Սողոմոն Միրիմանովը...»[331]:

1861 թ. Ս. Միրիմանյանցն ընտրվել է Թիֆլիսի քաղաքագլուխ և պաշտոնավարել մինչև 1862 թ.[332]:

ԳԵՎՈՐԳ (ԵԳՈՐ) ԳՐԻԳՈՐՅԱՆ ՓՐԻԴՈՆՅԱՆՑ

Սերում է Տփղիսի առաջին կարգի քաղաքացիության կոչում ունեցող հայկական հին տոհմից[333]: Ծնվել է 1816 թ. Տփղիսում: 1862 թ. միաձայն ընտրվել է Թիֆլիսի քաղաքագլուխ: Այդ պաշտոնը վարել է մինչև 1864 թ. և կրկին քաղաքագլուխ ընտրվելուց ինքնակամ հրաժարվել:

Գ. Փրիդոնյանցի օրոք հիմնադրվել է Թիֆլիսի արհեստավորաց ուսումնարանը: Նրա անվան հետ է կապված քաղաքի գլխավոր փողոցների և հրապարակների սալապատումը: Բանն այն է, որ Թիֆլիսում սալապատումն առհասարակ սկիզբ է առել միայն 1850-ական թթ. վերջերից, բայց այն մեծ թափ է ստացել հատկապես Գ. Փրիդոնյանցի օրոք: 1863 թ. դրությամբ Թիֆլիսում արդեն սալապատվել էր 42.000 քառ. սաժեն մակերես. «Գոլովինյան պողոտան, որը ներկայիս Պալատական փողոցն է՝ առանց կամրջի հատվածի, սալապատվել է և մայթի եզրերին տնկվել են ծառեր: Միաժամանակ միջոցներ են ձեռնարկվել ֆոտոնավթիլի կամ ֆոտոգենի միջոցով քաղաքի փողոցների, հրապարակների և կամուրջների լուսավորության ուղղությամբ: Սկզբում տեղադրվել էր 302 լապտեր, որից հետո նախատեսված էր ավելացնել ևս 200-ը: Այդպիսով, քաղաքի լուսավորության համար տարեկան ծախսը պետք է կազմեր 12.000 ռուբլի»[334]:

Գ. Փրիդոնյանցի պաշտոնավարության տարիներին՝ 1862 թ. հունվարի 1-ին բացվել է Անդրկովկասյան Հողաչափական հաստատությունը (պալատ): 1863 թ. հունվարի 2-ից Թիֆլիսի և Ստավրոպոլի միջև սկսել է գործել հեռագրակապ: Նույն թվականի փետրվարի 3-ին Թիֆլիսում բացվել է Ռազմական գերատեսչության ուսումնարանը[335]:

Քաղաքագլխի հովանավորությամբ ծաղկել է թատրոնը (բեմադրվել են իտալական օպերաներ)[336]:

Հետքաղաքագլխյան տարիների գործունեության մասին տեղեկություններն էլ ավելի սուղ են: Հայտնի է, օրինակ, որ 1883 թ. նա կապալառու էր (փողրատչիկ) և բնակվում էր Սոլոլակ թաղամասում՝ Սերգեևյան փողոցում գտնվող իր սեփական տանը[337]:

Վախճանվել է 1892 թ. 79 տարեկան հասակում: Հուղարկավորությունը տեղի է ունեցել փետրվարի 6-ին Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու բա-

327. Նշվ. աշխ., էջ 206 (բնագրում՝ "Начальник дружины коммерции советник Соломон Абесаломов ..."):

328. "Кавказский календарь на 1863 г.", Тифлис, 1862, էջ 198: Տե՛ս նաև "Кавказский календарь на 1892 г.", Тифлис, 1891, էջ 30:

329. Երկլեզվյան տապանագիրը հրատարակել է Պ. Մուրադյանը (**Мурадян П. М.**, նշվ., աշխ., էջ 113-114):

330. "Акты ...", том XII, էջ 227:

331. "Акты ...", том XI, էջ 207 ("Начальник дружины, Тифлисский мокалак Соломон Мириманов ..."):

332. "Кавказский Календарь на 1862 г.", Тифлис, 1861, էջ 340:

333. "Акты ...", том XII, էջ 227:

334. **Бакрадзе Д.**, **Берзенов Н.**, Тифлис в историческом и этнографическом отношениях, СПБ, 1870, էջ 143-144 (բնագրում՝ "Головинский проспект, что ныне Дворцовая улица кроме мостовой, был обведен с обеих сторон тротуаром из плит, и обсажен деревьями. Одновременно были приняты меры и к освещению городских улиц, площадей и мостов посредством фотонафтиля или фотогена; на первый раз было устроено 302 фонаря, предполагалось еще 200, так что весь расход на освещение обходился бы городу около 12.000 руб. в год"):

335. "Кавказский календарь на 1892 г.", Тифлис, 1891, էջ 30: "Кавказский календарь на 1867 г.", Тифлис, 1866, էջ 277: Տե՛ս նաև "Кавказский календарь на 1892 г.", Тифлис, 1891, նույն տեղում:

336. "Кавказский календарь на 1867 г.", Тифлис, 1866, նույն տեղում:

337. "Кавказский Календарь на 1884 г.", Тифлис, 1884, էջ 185:

Քաղաքագլուխ Գ. (Ե.) Փրիդոնյանցի տապանաքարից պահպանված բեկոր Նորաշենի Սբ Աստվածածին եկեղեցու բակում

կում. «Թաղմանը ներկա էին նաև քաղաքագլուխը, քաղաքային խորհրդի իրավասուները, բոլոր համքարություններն իրենց ավագանիներով, արհեստավորների ղեկավարը, քաղքենիների դասի ավագանին, համքարությունների ավագանիներն իրենց դրոշներով: Հանգուցյալի դագաղին դրվել են նաև քաղաքային վարչության, հայկական թատերական կոմիտեի, հայկական դրամատիկական թատերախըմբի և այլոց կողմից բազմաթիվ ծաղկեպսակներ»[338]: Հանգուցյալի թողած կտակի համաձայն բավականին խոշոր գումար էր հատկացվել Թիֆլիսի բարեգործական հաստատություններին[339]:

Մասնավորապես՝ հայ չքավոր արհեստավորների զավակներից մի գիշերօթիկ սան պահելու համար Ներսիսյան ազգային հոգևոր դպրանոցին կտակել էր 5000 ռուբլի, Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու օրիորդաց ուսումնարանին՝ 3000 ռուբլի, նույն եկեղեցու նորոգության համար՝ 1000 ռուբ., քաղաքային Արհեստավորաց ուսումնարանին՝ 2000 ռուբ., Մոզդոկի հայոց ծխական ուսումնարանին՝ 1000 ռուբ., Թիֆլիսի քահանաների որբերի և այրիների գանձարանին՝ 500 ռուբ., իսկ Ամենայն Հայոց կաթողիկոսին կրթական ոլորտի գործունեության համար՝ 10.000 ռուբ.[340]:

1989 թ. Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու հարավային պատի տակ տեղահանված և ջարդոտված վիճակում պահպանվում էր Եղիա Փրիդոնյանցի տապանաքարի միայն մի բեկորը, որի վրա կարդացվում էր հետևյալ տողերի վերջնամասերը.

... (Աստ հանգչին) ոսկերք
... [Գ]րիգորեան
... (Փրիդ)[ո]նեան
... [ծնեալ ի] 1816
... արի, 1892
.....:

ԳԱԼՈՒՍՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՇԵՐՄԱԶԱՆ-ՎԱՐԴԱՆՅԱՆՑ (ՇԵՐՄԱԶԱՆ-ՎԱՐԴԱՆՈՎ)

Ծնվել է 1814 թ. Հին Ջուղայում[341]: Հայրը՝ Հարություն Վարդանյանցը, պարսից շահի պալատական ծախսարարն էր և հավատարիմ ծառայության համար հատուկ հրամանով (ֆերման) ստացել էր «Շերմազան» տիտղոսը[342], որի պատճառով էլ Հարությունի և իրենից սերված ժառանգների Վարդանյանց ազգանվանը հավելվել է Շերմազան պատվանունը:

1818 թ. Հ. Շերմազան-Վարդանյանցը փոխադրվել է նախ՝ Հին Նախիջևան, ապա՝ Ներսես Աշտարակեցու հրավերով՝ Թիֆլիս[343]: Գնելով Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցու հրապարակի մոտ՝ Մեծ-Ծուռ փողոցում[344] գտնվող ընդարձակ «դարբասով» քարաշեն երկհարկանի մեծ տունը[345], սկսել է զբաղ-

338. "Кавказ", 1892, N 35 ("На похоронах присутствовали городской голова, гласные городской думы, все амкары со своими старшинами, ремесленный голова, мещанский староста, цеховые старшины со своими флагами. На гробе покойнаго возложено было много венков, между прочим от городского управления, от армянскаго театральнаго комитета, армянской драматической труппы и проч.").

339. Նույն տեղում:

340. «Արձագանք», 1892, N 15: Տես նաև՝ «Նոր-Դար», 1892, N 21, էջ 3:

341. «Բազմավէպ», 1847, էջ 94: Տե՛ս նաև՝ «Արձագանք», 1891, N 41:

342. **Երեմեան Ա.**, Թատրոնը Թիֆլիսում, «Բազմավէպ», 1934, էջ 91:

343. Նշվ. հոդվածը, էջ 89:

344. Մեծ-Ծուռ փողոցը հետագայում վերանվանվել էր Լերմոնտովի անվան: Տունը (N 4) սկսվում էր Վելիամինովսկայա (հետագայում՝ Զնելածե) փողոցի անկյունից և իջնում մինչև Աբաս-Աբադյան հրապարակի՝ Մուղնու առաջին փակուղին (նշվ. հոդվածը, էջ 91): 1909 թ. այդ տունը պատկանում էր ագուլիսեցի Միքայելյանցին («Հովիւ», 1909, N 42, էջ 669):

345. Թատերական գործիչ Տեր-Գրիգորյանի (Վանո) ձեռագրերից մեկում պահպանվել է «Շերմազանենց» տան նկարագրությունը. «Դա ունէր մի մեծ բակ՝ կիսաշրջանաձեւ սանդուխով, որը տանում էր մեզ ընդարձակ նախասենեակը, այնտեղից ապա մտնում էիք պարսկական ոճով շինած գեղեցիկ և մեծ դահլիճը: Այդ քառակուսի դահլիճը ունէր (ամբողջ դարպասը) 30-32 մեդր երկարութիւն ու լայնութիւն և 10 մեդր բարձրութիւն: Պատերը զարդարուած էին պարսկական նկարներով ու գաջէ նուրբ ծեփերով, իսկ առաստաղը հանգչում էր ընկուզի փայտէ երկու հաստ սիւների վրայ, ունէր մեծ, կիսագնդաձեւ ոսկէզօծ մեխեր. մէջտեղից կախուած էր բազմաճիւղ մոմակալներով ապակէ մի մեծ և գեղեցիկ ջահ» (նշվ. հոդվա-

վել վաճառականությամբ: Շնորհիվ համարձակ և գործունյա խառնվածքի՝ Հ. Շերմազան-Վարդանյանցը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ձեռք է բերել հզոր կարողություններ՝ նշանակալից դեր ունենալով Թիֆլիսի հասարակական կյանքում[346]:

Երեք որդիներից միջնեկը՝ Գալուստը, Հին Նախիջևանի ծխական քահանայի մոտ սկզբնական կրթություն ստանալուց հետո 1823 թ. մտնում է Թիֆլիսի Վանքը, ուր շարունակում է կրթվել արքեպիսկոպոս Պողոս Ղարաբաղցու մոտ[347]: Այնուհետև 1825 թ. ընդունվում է Ներսիսյան դպրոց և ավարտում 1829 թ.: Նա այդ դպրոցի առաջին շրջանավարտներից մեկն էր: Նրա դասընկերների թվում էին Խ. Աբովյանը, Ս. Նազարյանցը, Ա. Արարատյանը, Ս. Սահառունին, Հ. Հովնանյանը, Գ. Միրզոյանը, Պ. Մաղաքյանը (Սայաթ) և ուրիշներ[348]:

Ավարտելուց հետո ևս մեկ տարի Գ. Շերմազան-Վարդանյանցը կամավոր մնում է Ներսիսյան դպրոցում՝ ուսումը շարունակելու[349]:

Հետագա տարիներին էլ Գալուստը կապված է եղել Ներսիսյան դպրոցին: Մասնավորապես 1831 թ. ի նպաստ դպրոցի գործադրվելիք «Չարուխչյան»[350] կտակի՝ նա և Երեմիա Արծրունին ստանձնում են կտակակատարության պաշտոնը[351]:

1824-1828 թթ. Գալուստը դերակատար էր Ներսիսյան դպրոցի թատերական խմբում[352]:

1826 թ., երբ ուսանում էր Ներսիսյան դպրոցի հինգերորդ դասարանում, հեղինակել է «Ասրիբեկ և Գիքի» պիեսը. «Ներսիսեան դպրոցի հայերէն լեզւի ուսուցիչ՝ Ղարաբաղցի Պօղոս վարդապետը, 1826 թւին, իր հինգերորդ դասարանի աշակերտներին առաջարկում է գրել մի-մի վիպասանութիւն: Գալուստը թատերգութեան ձեւով գրում է «Ասրիբեկ և Գիքի» պիէսը: Սա Գալուստ Շերմազանեանցի թատերական առաջին փորձն է...»[353]: Հեղինակի մշակ-

Քաղաքագլուխ Գալուստ Վարդանյան-Շերմազանյանցը (լուսանկարը քաղված է Մ. եպս. Աշճյանի՝ «Դիւան Մեսրոպ Թաղիադեան» աշխատությունից, Նոր Ջուղա, 1979)

մամբ պիեսը հրատարակվում է միայն տասնամյակներ անց[354]:

Ճիշտ 10 տարի անց՝ 1836 թ., Գ. Շերմազան-Վարդանյանցը գրել է մի նոր պիես՝ նյութը վերցնելով թիֆլիսահայերի կյանքից[355]: Թատրոնի գոյության ու զարգացմանը նպաստելու մտահոգությամբ Գալուստն իր տան մաս կազմող «դարբասը» հատկացնում է թատրոնին. «Գալուստ Շերմազանեանցն առաջին է հանդիսանում, որ խորապէս գիտակցում է և հասկանում, որ թատրոնական արուեստը միայն այն ժամանակ կարող է զարգանալ, առաջադիմել և նւաճումներ անել, երբ նա կունենայ իր սեփական օջախը, շէնքը...»[356]:

Իրական կյանքը պատկերող պիեսներով հասարակությանը կրթելու, դաստիարակելու միտումով նույն՝ 1836 թ. Գալուստը թատերգության ձևով գրել է մի պարսավ՝ մերկացնելով ինտրիգների այն հեղինակներին, որոնց կորստաբեր գործունեության արդյունքում միաժամանակ փակվում է Ներսիսյան դպրոցը[357]:

ծը, էջ 91): Ի դեպ, «դարբաս»-ների մեծ թիվ կար հատկապես Նորաշենի Սբ. Աստվածածնի մերձակայքում. «...որովհետև հարուստ հայ ժողովրդով էր շրջապատած և այդ դարբասները հասան մինչև Վելիամինովսկի փողոցը» («Հովիւ», 1909, N 42, էջ 669):

346. Դեռևս 1819 թ. փետրվարի 25-ին Հ. Շերմազան-Վարդանյանցը կառուցվելիք Ներսիսյան դպրոցին նվիրել էր 165 ռուբ., իսկ 1824 թ. Գ. Արծրունու հետ մեկտեղ ընտրվել էր նույն դպրոցի հոգաբարձու և տնտեսական (նաև՝ կալվածների) մասի կառավարիչ (տես՝ **Երիցեանց Ա.**, Պատմութիւն 75-ամեայ..., էջ 51, 58):

347. "Кавказ", 1856, N 29 (Библиотека Галуста Шермазанянца):

348. **Երեմեան Ա.**, նշվ. հոդվածը., էջ 90:

349. **Երիցեանց Ա.**, նշվ. աշխ., էջ 116:

350. Վանեցի մահտեսի Կոսպար Բարսեղյան Չարուխչյանը վախճանվել է 1824 թ. Թիֆլիսում (նշվ. աշխ., էջ 57):

351. Նշվ. աշխ., էջ 261:

352. **Երեմեան Ա.**, Ռուսահայ թատրոնի պատմութիւնը (սկզբից մինչև 70-ական թւականը), «Բազմավէպ», 1933, էջ 30:

353. **Երեմեան Ա.**, Թատրոնը Թիֆլիսում, էջ 90:

354. «Կռունկ Հայոց Աշխարհի», 1862, N 1, 1863, N 2:

355. **Երեմեան Ա.**, Թատրոնը Թիֆլիսում, էջ 90-91:

356. Նշվ. հոդվածը, էջ 91: Տե՛ս նաև **Աղաբեկեան Մ.**, Հայկական թատրոնի անցեալը, «Փորձ», 1879, N 10, էջ 63:

357. **Երեմեան Ա.**, նշվ. հոդվածը, էջ 92:

1830-ական թթ. Գ. Շերմազան-Վարդանյանցը գրել է կատակերգություն՝ նյութը վերցնելով ձկնավաճառ Մելքոյի՝ կաշառքով կատարված պսակադրության հանդեսից. «…Ռուսահայոց մէջ գրեթէ անդրանիկ կատակերգութիւնը, որի մէջ կենդանի կերպիւ նկարագրուած էին Կարապետ արքեպիսկոպոսը, իւր կաշառակեր արբանեակները և ձկնապան Մելքոն: Այդ մի հանճարաւոր գրութիւն էր, որի ձեռագիր օրինակներն այն ժամանակուայ բանասիրաց մէջ գաղտնաբար ձեռքէ ձեռք էին անցնում. Կարապետ արքեպիսկոպոսի խնդրանօք ոստիկանութիւնն հետամուտ էր գտնել կատակերգութեան անյայտ հեղինակին, բայց այդ չյաջողեցաւ»[358]:

1830-ական թթ. վերջերից Գալուստը, հետևելով հոր առևտրական գործերին, անցել է Եվրոպա, ապա՝ Պարսկաստան ու մինչև իսկ նշանակվել Թավրիզի քաղաքագլուխ. «Սկսում է հասարակական գործունէութեան մի նոր շրջան, երբ նա իր հօր առեւտրական գործերով անցնում է Գերմանիա-Լայպցիգ, որտեղից ապրանքներ է ուղարկում Պարսկաստան: Կուլտուրական այդ կենտրոնում Շերմազանեանցի առաջ բացւում են նոր հորիզոններ: Այդ շրջանում նա սովորում է գերմաներէն լեզուն, ծանօթանում գերմանական գրականութեան, արուեստի հետ և աւելի խորացնում իր կուլտուրական մակարդակը: Այդտեղ էլ զարթնում է նրա մէջ հին արուեստի, հին ձեռագիրների սէրը: Չհնաած եւրոպական կուլտուրայով՝ նա վերադառնում է Պարսկաստան-Թաւրիզ և կարճ ժամանակում գրաւում հասարակութեան համակրանքը. ընտրւում է Թաւրիզի «Թաջիր-բաշի» (քաղաքագլուխ): Հասարակական այդ պատասխանատու աշխատանքների մէջ էլ նա չի դաւաճանում իր կուլտուրական դրօշին և առաջ տանում կուլտուրական գործունէութիւնը: Ապրելով բուն ժողովրդի մէջ, նրա սրտին մօտիկ, լայն կերպով ուսումնասիրում է նրա կենցաղի առանձնայատուկ և բնորոշ գծերը, նրա նիստ ու կացը, սովորութիւնները, հանդէսները: Այդ ֆօնի վրայ էլ կառուցում է մի նոր պիէս-«Ազգային հարսանիք», որի առաջին երեսի ճակատին գրած է. «Անցքը անցանում է Թարվիզու հայոց մէջը»[359]:

1841 թ. Գ. Շերմազան-Վարդանյանցն ավարտում է մի շատ ուշագրավ պիես, որը վերնագրված էր այսպես՝ «Նկարագրութիւնք ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի վիճակաւոր առաջնորդի Հայոց գաղթելոց ի Տայս»[360]:

1840-ական թթ. Գ. Շերմազան-Վարդանյանցը գրել է ոտանավորներ, առակներ, մշակել ժողովրդական բանահյուսության նմուշներ: Դրանցից էին «Մարդ և առյուծ» ոտանավորը[361], «Գելը և դարբնի շունը» առակը[362], «Ողբ Զուղայեցւոց» երգը[363] և այլն[364]:

«Շերմազանենց դարբաս»-ը՝ որպես թատերասրահ, գործածում էին նաև այլազգիները: Օրինակ՝ 1855 թ., երբ Արքունի թատրոնի շենքում շաբաթական նույնիսկ մեկ ներկայացում տալու վրաց թատերական խմբի խնդիրքը իշխանության կողմից մերժվում է, վերջիններս վարձում են հայտնի «դարբաս»-ը՝ այդտեղ բեմադրելով իրենց ներկայացումները. «...մասնավոր անձանցից դրամ հավաքելով դարբասում հիմնում է Թիֆլիսի քաղաքացի Վարդանովի (Շերմազանով) ժամանակավոր թատրոնը»[365]:

1850-ական թթ. հրապարակվում են Գ. Շերմազան-Վարդանյանցի թղթակցությունները նաև ռուսալեզու պարբերականներում[366]:

1857 թ., երբ Գ. Շերմազան-Վարդանյանցը բնակվում էր Թավրիզում, համքարության բնագավառի իր իմացություններն ու փորձը նամակագրության միջոցով փոխանցում է քիֆլիսաբնակ Գ. Ախվերդյանին: Վերջինս այդ տվյալների հիման վրա ստեղծում է մի ուշագրավ աշխատություն[367]:

Թատերական կյանքը Թիֆլիսում և մասնավորապես հայ թատրոնը «Շերմազանենց դարբաս»-ում նոր թափ է ստանում 1859-60 թթ.: Երկու տարվա ընթացքում բեմադրվում է շուրջ 30 ներկայացում[368]:

1860 թ. Գալուստը կրկին վերադառնում է Թիֆլիս ու նոր թափով նվիրվում թատերական աշխարհին: 1861 թ. նա գրում է երկու նոր պիես («Իմ նշանածը Արազն ա» և «Ազգային հարսանիք»)[369], որոնք լույս են ընծայվում նույն թվականին[370]:

358. **Երիցեանց Ա.**, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX – րորդ դարում, մասն Բ, Թիֆլիզ, 1895, էջ 472:
359. **Երեմեան Ա.**, նշվ. հոդվածը, էջ 94:
360. Մատենադարան, ձեռ. N 3045, 8810: Հրատ. Աս. Մնացականյանի ներածությամբ և ծանոթագրություններով («Գիտական նյութերի ժողովածու», 1950, N 2, էջ 99-178):
361. «Կովկաս», 1846, N 19:
362. «Կովկաս», 1847, N 25:
363. «Բազմավէպ», 1847, էջ 94-95:
364. «Կովկաս», 1847, N 24, 27, 28: Տես նաև՝ **Մնացականյան Աս.**, Հայտնաբերված է Գ. Շերմազանյանի, Խ. Աբովյանի դասընկերոջ, կոմեդիայի երկու ձեռագիր, «Գրական թերթ», 1948, N 37: Նաև՝ **Զարյան Ռ.**, Մի նորահայտ պիեսի մասին, «Սովետական գրականություն և արվեստ», 1952, N 5:
365. “Акты ...”, том XI, էջ 925 (բնագրում՝ “...решилась занять у частных лиц деньги и построила в дарбазе Тифлисскаго гражданина Вартанова (Шермазанова) временный театр...”):
366. “Кавказ”, 1856, N 29, էջ 115-116; N 30, էջ 119-120; N 31, էջ 124 (Библиотека Галуста Шермазанянца): Նաև՝ “Кавказ”, 1856, N 51:
367. Այս աշխատությունը հրատարակվել է հեղինակի մահվանից 23 տարի անց: Տե՛ս նաև **Հովհաննիսյան Ա.**, Գ. Ախվերդյան և Գ. Շերմազանյանի նամակափոխանակությունը Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների մասին, «ՊԲՀ», 1963, N 2, էջ 187-215:
368. «Մեղու Հայաստանի», 1861, N 40, էջ 500:
369. Պիեսների առթիվ բանասեր Ա. Երեմյանը նշել է. «...Իրական կեանքից վերցրած մի պատկեր է: Այնտեղ Շերմազանեանցն յաջող վրձինով գրել է հին և նոր սերնդի կենցաղային պայքարի պատմութիւնը: Այնտեղ ձեր աչքերի առջեւ նահապետական կենցաղի զոհերն իրենց հոգեկան ծանր ապրումներով և տանջանքներով այնքան կենդանի են պատկերանում, որ դուք հերոսուհիների հետ նուաւշին ապրում էք և տանջւում: Շերմազանեանցը նոյնքան վարպետ վրձինով է նկարել նաեւ «Ազգային հարսանիքը»: Դա կենցաղային մի պիէս է, որ հանդէս է գալիս մի ամբողջ ժողովուրդ իր նահապետական ուրոյն կենցաղով, սովորութիւններով, պարերով, երաժշտութեամբ: Այդ գծերի, նրանց հայեացքների և մտքերի հետ...» (**Երեմեան Ա.**, Ռուսահայ թատրոնի պատմութիւնը, «Բազմավէպ», 1934, էջ 298): Տե՛ս նաև նույնի՝ նշվ. հոդվածի շարունակությունը («Բազմավէպ», 1935, էջ 154-155):
370. «Կռունկ Հայոց Աշխարհի», 1861, N 4, 6:

Թիֆլիսի պատմության մեջ առաջին անգամ՝ 1864 թ., քաղաքագլուխ է ընտրվում մի անձ, որը բնիկ քաղաքացի՝ «մոքալաք» չէր, այլ՝ այսպես կոչված «ախալմոսուլ» էր (եկվոր, նորաբնակ). «Մինչև այդ օրը նորեկի մտքով չէր անցել, թե ինքը կարժանանար քաղաքագլխության պատվին, իսկ այսօր Շերմազանյանցն առաջինը քանդեց տարբերությունը հաստատուն պահող պատնեշը և ախալմոսուլների ձեռքով քաղաքագլուխ դարձավ[371]: Իր ժամանակի համար սա մի խոշոր իրադարձություն էր, որին խորապես դեմ էին քաղաքագլխության պաշտոնը մշտապես իրենց ձեռքում պահած «մոքալաքները»: Հակառակ, մոքալակների և ախալմոսուլների միջև օրավուր սրվող պայքարին[372], այնուամենայնիվ «Հասարակութիւնը գնահատելով Շերմազանեանցի քաղաքական լայն փորձառութիւնը և բարձր դաստիարակութիւնը, ընտրում է նրան Թիֆլիսի քաղաքագլուխ»[373]: Ի դեպ, քաղաքագլխի ընտրությունը կատարվում է նույն՝ «Շերմազանենց դարբաս»-ում:

1864 թ. հունվարի 21-ից սկսում է գործել Թիֆլիսից Դիլիջան, Երևան, Նախիջևան և Ջուղա հեռագրային կապը[374]:

1865 թ. հունվարին Գ. Շերմազան-Վարդանյանցը երկրորդ անգամ վերընտրվում է քաղաքագլխի պաշտոնում:

1865 թ. ապրիլի 7-ին բացվում է առաջին կարգի իգական ուսումնարանը[375]:

1865 թ. հուլիսի 27-ին հաստատվում է Կովկասյան թանգարանի վերաբերյալ կանոնադրությունը[376]:

Քաղաքագլխի պաշտոնավարության երկամյա ժամանակամիջոցը (1864-1865) նշանավորվում է ներքաղաքային այնպիսի խոշոր շարժումով, ինչպիսին էր համքարների ապստամբությունը: Քաղաքագլուխ ընտրված առաջին իսկ տարում քաղաքային եկամուտները ավելացնելու նպատակով Գ. Շ. Վարդանյանցը ձեռք է առնում կտրուկ միջոցներ. «...1864 թվականին Թբիլիսի քաղաքի եկամուտը նախատեսված էր 306.823 ռ. 72 1/2 կոպ. չափ, իսկ ծախքը՝ 638.502 ռ. 14 կ., այսինքն ծախքն եկամտից երկու անգամ ավելի էր. միաժամանակ եկամտի համարյա 1/3 մասը ծախսվում էր կովկասյան զինվորական շրջանի շտաբի ծառայողների բնակարանային պետքերի վրա, մինչդեռ այն միմիայն Թբիլիսիի վրա չպիտի ծանրանար: Դեֆիցի-

371. **Մանուկյան Ս.**, Պռոշյան Պ., Երևան, 1964, էջ 443:

372. Այդ մասին Պ. Պռոշյանը գրել է. «Այն օրվա Թիֆլիսը բաղկացած էր երկու տարրերից՝ բնիկներից և նորեկներից: Հաշվի մեջ չեն առնված, անշուշտ, ծառայող և ազնվական դասակարգերը, որոնք քաղաքի գիժ մոզիներն էին և մասը չունեին վճարելիք քաղաքային հարկերին. ըստ առածին՝ «մեջ ուտում էին, ափափ՝ մաև գալիս»: Բնիկ կամ բնիկացած թիֆլիսեցին փքուն գոռոզությամբ արհամարհում էր նորեկ կամ ախալմոսուլի եկվորներին, և ամեն դեպքում նրան ճնշում ու ծաղրում: Քաղաքային վարչություն, քաղաքի վրա բարձր հոգատարություն բնիկների կամ մոքալաքների ձեռքն էր, ձայն ու իրավունք սրանց սեփականությունն էր, իսկ ախալմոսուլիքը միայն ստորադրյալներ և անձայններ էին: Բայց, ախար, փոխվել էր ժամանակը. մի օր, գուցե, մինչ նորեկների թիվը սակավ էր, այդպես էր պատշաճ, իսկ հիմի վերջիններս աճել և բնակալել են և իրանց անբռնաբարելի իրավունքն են համարում իրանց անդրանիկ եղբայների հետ միասին կրել քաղաքային ծանրության և իրավունքի լուծն ու արտոնությունը (**Ս. Մանուկյան**, Պերճ Պռոշյան, նույն տեղում), իսկ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը համքարների ապստամբությանը նվիրած իր մի առանձին ուսումնասիրության մեջ նշել է. «...19-րդ դարու կեսից սկսում է խորանալ անտագոնիզմը երկու խավերի միջև, որոնցից մեկը ֆեոդալական կարգերի հետ «ընտելացած» համքարությունն էր իր կաստայական կազմակերպությամբ, աղաթներով, ծեսերով, սովորություններով, հասկացողություններով և ըմբռնումներով, իսկ մյուսն այսպես կոչված «նորեկ» (ախալմոսուլի) կամ «դրսից եկած» (զարեշն) արհեստավորներն էին, մեծ մասամբ ռուսներ և օտարազգիներ (եվրոպացիներ), որոնք համքարության մեջ մտնելուց խուսափում էին: Եվ ահա այդ երկու խավերի միջև սկսվում է պայքար: Համքարությունը, որպեսզի չկորցնի իր «դարավոր» մոնոպոլ դրությունը շուկայում, աշխատում է դուրս քշել նորեկներին կամ թե չէ ստիպել սրանց կցվել համքարություններին և ենթարկվել վերջիններիս բոլոր կարգադրություններին ու այդպիսով կախումն ունենալ համքարություններից: Մյուս կողմից, ցարական կառավարությունն ամեն կերպ հովանավորում է «նորեկներին»՝ տալով նրանց զանազան «մենաշնորհներ», որոնք սակայն տարբերվում էին համքարների ձեռք բերած հնավանդ մենաշնորհներից: Համքարությունները պայքար էին մղում «նորեկ» արհեստավորների դեմ և պահանջում հավասարեցնել վերջիններին իրենց հետ: Միաժամանակ համքարություններին վիճակվում է պայքար մղել և այն նորածին բուրժուազիայի դեմ, որն արդեն նկատելի ճեղքվածք էր առաջ բերել տնտեսական կյանքի մեջ թե քաղաքի և թե գյուղի մասշտաբով. այդ ճեղքվածքն ավելի ևս խորանում էր շնորհիվ օրավարձով աշխատող ձեռքերի աճման: Հովանավորելով այսպես կոչված «նորեկներին» և բուրժուական տարրերին, ցարական կառավարությունը, այնուամենայնիվ, չեր համարձակվում բացահայտ կերպով պայքարել համքարական կազմակերպությունների դեմ, որոնք իրենց վաղեմի ըմբռնումներով և աղաթներով դեռևս սերտ կապված էին քաղաքի ազգաբնակչության մեծամասնության հետ և որոնց դեմ դուրս գալը կարող էր բարդություններ առաջ բերել: Այդ է պատճառը, որ մի շարք դեպքերում, երբ բուրժուազիան հարց է բարձրացնում կառավարության առաջ համքարությունները վերացնելու համար, կառավարությունն ընդառաջ չի գնում դրան, գտնելով, որ «այդ հաստատությունը (այսինքն՝ համքարությունը) կվերանա ինքնըստինքյան, երբ կոչնչանան այն պատճառները, որոնք առաջ են բերել նրա գոյությունը, երբ երկիրը կծածկվի հաղորդակցության լավ ուղիներով, երբ կզարգանա արդյունաբերությունն ու առևտուրը»: Մեկ կողմից՝ նորածին բուրժուազիայի ու «նորեկ» արհեստավորների և մյուս կողմից՝ հին համքարության ու պաուպերիզացիայի ենթարկված քաղաքի և գյուղի ցածր խավերի միջև հակասությունները հետզհետե այնքան խորանում են, որ առիթ են տալիս բողոքների, ցույցերի և նույնիսկ ելույթների (**Մելիքսեթ-Բեկ Լ.**, Համքարների ելույթը Թբիլիսում 1865 թվականին, Գ. Սունդուկյանը և հայ մտավորականները, «Խորհրդային Վրաստան», 1938, N 19, 3 սեպտեմբեր , էջ 2-3):

373. «Բազմավէպ», 1934, էջ 94:

374. "Кавказский календарь на 1867 г.", Тифлис, 1866, էջ 279: Տե՛ս նաև "Кавказский календарь на 1892 г.", Тифлис, 1891, էջ 31:

375 Նույն տեղում:

376. Նշվ. աշխ., էջ 32:

տը ծածկելու նպատակով քաղաքի վարչությունը, որի գլուխն էր կանգնած (1864 թվից) քաղաքագլխի պաշտոնակատար, «նորեկ» Գալուստ Շերմազան-Վարդանյանը, դիմեց մի շարք միջոցառումների, որպեսզի, մեկ կողմից, զինվորականների «բյուջեյից» ազատվի, իսկ մյուս կողմից քաղաքային տնտեսության բոլոր ճեղքվածները վերացնի: Այդ նպատակով, գլխավոր իշխանության հաճությամբ, մի շարք նոր հարկեր նշանակվեցին, որոնք գլխավորապես ծանրանում էին արհեստավորական և ցածր խավերի վրա: Հարկերի մասին մանրամասն պաշտոնական հայտարարությունը տպվեց պաշտոնական «Կավկազ» լրագրի 1865 թվի NN 12, 15, 17 և 19-ում: Այս հայտարարությունը բավական էր որպեսզի համքարները գաղտնի ժողովներ կազմակերպեին քաղաքի զանազան մասերում՝ Հավլաբարում, Օրթաճալայում, Խոջիվանքի գերեզմանատանը և եկեղեցիների գավիթներում: Միաժամանակ ժողովրդի մեջ տարածվում էին լուրեր, որ այդ նոր հարկերով ժողովրդին ծանրաբեռնելը կատարվում է Գ. Շերմազան-Վարդանյանի նախաձեռնությամբ: Համքարները պաշտոնապես դիմում են անում, որ հարկն է, վերացնել կամ գոնե թեթևացնել հարկերը, սակայն ապարդյուն: 1865 թ. հունիսի 26-ին համքարները ժողովվում են Խոջիվանքի գերեզմանատանը, ուր միաձայն որոշում են նույն ամսի 28-ին, երկուշաբթի օրը, գործադուլ հայտարարել, փակելով բոլոր արհեստանոցները և խանութները և չբացել այն, մինչև որ կառավարությունը հարկերը չվերացնի: Լուրը հասնում է փոխարքայի պաշտոնակատար իշխ. Գ. Օրբելիանի ականջին, որ պատվիրում է Թբիլիսիի ոստիկանապետ Ռոսլավլևին հայտնել համքարներին, որ եթե վերջիններս իրագործեն իրենց որոշումը գործադուլի մասին, այսպիսի քայլը կվորակվի իբրև կառավարության ընդդիմադրություն և համքարների դեմ ձեռք կառնվեն կտրուկ միջոցներ, նույնիսկ զինվորական ուժի գործադրում: Հունիսի 27-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 8-ին, ոստիկանապետի մոտ են հրավիրվում համքարությունների ուստաբաշիները՝ իշխ. Օրբելիանի կարգադրությունը նրանց հայտարարելու նպատակով: Այդ ժամանակ ոստիկանության վարչության առաջ, որ գտնվում էր Երևանյան հրապարակում, ժողովվում է խուռն բազմություն, բաղկացած համքարներից, օրավարձու բանվորներից և լյումպեն-պրոլետարիատից: Լուր է տարածվում, որ ուստաբաշիները ձերբակալվել են և աքսորվելու են Սիբիր: Ոստիկանապետը, վախենալով, որ «ամբոխը» կներխուժի վարչության շենքը, սկսում է հանգստացնել ժողովրդին՝ հայտարարելով, որ ուստաբաշիները ձեռբակալված չեն և միաժամանակ հորդորում վերջիններին դուրս ելնել վարչության շենքից: Սակայն ուստաբաշիները, չկամենալով վերջ տալ ժողովրդի հուզմունքին, հրաժարվում են դուրս գալ հրապարակ և պատճառաբանում են իրենց այդօրինակ վարմունքը նրանով, որ իբր թէ վախենում են, որ ամբոխը ծեծի իրենց: Ամբոխը հետզհետե բազմանում էր՝ հասնելով 10 հազարի: Կարիք է լինում բարձր իշխանության, նախ Թբիլիսիի քաղաքային նահանգապետի պաշտոնակատար իշխան Նիկոլայ Ճավճավաձեի, ապա նույնիսկ փոխարքայի պաշտոնակատար իշխան Գրիգոլ Օրբելիանու անձնական միջամտությունը, որպեսզի ժողովրդին հանգստացնեին, սակայն ապարդյուն: Ժողովուրդը նորից բողոքում էր հարկերի ծանրության առթիվ, իսկ ոմանք նույնիսկ լուր են տարածում զինապարտություն մտցնելու մասին, նաև այն, որ «այս օրվանից ամբողջ ազգաբնակչությանը պարտադիր է ռուսական սապոգ հագնել»: Չնայած Գր. Օրբելիանու անցյալ վաստակների (ռուսաց կառավարության դեմ 1832 թ. դավադրությանը համակրելը) բանաստեղծական հանճարով օժտված լինելուն, նրան բնավ չի օգնում այն քաղցրամուն լեզուն, որով սկսում է խոսել Երևանյան հրապարակում հավաքված ամբոխի հետ: Եվ նրա նկատողությունը, որ օրենքը բոլորի համար հավասար է և որ ինքն էլ է վճարում հարկ ձիու համար, լսվում է պատասխան. «Դուք կերակրում եք ձիուն, իսկ մեզ ձիաներն են կերակրում»: Երբ վարչապետի սպառնալիքներին ամբոխը պատասխանում է հայհոյանքով և շվվոցով, նա ստիպված է լինում հեռանալ հրապարակից:

Նույն կիրակի օրը, հունիսի 27-ին, ժամը 3-ին, Երևանյան հրապարակում երևում է ժանդարմների և կոզակների մի խումբ, որն աշխատում է ցրել ամբոխը, սակայն վերջինս ոչ միայն չի շարժվում տեղից, այլ և սկսում է քարեր նետել և նույնիսկ մի կոզակի գլուխը ջարդում է: Ամբոխը փորձում է ներս խուժել ոստիկանական վարչությունը, որպեսզի այն տակն ու վրա անի, սակայն այս նրան չի հաջողվում: Ապա ամբոխն անցնում է Վելյամինովսկի փողոցով դեպի Խոջամինասազովի տունը, կարծելով, որ այս է քաղաքագլուխ Գալուստ Շերմազան-Վարդանյանի տունը և լսելով, որ այդ չէ վերջինիս տունը, թողնում, անցնում է դեպի քաղաքագլխի տունը նույն փողոցում, որ և սկսում է ավերել: Ջարդում են պատուհանների ապակիները, կոտրատում են դռները, նույնիսկ տեղ տեղ քանդում պատերը: Ջայրացած ամբոխը տնից դուրս է բերում պարսկական թանկագին գորգերը, կտրատում դաշույններով և կտորներն այս ու այն կողմը ցրիվ տալիս, փողոց են շպրտում բանկաներով մուրաբաները, ֆարֆորի ամանեղենը, նույնիսկ դաշնամուրը և գրքերը: Այդպիսով, ի միջի այլոց, ոչնչացվում է հայոց պատմության խնդիրներով պարապողի հարուստ գրադարանը և 100-ից ավելի հայ ձեռագրեր պարունակող հավաքածուն, որի օրինակներն այժմ

Համքարների ելույթը 1865 թ. (գործ արվեստի վաստակավոր գործիչ Գ. Շարբաբչյանի)

Տյուբինգենի համալսարանի գրադարանի հայերեն ձեռագրերի բաժնում են տեղ գտել:

Ինչպես գործից երևում է, ինքը՝ Գ. Շերմազան-Վարդանյանը, մինչև ամբոխի գալը ճաշելիս է եղել, տեղեկանալով ամբոխի մոտենալու մասին՝ փախչում է տնից:

1865 թ. հունիսի 27-ի ցույցի ականատես և Գ. Շերմազան-Վարդանյանցի հակառակորդի՝ տպառանատեր Համբարձում Էնֆիաճյանցի եղբայր Ավետիք Էնֆիաճյանցի վկայությամբ, որ առանձին նամակով ուղղված է Տյուբինգեն, գերմանացի հայագետ պրոֆ. Ֆրանց-Նիկոլաուս-Ֆինկի և Լևոն Գյանջեցյանի հասցեին, (գրված Թբիլիսիում անցյալ դարի 90-ական թվականներին), Թբիլիսիի քաղաքագլխի տան ավերումը ներկայացված է այսպես. «Թիֆլիսի քաղաքագլուխ ուսումնական Գալուստ Շերմազանյանցի պաշտոնավարության վերջին օրերը Թիֆլիսում մեծ խառնակություն լինելով՝ հարկերի չափազանց շատության պատճառով՝ զայրացած ռամիկ ժողովուրդն իր վրեժն առնում է քաղաքագլխից - ժողովուրդը հարձակվում է քաղաքագլխի բնակարանի վրա, նպատակ ունենալով սպանել թէ քաղաքագլխին և թէ կոտորել նրա ամբողջ ընտանիքը: Քաղաքագլուխը և նրա ընտանիքը կարողանում են փախչել. իսկ ժողովուրդն ստիպված է լինում յուր վրեժը առնել նրա բնակարանից և բնակարանի մեջ եղած կահկարասիքից ու իրերից. բնակարանն ամբողջապես քարուքանդ են անում, իսկ բնակարանի մեջ եղած կահկարասիքը և զանազան իրերը կողոպտում» (Տյուբինգենի համալսարանի գրադարանի հայերեն ձեռագրերի ցուցակը, գերմաներեն, Տյուբինգեն 1907, էջ 5):

Գ. Շերմազան-Վարդանյանցի տունն ավերելուց հետո ամբոխն իջնում է դեպի «Սոլդատսկի բազար» և ապա Կուկիի կամրջով անցնում դեպի Չուղուրեթ՝ հարկահավաք Բաժբեուկ-Մելիքովի տունը և նույնպես սկսում է ավերել: Ինքը Բաժբեուկ-Մելիքովը տանն է լինում և՝ զենքը ձեռքին ելնելով տնից՝ սկսում է դիմադրություն ցույց տալ, մեկին նույնիսկ վիրավորում է: Սա բավական է լինում, որպեսզի զայրացած ամբոխը ներս խուժեր նրա տուն և ամեն ինչ ոչնչացներ: Ինքը Բաժբեուկ-Մելիքովը դուրս է վազում, բարձրանում տանիք և այնտեղից թռչում հարևան տան կտուրը: Փողոցից այդ նկատում են և սկսում են հետամուտ լինել, մինչև որ բռնում են, գետինը գցում և մի մեծ քար խփելով գլխին մահացնում: Նրա տունն էլ նույն բաղդին է արժանանում, ինչ որ քաղաքագլխինը:

Ելույթը հնարավոր է լինում ճնշել երեկոյան, երբ օգնության է կանչվում մի ամբողջ զինվորական վաշտ, որ և գրավում է գլխավոր փողոցները և հրապարակները...»[377]:

Ապրանքների թանկացումները, իրոք, զգալի են եղել: Դրանց վերաբերյալ բողոքի կենդանի զրույցները գտնում ենք Մ. Չմշկյանի հուշերում. «...- Էս ինչ հալի է գցի միր գօզալ քաղաքը գալաւէն, - ասում էր Գապլինի. տղա Վանօն, - էրկու գրվանքէն մէ շայով միս էինք առնում, հիմի 4-5 կապիկ ին շինի. 10 ձուն

377. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. հոդվածը, էջ 2-3: Ի մի բերելով ելույթին առնչվող առկա նյութերը՝ առավել հակիրճ Շ. Չխեթիան նշել է. «Քաղաքային գանձատան եկամուտները ավելացնելու և քաղաքի բուրժուական թաղամասերը բարեկարգելու մտահոգությամբ 1865 թ. իշխանությունները հաստատում են 60 հազար ռուբլու լրացուցիչ հարկեր, որոնք ծանրանում են բացառապես աշխատավոր և բնակչության մանր բուրժուական շերտի՝ մանր առևտրականներ, արհեստավորներ, բանվորներ: Նոր հարկերի հավաքման հայտարարությունը ընդվզում է առաջ բերում բնակչության ստորին դասակարգերի շրջանում, որոնց հետաքրքրություններն ու տրամադրությունները արտահայտող համքարները առաջ են բերում պաշտոնական աղբյուրներում «համքարների ապստամբություն» անվամբ հայտնի հզոր շարժումը: Լրացուցիչ հարկերը վերացնելու պահանջով մի քանի օրվա ընթացքում փակվում են Թբիլիսիի բոլոր կրպակները: Քաղաքային չքավորության հետ մինչև տաս հազար մարդ փողոց են դուրս գալիս առևտրականներն ու արհեստավորները և իսկական մարտ տալիս քաղաքային հարուստներին: Քաղաքագլուխ Շերմազան Վարդանովը հազիվ է խույս տալիս մղեգնած ամբոխից, իսկ իր հրամանների կատարածուն՝ հարկահավաք Բաժբեուկ-Մելիքովը ծեծվում է մահամերձ...» (բնագրում՝ “Заботясь об увеличении доходов казны и благоустройстве буржуазных кварталов города, в 1865 г. власти установили дополнительные налоги в сумме 60 тыс. руб., которые падали исключительно на трудовые элементы и на мелкобуржуазные слои населения, на мелких торговцев, ремесленников и рабочих. Объявление о сборе новых налогов всколыхнуло низшие классы населения, и, выражая их интересы и настроения, амкары развернули мощное движение, известное в официальных источниках под именем “амкарского бунта”. В течение нескольких дней все лавки в Тбилиси были закрыты: амкары требовали отмены дополнительных налогов. Торговцы и ремесленники вместе с городской беднотой в числе до десяти тысяч человек вышли на улицу и дали настоящий бой городским богачам. Городской голова Шермазан Вартанов едва спасся от рассвирипевшей толпы, а исполнитель его приказаний сборщик податей Баж-беук-Меликов был избит до смерти...”) (**Чхетия Ш.**, Армяне в Тбилиси в шестидесятых годах XIX века, “ИФЖ’, Ереван, 1958, N 3, էջ 166):

մէ շայի էր, հիմի 6-7 է. իրիք շայով լաւ արթար եիղ էինք առնում, հիմի հինգ-վից շայի է դառի, իրիք շաՙնուց խիզիլալէն վից շայի ին շինի. հալբաթ կունիղաՙնաև խալխը, բաս ի՞նչ կօնին:

- Վաՙնօ ջան, Վաՙնօ, - ընդհատեց Էմինինց Եօվանէն, - հինգ ջուխտ մինձ-մինձ գիղաքունիքը մէ աբասով քանի ջէր ինք առի:

- Էտ ուր իս ասում, - շարունակեց Գապինի տղէն, - էն մարտ ամսուայ բռնած թարթի դօշիրը վուր գրուանքէն երկու շայով առնում էինք ու իբ կտրում վուղմ մաթրաթը եիղով լքցուում էր: Հացը էրկու կապիկ էր, շատ վուր թանգացիլ էր էրկու գրուանքէն մէ շայի, էն էլ աճը տուող ու սիպտակ Դուռնուկու ու Շորագալու ալրեմէն: Գինին հո՛ թունգին իրիք շայի, ան մէ աբասի, ինչքան գուզիս խմէ, անարատ գինի, հիմի կի վից շայի ին շինի:

- Առաջ մէ մանէթով, - ասում էր Օհանջանենց տղէն, - էնէնց քոք օչխար կուառնէինք, վուր չուրս տուն փայ կօնէինք, էրկու օր եօլլա կերթէինք, հիմի կի մէ մանէթը մէ օրը մէ օջախի հերիք չէ գալի:

- Էրէգ մէյդնումը խալխը խիստ էին ղնամիչ աՙնում գալաւին ու իրա բազարնիկ Բաժբէուքովին, դրանց գլխին մէ գել կու ձևին, - մէջ ընկաւ Գէմչուանց Օհանէզը:

- Դրանց ճաշը մէ լաւ վուր էփին, խիստ լաւ կուլի, էսէնց թանգութին կուլի վուր գցիլ ին, - առաջ եկաւ Զառափ Կակօն, - քաղաքը դրանք ին քանդում, հիմի էլ ասում է թազա «տակսա» ին ուզում դնի ուտելէղէնի վրայ, շներու, ձիաներու, էշերու, դուռն ու ակօշկի վրայ էլ նուր-նուր խարջիր ին ուզում բարցի, հալբաթ վուր խալխը ղալմաղալ կօնէ: Էս միր մուէբա. խօրօմ իմիրիլնիրն էլ հօ հէնց մէ մահանի ին մնում, ուր մէ ղալմաղալ սարքին, պարապ-սարապ ման ին գալի, ճանգնիրը մէ բան էգէբա գցին...»[378]:

Տարիներ անց Պռոշյանը գրել է. «...Համքարին հասկացրել էին, թե քաղաքագլուխը քո թշնամին է, և նա անկարող լինելով թափանցել գործի ներքին պատճառի մինչև խորքը, հույսն յուր ուժի վրա դրած, փութացել էր Լինչի դատաստան կատարել: Եվ, իհարկե, ի՞նչ կարող էր համքարը հասու լինել Շերմազանյանցի դեմ լարված դավադրություններին, որոնք ոչ այլ ինչ էին, ինչպես վերջը խելացի մարդիկը մեկնեցին, եթե ոչ մոքալաքության և ախալմոսուլության կնճռալից մրցումը...»[379]:

Գ. Շ. Վարդանյանցի պնդմամբ համքարներին խռովության դրդած ու ներշնչած անձինք հիմնականում մի քանիսն էին: Դրանց վերաբերմամբ Գ. Շ. Վարդանյանցը քննչական հանձնաժողովին ներկայացրել է իր տեսակետը. «...Նա (Շերմազան-Վարդանովը) պնդում է, որ պատվավոր քաղաքացիների դասին պատկանող անձինք, դրդված իրենց շրջապատի շահերից և անձնական թշնամությունից դեպի Շերմազան-Վարդանովը... գրգռեցին համքարներին իշխանության ընդդիմադրելու, մինչդեռ նրանց նպատակն էր նրան՝ (Շերմազան-Վարդանովին) վայր ձգելը քաղաքագլխի պաշտոնից, նրա գույքի հափշտակումը և նույնիսկ նրա սպանությունը: Այս մտադրության ամենագլխավոր շարժիչը, Վարդանովի բացատրությամբ, արքունի խորհրդական (նաղվորնի սովետնիկ) Գրիգոր Իզմիրովն էր, որը պատվավոր քաղաքացի էր իր ծագումով, իսկ սրա համախոհներն էին Թբիլիսիի նահանգական ատյանի խորհրդական, արքունի խորհրդական Գաբրիել Սունդուկյանը, բժիշկ Ռոտինյանցը, բնակարանային վերակացույի օգնական Սոլաղովը (երեքն էլ քաղաքացիներ են ծագումով), Ռոտինյանցի և Սունդուկյանի հետ տպարան պահելու ընկերակցության մեջ գտնվող Թիֆլիսի քաղաքի հասարակական վարչության անդամ Համբարձում Էնֆիաճյանցը, Էնֆիաճյանցի տպարանում տպվող «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պետրոս (ընագրում՝ Պետրուս) Սիմոնյանցը և պատվավոր քաղաքացիներ՝ Նազար Նազարբեգովը, Եգոր Փրիդոնովը, Դանիել Իզմիրովը, Արտեմ Բայսողոլովը և ոմն Գեվո Գոզալովը: Այս անձանց մեղադրելու համար Շերմազան-Վարդանովը առաջ է բերում հետևյալ հանգամանքները.

1. Գրիգոր Իզմիրովի դեմ. ա. Իզմիրովը, Սունդուկյանի հետ միասին, ստեղծում էր անբավականություն նրա՝ Շերմազան-Վարդանովի դեմ քաղաքացիների և նորաբնակ քաղքենիների կողմից... բ. Իզմիրովը թեմական առաջնորդ Մակար եպիսկոպոսի մոտ նրա՝ Վարդանովի հետ խոսելիս սպառնացել է ոչնչացնել նրան... Իզմիրովն իրեն տանը հասարակություն էր հավաքում և հավատացնում, իբր թե նա՝ Շերմազան-Վարդանովը՝ ձգտում է հայերին պրավոսլավ դարձնի, ուստի և հենց ինքն Իզմիրովն իբրև հասարակության հավատարմատար Էջմիածին էր ուղարկվել այս մասին Սինոդին հայտնելու համար. դ. Էջմիածին մեկնելուց առաջ Իզմիրովը նախկին քաղաքագլուխ Փրիդոնովի հետ միասին երկու անգամ հավաքել են համքարներին, առաջին անգամ Նորաշեն եկեղեցու գավթում, երկրորդ անգամ Խոջիվանքի գերեզմանատանը, նպատակ ունենալով գրգռել ժողովուրդը Վարդանովի դեմ, որի համար նրան՝ Իզմիրովին և նրա համախոհներին այս գործում՝ Էնֆիաճյանցին ու Սիմոնյանցին և ուրիշներին նահանգապետն արել է հանդիմանություն և խիստ զգուշացում ապագայում այդպիսի գործողություններից հեռու պահելու համար... Բացի սրանից, Շերմազան-Վարդանովը նշում է նաև մի հանգամանք, որը վկայում է չինովնիկ Իզմիրովի միտումի մասին ժողովուրդը գրգռելու համար: Նա ասում է, որ Իզմիրովը գրգռում էր

378. **Չմշկեան Մակ.**, Թիֆլիզը 1865 թ. եւ Կռոյի տղա Սինասը, «Հովիտ», 1915, N 25, էջ 392-393:

379. **Մանուկյան Ս.**, նշվ. աշխ., էջ 443:

համքարներին Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի և նախկին քաղաքագլուխ Միրիմանովի դեմ...

2. Գաբրիել Սունդուկյանի և նրա քենակալ բժիշկ Ռոտինյանցի դեմ Շերմազան-Վարդանովն առաջ է բերում նրանց կայքի վրա արգելք դնելու պատճառով: Բացի դրանից, նա (Շերմազան Վարդանովը) մեղադրում է Սունդուկյանին, Իզմիրովի Էջմիածին գնալու պահին կեղծ լուրեր տարածելու մեջ, իբր թե Թիֆլիսի քաղաքացիները պիտի վճարեն առևտրային մաքս այստեղ առևտրով պարապող օտարերկրացիների հետ հավասար, և թե նրան՝ Վարդանովին՝ սպառնալու մեջ նրա (Սունդուկյանի) քենակալ բժիշկ Ռոտինյանի կայքի վրա արգելք դնելու առթիվ. սակայն ապացույց առաջին մեղադրանքի համար չներկայացրեց, իսկ վերջինի առթիվ հենվեց նահանգապետի վրա, որի ներկայությամբ Սունդուկյանը սպառնացել էր նրան՝ Վարդանովին...»:

Քննիչ կոմիսիան, ծանոթանալով նշված անձանց դեմ մեղադրանքների հետ, գտել է, որ նրա տրամադրության տակ եղած նյութը հիմք չի տալիս, որպեսզի «բժիշկ Ռոտինյանը, «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պետրոս (բնագրում՝ Պետրուս) Սիմոնյանցը և Թբիլիսում նահանգական ատյանի խորհրդական, արքունի խորհրդական Գաբրիել Սունդուկյանը, քննության տակ առնվեն և կալանքի ենթարկվեն», մինչև որ «հետագա հետաքննությամբ կպարզվի սրանց առնչությունը գործին (այսինքն՝ ելույթին) ավելի ևս հաստատունությամբ...»[380]:

Անուղղակի կերպով Գ. Շ.–Վարդանյանցի՝ իբրև քաղաքագլխի գործունեության որոշ դրվագներ լրացվում են նաև համքարների խռովության կազմակերպիչների վերաբերյալ ոստիկանության կազմած տեղեկագրերի շնորհիվ. «... – Քաղվածք Թբիլիսիի ավագ ոստիկանապետի գաղտնի հետախուզությունից Թբիլիսում 1865 թվի հունիսի 27 և 28 պատահած անկարգությունների գործի առթիվ:

Պետրոս (բնագրում Պյոտր) Շանշին (հեղինակ «Երկու խոսք համքարների մասին» բրոշյուրի): Ուսանել է Դորպատի և Պետերբուրգի համալսարաններում: Եղել է ուսուցիչ Թբիլիսիի և Շուշվա հայլուսավորչական սեմինարիաներում, որտեղից էլ, չնայած ազդեցիկ անձանց պաշտպանության, հեռացված է հակակառավարչական և հակակրոնական գաղափարներ տարածելու համար, որոնք արտահայտվում էին նրա մեջ, որ քարոզում էր հայոց ազգի ազատության ու անկախության և կրոնական մի շարք ռեֆորմների մասին: Այժմ նա աշխատակից է «Մեղու Հայաստանի» թերթի, որը հրատարակվում է հայերեն լեզվով: Մշտական գրագրություն է պահպանում Բազելի և այլ գիտնականների հետ:

Պետրոս (բնագրում Պյոտր) Սիմոնյանց: Ուսանել է Դորպատյան համալսարանում: Եղել է նաև ուսուցիչ Թբիլիսիի սեմինարիայում և հեռացվել է նույն պատճառներով, որով հեռացված է նրա ընկեր Շանշիևը: Ծագումով Դոնի Նախիջևանից էր: Հետագայում Սիմոնյանցը ծայրահեղ չքավորության մեջ էր գտնվում, բայց ասում են՝ երեք տարի սրանից առաջ, Թբիլիսի էր եկել Օքսֆորդի համալսարանից անգլիացի Ժորժ Վիլյամը, որն իջել էր պատվավոր քաղաքացի Խատիսովի (բնագրում՝ Խատիսով) որդու Խատիսյանցի (բնագրում՝ Խատիսյանցի) մոտ, ուր ապրում էր և այժմ ապրում է Սիմոնյանցը, ճանապարհորդում էր երկրում Սիմոնյանցի հետ միասին, երկու շաբաթ ապրեց Էջմիածնում և նրա գալուց հետո, Սիմոնյանցը փողատեր դարձավ և սկսեց շատ լավ ապրել: Այժմ Սիմոնյանցը խմբագիր է «Մեղու» հայերեն թերթի: Հայերեն «Մեղու» թերթը տպագրվում է Համբարձում Էնֆիաճյանցին, Գաբրիել Սունդուկյանին և բժիշկ Ռոտինյանցին պատկանող տպարանում:

Գաբրիել Խատիսյանց (պատվավոր քաղաքացի Խատիսովի որդի): Դորպատյան համալսարանի սան, առաջին երկուսի ընկերը, ուսուցիչ էր Թբիլիսիի հայ – լուսավորչական սեմինարիայում և հեռացվել է նույն պատճառով, ինչպես և առաջին երկուսը. այժմ նա «Մեղու» թերթի աշխատակից է:

Երեքն էլ գրագրություն ունեն այլ և այլ ագենտների հետ արտասահմանում: Սրանց խմբին են պատկանում. Գրիգոր Իզմիրով, Համբարձում Էնֆիաճյանց, բժիշկ Ռոտինյանց և նահանգական ատյանում ծառայող Գաբրիել Սունդուկյանը:

Առաջին երեքը շատ զգույշ կերպով աշխատում են տարածել հայկական բոլոր լավ ընտանիքներում (բնագրում՝ տներում) գաղափարներ ազատության մասին, պարսավում են մեր կառավարության գործողությունները, ներշնչում են ատելություն դեպի այն և հորդորում են ուղարկել երեխաներին ուսանելու արտասահման և առանձնապես Բազել:

Իզմիրովը և Էնֆիաճյանցը նույն ոգով ազդում են ժողովրդի վրա, ամբոխի հասկացողությունների համեմատ նրանց շահերի ոգով, ցուցաբերելով կառավարության կողմից մտցվող ծանրաբեռնիչ հարկերը, միաժամանակ վախեցնելով (բնագրում՝ րեկրուտչինայով) և նրանով, որ կառավարությունը հաստատապես ձգտում է նրանց փոխի պրավոսլավ դավանության և վերջնականապես ստրկացնի ամբողջ հայ ժողովուրդը:

Բժիշկ Ռոտինյանց. Նույնպես սան է Դորպատյան համալսարանի և բժշկի (մեդիկի) դիմակի տակ լինում է ամեն տեղ և տարածում է ժողովրդի մեջ նույն գաղափարները, ինչով նաև պարապում է Սունդուկյանը, իսկ Սունդուկյանի գլխավոր դերը կայանում է նրա մեջ, որ նա պարտավոր է տեղեկանալ՝ իսկո՞ւմ են արդյոք նրանց գործողություննե-

380. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. հոդված, էջ 2-3:

րին, գաղտնի և տեղական ոստիկանությունները, և, ինչպես ասում են, այս ուղղությամբ նա հասցնում է հասարակությանը բավականին հաստատ և ստույգ տեղեկություններ:

Սկզբներում, մինչ քաղաքագլուխ ընտրվելը, Գալուստ (բնագրում՝ Կալուստ) Շերմազան-Վարդանովը ևս գտնվում էր այս հասարակության շրջանում և քաջ ծանոթանալով նրանց ձգտումներին, գաղափարներն և նպատակներն, քաղաքագլխի կոչման մեջ նշանակվելով, այս հասարակությունից անջատվեց, սկսեց նրանց ևս հորդորել, թողնել այդ գաղափարները, գտնելով այդ անոգուտ և վնասակար: Հասարակությունը, իհարկէ, չընդունեց նրա առաջարկները, ծայր աստիճանի զայրացավ նրա դեմ, քանի որ նա տեղեկացավ նրանց մտադրությունների մասին և դավաճանեց նրանց: Այս մոմենտից սկսեցին նրանից վրեժ առնել հայերը, որոնք սկզբում նրա նշանակելու անկանոնության պատրվակով, խնդրում էին իշխանությունից փոխել նրան: Իսկ երբ այս նրանց չհաջողվեց, դիմեցին այն միջոցին, որ տեղի ունեցավ հունիսի 27-ին»:

Ժանդարմական զորամասի (կորպուսի) 6-րդ շրջանի վարչության պետի գաղտնի զեկույցը (ռապորտը) կովկասյան փոխարքայի պաշտոնակատարին 1865 թվի սեպտեմբերի 10-ին N 119:

«Սույն տարվա հունիսի 27-ին և 28-ին Թիֆլիսում տեղի ունեցած անկարգությունները քննելու համար կազմված քննիչ կոմիսիայի նախագահը սեպտեմբերի 4-ին N 116 գրությամբ ուղարկեց ինձ քաղվածք ավագ ոստիկանապետի կողմից այս գործի վերաբերյալ գաղտնի հետախուզությունից, ի հետագա իմ տնօրինության:

«Ներկայացնելով այդ քաղվածքը բնագրում ի բարեկեցություն ձերդ պայծառափայլության, ավելացնում եմ, որ այլ անձանց թվում հիշատակված Գաբրիել (բնագրում՝ Գավրիլո) Սունդուկյանն ուրիշներից առավել հայտնի է ինձ իբրև ազնիվ սկզբունքների տեր մարդ, բարեմիտ և այնքան խելոք, որպեսզի պարզ հասկանա հայ ժողովրդի կացության ոգուտը մեր կառավարության բարերար օրենքների ներքո, իսկ մնացած անձինք, թեև ինձ ավելի քիչ են ծանոթ, սակայն՝ նայած նրանց կրթությանը, կարծում եմ, որ նրանք ևս խորթ չեն նույն մտքերին, որոնք բխում են նրանց արդի անդորրությունից և բերկրությունից»:

«Նախկին քաղաքագլուխ Գալուստ (բնագրում՝ Կալուստ) Շերմազան-Վարդանովը, որքան գիտեմ, հայտնի է իբրև ոչ բարեմիտ և ոչ բարեխիղճ մարդ, որքան էլ նա այս անձանց մեղադրում է անհիմն կերպով և սա իրավունք է տալիս կարծելու, որ այս արարքով, որ գուցե նրա անձնական շահերից են բխում, ցանկանում են խոտորել իրենց այն կասկածը, որ գուցե ծագի նրա սեփական հանցավորության նկատմամբ, և այս պատճառով չեմ կարող հավատ ընծայել նրա ասածին, որ անհիմն և օրենքով անընդունելի է, մանավանդ անել որևէ կարգադրություններ, որոնք իմ պաշտոնեական պարտականությունների շրջանից դուրս են...»[381]:

1888 թ. Գ. Շ. Վարդանյանցի տրամադրած կարևոր նյութերի շնորհիվ բժիշկ Արամյանցը հաջողությամբ ամբողջացնում է «Պարսկա-Հնդկական հնադարան» աշխատությունը: Վերջինս արժանանում է «Իզմիրյան» մրցանակի[382]:

Համքարների խռովության ճնշումից հետո կառավարությունը ստիպված քաղաքագլխության պաշտոնից հեռացնում է Գ. Շ. Վարդանյանցին: Սակայն վերջինիս համար՝ որպես մտավորական և գրչի մարդ, ամենածանր հոգեկան հարվածն իր ստեղծած գրատան ոչնչացման փաստն էր: Որոշ ժամանակ անց նախկին քաղաքագլուխը, այնուամենայնիվ, կարողանում է վերստին լծվել գրական մշակութային գործունեության:

1875-1878 թթ. ընթացքում հոդվածաշարերի տեսքով լույս են ընծայվում Գ. Շ. Վարդանյանցի մի քանի աշխատությունները[383]:

Գ. Շ. Վարդանյանցի ուսումնասիրությունների պսակը, թերևս, պարսկահայ գործիչների պատմությանը նվիրված հատորն է: 1889 թ. մայիսի 30-ին Գ. եպիս. Սրվանձտյանցն այդ աշխատության առթիվ, որն ուներ «Նյութեր ազգային պատմութեան համար» վերնագիրը, նշել է. «...Ո՞վ է այն գրագէտ եւ գրասէր հայն որ լսած չլինի Գ. Շիրմազանեանի անունը, հանդիպած չլինի նորա զանազան ճաշակով եւ պիտանի նիւթերով գրած բանաստեղծական, պատմական, նկարագրական, թարգմանական, քննադատական եւ այլ բազմադիմի երկասիրութեանց զորս ի լոյս հանած Ռուսահայոց պարբերական հանդէսներու եւ լրագիրներու միջոցաւ: Նա քաջածանօթ է նաեւ Տաճկահայոցս Արշալոյս Արարատեան եւ Մասիս լրագրոց վերծանողաց եւ այլն: Կէս դարէն աւելի է որ սկսած է նա գրիչ գործածել, եւ այսօր իւր պատկառոյի եւ լիացեալ աւուրց մէջ կընծայէ ազգին մի գործ, որ նշանաւոր է ամենայն հանգամանօք: Իւր այս գործոյն հիմն դրած է 1832 ամին, եւ գլուխ հանած 1863 րդ ամին,

381. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նույն տեղում:

382. «Արարատ», 1888, մարտ, էջ 192:

383. Կենսագրութիւն Սահակ եպիսկոպոսի Սադունեանց, «Մասիս», 1875, N 1759: Մի քանի խօսք Ֆաթ-Ալի շահի վերայ եւ ցուցակ նրա որդիների, դուստրների և թէ նրանք եր՞բ, ինչ՞ մօրէ են ծնած, ու՞մ հետ են ամուսնացած և նրանցից ոմանք ինչ՞ ձիրքեր և տիտղոսներ են ունեցած, նույնպէս նրա կանանց ինչ ցեղէ, ինչ՞ ազգէ լինելն և ինչ՞ ձիրքեր կամ տիտղոսներ են ունեցել («Արարատ», 1876, էջ 132-139, 182-188, 214-219, 251-257, 301-305): Ճանապարհորդութիւն Հայաստանումը: Գ. Շ-ի յիշատակարանից հանած: 1842 թիւ 12 օգոստ. Մաղարթա Նախավկա վանքումը («Արարատ», 1877, էջ 17-27, 57-67, 92-102, 134-148, 179-185, 208-221, 254-262, 293-308, 331-336, 370-383, 405-419, 447-460, 1878, 17-29, 46-53): «Անեկդոտներ, զվարճալի զրոյցներ, համառոտ դէպքեր և առակներ մեծ մասամբ ազգային կեանքից առած», ժողովածու, Թիֆլիս, 1878:

Գ. Շերմազանյանցի տան տեղում կառուցված Խանկալամյանների տունը, Վելյամինովսկայա (այժմ՝ Դադիանի, N 20) և Լերմոնտովի (մինչև 1890-ական թթ. կոչվում էր Բոլշայա Կրիվայա) փողոցների անկյունում (լուս. Ս. Դարչինյանի)

իսկ 1865 յունիս 28-29 ին երբ Թիֆլիսի մէջ տեղական քաղաքական փոթորիկ մը ծագեցաւ, այդ արկածին զոհ գնաց Գ. Շիրմազանեանի ամբողջ գրատունն: Աւաղ այնքան անգին կորստեան: Գ. Շիրմազանեանի գրքատունը ոչնչանալուն հետ անհետ եղած է իւր այս պատրաստած գործը, զոր դառնութեամբ սրտի ոտէպ-ստէպ կը յիշատակէ, որ կը պարունակէր վաթսունէն աւելի հայ անուանց կենսագրութիւնը բազմակողմանի եւ ճոխ նկարագրուած: Յետ այնորիկ վերստին ի Պարսկաստան գնալով, ի նորոյ կը ձեռնարկէ գրել իւր սիրելի նիւթերը, զորս բաժանած է երեսուն եւ ութ գլխոյ...»[384]:

Նոյն թվականին աշխատությունն արժանանում է «Իզմիրյան» մրցանակի: Նույն թվականին աշխատությունը ներկայացվում է «Սահակ-Մեսրոպյան» մրցանակաբաշխության «Իզմիրյան կտակի գործադիր մնայուն հանձնաժողովին» և շահում մրցանակը (600 ռ. դրամական պարգևատրումով հանդերձ)[385]:

Գ. Շերմազանյանցը վախճանվել է 1891 թ.[386], Օռլովի մարզի Զալեսնոյե գյուղում և ամփոփվել տեղի եկեղեցու բակում[387]:

ԵՐԵՄԻԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Երեմիա Արծրունին ծնվել է 1804 թ. Վան քաղաքում: Նա 9 տարեկան էր, երբ Արծրունիների ընտանիքը փոխադրվում է Թիֆլիս: Այստեղ գիմնազիան ավարտելուց հետո կրթությունը շարունակում է Պետերբուրգում, որտեղ և ավարտում է զինվորական վարժարանը: 1823 թ-ից անցնում է զինվորական ծառայության: 1826-28 թթ. մասնակցում է ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմներին. «...1823 թ. անցել է ծառայության Ուլանյան գնդում որպես յունկեր, իսկ 1826-ին արդեն կոռնետ էր...»[388]:

«Ռուս-պարսկական պատերազի ժամանակ կօրնէտ Արծրունին մասնակցութիւն ունեցաւ Սարդարապատի, Աբասաբատի և Երևանի կռիւների մէջ: 1828 թիւն նա կռւում էր ռուս զօրքերի շարքում իր նախկին հայրենիքի, Օսմանեան պետութեան դէմ, բայց այս անգամ ոչ թէ Կովկասում, այլ Դունայի բանակում»[389]: 1829 թ. Ե. Արծրունին մեկնում է Պարսկաստան և մասնակցում իշխ. Գրիբոյեդովի գլխավորությամբ Թուրքմենչայի դաշնագիրը կնքելուն, ապա Համադանում հանդիպում է պարսից Շահին. «1831 թ. պրն. Պասկևիչի մոտ է նշանակվել արտակարգ հանձնարարությունների իրագործման համար, պրն. Պասկևիչի հեռանալուց հետո մինչև 1835 թ. նույն պաշտոնով մնացել է Կովկասյան կորպուսի բաժնի ղեկավարի մոտ, իսկ 1835 թ. նշանակվել է ռոտմիստր...»[390]: Երբ վերադառնում է Թիֆլիս, հայրը՝ Գևորգ աղան, արդեն վախճանվել էր (1830)[391]: Ժառանգելով հայրական կալվածքները (իջևանատունն ու փոխարքայի նստավայրի մոտ գտնվող տունը)՝ Ե. Արծրունին ստանձնում է դրանց կառավարումը. «Իր հօր պէս նա էլ ունէր շինարարական տաղանդ, բայց գերազանցեց նրան խոշոր ու բարդ ծրագիրների կազմելու և նրանցով երկար զբաղվելու տարօրինակ հակումներով, որոնք ապագայում այնքան քայքայեցին նրա գործերը»[392]: 1833 թ. Ե. Արծրունին ստանում է նաև մայրական՝ Պաչավյան-Արծրունիների՝ Վասպուրականում գտնվող կալվածքների ժառանգության պաշտոնապես վավերացված փաստաթղթերը. «Երեմիան այդ հեռաւոր կալուածների համար էլ սկսեց դատ, մէկը այն երկարատև, մեծ և ապար-

384. «Արարատ», 1889, յուլիս, էջ 413-414:

385. "Кавказ", 1889, N 190:

386. «Արձագանք», 1891, N 12: «Արևելք», 1891, N 2352: «Մշակ», 1891, N 127: Ի դեպ, մահվան տարեթվի շուրջ կան նաև այլ կարծիքներ (ինչպես օրինակ՝ 1883 թ. Բազմավէպ,, 1934, էջ 96), որոնք, սակայն, աղբյուրներով չեն հաստատվում:

387. Ինչո՞ւ Զալեսնոյե գյուղում, ի՞նչ հանգամանքների բերումով էր նախկին քաղաքագլուխն ու հայ մշակույթի երախտավորը կյանքի վերջին օրերն անցկացրել հայրենիքից այդչափ հեռու, արդյո՞ք աքսորավայրում էր, չգիտենք:

388. "Акты ...", том IX, Тифлис, էջ XVI (բնագրում՝ "... начал службу в 1823 году юнкером л.-гв. в уланском полку; в 1826 году произведен в корнеты...")։

389. "Акты ...", том VIII, Тифлис, 1881, էջ 303:

390. "Акты ...", նույն տեղում (բնագրում՝ "...в 1831 году назначен к гр. Паскевичу для особых поручений; остался после отбытия гр. Паскевича в той-же должности при командире Отд. Кавк. Корпуса до 1835 года; в 1835-же году произведен в ротмистры...")։

391. **Էջ**, Գրիգոր Արծրունի, հատոր առաջին, Թիֆլիս, 1902, էջ 56: Նաև՝ "Акты ...", том IX, էջ 303 XVI:

392. Նշվ. աշխ., էջ 57:

Քաղաքագլուխ Երեմիա Արծրունի

ղիւն դատերից, որոնք նրա ամբողջ ուշադրութիւնն էին գրաւում և միայն մեծամեծ ծախսեր էին պատճառում»[393]:

1832 թ. Ե. Արծրունին կառուցել է տալիս մի քանի նոր շենքեր, ինչպես նաև հորից ժառանգած իջևանատան վրա ավելացնում 4-րդ հարկը[394]: Մասնակցում է լեռնաբնակների դեմ սկսված պատերազմին: Շարունակելով զինվորական ծառայությունը՝ 1836 թ. արդեն փոխգնդապետ Ե. Արծրունին աշխատանքի է անցնում ֆինանսների նախարարությունում[395]: Լավատեղյակ Պարսկաստանի դիրքին ու տնտեսությանը՝ Ե. Արծրունին հանձն է առնում ուսումնասիրել Կովկասի և Պարսկաստանի առևտրական կապերի զարգացման հնարավորությունները, միաժամանակ Արծրունուն վստահվում է Անդրկովկասի բոլոր մաքսատների կառավարումը[396]:

1838 թ. Ե. Արծրունին իր մի քանի համախոհ գործընկերների հետ նախաձեռնում է հիմնել առևտրական մի խոշոր ընկերություն, որը պիտի իրականացներ ռուսական արտադրանքի առաքումը Պարսկաստան, Պարսկաստանի հյուսիսային շրջաններից մշակման նպատակով հում հումքի ներկրումը Անդրկովկաս, նաև պիտի զբաղվեր Բաքվի և Շիրվանի նավթահանքերն ու աղի լճերը արդյունահանելով: Ընկերության կանոնադրությունը հաստատվում է Նիկոլայ Կայսեր կողմից: Նույնիսկ նախնական ծախսեր էլ են կատարվում, բայց ի վերջո ընկերությունը չի կայանում[397]:

1830-ական թթ. վերջին Ե. Արծրունուն շնորհվում է գնդապետի աստիճան, և նա նշանակվում է Կովկասյան բանակի գլխավոր ինտենդանտ. «Այդ կարևոր պաշտօնի մէջ ցոյց տուեց հազուագիւտ ազնուութիւն և անշահասիրութիւն: Պետական ահագին գումարներ ծախսող այս հիմնարկութեան մէջ նա խիստ կարգ ու կանոն մտցրեց, զսպեց ծառայողներին, հանդիսանալով գանձարանի շահերի անկաշառ պահապան, և այդպէս նա կառավարեց մի քանի տարի, մինչև պաշտօնից հեռանալը»[398]: Ամուսնանում է իշխ. Դավիթ Նազարյանի դստեր՝ Ագրիպպինայի հետ. «Այդ ամուսնութիւնից Երեմիան ունեցաւ, որքան յայտնի է, չորս տղայ և չորս աղջիկ: Տղաներից անդրանիկն էր Գէորգը, որ մտաւ զինուորական ծառայութեան մէջ և մեռաւ երիտասարդ հասակում»[399]:

1831 թ. հունվարի 12-ին Ե. Արծրունին հաստատվում է Ներսիսյան դպրոցի «Կոմիտետ բարեկարգութեան ուսումնարանի Հայոց Տփխիսոց» անդամության կազմում[400]: Նույն թվականին «Ներսէսի համաձայնութեամբ, Երեմիայ Արծրունին փոխարինեց իր հօրը, դառնալով մահտեսի Չարուխճեանի կտակատար: Նա ընտրուեց նմանապէս Ուսումնարանի Կոմիտէի պատուաւոր անդամ»[401]: Մտահոգվելով դպրոցում անգործության մատնված տպարանի խնդրով և այն տեղում աշխատեցնել չկարողանալու պատճառով Ե. Արծրունին տպագրական սարքերը «...տարաւ իւր տուն բանացնելու համար, թէև ոչ իսկ գործ դրեց»[402]:

1840-ական թթ. առաջին կեսին Ե. Արծրունին հրաժարվում է զինվորական ծառայությունից և Մոսկվա փոխադրվելով՝ այնտեղ մնում մինչև 1850-ական թթ. վերջերը. «Հաստատվելով Ռուսաստանի մայրաքաղաքում, Արծրունին ստանում էր Թիֆլիսի իր կալուածների արդիւնքները և նրա ընտանիքը վարում էր արիստոկրատ դասակարգին յատուկ ճոխ կեանք, թէև ինքը, Արծրունին, սիրում էր առանձնակեցութիւնը և ապրում էր, ինչպէս գրում էր իր նամակներից մէկում, ճգնավորի պէս: Անշուշտ, Արծրունու տան արիստոկրատիական շուք տուողը տիկին Ագրիպպինան էր, ծնեալ իշխանուհի Նազարեան»[403]:

Մոսկվայում ապրած տարիներին ծնվում են Ե. Արծրունու մյուս որդիները՝ Գրիգորը (1845) և Անդրեասը (1847)[404]: Մոտ 1853 թ. վախճանվում է Արծրունու կինը՝ Ագրիպպինան. «Երեմիան նորից չա-

393. Նշվ. աշխ., էջ 59:
394. Նույն տեղում:
395. Նույն տեղում:
396. Նշվ. աշխ., էջ 60:
397. "Акты ...", том IX, էջ 52: Նաև՝ **Լէօ**, նշվ. աշխ., էջ 60-61:
398. Նշվ. աշխ., էջ 61:
399. Նշվ. աշխ., էջ 62:
400. **Երիցեանց Ադ.**, Պատմութիւն 75-ամեայ ... , էջ 241:
401. Նշվ. աշխ., էջ 262:
402. Նշվ. աշխ., էջ 268:
403. Նշվ. աշխ., էջ 62-63:
404. Գրիգոր Արծրունին, որն հետագայում եղավ «Մշակ»-ի հիմնադիրն ու խմբագիրը, Ե. Արծրունու 3-րդ արու զավակն էր, նրանից առաջ Գևորգն ու Սարգիսը վախճանվել էին:

Կուր գետի աջ ափին՝ վրաց Սբ. Սիոն մայր եկեղեցու և Բեհբուդյանների իջևանատան միջև գտնվող Արծրունիների իջևանատունը (քարավանատունը)

մուսնացաւ, նա աշխատում էր փոխարինել երեխաների մօրը և այդ պատճառով միանգամայն նուիրվեց իր ընտանիքին: 1854 թիւն, երբ սկսվեց Ղրիմի պատերազմը, Արծրունին Մոսկվայում ստացաւ զինուորական մինիստրից հեռագիր թէ նա, Նիկօլայ կայսրի հաճութեամբ, նշանակվում է Ղրիմում գործող բանակի ընդհանուր ինտենդանտ: Որքան էլ պատուաբեր լիներ այդ բարձր ուշադրութիւնը, Երեմիան չը կարողցաւ ընդունել այդ կարևոր պաշտօնը: Նա շտապեց Պետերբուրգ և անձամբ աղաչեց զինուորական մինիստրին ազատել իրան այդ պաշտօնից: Գլխաւոր պատճառը, որ բերում էր նա, այն էր, որ նա ութ երեխայ ունի, որոնց չէ կարող թողնել առանց խնամատարի: Նրա խնդիրքը յարգվեց և նա նորից վերադարձաւ իր ընտանիքի ծոցը»[405]:

Ե. Արծրունուն բնորոշ էր խստաբարո մարդու կերպարը. «...Գէորգ Արծրունու որդուն չէին տուած մի գթառատ, քնքշասիրտ մօր յատկութիւնները: Իբրև հայր էլ՝ նա աւելի նման էր իր պարտաւորութիւնները վերին աստիճանի բարեխղճութեամբ կատարող մի զինուորի: Նա պատրաստ էր իր ընտանիքի համար ամեն տեսակ զոհութիւներ անել. նա անապատականի կեանք էր վարում, չէր լինում հասարակութեան մէջ, նրա աշխարհը միայն իր տունն էր, ուր նա կարգադրում էր, ղեկավարում էր, հսկում էր»[406]:

Կուր գետի աջ ափին գտնվող Քաղաքագլուխ Երեմիա Արծրունու իջևանատունը (քարավանատունը), լուս. ԺԹ դարի վերջ

405. Նշվ. աշխ., էջ 65:
406. Նշվ. աշխ., էջ 65-66:

Ե. Արծրունու որդին՝ «Մշակ»-ի հիմնադիր և առաջին խմբագիր Գրիգոր Արծրունին

1855 թ. ամռանը Թիֆլիսի վրաց մայր Սբ. Սիոն եկեղեցու մոտ գտնվող Գևորգ աղայի հիմնած իջևանատան շենքը (հայտնի էր «Արծրունու» անվամբ և միաժամանակ քաղաքի հայապատկան 14 մեծ իջևանատների շարքում 2-րդն էր)[407] հրդեհվում է: Վաճառականների վնասը, որոնք այդ իջևանատանը բազմաթիվ խանութներ ունեին, միլիոնների էր հասնում[408]: Աղետի լուրն առնելով՝ Ե. Արծրունին նախ մեկնում է Պետերբուրգ և իշխանություններից խնդրում դեպքի ամենախիստ քննություն, ապա երկար տարիների ընդմիջումից հետո վերադառնում է Թիֆլիս: Վնասները, իրոք, մեծ էին, բայց վերականգնելի. «Գէորգ-աղայի հեռատեսութեան շնորհիւ, - գրում էր նա - կարաւանսարան քաջաբար դիմադրել է կրակին, որի մէջ հալվել էին նույն իսկ պղինձն ու արծաթը»[409]: Չեռնարկելով իջևանատան վերականգնման գործը և հակառակ չափազանց ծանր ծախսերին՝ Ե. Արծրունին աշխատանքները կարողանում է ամբողջացնել 4-5 ամսվա ընթացքում: Շուտով Արծրունին ձեռնարկում է նաև մի նոր առևտրական համալիրի կառուցման գործը: Դրա համար գնում է նաև հարևանների հողերից որոշ տարածություններ (օր. փոխարքայի այգուց 400 սաժեն, զինվորական շտաբից և այլն). «Մեծ գործի համար մեծ միջոցներ են հարկաւոր: Այստեղ էլ կանգ չէ առնում Երեմիան, գրաւ դնելով կարաւանսարան և գալէրեան Անդրկովկասեան Պրիկազում, 200 հազար րուբլուց աւել պարտք է վերցնում և տարիների ընթացքում գլուխ է բերում շինութիւնը այնպէս, ինչպէս ինքն էր ցանկանում: Շինութիւնը, իսկ որ փառաւոր էր: Մի ահագին վաճառանոց էր դա, քաղաքի առաջնակարգ փողոցի վրա, բաղկացած էր բազմաթիւ խանութներից և սենեակներից: Նա այսօր էլ կայ և զարմացնում է տեսնողին: «Հայկական Աշխարհը» 1867 թին եւրոպական շինութիւն, քաղաքիս զարդ է դառնում. Պետերբուրգի պասաժը գուցէ սորա անհաւասար հակառակորդ լինի: Ահա ինչ էր անում այդ զինուորականի կամքը, յամառ բնաւորութիւնը»[410]:

1860 թ. Ե. Արծրունու գործնական աջակցությամբ ի նպաստ Վարագ վանքում բացված ուսումնարանի և տպարանի՝ Խրիմյան Հայրիկին է փոխանցվում ժողովարարությամբ կուտակված դրամը, որին ինքն անձնապես. «...ստորագրեց մի խոշոր գումար և աջակցեց նուիրատուութեան»[411]:

Նույն 1860 թ. Ե. Արծրունին աջակից է լինում Թիֆլիսում հայկական գրադարանի ստեղծման գործին և ընդգրկվում հիմնադիր անդամների ցուցակում (ինչ-ինչ հանգամանքների բերումով գրադարանը չի բացվում):

Առանձնապես խոշոր է Ե. Արծրունու ծառայությունը Ներսիսյան դպրոցի համար նոր կանոնադրություն մշակելու (իր խմբագրությամբ հաստատվում է 1861 թ. Մատթեոս կաթողիկոսի կողմից) ուղղությամբ[412]: Դպրոցի ղեկավարությունը փափագում էր Ե. Արծրունուն տեսնել հոգաբարձության կազմում, որից ինքը, սակայն, հրաժարվում է: 1861 թ. Ե. Արծրունուն շնորհվում է գեներալ-մայորի աստիճան: 1864 թ. Արծրունին վերջնականապես թողնում է զինվորական ծառայությունը[413]:

1867 թ. Թիֆլիսում գործադրության մեջ է մտնում դեռևս 1866 թ. օգոստոսի 14-ին հաստատված քաղաքային կառավարման նոր կանոնադրությունը: Դա համընկնում է Ե. Արծրունու՝ քաղաքագլուխ ընտրվելու հետ. «...այդ ընտրութիւնը գոհութիւն պատճառեց քաղաքացիներին, որոնք նախընթաց տարիներից արդէն լաւ ճանաչել էին նրան իբրև շիտակ, կամքի տէր մարդու»[414]: Քաղաքագլուխ է ընտրվում 1866 թ. դեկտեմբերին քաղաքային իրավասուների ընտրությունների ժամանակ[415]: Ընտրության կապակցությամբ ժամանակի մամուլը նշել է, որ. «Թիֆլիսի ժողովուրդը գիտէ, որ պ. Արծրունին է մի գործունեայ և ազնիւ մարդ, և այս արդէն բաւական է պ. Արծրունու ընտրութեան օրից ազնիւ ծանօթները միմեանց պատահելով շնորհաւորում էին, որ պ. Արծրունին ընտրվել է քաղաքագլուխ»[416]:

407. «Գարուն», 1866, N4, էջ 249:
408. Ըստ Աղ. Երիցյանի՝ 3, իսկ ըստ Լեոի՝ 5 միլիոն ռուբլի (տես **Երիցեանց Աղ.**, Գրիգոր Արծունու և նրա քսանը հինգ տարւայ գրական գործունեութեան առիթով (1865-1890), Թիֆլիս, 1890, էջ 41: **Լէօ**, նշվ. աշխ., էջ 69):
409. Նշվ. աշխ., էջ 70:
410. Նշվ. աշխ., էջ 73-74:
411. Նշվ. աշխ., էջ 76: Ի դեպ, Արծրունու նվիրաբերած գումարն էր՝ 500 ռուբ. (տես՝ **Լէօ**, Գրիգոր Արծունի, հատոր 3, Թիֆլիս, 1905, էջ 11):
412. Նշվ. աշխ., էջ 81:
413. Նշվ. աշխ., էջ 84:
414. Նույն տեղում:
415. "Тифлисский листок", Тифлис, 1909, N 298, էջ 3:
416. «Հայկական Աշխարհ», 1866, N 8-9:

Ե. Արծրունու պաշտոնավարության ընթացքում՝ 1866 թ. հունվարի 16-ին, բացվում է յունկերական դպրոց[417], իսկ 1867 թ. հունվարի 2-ին՝ Կովկասյան թանգարանը[418]:

Շուրջ երկու տարվա պաշտոնավարությունից հետո՝ 1868 թ., առողջական վիճակի վատթարացման պատճառով Ե. Արծրունին թողնում է նաև քաղաքագլխի պարտականություններն ու հետագայում բավարարվում միայն իրավասուի (քաղխորհրդի անդամ) պաշտոնով:

1872 թ. Ե. Արծրունին առանձին գրքույկով հրատարակում է իր մի զեկուցումը՝ «Խնդիր երկաթէ ճանապարհի վերայ դէպի Հնդկաստան» վերնագրով, որը կարդացել էր նույն թվականի ապրիլին «Տեխնիկական Ընկերության» նիստերից մեկում[419]:

Ե. Արծրունու մահից հետո Արծրունիների իջևանատունն անցնում է պետական բանկերից մեկին. «...նրան էր պատկանում Թիֆլիսի հսկայական իջևանատունը, որը ներկայումս անցել է քիֆլիսյան ազնվականական հողային բանկին...»[420]:

Վախճանվել է 1877 թ. նոյեմբերի 15-ին և թաղվել Վերայի հայոց գերեզմանատանը[421]:

Տապանաքարը ոչնչացված է:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԱԴԱԹՅԱՆՑ

Ն. Ալադաթյանցի ծննդյան թվականն անհայտ է: 1856 թ. Թիֆլիսի գիմնազիան ավարտելուց հետո ուսումը շարունակում է Մոսկվայի կայսերական համալսարանում[422]: Արդեն այդ տարիներին Ալադաթյանցը հանդես է գալիս թատրոնի ասպարեզում: 1858 թ. Մոսկվայում հիմնված թատերասիրաց խմբակի համար, որոնք բեմադրում էին հայերեն ներկայացումներ, Ն. Ալադաթյանցը 1859 թ. գրում է «Վա՜յ իմ կորած 50 ոսկի»[423] կենցաղագրական ռաջին պիեսը: Վերջինս երկար ժամանակ բեմադրվում է հայկական թատերական խմբերի կողմից, բայց առաջին անգամ ներկայացվում է 1859 թ. հունվարի 27-ին Մոսկվայում՝ Նովայա Բասմանայա փողոցում գտնվող վաճառական Միքայել Ստեփանյանցի տանը[424]:

1860 թ. Ն. Ալադաթյանցը օժանդակում է «Հյուսիսսափայլի» հրատարակման գործին[425]: Մոսկվայում ներկայացված հայերեն մի բեմադրության մեջ 1865 թ., Ն. Ալադաթյանցը ստանձնում է «հարուստ վաճառականի» դերակատարությունը[426]: Համալսարանն ավարտելուց հետո Ալադաթյանցը վերադառնում է Թիֆլիս: 1866 թ. նա ուսուցիչ էր Թիֆլիսի Մարիամյան օրիորդաց ուսումնարանում, միաժամանակ նաև հոգաբարձու Ներսիսյան դպրոցում[427]:

1868 թ. քաղաքային ընտրությունների ժամանակ ընտրվում է ավագ ներկայացուցիչ, իսկ Երեմիա Արծրունու հրաժարականից հետո 1,5 տարի վարում է քաղաքագլխի պաշտոնը[428]:

Ն. Ալադաթյանցի պաշտոնավարության շրջանում՝ 1868 թ. նոյեմբերի 8-ին, բացվում է Քաղաքային նոր հիվանդանոցը[429]:

1869 թ. մասնակցում է Գայանյան օրիորդաց ուսումնարանի հիմնադրմանը[430]:

Վախճանվել է Թիֆլիսում 1875 թ. հուլիսի 25-ին թոքախտից[431]:

ԴՄԻՏՐԻ ԹՈՒՄԱՆՅԱՆՑ

Քաղաքագլուխ է ընտրվել 1869 թ. և պաշտոնավարել մինչև 1870 թ.: Դ. Թումանյանցի կյանքի և քաղաքագլուխ եղած ժամանակաշրջանում նրա գործունեության վերաբերյալ տեղեկություններ չունենք:

---

417. “Кавказский календарь на 1867 г.”, Тифлис, 1866, էջ 282: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1892 г.”, Тифлис, 1891, էջ 32: Տե՛ս նաև **Джабарь М.**, նշվ. հոդվածը, նույն տեղում:
418. “Кавказский календарь на 1868 г.”, Тифлис, 1867, էջ 140: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1892 г.”, Тифлис, 1891, նույն տեղում:
419. **Арцруни И.**, Вопрос о железной дороге в Индию, “Сборник сведений о Кавказе”, том II, 1872: Նաև՝ առանձին գրքույկով:
420. “Словарь Кавказских деятелей”, 1890, էջ 14 (բնագրում՝ ”...ему принадлежал в Тифл. громадн. караван-сарай, ныне перешедший к тифл. дворянск. земельн. банку...”):
421. **Տէր-Ատովածատրեանց Հ.**, Բառարան հայ կենսագրութեանց 1441-1904, Ա, Թիֆլիս, 1904, էջ 155-156: Տե՛ս նաև **Երեմեան Ա.**, Թիֆլիսի Հայկական Պանթէոններում, «ՀԱ», 1938, էջ 407:
422. **Երեմեան Ա.**, Ռուսահայ թատրոնի պատմութիւնը, «Բազմավէպ», 1935, էջ 150:
423. Կատակերգության նյութը վերցված էր Թիֆլիսի կյանքից: Ինչպես նշել է Ա. Երեմյանը, պիեսն իր կառուցվածքով թույլ է և մինչև իսկ անարվեստ. «բայց ուշագրաւ է նրանով, որ այնտեղ շօշափւում են ժամանակակից հարցեր, հանդէս են գալիս իրական տիպեր իրենց կենցաղով, բարքերով, աշխարհայացքով և իրենց ուրոյն բարբառով: Այդ բոլորը նշանակալից երեւոյթներ են ժամանակակից ռէպէրտուարի համար...» (**Երեմեան Ա.**, նշվ. հոդվածը, էջ 150-151): Պիեսի և խաղի մասին տե՛ս նաև «Հայկական Աշխարհ», 1867, N 1, էջ 72:
424. Նշվ. հոդվածը, «Բազմավէպ», 1934, N 4, էջ 164:
425. «Մեղու Հայաստանի», 1860, N12, էջ 930: Նաև՝ N 14, էջ 106:
426. **Քիշմիշեան Ալ.**, Հայոց թատրոնը Մօսկւայում 1858-68 թթ., «Տարազ», 1908, N 2: Տե՛ս նաև «Փորձ», 1879, N 10, «Հիւսիսափայլ», 1859, N 1, էջ 76: **Արշարունի Ա.**, Մոսկվայի համալսարանը ու հայ առաջավոր ինտելիգենցիան, Երևան, 1955, էջ 232: «Սովետական Գրականություն», 1956, N6 (164): **Հարությունյան Մ.**, Միհրիդատ Ամերիկյան, Երևան, 1959, էջ 36: **Քզնունի Դ.**, Գրիգոր Ավետյան, Երևան, 1963, էջ 147: **Ավչյան Ս.**, Գրական ակնարկներ, Թբիլիսի, 1978, էջ 225-228:
427. «Բազմավէպ», 1935, էջ 150:
428. Նույն տեղում:
429. “Кавказский календарь на 1869 г.”, Тифлис, 1868, էջ 116: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1892 г.”, Тифлис, 1891, էջ 33:
430. «Բազմավէպ», 1935, նույն տեղում:
431. Նույն տեղում:

Գիմնազիան ավարտելուց հետո 1844 թ-ից անցնում է պետական ծառայության: 1868 թ. ստանում է Թագավոր-Կայսեր պալատի սենեկապետության պաշտոնը, ապա նշանակվում հատուկ հանձնարարությունների գծով փոխարքայի պաշտոնակատար: Ունեցել է կարգային գեներալի աստիճան[432]: Բացի արքունիքում ծառայելուց՝ 1860-ական թթ. սկզբին Յ. Թումանյանցն ակտիվորեն մասնակցել է հայ թատրոնի կայացման գործին: Իշխանը հայոց թատրոնի հովանավորությունը ստանձնել է այն ժամանակ, երբ ինքը բոլորովին զուրկ էր մայրենիի իմացությունից. «Իշխանը ցաւած սրտով ափսոսում է իւր հայախօսութիւնից զուրկ լինելու մասին, խնդրում է կոմիտեին՝ թոյլ տալ իրան շփուել թատրոնականների հետ, ուր ինքը յոյս ունի ծանօթանալ մայրենի բարբառին... Արիստոկրատ՝ բառիս բուն նշանակութեամբ՝ իշխան Թումանեանցը չը գիտելով բնաւ հայերէն խօսք, հեռու կացած ցայժմ հայութեան շրջանից, այսօր կամենում է մեզ նման անյայտ մանուկների հետ գործել» գրել է Պերճ Պռոշյանը[433]:

Հայ թատրոնի նվիրյալ Գրիգոր Իզմիրյանի առաջարկով Յ. Թումանյանցը ստանձնում է թատրոնի գլխավոր կառավարչի կամ տնօրենի պաշտոնը. «Իշխան Թումանեանցի մասնակցութիւնը բարձրացրեց հայ բեմի նշանակութիւնը վարչական անձանց շրջաններում և օտարների աչքում...»[434]: Որոշ ժամանակ անց, սակայն, Յ. Թումանյանցը ստանձնում է քաղաքային թատրոնի տնօրինությունը և հեռանում հայ թատրոնից. «Մի քանի ժողովների բացակայութիւնից յետոյ՝ մի երեկոյ իշխանը գալիս է ժողով և յայտնում, որ ինքը ստիպուած է ականջից հրաժարական տալ իւր համար պատուաբեր հայ թատրոնական դիրեկտօրութեան պաշտօնից, որովհետև մի և նոյն պաշտօնին է կոչուել ինքը քաղաքային թատրոնը կառավարելու...»[435]: Յ. Թումանյանցի հեղինակության և գործունեության շնորհիվ կարճ ժամանակում Թիֆլիսի պետական թատրոնը սկսում է փայլել այնպես, ինչպես հայոց թատրոնը իշխանի տնօրինության շրջանում. «1868-1871 նա կառավարիչ էր Թիֆլիսի թատրոնին, որոյ պատմութեան մէջ այդ շրջանը ամենապայծառն է, մինչև ցայժմ»[436]:

1870 թ. Յ. Թումանյանցն ընտրվում է Թիֆլիսի քաղաքագլուխ. «...վարեց և 1870-1874 թուականի վերջը Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնն և այնպիսի ժողովրդականութիւն ստացաւ այս պաշտօնի մէջ, որ 1874-ին կրկին ընտրվեցաւ 5 տարի ժամանակով, միայն անձնական տկարութիւնը ստիպեց նրան հրաժարուելու»[437]: Նրա օրոք քաղաքային վարչությունը դառնում է ինքնակառավարվող մարմին: Նաև դրվում է «Միքայելյան» արհեստավորաց դպրոցի հիմքը. «...նրա օրոք Թիֆլիսում մտցվեց քաղաքային ինքնակառավարություն և դրվեց Միքայելյան արհեստագործական ուսումնարանի հիմքը...»[438]:

1871 թ. հոկտեմբերի 31-ին բացվում է երաժշտական դպրոց[439]:

1872 թ. Յ. Թումանյանցը աջակից է լինում Շամախու աղետյալներին, որոնք տուժել էին հունվարի 16-ի երկրաշարժից[440]:

1874 թ. հոկտեմբերի 11-ին հրո ճարակ է դառնում թատրոնի շենքը[441]:

Քաղաքագլխի պաշտոնում Յ. Թումանյանցը 2-րդ անգամ վերընտրվում է 1874 թ. դեկտեմբերի 8-ին՝ դարձյալ մեկ քառամյակի համար, բայց 1875 թ. դեկտեմբերի 1-ին հրաժարական է տալիս[442]. «... իշխան Ե. Դ. Թումանովը հրաժարական է տուել իր պաշտօնից և Թիֆլիսի Դումայի ձայնաւորները պէտք է դեկտեմբերի 14-ին, կիրակի օրը, ձեռք տան նոր քաղաքագլխի ընտրութեան...»[443]:

Տակավին քաղաքագլուխ եղած ժամանակ՝ 1873 թ., Յ. Թումանյանցն ընդգրկվում է կառուցվելիք «Հովնանյան» դպրոցի՝ 7 հոգուց բաղկացած նախագահության կազմում. «...ուսումնարանի շէնքի կառուցման և նորա ապագայ գործունէութեան համար մի ծրագիր մշակելու մտքով կազմում է մի յատուկ յանձնաժողով...»[444]: Յ. Թումանյանցը ընդգրկված էր նաև նույն դպրոցի առաջին հոգաբարձուների կազմում. «Ուսումնարանի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ 1877 թ. սեպտեմբերի 22-ին և գրաւեց աշակերտուհիների մեծ բազմութիւն: Հոգաբարձական կազմի մէջ, փոքր ժամանակ անցնելուց յետոյ, մի փոփոխութիւն կատարուեցաւ, այն է՝ իշխ. Եազոն Թումանեանը վախճանուեց և նրան

---

432. **Туманов Г. М.**, Характеристика и воспоминания, книга первая, Тифлис, 1913, էջ 48:

433. **Պռոշեանց Պ.**, Հայոց թատրոնի սկզբնաւորութիւնը Թիֆլիսում, «Թատրոն», N 1, Թիֆլիս, 1893, էջ 49:

434. Նույն տեղում:

435. Նշվ. հոդվածը, էջ 62:

436. «Մեղու Հայաստանի», 1883, N 97: Նաև՝ "Словарь Кавказских деятелей", Тифлис, 1890, էջ 71:

437. «Մեղու Հայաստանի», նույն տեղում: 1874 թ. Յազոն Թումանյանցի վերստին քաղաքագլուխ ընտրվելու մասին տե՛ս նաև "Тифлисский листок", Тифлис, 1909, N 298, էջ 3:

438. "Словарь ...", նույն տեղում:

439. "Кавказский календарь на 1892 г.", Тифлис, 1891, էջ 33 (բնագրում՝ "...при нем введено в Тифл. гор. самоуправл. и положено основанье михайл. ремесл. училищу..."):

440. «Մշակ», 1872, N 10, էջ 3:

441. "Кавказский календарь на 1892 г.", Тифлис, 1891, էջ 34:

442. "Известия Тифлисской Городской Думы", N 4, Тифлис, 1911, էջ 18: Մի հաղորդման համաձայն հրաժարականի պատճառը առողջական վիճակն էր. «... միայն անձնական տկարութիւնը ստիպեց նրան հրաժարուելու» («Մեղու Հայաստանի», 1883, N 97):

443. «Մշակ», 1875, N 49, էջ 1:

444. «Հովիւ», 1906, N 31, էջ 491:

Քաղաքագլուխ Յազոն Թումանյանցի տունը Սոլոլակում, Նագորնայա (Լերմոնտովի) և Սերգեևսկայա (այժմ՝ Մաշաբելի) փողոցների անկյունում, N 10: Յ. Թումանյանցի մահից հետո տունն անցել է Ծովյաններին, իսկ 1910-ական թթ. պատկանել է Ազարյաններին (լուս. Ս. Դարչինյանի)

փոխարինեց Աղեքսանդր Ստեփանեան Խատիսեանը...»[445]:

Հայտնի է, որ 1880 թ. հունիսի 16-ին կայացած արհեստավորաց ակումբի անդամների ընդհանուր ժողովը Յ. Թումանյանին ընտրել էր այդ ակումբի ավագ[446]:

Կյանքի վերջին տարիներին Յ. Թումանյանցը զբաղեցրել է արքունի դռան «камергер» պաշտոնը:

Վախճանվել է 56 տարեկան հասակում և թաղվել Սբ. Կարապետ եկեղեցու բակում գտնվող Թումանյանցների տոհմական գերեզմանատանը: Սպիտակ մարմարից կերտված գերեզմանաքարը ոչնչացվել է 1981 թ. Սբ. Կարապետ եկեղեցու «վերանորոգման» ժամանակ[447]:

1883 թ. Թիֆլիսի Քաղաքային Խորհրդի հանձնաժողովի որոշմամբ վճռվել էր «Միքայելյան» արհեստավորաց ուսումնարանի դահլիճում դնել Յ. Թումանյանի դիմանկարը, իսկ պատին կախել մարմարե հուշատախտակ՝ հետևյալ գրությամբ. «Իշխանին՝ Յ. Դ. Թումանովին՝ նախկին քաղաքագլխին (1870-1874 թթ.) արհեստավորական ուսում-

Սբ. Կարապետ եկեղեցին, որի բակում մինչև 1981 թ պահպանվում էր Թումանյանցների տոհմական գերեզմանոցը

նարանի հիմնադրին. Թիֆլիսի քաղաքային դումա, 1883 թ.»[448]:

Հայտնի է, որ 1884 թ. Յ. Թումանյանցի այրին ամուսնու հիշատակին քաղաքի կրթական ծախսերը հոգալու նպատակով նվիրել է 1000 ռուբլի[449]:

1870-1880-ական թթ. Յազոն Թումանյանցի թիֆլիսյան բնակարանի հասցեն էր՝ Նագորնայա փողոց, Էրիվանցովի N 8 տուն (Շահպարոնյանցի դեղատան հարևանությամբ)[450]:

445. «Հովիւ», 1906, N 33, էջ 523:
446. "Тифлисские Объявления", 1880, N 124, էջ 1:
447. «Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները», Երևան, 1998, էջ 29:
448. "Новое Обозрение", 1884, 14.03:
449. Նույն տեղում:
450. "Кавказский Календарь на 1874 г.", Тифлис, 1873, էջ 190: Տե՛ս նաև նշվ. աշխ., 1879 թ. հրատարակությունը, էջ 157, նաև նշվ. աշխ, 1881 թ. հրատարակությունը, էջ 215:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1875-1917 թթ.)

ԴՄԻՏՐԻ ԻՎԱՆԻ ՂԻՓԻԱՆԻ

Դ. Ղիփիանին ծնվել է 1814 թ. Գորու գավառի Մերեթի գյուղում: Հայրը, որին Դմիտրին կորցնում է 3 տարեկան հասակում, ազնվական էր և Մերեթ էր փոխադրվել Աբաշիից (Արևմտյան Վրաստան)[451]: Ղիփիանիների տոհմական կալվածքը գտնվում էր Բորժոմի կիրճում (Քվիշխեթի գյուղը):

1830-1859 թթ. զբաղեցրել է տարբեր քաղաքացիական պաշտոններ: Ավագ եղբոր՝ Քայխոսրոյի հոգածությամբ փոխադրվում է Թիֆլիս և ընդունվում 8-ամյա հոգևոր ուսումնարան, սակայն ընդամենը 2 տարի անց ուսումնառությունը շարունակում է Ազնվականական ուսումնարանում կամ դասական առաջին գիմնազիայում. «...Թիֆլիսի Ազնվականական ուսումնարանում գիտական դասընթացի ավարտից հետո, 1830 թ-ից դասավանդել է Թիֆլիսի գիմնազիայում, 1834 թ. ծառայության է անցել Վոլոգդայի նահանգային կառավարման գրասենյակային աստիճանավորների կազմում, որտեղ էլ 1835 թ. ընտրվել է քարտուղար: Նույն թվականին նշանակվել է նահանգապետի քաղաքացիական գրասենյակի կառավարչի պաշտոնակատար, 1837 թ. գրանցվել է Վրաստանի Գերագույն կառավարման գործադիր շահագործման հաստիքացուցակում և գործուղվել Վրաստանի նահանգապետի քաղաքացիական գրասենյակի տրամադրության տակ: Նույն թվականին նշանակվել է Վրաստանի նահանգապետի քաղաքացիական գրասենյակին կից հատուկ հանձնարարությունների բաժնի աստիճանավոր, 1838-ին՝ Վրաստանի նահանգապետի քաղաքացիական գրասենյակի քարտուղար և “Закавказский Вестник”-ի խմբագիր, սակայն կայսերական կառավարչի խնդրագրով մնացել է նույն պաշտոնում որպես քարտուղար: 1839 թ. փոխադրվել է Վրաստանի գլխավոր հրամանատարի գրասենյակ, 1841 թ-ին նրան շնորհվել է տիտղոսային խորհրդականի, 1843 թ-ին՝ արտգործերի խորհրդականի թեկնածուի կոչում, իսկ 1845 թ-ին նշանակվել է Գլխավոր վարչության գրասենյակի տնօրենի պաշտոնակատար: Այս վարչության լուծարվելուց հետո՝ 1846 թ-ին, դարձել է Գլխավոր վարչության խորհրդի գործերի կառավարիչ: Նույն թվականին նրան տրվել է առևտրական խորհրդականի, 1854 թ-ին՝ ավագ խորհրդականի կոչում, (1848-ից աշխատում էր ավագության պաշտոնով): Նույն՝ 1854 թ-ին հաստատվել է ավագ խորհրդականի պաշտոնում, 1856 թ-ին՝ Կովկասյան փոխարքայի գրասենյակում՝ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (փետրվարի 20-ից մայիսի 22): 1857 թ. նրան շնորհվել է Սբ. Ստանիսլավի առաջին աստիճանի շքանշան, նշանակվել է Անդրկովկասյան երկրամասի Գլխավոր Վարչության խորհրդի անդամ, 1859 թ-ին՝ Կովկասյան փոխարքայի խորհրդի անդամ: 1860 թ-ին շնորհվել է Սբ. Աննայի առաջին աստիճանի շքանշան, իսկ 1862 թ-ից անցել է թոշակի: Ավելի քան 10 տարի եղել է Թիֆլիսի նահանգային գիմնազիայի պատվավոր հոգաբարձու: 1864 թ-ին շնորհվել է Սբ. Աննայի առաջին աստիճանի շքանշան՝ թագով, 1866 թ-ին՝ Սբ. Վլադիմիրի 2-րդ աստիճանի շքանշան: Եղել է Թիֆլիսի նահանգի ազնվականության առաջնորդը»[452]: Վերոհիշյալին

451. «მოგზაური», 1999, N 2, էջ 8:

452. Акты собранные Кавказскою Археографическою коммиссиею, том X, Тифлис 1885, էջ XXII (բնագրում՝ “по окончания курса наук в Тифлисском Благородном училище, поступил к 1830 г. учителем в Тифлисскую гимназию; в 1834 - определен в число канцелярских чиновников губернского правления в Вологде, где в 1835 г. определен секретарем; в том же году назначен и. д. правителя канцелярии гражданского губернатора; в 1837 году зачислен в штат Исполнительной Эксплуатации Верховного Грузинского Правления и прикомандирован к канцелярии Грузинского гражданского губернатора; в том же году назначен чиновником особых поручений при Грузинском гражданском губернаторе; в 1838 г. - секретарем к Грузинскому гражданскому губернатору и редактором “Закавказского Вестника”, но, по ходатайству управлявшаго Империей, оставлен по прежнему при нем секретарем; в 1839 г. переведен в Канцелярию главноуправляющаго в Грузии; в 1841 г. произведен в тит. с., в 1843 - в к. а. и н. с.; в 1845 - назначен и. д. директора Канцелярии Главнаго Управления; по упразднении сей Канцелярии переименован в правители дел Совета Главнаго упрваления (в 1846 г.); в том же году произведен в к.с.; в 1854 г, в с. с., со старшинством с 1848 г.; в том же 1854 - в д. с. с.; в 1856 - назначен временно и. д. директора Канцелярии наместника Кавказскаго (с 20-го февраля по 22-е мая); в 1857

պետք է միայն ավելացնել, որ Դ. Ղիփիանին 1845 թ. ամուսնացել է գեն. Գիորգի Ճիլաշվիլու դստեր՝ Նինոյի հետ: Ղրիմի պատերազմի ժամանակ գեն. Բեհբուդովի կողմից նշանակվել է ռազմական գրասենյակի պետ: 1864 թ. ընտրվել է «Ազնվականական միության» նախագահ և հիմնել գրագիտություն տարածող դպրոց[453]:

Դ. Ղիփիանին հասարակական ակտիվ գործիչ էր: 1860-ական թթ. նա զգալի դեր է խաղացել ճորտերի ազատության գաղափարի հաղթանակի գործում[454]: Նրա մտահղացմամբ և ջանքերով հիմնադրվել է «Թիֆլիսի ազնվականական բանկ»-ը[455]: Հասել է կարգային գեներալի աստիճանի[456]: Թղթակցել է Ն. Ավալիշվիլու խմբագրությամբ լույս տեսնող (1869-1879) «Մնաթոբի» ամսագրին (հատկապես հանդեսի պատմական և գրական բաժնում)[457]: Քաղաքագլուխ է ընտրվել 1875 թ. դեկտեմբերի 14-ին և պաշտոնավարել մինչև 1879 թ. ապրիլի 9-ը[458]: Դ. Ղիփիանու պաշտոնավարության տարիներին ավարտվում է քաղաքային ինքնավարության համակարգի վերահաստիքավորման գործընթացը[459]:

1876 թ. մարտին անցկացվում է միօրյա մարդահամար[460]:

Համաձայն իր հրաժարականի՝ թողնում է պաշտոնը[461] և հաստատվելով Քվիշխեթի գյուղում՝ զբաղվում է քերականության հարցերով և թարգմանչությամբ (Շեքսպիր, Շեյլոկ):

1885-1886 թթ. Քութայիսի նահանգի ազնվականության ներկայացուցիչն էր: Սպանվել է 1887 թ. Ստավրոպոլում կողոպուտի պատճառով[462]:

Հանգուցյալի դին փոխադրվել է Թիֆլիս և ամփոփվել վրաց Սբ. Դավիթ եկեղեցու բակում: Տարիներ անց՝ 1899 թ., նրա գերեզմանի վրա հուշակոթող է կանգնեցվել. «Կիրակի, հոկտեմբերի 24-ին, Թիֆլիսի ս. Դավիթ եկեղեցու գաւթում օրհնվեց Դմիտրի Կիպիանու գերեզմանի վրա դրած կիսարձանը: Հանդէսին ներկայ էին Թիֆլիս քաղաքի ներկայացուցիչները, մամուլի ներկայացուցիչները, հանգուցեալի ընտանիքի անդամները և զանազան տեղերից եկած՝ յարգողներ: Պատարագ և հոգեհանգիստ կատարեցին Գօրու եպիսկոպոս Լէօնիդ և Ալավերդի եպիսկոպոս Կերիօն: Գերեզմանի վրա ճառ խօսեց Բատիեվ: Պսակներ դրվեցին Թիֆլիս քաղաքի, վրաց գրագիտական ընկերութեան, վրաց դրամատիկական ընկերութեան, վրաց ազնուականութեան բանկի, «Իվերիա» լրագրի, հանգուցեալի ընտանիքի կողմից...»[463]:

Դ. Ղիփիանին հեղինակ է գրական մի շարք գործերի: Նրա գրչին են պատկանում Շեքսպիրի և Մոլիերի պիեսների թարգմանությունները (բնագրից)[464]:

Դ. Ղիփիանին Թիֆլիսում բնակվել է մի քանի հասցեներով, նախ՝ Գրաֆսկու փողոցի վրա գտնը-

---

г. пожалован орден св. Станислава 1-й ст.; назначен членом Совета Главнаго Управленяи Закавказскаго края; в 1859 г. - членом Совета наместника Кавказскаго; в 1860 - пожалован орден св. Анны 1-й ст.; в 1862 г. уволен в отставку. Был почетным попечителем Тифлисской губернской гимназии (более 10-ти лет); в 1864 г. пожалован опред св. Анны 1-й ст. с короною; в 1866 - св. Владимира 2-й ст.; был предводителем дворянства Тифлисской губернии...").

453. «მოგზაური», 1999, N 2, էջ 8-9:

454. «Մշակ», 1899, N 198, էջ 2:

455. "Словарь Кавказских деятелей", Тифлис, 1890, էջ 42-43:

456. **Туманов Г. М.**, Характеристики и воспоминания, книга первая, Тифлис, 1913, էջ 48:

457. **Хаханов А. С.**, Два эскиза из культурной жизни грузин, СПБ, 1905, էջ 14:

458. "Известия Тифлисской Городской Думы", N 4, Тифлис, 1911, էջ 18:

459. "Кавказское Слово", 1914, N 71, էջ 2:

460. "Кавказский календарь на 1892 г.", Тифлис, 1891, էջ 34:

461. «Մուրճ», 1891, էջ 528: Ի դեպ Դ. Ղիփիանու կենսագիրները, ժամանակին անդրադառնալով հրաժարականի փաստին, նշել են. «...1875-79 թթ. Թիֆլիսի քաղաքագլուխն էր, որի պաշտոնը նա թողել էր մի միջադեպի պատճառով, որի էությունը կայանում էր նրանում, թե հայերը ո՞ր լեզվով պետք է հավատարմության երդում տան: Նա պնդում էր ռուսերեն կամ վրացերեն լեզուների վրա, ինչպես իրեն հասկանալի բարբառի: Այդ միջադեպի մասին չի հիշվում Դ. Ի. Ղիփիանու մահվանից հետո ամսագրերում, թերթերում, առանձին հրատարակություններում լույս տեսած կենսագրական բազմաթիվ հոդվածներում, բացառությամբ «Մոամբե» ամսագրի, որտեղ իրոք խոսվում է այդ մասին և որտեղից էլ Խախանովը փոխառել է Ղիփիանու մասին իր տեղեկությունները: Դ. Ի. Ղիփիանու պաշտոնակից անձինք չեն հիշում նման միջադեպ: Դա ընդհանրապես անհավանական է, եթե հաշվի առնենք Դ. Ի.-ի կրոնական ու ազգային համբերատարությունը:

Սակայն, եթե անգամ ենթադրենք, որ այդ միջադեպը իրականում եղել է, ապա ամեն դեպքում այն չէր կարող պատճառ հանդիսանալ Դ. Ի. Ղիփիանու՝ նոր ժամկետով չընտրվելու համար: Բանն այն է, որ 1878 թ. վերջերին Թիֆլիսի Դումայի կազմը զգալիորեն նորացել էր: Եթե նախկինում մեծ դեր էին խաղում աստիճանավորները, ապա նոր կազմում գերակշռում էին երիտասարդ առևտրականները և ազատ մասնագիտությունների տեր անձինք...» (բնագրում՝ "...в 1875-79 гг. был тифлисским городским головой, должность котораго он покинул из-за инцидента, на каком языке должен присягать армянин: он настаивал на русском или грузинском языке, как ему понятном диалекте. О том инциденте не упоминается в многочисленных биографических очерках, появившихся после смерти Д. И. Кипиани, в журналах, газетах и отдельных изданиях, за исключением журнала "Моамбе", где действительно говорилось об этом и откуда заимствован Хаханов свой сведения о Кипиани. Сослуживцы Д. И. Кипиани не помнять указаннаго инцидента. Он вообще маловероятен, если принять во внимание религиозную и национальную терпимость Д.И. Но если даже предположить, что инцидент этот в действительности имел место, то во всяком случае он не был причиной неизбрания Д. И. Кипиани на новый срок. Дело в том, что в конце 1878 г. состав тифлисской думы значительно обновился. Если прежде в ней играли большую роль чиновники, то в новом составе преобладали молодые коммерсанты и представители свободных профессий...") (**Туманов Г. М.**, նշվ. աշխ., էջ 98-99):

462. "Тифлисский листок", 1887, N 238:

463. «Մշակ», 1899, N 198, էջ 2:

464. "Словарь...", նույն տեղում: Տե՛ս նաև "Тифлисский листок", 1887, N 238:

Մամա Դավիթ եկեղեցին, որտեղ հանգչում է քաղաքագլուխ Դ. Ղիփիանին (լուս. Կ. Ասատրյանի)

Քաղաքագլուխ Դ. Ղիփիանին և Մամա Դավիթ եկեղեցու բակում հանգուցյալի գերեզմանի վրա կանգնեցված հուշակոթողը

վող սեփական տանը (1845)[465], ապա՝ Կոմենդանտսկու փողոցում գտնվող Շիոնի տանը (1854)[466], հետո՝ Կուկի թաղամասում՝ Ելիզավետինսկայա փողոցում գտնվող Մարկոսովի տանը (1859)[467] և վերջապես Արսենալի փողոցում գտնվող Փուղինովի տանը[468]:

ԱՆՏՈՆ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆՑ (ԿՈՐԳԱՆՈՎ)

Ա. Ղորղանյանցը ծնվել է 1838 թ. մայիսի 10-ին, Արցախի Գյուլիստան գավառի Ղարաչինար գյուղում: Ծնողներն էին «օտսավնոյ պոտպորուչիկ» Սողոմոն Փրիդոնյան Ղորղանյանցն ու տփղիսեցի Մարիամ Նիկողոսյան Քեղխուդյանցը: Մկրտությունը կատարվել է նույն գյուղի Սբ. Նշան եկեղեցում, Հարություն քահանա Աստվածատրյանցի ձեռքով մայիսի 18-ին[469]:

Ղարաչինար գյուղի Սբ. Նշան եկեղեցին, որտեղ 1838 թ. մայիսի 18-ին կատարվել էր Ա. Ղորղանյանցի մկրտությունը

Ավարտելով զինվորական դպրոցը՝ ղեկավարել է սակրավորների գումարտակը: Հասել է կապիտանի աստիճանի, ապա թողել ռազմական ոլորտը և ծառայության անցել քաղաքացիական բնագավառում. «Քաղաքային, հասարակական, բանկային ասպարէզներում ստանձնած պաշտօնները կատարում է հմտութեամբ և բարեխղճաբար...»[470]: 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կայսր Միխայիլ Նիկոլաևիչի կարգադրությամբ Ա. Ղորղանյանցը ստանձնում է բանակին պաշար մատակարարելու գործը, որը. «...վստահութիւնն արդարացնում է լիուլի և ստանում գոհականութիւն...»[471]:

Առաջադրելով քաղաքագլուխ՝ քաղաքային իրավասուներն ակնկալում էին, որ Ա. Ղորղանյանցը նվիրվածությամբ և պատասխանատվությամբ կվարի քաղաքային գործերը և մասնավորապես առաջ կմղի տնտեսական խնդիրները. «Իրավասուների նոր կազմը ցանկանում էր նորացնել քաղաքային ինքնակառավարման կազմը, և գործը սկսվեց նրանից, որ Դ. Ի. Ղիփիանու փոխարեն քաղաքագլուխ ընտրվեց Անտ. Սող. Կորգանովը, որն այդ ժամանակ խոշոր կապալներ ուներ: Ենթադրվում էր, որ տնտեսական հարցերը նա ավելի եռանդուն կլուծի, քան իր նախորդը...»[472]: 1879 թ. հունվարի 28-ին 47 կողմ և 17 դեմ[473] ձայներով Ա. Ղորղանյանցը քաղաքագլուխ է ընտրվում, սակայն 1879 թ. փետրվարի 15-ին առանց պաշտոնը ստանձնելու հրաժարական է տալիս[474]:

---

465. “Кавказский Календарь на 1846 г.”, Тифлис, 1845, էջ 237:
466. “Кавказский Календарь на 1855 г.”, Тифлис, 1854, էջ 746:
467. “Кавказский Календарь на 1860 г.”, Тифлис, 1859, էջ 80:
468. “Кавказский Календарь на 1874 г.”, Тифлис, 1873, էջ 190: Տե՛ս նաև նշված աշխ., 1879 թ. հրատարակությունը, էջ 156:
469. ՎՀՊՊԿԱ, ֆ. 213, ց. 1, գ. 2001, թ. 49:
470. «Տարազ», 1902, N 2, էջ 7:
471. Նույն տեղում:
472. **Туманов Г. М.**, Характеристики и воспоминания, книга первая, Тифлис, 1913, էջ 99 (բնագրում՝ “Новый состав гласных пожелал обновить весь состав городского самоуправления, и дело началось с того, что вместо Д. И. Кипиани в городские головы был избран Ант. Сол. Корганов, имевший в то время крупные подряды. Предполагалось, что он хозяйственные вопросы двинет вперед энергичнее, чем его предшественник...)”:
473. «Մշակ», 1879, N 13, էջ 2:
474. “Известия Тифлисской Городской Думы”, N 4, Тифлис, 1911, էջ 18:

Քաղաքագլուխ Ա. Ս. Ղորղանյանցը

Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցին (լուս. ԺԹ դարի վերջ), որի - բակի փոքրիկ գերեզմանատանը հանգչում էր Ա. Ղորղանյանցը (թե՛ եկեղեցին և թե՛ Ա. Ղորղանյանցի

1881 թ. Ղորղանյանցը Փիթոևի և Քրիդոնյանցի հետ միասին ապագա համալսարանի ուսանողների թոշակաղրամների հաշվին քաղաքային դրամարկղ է մուծել 10.000 ռուբ[475]:

Կյանքի վերջին տարիներին Ա. Ղորղանյանցը զբաղվել է բանկային գործերով. «...1894 թ. Թիֆ. Քաղաք. Վարկի ընկ. տագնապալից օրերին, ընտրուում է նախագահ այդ ընկերութեան և իր հեզ բնաւորութեամբ ու խելացի ղեկավարութեամբ բորբոքած կրքերը հանգստացնում է, կարգի բերում ընկեր. խճճուած գործերը և բարձրացնում նրա վարկը: Այդ պաշտօնի մէջ էլ նա վախճանուեց...»[476]: 1898-1900 թթ. վերաբերող Թիֆլիսի կալվածատեր ազնվականների մի ցուցակից երևում է, որ Ղորղանյանցին ու վերջինիս եղբորը՝ Ադամին էին պատկանում Թիֆլիսի գավառում գտնվող Մեծ Էնագեթ և Գոլտատի գյուղերը՝ 427 դեսյատին հողատարածքով[477]:

Վախճանվել է 1902 թ. հունվարի 13-ին և թաղվել Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցու բակում[478]: Ա. Ղորղանյանցի գերեզմանը հիշյալ եկեղեցու հետ միասին ոչնչացվել է 1938 թ.:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԱՏԻՆՅԱՆՑ

Ա. Ս. Մատինյանցը ծնվել է 1843 թ. Թիֆլիսում: Տեղի 1-ին գիմնազիայի դասընթացներն ավարտելուց հետո՝ 1862 թ. ընդունվել է Մոսկվայի իրավաբանական համալսարանը և 1866 թ. ավարտել, բայց ևս 1 տարի էլ Մոսկվայի շրջանային դատախազի մոտ անցել է գործնական փորձաշրջան: 1867 թ. վերջին գործուղվել է Քութայիսի նահանգ՝ Քութայիսի և Շորապանի գավառային գործերը կարգի բերելու առաջադրանքով:

1868 թ. մտցված դատական ռեֆորմից հետո Ա. Մատինյանցը նշանակվել է Թիֆլիսի 2-րդ քաղաքամասի հաշտարար դատավորի օգնական, որտեղ 2 տարի աշխատել է որպես դատաքննիչ[479]: Քաղաքային խորհրդի (դումայի) պատգամավոր (իրավասու, ձայնավոր) է ընտրվել 1874 թ. վերջին և ամբողջ 22 տարի (մինչև 1897 թ.) պաշտոնավարել[480]: 1876 թ. դեկտեմբերի 20-ին ընտրվել է քաղաքային վարչության անդամ, իսկ 1879 թ. ապրիլի 4-ին հակառակ վրաց-ռուսական սուր ընդդիմությանը՝ քաղաքագլուխ է ընտրվել: Կատարված ընտրությունների

475. “Тифлисский листок”, 1902, N 12:
476. «Տարազ», 1902, N 2, էջ 7:
477. ՎՀՊՊԿԱ, ֆ. 214, ց. 1, գ. 3413, թ. 24:
478. «Մշակ», 1902, N 9:
479. «Տարազ», 1902, N 2, էջ 7:
480. “Известия Тифлисской Городской Думы”, N 8, Тифлис, 1909, էջ 3: «Մշակ», 1902, N 9:

Քաղաքագլուխ Ա. Ս. Մատինյանցը

արտառոց ընթացքի (քաղաքային դուման ստիպված էր քվեարկությունն իրականացնել մի քանի անգամ) առթիվ նշվել է. «Ինչ պատահեց այդ 1879 թականին: Քաղաքագլուխ Կիպիանին հրաժարեց իւր պաշտօնից: Դուման հաւաքեց նոր քաղաքագլուխ ընտրելու: Չաջողուեց: Երկրորդ անգամ հաւաքուեցին՝ չաջողուեց: Չայների մեծամասնութիւնը ապահոված էր պ. Անդ. Ղորղանեանին: Հրաժարուեց: Վերջապէս, վերջնական ընտրութիւններում ձայների առաւելութիւնը ստացաւ կանդիդատներից մեկը, որը առաջարկած էր միմիայն մի ձայնով: Պր. Ալեքսանդր Մատինեանցը, յաղթեց նա, ում մասին ամենից քիչ էին մտածել...»[481]: Ահա այս «պատահականորեն» ընտրված քաղաքագլխի պաշտոնավարման 12 տարիները բացառիկ արգասաբեր եղան քաղաքի համար. «Շուտով քաղաքային կանոնադրության ընդունումից հետո Թիֆլիսում 1870 թ. ասպարեզ եկավ մտավորական երիտասարդությունը, որը ձգտում էր անմիջական մասնակցություն ունենալ քաղաքային գործերին: Այդ խմբում առանձնանում էին Ա. Ս. Մատինովը, Պ. Ա. Իզմայլովը և Ա. Ա. Թամամշևը, որոնք կարողացան ոչ միայն կազմել գործողությունների որոշակի ծրագիր, այլև դրանք հաջողությամբ իրականացնել: Այդ ծրագիրը ներառում էր քաղաքի բարեկարգումն ու նրա ամենաանհրաժեշտ պահանջների իրագործումը: Այդտեղ առաջնահերթ դերը պատկանում էր շինարարությանը, որն է՝ Վերիյսկու և Մնացականովների կամուրջների, ջրմուղի, քաղաքապետարանի և քաղաքային կրպակների կառուցումը, տրամվայների կարգավորումը և այլն»[482]:

Արդեն 1880 թ. աշնանը քաղաքագլխի հոգածությամբ տեղի է ունենում «Արհեստավորաց» ուսումնարանի հանդիսավոր բացումը. «Քաղաքագլուխ Ա. Ս. Մատինովի գլխավորությամբ 1880 թ. սեպտեմբերի 28-ին տեղի ունեցավ արհեստավորաց ուսումնարանի և նույն շենքում ժամանակավորապես տեղավորված Բարյաթինսկու անվան տարրական դպրոցի հանդիսավոր բացումը»[483]: Հարկ է նշել, որ արհեստավորաց դպրոց հիմնելու գաղափարը դեռևս 1873 թ. նախաձեռնել էր քաղաքագլուխ Յ. Թումանովը, որն այդ նպատակի համար հանգանակություն էր բացել, և նրան մինչև իսկ հաջողվել էր մի մասնաշենք կառուցել, սակայն քաղաքի ինքնակառավարման և կրթական հաստատության ղեկավարության միջև առկա տարաձայնությունների հետևանքով դպրոցի բացումը ձգձգվել էր[484]: Նույն՝ 1880 թ. Մատինյանցը հիմք է դնում կրթական ոլորտի ևս մեկ ձեռնարկման, որն է՝ 10 տարվա ընթացքում (յուրաքանչյուր տարի 10000 ռուբլի տնտեսելով) միջոցներ կուտակել Թիֆլիսում համալսարան հիմնելու համար[485]:

Քաղաքի բարգավաճումը խթանվում է հատկապես նյութական ներդրումների շնորհիվ. «...նրանց օրոք քաղաքն առաջին անգամ կատարեց մի շարք խոշոր փոխառություններ»[486]:

Թիֆլիսի քաղաքագլուխների պատմության մեջ Ա. Մատինյանցն այն եզակի անձն է, որն անընդմեջ վերընտրվել է միևնույն պաշտոնում չորս անգամ. «Մատինով նորից ընտրվեց Թիֆլիսի քաղաքագլուխ առաջիկայ 1891-1894 քառամեակի համար: ...Ահա արդէն չորրորդ քառամէակն է, որ Մատինով ընտրվում է Թիֆլիսի քաղաքագլուխ»[487]: Նախ

481. «Մուրճ», 1891, էջ 529: "Новое Обозрение", 1891, N 2427, էջ 1: Տես նաև՝ "Словарь Кавказских деятелей" (приложение к справочной книге старожила "Кавказ", N 1), Тифлис, 1890, էջ 50:

482. **Туманов Г. М.**, Характеристики и воспоминания, книга вторая, Тифлис, 1905, էջ 108-109 (բնագրում՝ "Вскоре после введения в Тифлисе городового положения 1870 г., на сцену выступила группа интеллигентной молодежи, которая желала принять ближайшее участие в городских делах. В группе этой особенно выделялись А. С. Матинов, П. А. Измайлов и А. А. Тамамшев, которые сумели не только составить определенную программу действия, но и успешно провести ее в жизнь. Программа эта имела ввиду внешнее благоустройство города и элементарныя его потребности. Тут играло первую роль строительство – постройка Верийского и Мнацакановского мостов, водопровод, постройка городского дома и городских лавок, устройство трамвая и пр."):

483. **Кобяков Ю.**, К истории Тифлисскаго Городского Самоуправления. Михайловское Ремесленное училище, "Известия Тифлисской Городской Думы", Тифлис, 1914, N 5-6, էջ 33 (բնագրում՝ "28 сентября 1880 г. при городском голове А. С. Матинове состоялось торжественное открытие ремесленного училища и временно помещенной в том же здании начальной школы имени кн. Барятинскаго"):

484. "Тифлисский Листок", 1909, N 220 (բնագրում՝ "...при них-же впервые город совершил ряд крупн. займов"):

485. Նույն տեղում:

486. "Словарь ... ", նույն տեղում:

487. «Մշակ», 1891, N 5, էջ 1 (15 հունվարի):

Քաղաքագլուխ Ա. Ս. Մատինյանցի հանձնարարականով 1880 թ.նախագծված Քաղաքային Խորհրդի (դուման) շենքը

ընտրվել է 1879 թ. մարտի 11-ին (31 կողմ, 23 դեմ), 2-րդ անգամ՝ 1883 թ. հունվարի 23-ին (47 կողմ, 21 դեմ), 3-րդ անգամ՝ 1887 թ. հունվարի 4-ին (55 կողմ, 9 դեմ) և 4-րդ անգամ՝ 1891 թ. հունվարի 13-ին[488]: Սակայն, վերջին քառամյակը Ա. Մատինյացն այլևս չպաշտոնավարեց, այլ՝ 1891 թ. մարտի 1-ին իր հրաժարականը ներկայացրեց Թիֆլիսի նահանգապետին[489]. «Այդպես 12 տարի Մ.-ն աշխատեց քաղաքագլխի պաշտոնում, սակայն 4-րդ քառամյակին քաղաքագլուխ ընտրվելով ձայների ոչ նշանակալի մեծամասնությամբ՝ նախընտրեց ինքնակամ հրաժարվել: Այդ ժամանակ դումայում հասունանում էր վրաց-ռուսական ընդդիմադրությունը և, դյուրագրգիռ խառնվածքով Մ.-ն դեռևս իրավասուների ընտրությունների ժամանակ արդեն լուրջ ընդհարումներ էր ունեցել...»[490]: Այսպիսով, 1891 թ. մարտին նաև 4-րդ անգամ քաղաքագլուխ վերընտրված Ա. Մատինյանցը պաշտոնավարեց միայն շուրջ երկու ամիս և տվեց իր հրաժարականը: Հրաժարականի պատճառների վերաբերյալ ժամանակի մամուլը նշել է. «...պ. Մատինեանցը այս անգամ իւր դէմ զինուած տեսաւ մի ընդդիմադիր կուսակցութիւն, որը չը պիտի թոյլ տար նրան հանգիստ կենալու: Այդ ընդդիմադիր կուսակցութիւնը, չէր պարզում ոչ մի ծրագիր, եթէ ծրագիր չը համարենք «վարչութեան անդամների փոփոխութիւնը», –обновление– մի խօսք որ նշանաբան էր ծառայում ընդիմութեան համար: Այդ խօսքը արդարև կունեար մի նշանակութիւն և իւր մէջ կամփոփէր մի ծրագիր, եթէ միայն պարզորոշ յայտնի լինէին օպոզիցիայի կանդիդատների անունները և եթէ այդ նոր անունների հետ կապած լինէր մի անցած փառաւոր կամ գոնէ որոշ ուղղութեամբ գործունէութիւն: Այդ բոլորից ոչինչ չընկար: Օպօզիցիան պէտք է վրէժխնդիր լինէր իւր առաջւայ կանդիդատի – Զուբալովի – անաջողութեան համար: Հրաժարուեց ընտրուած Մատինեանը...»[491]: Ի դեպ, 1900-ական թթ. սկզբին քաղաքագլխի հերթական ընտրության ժամանակ կրկին առաջադրվել էր Մատինյանցի թեկնածությունը, սակայն նա կտրականապես մերժել էր[492]:

488. “Известия Тифлисской Городской Думы”, N 4, Тифлис, 1911, էջ 18:

489. «Նոր-Դար», 1891, N 29, էջ 1: Տե՛ս նաև «Մշակ», 1891, N 22, էջ 1: «Մուրճ», 1891, էջ 528:

490. **Туманов Г. М.**, Характеристики и воспоминания, книга первая, Тифлис, 1913, էջ 49 (բնագրում՝ “Так проработал М. на посту головы 12 лет, но на 4-е четырехлетие он прошел в головы незначительным большинством голосов и поэтому предпочел совсем уйти. Тогда назревала в думе грузино-русская оппозиция и М., вспыльчивого темперамента, уже имел с нею острыя столкновения еще на выборах гласных ...”): Տե՛ս նաև “Новое Обозрение”, 1891, N 2427, էջ 1:

491. «Մուրճ», 1891, էջ 528:

492. “Тифлисский Листок”, 1909, N 220:

Թիֆլիսը 1880-ական թթ.

Մատինյանց քաղաքագլխի դերը քաղաքի համար հիրավի նշանակալի էր. «Քաղաքը նրան է պարտական իր կատարած շատ ու շատ հանրօգուտ գործերի համար, ինչպիսիք են՝ ջրի (վօդոպրօվօդի), կամուրջների, սպանդանոցի, ձիաքարշի, հեռախօսի (տէլէփօն), քաղաքային տան կառուցման և շատ ուրիշ ձեռնարկութիւնների համար»[493]:

Հայտնի է, որ Մատինյանցի պաշտոնավարման 12 տարիների ընթացքում քաղաքի բյուջեից կրթության ոլորտին տրամադրված գումարները զրոյից հասել էին 357 %-ի (1878 թ. ոչնչի դիմաց՝ 1890 թ. հատկացվել է 48000 ռուբ.), առողջապահությանը հատկացվել էր 51 %, իսկ քաղաքային ինքնակառավարման անձնակազմի ծախսերին՝ միայն 7 %[494]:

Առողջապահության բնագավառում կարևոր էին Մատինյանցի նախաձեռնությամբ և աջակցությամբ կառուցված երկու հիվանդանոցները Հավլաբար և Խարփուխ թաղամասերում[495]:

Թիֆլիսը Մատինյանցին է պարտական Երևանյան հրապարակում գտնվող «Քաղաքային տան» գոյությամբ, որը քաղաքագլխի հանձնարարականով նախագծվեց 1880 թ.[496]:

Մատինյանցի պաշտոնավարության տարիներին Թիֆլիսը համալրվել է բազմաթիվ հասարակական, կրթական, արդյունաբերական և տնտեսական նշանակության հաստատություններով: Դրանցից են՝ 1882 թ. հունիսի 2-ին Ալեքսանդր Բ-ի հիշատակին բացված մանկատունը[497], 1883 թ. փետրվարի 25-ին գործարկված ձիաքարշ երկաթուղու առաջին հատվածը[498], 1886 թ. մայիսի 1-ին բացված երկրորդ կարգի այգեգործական դպրոցը[499], 1887 թ. օգոստոսին շահագործման հանձնված քաղաքի ջրմուղը[500], 1888 թ. ապրիլի 17-ին Նավթլուղ թաղամասում բացված մանկատունը[501], 1888 թ. մայիսի 29-ին դատապարտված ծնողներ ունեցող երեխաների համար բացված մանկատունը[502], 1889 թ. բացված կատաղած կենդանիների դեմ կանխարգելիչ պատվաստումների կայանը[503], 1889 թ. սեպտեմբերի 15-ին բացված գյուղատնտեսական ցուցահանդեսը[504], 1889 թ. հոկտեմբերի 15-ին բացված հողաչափական ուսումնարանը[505], 1890 թ. մարտի 16-ին

493. «Հովիւ», 1909, N 34, էջ 542:
494. "Тифлисский Листок", 1909, N 220:
495. Նույն տեղում:
496. Նույն տեղում:
497. "Кавказский календарь на 1892г.", Тифлис, 1891, էջ 35:
498. Նույն տեղում:
499. Նշվ. աշխ., էջ 36:
500. Նշվ. աշխ., էջ 37:
501. Նույն տեղում:
502. Նույն տեղում:
503. Նույն տեղում:
504. Նշվ. աշխ., էջ 38:
505. Նույն տեղում:

Թիֆլիս. Եռագմբեթ առաջնորդանիստ Վանքը, որի բակում 1909 թ. ամփոփվեց Ա. Ս. Մատինյանցը

բացված պետական ազնվականական Հողային բանկը[506], 1890 թ. ապրիլի 3-ին բացված որսորդական ցուցահանդեսը[507]:

Ի դեպ, ինչպես նշել է ժամանակի մամուլը, 1892 թ. բռնկված համաճարակը թիֆլիսցիների թեթև տանելը փաստորեն արդյունք էր նախորդ տարիներին քաղաքագլխի իրականացրած հանրօգուտ մի շարք ձեռնարկումների[508]:

506. Նույն տեղում:
507. Նույն տեղում:
508. "Тифлисский листок", 1909, N 220: Թիֆլիսի սանիտարական վիճակը էապես բարելավվել էր 1885 թ. Հավճալայի աղբյուրների ջուրը ջրանցքով քաղաք հասցնելուց հետո ("Тифлисский листок", 1909, N 220):

Ալ. Մատինյանցը Թիֆլիսում բնակվում էր իր սեփական տանը: Այն գտնվում էր Սապյորնայա փողոցի վրա[509], ավելի ստույգ Բոլշոյ-Վողովոզնիյ և Սապյորնայա փողոցների անկյունում, N 9 տանը[510]: 1889 թ. Մատինյանցը պարգևատրվել է Վլադիմիրի 3-րդ կարգի շքանշանով, իսկ իշխան Դոնդուկով-Կորսակովը քաղաքագլխին շհորհակալագիր է փոխանցել[511]:

Պաշտոնից հրաժարվելուց հետո Մատինյանցն իր ազգական Փիթոյանցների նման աշխատանքի է անցնում ձկնարդյունաբերության և նավթարդյունաբերության ոլորտում. «Վերջին 10-15 տարիները հանգուցեալը քաշուած էր ասպարէզից, բայց նա հետևում էր ուշի ուշով իր սիրած քաղաքի ինքնավարութեան գործերին և շատ յաճախ իր հեղինակաւոր կարծիքով անուղղակի նպաստում Թիֆլիզի բարգաւաճման»[512]: Շնորհիվ զուսպ ու համեստ կենցաղավարության՝ Ս. Մատինյանցը շուտով կարողանում է կուտակել նյութական զգալի կարողություն, որն էլ կտակում է այն քաղաքին, որի բարգավաճմանն անմնացորդ նվիրվել էր 12 տարի շարունակ. «Բացի այն հանգամանքից, որ ի օգուտ Թիֆլիս քաղաքի կատարված այս նվիրատվությունը (այն գնահատվում է 200 հազար ռուբլուց ավելի) մյուս նվիրատվությունների համեմատ չափազանց խոշոր է, այն արժանավայել ուշադրության է արժանի նաև այլ տեսանկյունից: Կտակարարը ճշգրտորեն ցույց չի տալիս այն առարկան, որի համար կատարում է նվիրատվությունը, և ընծան չի կապում իր անվան հետ, այլ ողջ գումարը դնում է քաղաքային կառավարման լիակատար տրամադրության ներքո: Այդպես կարող է վարվել միայն հարազատ քաղաքային ինքնակառավարմանը խորը հարգանքով տոգորված և հասարակության շահերին անկեղծորեն նվիրված անհատը»[513]:

Կտակը, որը Մատինյանցը պատրաստել էր մահվանից միայն ամիսներ առաջ, 1908 թ. վերջին Թիֆլիսի քաղաքային խորհրդին էր ուղարկել հետևյալ մակագրությամբ. «Իմ կտակս. բացել իմ մահից յետոյ. Մատինեան»[514]:

Հատկանշական է, որ բարեգործի կտակի բովանդակության բացահայտումից հետո թիֆլիսյան մամուլը (հայ, ռուս, վրաց) հանդես է եկել բազմաթիվ հիացական հոդվածներով, որոնք ընդհանուր առմամբ միաձայն դրվատում և փառաբանում էին հանգուցյալի արարքը՝ որպես Թիֆլիսին անհունորեն նվիրված ճշմարիտ քաղաքացու վարքագիծ: Ուշագրավ բացառություն է կազմում միայն ազգությամբ ուտի Գրիգոր Նիկողոսյանի (նույն ինքը՝ Մագդա Նեյման) հեղինակած նյութը, որը, խնդիրը դիտարկելով ազգային շահի տեսանկյունից, միանգամայն իրավացիորեն դատապարտել է այդ տեսակ «բարեգործությունը». «...հետևելով սրտիս մղումին և զգացումիս թելադրութեան, բարձրաձայն դատապարտում եմ այնպիսի հայերի արարքը և յիշատակը, որոնք կտակում են իրանց կարողութիւնը ոչ թե բացառապէս հայ ազգի օգտին, այլ մի քաղաքի, որի մէջ ապրող ուրիշ ազգութիւնները ատելով ատում են հայերին և պատրաստ են՝ մի գաւաթ ջրի մէջ խեղդել...: Արդարև, հայերը Ռուսաստանում ամենքի աչքի գրողն են դառել նրանով, իբր թէ նրանք զրկում են, կողոպտում են, ծծում են, արիւնաքամ են անում Կովկասեան ազգութիւններին. անխղճաբար շահագործում են, հարստահարում են, խաբում են, խարդախում են, յափշտակում են նրանց շարժական ու անշարժ կայքերը. աղքատացրել են, թշուառացրել են, վռնդել են... խեղճ վրացիներին նրանց մայրաքաղաքից և... անօգնական ռուսներին իրանց ստրուկն ու գերին են դարձրել: Այդ չափն էլ հերիք չէ, այլ... պարզամիտ, անմեղ և անարատ թուրքերին, պարսիկներին էլ իրանց անյագ շահագործութեան առարկա են շինել, աղքատացրել և... անօթի թողել...: Հետևաբար՝ հայերին պէտք է աչք տալ և լոյս չտալ. պէտք է սահմանափակիչ առանձին օրէնքներ սահմանել՝ գիշատիչ հայերին զսպելու և նրանց կլանիչ ախորժակները չափաւորելու համար. պէտք է խիստ և կտրուկ միջոցներ ձեռք առնել այդ քրիստոնեայ հրէաներին ձեռքի մէջ պահելու և իրանց կապն քաշելու համար. և, եթէ հնարաւոր է, պէտք է՝ իսպառ վտարել նրանց Կովկասից, քշել Միջին Ասիա, Մանջուրիա և Սիբիր ու նրանց տեղը բնակեցնել՝ աշխատասէր, պարկեշտ, առաքինի, աշխարհաշէն և կառավարութեան նեցուկ՝ ռուս մուժիկներին...: Ո՞ր խլացած ականջը չէ լսել և չի լսում ամեն օր այս խօսքերը, ո՞ր հայը չէ զգացել իր կաշու վրայ օտարների անհաշտ ատելութիւնը և գարշանքը դէպի իր ազգութիւնը, ո՞ր ռուս գրողը, բանաստեղծը, վիպասանը, թատերագիրը,

509. “Кавказский календарь на 1880 г.”, Тифлис, 1879, էջ 157:
510. “Кавказский Календарь на 1882 г.”, Тифлис, 1881, էջ 214: Տե՛ս նաև նշվ. աշխ. 1883 թ. հրատարակությունը, էջ 180: Նաև՝ նշվ. աշխ. 1885 թ. հրատարակությունը, էջ 178: Նաև՝ նշվ. աշխ. 1886 թ. հրատարակությունը, էջ 170: Նաև՝ նշվ. աշխ. 1888 հրատարակությունը, էջ 309:
511. “Тифлисский листок”, 1909, N 220:
512. «Հովիւ», 1909, N 34, էջ 543:
513. Նշվ. աշխ., էջ 49-50 (բնագրում՝ “Это пожертвование, помимо того, что оно очень крупное сравнительно с другими пожертвованиями, делаемыми в пользу гор. Тифлиса (оно оценивается свыше 200 тыс. р.), достойно внимания еще в другом отношении. Завещатель не указывает точно предмета, на который он жертвует, и не связывает дара со своим именем, а всю сумму предоставляет в полное распоряжение городского управления. Так мог поступить только человек, проникнутый глубоким уважением к родному городскому самоуправлению и искреннею преданностью общественным интересам”): Կտակի վերաբերյալ հանգամանորեն տես՝ "К вопросу о завещанных А. С. Матиновым гор. Тифлису капиталах" ակտը, հրապարակված 1909 թ. ("Известия Тифлисской городской думы", 1919, N9, էջ 43-45):
514. «Հովիւ», 1909, N 34, էջ 543:

Պուշկինից սկսած մինչև Տիւտչեվը, Չեխովը և ուրիշներ, չէ յեղյեղել իր գրութեանց մէջ ատելութեան, արհամարհանքի և գարշանքի զգացում դէպի հայերը: Եւ այս ամենից յետոյ պէտք է օրհնե՞լ թէ անիծել այն հայի յիշատակը, որը վերցնում է ու իր ամբողջ կարողութիւնը կամ թէ նրա մի մեծագոյն մասը կտակում է յօգուտ այնպիսի քաղաքի, որի բնակիչների մէջ հայերը կազմում են խիստ անշնչան տոկոս, ինչպէս օրինակ, Աստրախանն է, կամ թէ մի որոշ, բայց ո՛չ գերակշռող տոկոս, ինչպէս Թիֆլիզն է: ...ի՞նչ ասել այդպիսի մի «բարեգործ» հայի մասին, որը հայ եկեղեցու և ազգի զաւակը լինելով, անգիտանում է Էջմիածնի կենսական պահանջները, արհամարհում է իր ազգի անթիւ ցաւերը, հոգսերը, տառապանքները, տասնեակ հազար որբերի և աղքատների ծայրագոյն թշուառութիւնը Կովկասում և Տաճկաստանում և վերցնում է ահագին կարողութիւն կտակում այնպիսի մի հարուստ քաղաքի օգտին, որի մէջ ռուսաց արխիերէյը-առաջնորդը տարեկան երկու միլիոն ռուբլի հասոյթ է ստանում քաղաքի վանքապատկան կայքերից: Իսկ Թիֆլիզի Շիօեւները, Էլիսմիրզովները, Շամխարովները և վերջումս էլ Ալէք. Մատինովը նոյնանման վերաբերուեցին դէպի իրանց ազգութիւնը: Դրանց կտակներով Թիֆլիզ քաղաքին թողած կարողութեան գումարը մէկ միլիոն ռուբլու է հասնում: Ամենայն հայոց Կաթողիկոսը ապրում է խարխուլուած ու կիսափուլ մի շէնքի մէջ, որ Վեհարանի նուիրական անունն է կրում: Գէորգեան Ճեմարանը միջոց չունի մի քանի տարի իր գոյութիւնը պահելու և նոյնիսկ տասնեակ սաներ պահելու, հայ գիւղացիները փող չունեն, որ իրանց արտերի համար սերմացու ցորեն առնեն. հնար չունին գիւղական մի աղքատիկ դպրոց պահելու. արհաջան և անճնուէր հայ ուսուցիչները տասնեակ տարիներ վարժապետութիւն անելուց յետոյ՝ ծերացել են և հացի կարօտ են մնացել, իսկ մեր այլասերուած և անազգի «բարեգործները» վերցնում են մի միլիոն ռուբլի և փեշկեշ անում Թիֆլիզի պէս մի ճոխ ու փարթամ քաղաքին...»[515]:

Ա. Մատինյանցը վախճանվել է 66 տարեկան հասակում՝ 1909 թ., օգոստոսի 25-ին, Փարիզում, անզավակ[516]: Աճյունը Փարիզից փոխադրվել է Թիֆլիս և հոգևոր իշխանությունների թույլտվությամբ (կոնդակ՝ «Յանուն Տ. Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի, որով թոյլ տուաւ թաղել զդի հանգուցեալ Աղէքսանդրի Մատինեանց ի գաւթի վանաց աւագ եկեղեցւոյ Տփխեաց»)[517] սեպտեմբերի 27-ին ամփոփվել Վանքի ավագ եկեղեցու բակի գերեզմանատանը[518]:

Ա. Ս. Մատինյանցի Տապանաքարը ավերման օրերին (1938 թ.)

1914 թ. լրագրային մի հաղորդումից երևում է, որ հանգուցյալի հիշատակը հավերժացնելու նպատակով Քաղաքային Խորհուրդը վճռել էր հուշարձան կանգնեցնել. «Քաղաքային կառավարումը Դումային է ներկայացրել քաղաքին ցուցաբերած հատուկ ծառայությունների և քաղաքին արված առատ նվիրատվության համար նախկին քաղաքագլուխ Ա. Ս. Մատինովի հիշատակին հուշարձան կանգնեցնելու վերաբերյալ մի զեկույց: Հուշարձանի ծախսը սահմանվում էր 10.000 ռուբ.»[519]: Նույն թվականին, երբ Թիֆլիսը նշում էր քաղաքային ինքնավարության քառասնամյակը (1874-1914) Ա. Մատինյանցին էին հասցեագրված առավել ջերմ ու ընդարձակ հիշատակի խոսքերը: Ալ. Մատինյանցն իրավամբ համարվում էր չգերազանցված քաղաքաշինարար. «Ա. Ս. Մատինովին, որը 1879-1891 թթ. քաղաքագլուխ էր, կարելի է համարել քաղաքային ինքնակառավարման գոյության ժամանակաշրջանից սկսած մեր ամենաեռանդուն քաղաքային գործիչներից մեկը: Քաղաքային շատ նախագծեր և նա-

515. **Նիկողոսեան Գ.**, Կտակներ քաղաքներին և ուտիացու բողոքը, «Հովիւ», 1909, N 39, էջ 614-615:
516. **Туманов Г. М.**, Характеристики и воспоминания, книга первая, Тифлис, 1913, էջ 49:
517. «Արարատ», 1909, էջ 784:
518. «Հովիւ», 1909, N 36, էջ 562, N 37, էջ 591:
519. "Кавказ", 1914, N 31 (բնագրում՝ "Городская управа вносит в думу доклад о сооружении в Тифлисе памятника бывшему городскому голове А. С. Матинову за особые заслуги городу и за щедрое пожертвование, сделаннео городу. Стоимость памятника определяется в 10.000 руб."):

Ա. Ս. Մատինյանցի տունը Սապյորնայա (այժմ՝ Թաբուկաշվիլի) և Եվանգուլովսկայա (այժմ՝ Լադիժե) փողոցների անկյունում (լուս. Ս. Դարչինյանի)

խածեռնություններ են իրագործվել նրա օրոք, 12 տարվա ընթացքում, ինչպես նրա անձնական էներգիայի, այնպես էլ հարազատ քաղաքին համաեվրոպական մշակույթի բարօրության տալու քաղաքային դումայի անդամների ոգեշունչ ցանկության շնորհիվ: ...Ա. Ս. Մատինովի օրոք հիմնադրվել է հին սպանդանոցը, գրավատունը, կառուցվել Ավչալյան ջրմուղը, վերակառուցվել քաղաքը, Երևանյան հրապարակի տունը, Վերիյսկու կամուրջը, անցկացվել կոյուղին և առաջին անգամ Թիֆլիսում երևան են եկել բարձրագույն ուսումնական հաստատությունների և հանքաջրաբուժական կայանների նախագծեր...»[520]:

Տակավին 1916 թ. Հավլաբար քաղամասում ծրագրված «Ժողովրդական տան» շինարարությունն ակնկալվում էր կառուցել Ա. Մատինյանցի կտակի գումարների (50.000 ռուբ.) հաշվին[521]:

1938 թ. Թբիլիսիի քաղաքային իշխանությունների որոշմամբ Վանքի հուշահամալիրի ավերումով ոչնչացվեց նաև Ա. Մատինյանցի գերեզմանն ու հուշակոթողը (երևի ի նշան խորին երախտագիտության):

520. “Кавказское Слово”, 1914, N 71, էջ 2 (բնագրում՝ “А. С. Матинов, состоявший город. головой с 1879 по 1891 г., по праву может считаться одним из энергичнейших город. деятелей за все время существования у нас гор. самоуправления. Много городских проектов и начинаний осуществилось при нем за 12 лет, благодаря как личной его энергии, так составу гласных думы одушевленных желанием дать родному городу блага общеевропейской культуры. ...При А. С. Матинове основана была старая бойня, ломбард, устроен Авчальский водопровод, перестроен город, дом на Эриванской площади, Верийский мост, проведена канализация и впервые возникли проекты учреждения в Тифлисе высшаго учебного заведения и бальнеологической станции...”):

521. “Кавказ”, 1916, N 265, էջ 3:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՐՂՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ

Ծնվել է 1845 թ. (ըստ տապանագրի): «Փառապանծ հայ իշխանական տոհմի արժանաւոր ներկայացուցիչ, Նորին Կայսերական Մեծութեան սենեկապետ և իսկական պետական խորհրդական, իշխան Նիկողայ Բարսեղեան Արղութեան Երկայնաբազուկ...»[522] այն սակավաթիվ հայորդիներից է, որը երեք անգամ վերընտրվել է Թիֆլիսի քաղաքագլուխ:

Քաղաքագլուխ Ա. Մատինյանցի հրաժարականից հետո (1891) ընդդիմությունը, որը բաղկացած էր քաղաքային խորհրդի ազգությամբ վրացի և որոշ թվով ռուս պատգամավորներից, համառ պայքար էր մղում, որպեսզի այդ պաշտոնին հավակնող իրապես առավել արժանավոր համարվող երկրորդ թեկնածուն՝ Պողոս Իզմայիլյանցը, դուրս մնա ընտրությունից. «...Իզմայիլեանը ստացաւ միայն 30 ձայն ընդդէմ 32-ի: Ընդդիմադիր կուսակցութիւնը այդ գործում տարաւ յաղթութիւնը. բայց նա տարաւ յաղթութիւն միայն պ. Իզմայիլեանցի դէմ: Մեծ խնդիր է, թէ դորանով նա տարաւ արդեօք իւր սեպհական դատը, որովհետև ես հրաժարւում եմ կարծելուց, թէ նորընտիր քաղաքագլուխ իշխան Արղութեան-Երկայնաբազուկ լինէր այն անձը, որի համար կատարուած լինէր այս վերջին ամիսների աղմկալի վիճաբանութիւնը: Ակներև է, որ իշխան Արղութեանը, ապրիլի 25-ի նիստում, ընտրուեց միմիայն իբրև մէկը, որ կուսակցութիւնների հետ շփումն չունի, իբրև մէկը, որ անձնական թշնամութիւն չունի դումայի մեծամասնութեան հետ: Դորանից շատերը եզրակացրին թէ իշխանը, կապ չունենալով կուսակցութիւնների հետ, անկախ լինելով դոցանից, կը կանգնի նաև կուսակցութիւններից բարձր: Այդ կախուած է սակայն կուսակցութիւններից դուրս եղածի ոգեկան յատկութիւններից: Անկասկած է, որ մի այդպիսի անձն տրամադիր կը լինի բոլորովին անկախ մնալ, բայց բոլոր խնդիրը նորանումն է, թէ որքան այդ կը յաջողի նրան: Ամեն բան, ընդհակառակը, խօսում է յօգուտ այն ենթադրութեան, որ իշխան Արղութեանը, որպես քաղաքի գործերից մինչև այժմ հեռու կեցած մարդ, և որպէս մէկը, որ մինչ իւր 47 տարեկան հասակը ոչ մի հասարակական գործում չի եղած, պէտք է բաւականանայ գրեթէ միայն նախագահելով դումայի ժողովները և ասպարէզը թողնի դումայի կուսակցութիւններին: Շատ և շատ կարելի է, որ նա կուսակցական քաղաքագլուխ չի դառնալ, բայց ոչ թէ նոցանից բարձր կանգնելու, այլ միայն նոցանից մի կողմ քաշուելու համար: Տարբերութիւնը ահագին է: Մեծամասնութեան ղեկավար չի լինելու նա, այլ միայն մեծամասնութիւններին հետևող...»[523]:

522. “Кавказское Слово”, 1914, N 71, էջ 2:

523. “Кавказ”, 1916, N 265, էջ 3:

Նմանօրինակ վերլուծություն-քննութագրով էլ 1891 թ. ապրիլի 25-ից Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնը ստանձնում է իշխան Ն. Արղության-Երկայնաբազուկը. «...և մնաց իւր պաշտօնում ընդամէնը 2 տարի, այն է մինչև քաղաքային ինքնավարութեան նոր կանոնադրութիւն մտցնելը»[524]: Ստանձնելով պաշտոնավարությունը՝ («Մայիսի 27-ին կայացած քաղաքային դումայի նիստը բացեց նոր քաղաքագլուխ իշխ. Ն. Արգուտինսկի, դիմելով ձայնատրներին մի ճառով...»)[525], սակայն, հազիվ 2 տարի անց Ն. Արղության-Երկայնաբազուկը նույնպես տալիս է իր հրաժարականը. «... իւր պաշտօնավարութեան ժամանակը լրանալուց առաջ հրաժարուած է իւր պաշտօնից և ժամանակաւորապէս քաղաքագլխի պաշտօնը վարում է քաղաքագլխի օգնական պ. Պօղոս Իզմայիլեանը...»[526]:

Ի դեպ, դեռևս 1892 թ. Ն. Արղության-Երկայնաբազուկն ընտրվել էր Զրկինյանց Սբ. Կարապետ եկեղեցու հոգաբարձու[527]:

1893 թ. հուլիսի 10-ի հրաժարականից հետո Ն. Արղության-Երկայնաբազուկը 2-րդ անգամ քաղաքագլուխ է ընտրվել Պ. Իզմայիլյանցի մահից (1895 թ., 5 մարտի) հետո՝ 1895 թ. «...իշխ. Նիկողայոս Արղութեան-Երկայնաբազուկ, քաղաքի խորհրդարանի 64 ձայների մասնակցութեամբ, առաջարկութեամբ 47 ձայների: Վեց ուրիշներ ստացել էին միմի և մէկը՝ երկու ձայն: Քւէարկւեց միայն իշխ. Ն. Արղութեան, որը գաղտնի քւէարկութեամբ ընտրւեց 54 ձայնով ընդդէմ 10-ի: Իշխան Ն. Արղութեանը սորանով երկրորդ անգամն է քաղաքագլուխ ընտրւում...»[528]:

Ընդամենը երկու տարի և երկու ամիս պաշտոնավարելուց հետո իշխ. Ն. Արղության-Երկայնաբազուկը, ինչպես առաջին անգամ (1893), առանց սահմանված ժամկետը (4 տարի) լրանալու, 1896 թ. հուլիսի 12-ին դարձյալ հրաժարական է տվել. «Թիֆլիսի քաղաքագլուխ իշխ. Նիկ. Արղութեան-Երկայնաբազուկ յուլիսի 12-ին նահանգապետի միջոցով ներկայացրել է իւր հրաժարականը ներքին գործերի մինիստրին: Սա երկրորդ անգամն է արդէն, որ իշխ. Արղութեանը քաղաքագլխի պաշտօնից հրաժարական է տալիս օրինական ժամանակամիջոցից առաջ. «... Իւր պաշտօնավարութեան օրինական ժամանակամիջոցը լրանալու համար մնում է միայն մի տարի, երբ 1897-ի յուլիսին, պիտի կատարեն նոր ընտրութիւններ քաղաքային խորհրդարանի և ապա նաև վարչութեան համար: Քաղաքային կանոնադրութեան համաձայն, երբ քաղաքագլուխը հրաժարական է տալիս խորհրդարանի

Նիկողայոս Բարսեղյան Արղության-Երկայնաբազուկը 1880- ական թթ. վերջերին

Ն. Բ. Արղության-Երկայնաբազուկը 1891 թ.

524. «Տարազ», 1916, N 8-10, էջ 88:
525. «Մուրճ», 1891, էջ 530-531:
526. «Մուրճ», 1895, էջ 736:
527. «Մշակ», 1891, N 60, էջ 2 (30 մայիսի):
528. «Նոր-Դար», 1893, N 181, էջ 1 (16 հոկտեմբերի):

Ն. Բ. Արղության-Երկայնաբազուկը 1900- ական թթ., կինը՝ Մարիամ Արղության-Միրզայանցը և հինգ զավակները (3

լիազորութիւնների չորս ամեայ ժամանակամիջոցից մի տարի պակաս, ապա նոր քաղաքագլուխ ընտրելը պարտաւորիչ չէ, այլ նորա պաշտօնը մինչ այդ միջոցը լրանալը վարում է նորա տեղապահը: Տեղապահի ընտրութիւնը խորհրդարանը վճռել էր կատարելու միայն գալ աշնան, իսկ մինչև այդ՝ նոյն պաշտօնը կը կատարի այժմեան պաշտօնակատար Ապոլոն Աֆ. Իւանենկօ: Քաղաքագլուխ իշխ. Արղութեանը թողնում է քաղաքի գործերը ոչ բարեկարգ դրութեան մէջ, բայց ոչ այնքան իւր մեղքով, որքան խորհրդարանի, ուր չկայ մի հաստատուն և ինտելիգէնտ մեծամասնութիւն»[529]: Հարկ է նշել, որ 1896 թ. հուլիսի 31-ին Թիֆլիսի նահանգապետի կողմից քաղաքագլուխ Ն. Արղությանը պարգևատրվել է արծաթե մեդալով և կրծքանշանով[530]: Հրաժարականի պաշտոնական ճանաչումը տեղի է ունեցել 1896 թ. նոյեմբերի 5-ին[531]: Ինչ վերաբերում է քաղաքագլխի պաշտոնակատար Ա. Իվանենկոյին, ապա նա հաստատվում է քվեարկությամբ և պաշտոնավարում մինչև 1897 թ. տեղի ունեցած նոր քաղաքագլխի ընտրությունը. «Թիֆլիսի քաղաքագլխի փոխանորդ ընտրուեց Ապոլոն Աֆանասևիչ Իւանենկօ, 30 ձայնով ընդդէմ 18-ի: Քւէարկւող միայն նա էր: Իւանենկօն քաղաքային վարչութեան անդամ է և մինչ այժմ իրապէս կատարում էր քաղաքագլխի պաշտօնակատարութիւնը, առանց ընտրւած լինելու և ստանում էր համապատասխան ռոճիկը: Քաղաքագլխի պաշտօնը, իշխ. Նիկ. Արղութեանի հրաժարւելուց յետոյ պարապ էր և կը մնայ պարապ մինչև նոր քաղաքային ընտրութիւնները»[532]:

1900 թ. իշխան Արղությանը ևվիրատվությամբ (300 ռուբ.) աջակից է լինում Թիֆլիսի «Ժողովրդական տան» շինարարությանը[533]:

Ն. Արղության-Երկայնաբազուկը քաղաքագլուխ է ընտրվել նաև երրորդ անգամ՝ 1903 թ. փետրվարի 24-ին և այդ պաշտոնում մնացել մինչև 1904 թ. մայիսի 3-ը ու դարձյալ հրաժարվել առանց լրացնելու պաշտոնավարման սահմանված ժամկետը[534]: Ի դեպ, քաղաքագլխի գործուն միջամտության և հետևողականության շնորհիվ 1903 թ. իրականացվել է մեծածախս շինություններից մեկը՝ Երևանյան հրապարակում գտնվող «Քաղաքային տան» շինարարությունը[535]: Երրորդ հրաժարականից հետո իշխ. Ն. Արղության-Երկայնաբազուկը սեփական կարողություններով նպաստել է հատկապես կրթական ոլորտին. «Մինչև իր մահը՝ Թիֆլիսի արական գիմ-

529. «Մուրճ», 1892, էջ 156:
530. "Кавказ", 1896, N 203:
531. «Մուրճ», 1895, էջ 735-736:
532. «Մուրճ», 1896, N 6, էջ 878:
533. «Մշակ», 1900, N 96 (27 մայիսի): Համեմատության համար նշենք, որ հանգանակությանը մասնակցած միլիոնատերեր Ա. Մանթաշյանը ևվիրել էր 500 ռ. (առավելագույնն էր), իսկ, օրինակ, Մ. Արամյանցը՝ ընդամենը 200 ռ.:
534. "Известия Тифлисской городской думы", 1911, N 4, էջ 18:
535. «Մուրճ», 1897, N 1, էջ 163:

նազիայի պատուաւոր հոգաբարձուն էր նրա աշակերտութեան հովանի...»[536]: Հայտնի է, որ իշխանը Թիֆլիսում մի դպրոց էլ հիմնել էր արատածին երեխաների համար. «...հիմնեց խուլ-համրերու վարժարան մը, որուն հոգաբարձութեան նախագահն էր մինչև վերջը»[537]:

Ն. Արղության-Երկայնաբազուկի տունը (1891) գտնվում էր Սերգեևյան և Սադովայա փողոցների անկյունում[538], իսկ 1895 թ. իշխանի նոր սեփական տան հասցեն էր՝ Գոլովինսկի պողոտան[539]:

Իշխան Ն. Արղությանը վախճանվել է 1916 թ. մարտի 30-ին. «Ապրիլի 7-ին արժանավայել շուքով կատարուեց յուղարկաւորութիւնը, Վանքի Մայր Տաճարում կատարուեց պատարագ և այնտեղից մարմինը տեղափոխուեց Սանահին, ուր ամփոփուեց տոհմական դամբարանում...»[540]:

Ն. Արղության-Երկայնաբազուկը ամուսնացած էր Մարիամ Հովհաննիսյան Արղությանցի (ծնվ. Միրզայանց) հետ, որը վախճանվել է 1919 թ.: Վերջինս հայտնի էր իր բարեգործություններով:

Ի դեպ, իշխ. Ն. Արղության-Երկայնաբազուկն իր ժամանակի ականառու մտավորականներից էր: Նրա հարուստ գրադարանը կովկասագիտական բացառիկ արժեք էր ներկայացնում. «...իշխանը յայտնի էր իրբրև ուսումնասէր և ունէր նշանաւոր գրադարան յատկապէս Կովկասի վերաբերեալ բոլոր հրատարակութիւնները...»[541]: Այդ արժեքավոր գրադարանը ի մեծ բարերախտություն հայ ժողովրդի՝ Հայաստանի Առաջին Հանրապետության պա-

Ն. Բ. Արղության-Երկայնաբազուկի տապանաքարը Սանահինի վանքի Սբ. Աստվածածին եկեղեցու բակում գտնվող Արղություններ-Երկայնաբազուկների տոհմական

տասխանատուները, հակառակ ժամանակի դժվարին և ամենաանբարենպաստ պայմաններին, կարողացան փոխադրել Երևան. «Նշանաւոր մատենադարան մը ունէր (10.000 հատոր) որ իր ժառանգորդները 1920-ին վաճառեցին Հայաստանի կառավարութեան, երկրէն դուրս գալու միջոց ձեռք բերելու համար (բնակության էին փոխադրվել Փարիզ - Ս.Կ.), այժմ Երեւան կը գտնուի ան եւ յոյժ կարեւոր մէկ մասը կը կազմէ պետական Գրատան...»[542]:

ՊՈՂՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ ԻԶՄԱՅԻԼՅԱՆՑ

Պողոս Իզմայիլյանցը ծնվել է 1852 թ.: Նրա ծննդավայրի մասին տվյալները հակասական են: Ըստ որոշ աղբյուրների՝ նա ծնվել է Երևանում և ավարտել տեղի գիմնազիան, բայց այլ տվյալներով՝ Թիֆլիսում: Հայտնի է, որ Պողոսի պապը (հոր հայրը) երիտասարդ հասակում գերի էր ընկել թուրքերի ձեռքը: Երբ 1790 թ. Սուվորովը գրավում է Բեսարաբիայի Իզմայիլ բերդաքաղաքը, հայ գերին հայտնվում է ռուսական բանակում և, ի պատիվ իր ազատագրման վայր Իզմայիլի, ստանում է Իզմայիլյանց ազգանունը[543]:

Ինչ վերաբերում է Պողոսի մայրական թևի ծագմանը, ապա նրա պապի հայրը Քարթլիի վերջին թագավոր Գիորգիի պալատական բժիշկն էր և հայտնի էր Հեքիմ-աղա անունով: Հետագայում նրա ժառանգները կրում են Հեքիմյան ազգանունը (ռուս. տիրապետության շրջանում նաև՝ Ակիմովներ)[544]:

Գերազանց ավարտելով գիմնազիան՝ մեկնում է Պետերբուրգ՝ բարձրագույն ուսում ստանալու, բայց 1869 թ., երբ դեռ հենց առաջին կուրսում էր, ստիպված է լինում վերադառնալ Թիֆլիս (ուսանողության շրջանում ծայր առած շարժման հետևանքով): 1870 թ. Պ. Իզմայիլյանցն իր ընկերների (Շահվերդյանի և Իվանովի) հետ ծանոթանում է վրացական «Դրոեբա» («Ժամանակներ») և «Սասոփլո» («Գյու-

536. “Известия Тифлисской городской думы”, 1911, N 4, էջ 18:
537. “Кавказ”, 1903, N 246, էջ 3: Հասցեն էր՝ Երևանյան հրապարակ, N 132 (“Кавказский Календарь на 1906 г.”, Тифлис, 1905, էջ LIX):
538. ”Кавказский Календарь на 1892 г.”, Тифлис, 1891, էջ 492: Տե՛ս նաև՝ նշվ. աշխ. 1893 թ. հրատարակությունը, էջ 457:
539. “Кавказский Календарь на 1896 г.”, Тифлис, 1895, էջ 500:
540. «Տարազ», 1916, N 8-10, էջ 88: Մահախոսականները տե՛ս “Известия Тифлисской Городской Думы”, 1916, N 1-3, էջ 3-4: «Հովիտ», 1916, N 14, էջ 210: Ի դեպ, «Տարազ»-ի վկայակոչման համաձայն 2000 թ. նոյեմբերին մեկնեցինք Սանահին, Ն. Արղությանի տապանաքարը գտնելու հույսով: Բարեբախտաբար, տապանաքարը գոյություն ուներ: Այն գտնվում էր Սանահինի վանական համալիրի գլխավոր եկեղեցու հարավային կողմում՝ մոտ 10 մետր հեռավորության վրա (շրջապարսպի ներսում): Ցավոք, ուղղանկյունաձև սրբատաշ տապանաքարի երեսին ագուցված մարմարե սալիկի երեսին փորագրված բազմատող երկլեզվյան արձանագրությունն արդեն մեծ մասամբ բավականին հողմնահարվել էր, իսկ տեղ-տեղ դարձել իսպառ անընթեռնելի.
...КЧЕ...
...ВАСИЛЕВИЧЪ...
АРГУТИНСКИЙ-ДОЛГОРУКОВ
...
ԲԱՐԵԲԱՐՈՅՆ ԱՆ ...
ԻՇԽԱՆ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՎԱՍԻԼ ...
ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ-ԱՐՂՈՒԹԵԱՆ
... 16 1845
ՎԱԽՃԱՆԵՑԱՒ 30-Ը ... :
541. «Տարազ», 1916, N 8-10, էջ 88:
542. «Ֆրանսահայ տարեգիրք. 1927», Բ տարի, Փարիզ, 1927, էջ 171:
543. «Հյալօ», 1895, N 12, էջ 2:
544. Նույն տեղում:

ղական») թերթերի խմբագիրների (Ն.Նիկոլաձե, Ս. Մեսխիա) և Գ. Ծերեթելու հետ և վերջիններիս օգնում հիմնելու մի տպարան «Գ. Ծերեթելի և ընկերություն» անունով: Տպարանը սկսել է գործել Պ. Իզմայիլյանցի տնօրինությամբ[545]: Գ. Ծերեթելին նշել է, որ երբ ինքը 1872 թ. այդ տպարանում լույս տեսնող «Դրոեբա»-ում հոդվածներ էր տպագրում «Հողային բանկ» հիմնելու վերաբերյալ, նյութերն ամբողջովին իրեն է տրամադրել Պ. Իզմայիլյանցը[546]: Շուտով Ն. Նիկոլաձեի հետ միասին Պ. Իզմայիլյանցը կարողանում է հիմնել այսպես կոչված «Իվանովի գրադարանը», որը դեպի իրեն էր ձգում հատկապես պատանի ընթերցողներին: Դարձյալ Ն.Նիկոլաձեի և Գ. Ծերեթելու մասնակցությամբ Պ. Իզմայիլյանցը գլուխ է բերում մի կատակերգություն-դիմակահանդես, որտեղ դիմակավորված գործող անձինք մարմնավորում էին կառավարության հայտնի գործիչներին: Դիմակահանդեսի ներկայացման առթիվ իր հուշերում Գ. Ծերեթելին նշել է, որ այն դիտել էր 1000-ից ավելի հանդիսատես, այդ թվում գավառապետ Օրլովսկին, մարզային վար-

Պ. Ա. Իզմայիլյանց

չության ղեկավարը և պաշտոնական այլ անձինք[547]:

1873 թ. Պ. Իզմայիլյանցն իր վրացի գործընկերների հետ մեկնում է արտասահման: Փարիզում մասնակցում է Սորբոնի համալսարանի գրականության դասընթացներին[548]: Փարիզում Պ. Իզմայիլյանցը նպաստում է վրաց «Դրոշա» թերթի հրատարակությանը. «Պավել Իզմաիլովի ակտիվ մասնակցությամբ 1873 թվականին Նիկո Նիկոլաձեն և Դաթա Միքելաձեն Փարիզում հրատարակեցին «Դրոշա» թերթը, որի պահպանված առաջին երեք համարները գտնվում են Բրիտանական թանգարանում[549]: Այդ թերթի երրորդ համարում տպագրված իր հոդվածում շոշափելով Եվրոպայի բանվորական շարժման հարցերը՝ Պավել Իզմայիլովն արտահայտել է «Դրոշայի» սոցիալիստական սկզբունքները ...»[550]:

Պ. Իզմայիլյանցն իր հասարակական գործունեությունը ծավալել է սկսած 1870-ական թվականներից: Նա մեծ դեր է խաղացել ոչ միայն վրաց մամուլի կայացման գործում, այլև գործուն կերպով մասնակցել է Գրիգոր Արծրունու հիմնադրած «Մշակ»-ի աշխատանքներին: Գ. Արծրունու գնահատմամբ Պ. Իզմայիլյանցը «Մշակ»-ի խմբագրությունում. «գուցէ միակն էր որ լիազօր տէր էր իր բաժնի»[551]: Նաև. «Եթէ խմբագրական ժողովներում ես մեծ մասամբ միշտ աւելի համաձայն էի Իզմայլօվի, քան ուրիշների հետ, այդ այն հասարակ պատճառով, որ նա բոլոր մնացածներից աւելի եւրօպացի էր, ազատ նախապաշարմունքներից, մտաւորապէս աւելի զարգացած»[552]:

Թղթակցել է «Тифлисский Вестник» և «Մշակ» պարբերականներին: 1878 թ., երբ «Тифлисский Вестник» թերթի խմբագիր Կ.Ա. Բեհբուդյանը Պե-

---

545. Նույն տեղում:

546. Նշվ. հոդվածը, էջ 2-3: Ի դեպ, նույն Գ. Ծերեթելին, տարիներ անց, Պ. Իզմայիլյանի այդ շրջանի գործունեության մասին փոքր-ինչ մանրամասնելով, նշել է. «...վրացիների ներկայիս սերունդը երևի չգիտե, թե ինչպիսի երազանքներ ու վեհ ձգտումներ ուներ Պ. Իզմայիլյանցը: Իր երիտասարդության լավագույն ոչ մեկ և ոչ երկու տարիներն է զոհաբերել այդ ձգտումների իրականացմանը, երբ Իզմայիլովը իմ, Նիկոլաձեի և հանգուցյալ Մեսխիի հետ միասին անդադրում գիշերցերեկ աշխատում էր «Կրեբուլի» հանդեսի և «Դրոեբա» թերթի խմբագրություններում: Այն ժամանակ մենք երազում էինք Դուբելիրայից ձեռք բերված տպարանը այնպես ոտքի կանգնեցնել, որ ապահովեր «Կրեբուլի», «Դրոեբա», «Սասափլո Գազեթի» վրացական հրատարակությունները: Դա եղել է 1869-1872 թթ.: Այդ շրջանում վրաց տպագրության լավագույն գործիչների անվան հետ էր կապված Իզմայիլովի անունը: Անշահախնդիր ծառայությամբ պ. Իզմայիլովը այն աստիճան էր տարված վրաց տպագրության գործով , որ բոլորովին մոռացել էր, որ ուներ տուն, անհամբերությամբ սպասող սիրող մայր ու գիշերներ շարունակ անցկացնում «Կրեբուլի-Դրոեբա»-ի խմբագրությունում» (բնագրում՝ "...Едва ли нынешнее поколение грузин знает какия мечты он лелеял и каковы были святые стремления П. Измайлова. Не один и не два лучших года своей молодости он пожертвовал на осуществление этих стремлений, когда Измайлов рядом со мной, с Николадзе и с покойным Месхи неустанно ден и ноч работал в редакциях журнала "Кребули" и газеты "Дроэба". Тогда мы вместе мечтали приобретенную от Дубелира типографию поставить на такую ногу, чтобы доходили ея обезпечить существование грузинских изданий: "Кребули", "Дроэба" и "Сасапло Газети". Это было в 1869, 1870, 1871 и 1872 годах. В то время с именами лучших деятелей грузинской печати было связано имя П. Измайлова. Безкорыстным служением делу грузинской печати г. Измайлов был до такой степени увлечен, что он, забыв совершенно, что у него есть дом, есть любящая мать, с нетерпением его ожидающая, на пролет ночи проводил в редакции "Кребули-Дроэба"..." ("Тифлисский Листок", 1893, N 254, էջ 2):

547. Նույն տեղում: Ի դեպ, տարիներ անց, վրաց թատրոնի պատմությունը շարադրած Գ. Միրաղյանը նշել է, որ Պ. Իզմայիլյանցն աշխատակցել է նաև վրաց թատրոնին. «...յաճախ կանացի դերեր խաղում էր և Թիֆլիսի նախկ իւ քաղաքագլուխ հանգուցեալ Պօղոս Իզմայիլեանցը» (**Միրաղեան Գ.**, Վրաց թատրոնի անցեալը եւ ներկան, «Գեղարվեստ», 1909, N 3, էջ 28):

548. **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հատոր Բ., Երևան, 1981, էջ 9:

549. Այդ թերթից լույս է տեսել միայն 10 համար, որից միայն առաջին երեքն է պահպանվել («Քարթուլի Մծերլոբա», 1927, N 10, էջ 124):

550. **Նիկոլաշվիլի Ն.**, Հայ և վրաց գրական գործիչների բարեկամության պատմությունից, «Սովետական Վրաստան», 1957, N 8:

551. **Լէօ**, Գրիգոր Արծրունի, Թիֆլիս, 1902-3, հատոր 2, էջ 57:

552. Նույն տեղում:

տերբուրգում էր, Պ. Իզմայիլյանցը, որն այդ ժամանակ արդեն (1876-ից) քաղաքային դումայի քարտուղարն էր, ստանձնում է նաև ծանր կացության մեջ հայտնված (նաև նյութական) թերթի խմբագրի պարտականությունը[553]:

1878 թ. վերջին տեղի ունեցած քաղաքային ձայնավորների (պատգամավորների) ընտրությունների ժամանակ Պ. Իզմայիլյանցն իր ջանքերը ծառայեցնում է քաղաքային խորհրդարանը երիտասարդ ուժերով համալրելու գործին, որն էլ պսակվում է հաղթանակով, և չնայած հին գործելակերպին կառչած ծերունիներ էլ կային, բայց նրանց ձայները այլևս որոշիչ չէր[554]:

Ալ. Մատինյանցի՝ քաղաքագլուխ ընտրվելուց հետո (1879) Պ. Իզմայիլյանցը փաստորեն դառնում է քաղաքային խորհրդի առավել գործուն անդամը. «...խոսելով Իզմայլովի մասին, անհնարին է չանդրադառնալ քաղաքային ինքնակառավարման ողջ գործունեությանը սկսած 1879-1890 թթ., երբ կառավարումը գլխավորում էր Ա. Ս. Մատինովը, իսկ գործերի փաստացի ղեկավարը, բոլոր դեպքերում, համարվում էր Իզմայլովը»[555]:

1877-1883 թթ. Պ. Իզմայիլյանցը 4 անգամ՝ յուրաքանչյուրը 2-ական տարի ժամանակով վարել է քաղաքային խորհրդի քարտուղարի պաշտոնը (ընտրվել և վերընտրվել՝ 15.I.1877-ին, 19.XII.1881-ին և 31.I.1883-ին)[556]: Քարտուղարի պարտականությունները Պ. Իզմայիլյանցը կատարել է մինչև քաղաքային վարչության անդամության թեկնածու (2.V.1883), ապա և՝ անդամ (17.X.1883) ընտրվելը[557]: Մինչև քաղաքագլուխ ընտրվելը Պ. Իզմայիլյանցը երկու անգամ (28.XII.1884-ին և 22.XII.1888-ին) վերընտրվել է վարչության անդամության կազմում[558]: Զուգահեռաբար սկսած 1883 թ. հոկտեմբերի 17-ից մինչև 1893 թ. նոյեմբերի 7-ը Պ. Իզմայիլյանցը վարել է փոխքաղաքագլխի պաշտոնը[559]:

1880 թ. նաև Պ. Իզմայիլյանցի գործուն աջակցությամբ քաղաքագլուխ Ա. Մատինյանցը կառավարության առջև խնդիր է դնում Թիֆլիսում պետական համալսարան հիմնելու և վերջինիս գոյությունն ապահովելու համար քաղաքի եկամուտներից 100.000 ռուբ. հատկացնելու վերաբերյալ[560]: Մինչ 1890 թ. Պ. Իզմայիլյանցի գործունեությունն իր ժամանակին գնահատվել է այսպես. «... երկար տարիներ նա առաջին անդամն էր քաղաքային վարչութեան, սկսած լինելով իր ծառայութիւնը, խորհրդարանի քարտուղարի պաշտօնով 1876 թւականին: Այդ օրից Պօղոս Իզմայլեանը, շնորհիւ իւր ևիրւածութեանը քաղաքի գործերին, միացած բարձր կրթութեան հետ և մի բնաւորութեան, որը նորան մատչելի էր դարձնում ամենքին, արդէն վաղուց կազմում էր Թիֆլիսի քաղաքային գործերի ոգին»[561]:

Ա. Մատինյանցի հրաժարականից հետո (1891 թ. մարտի 1-ին), 1891 թ. ապրիլի 25-ից նոր քաղաքագլխի ընտրություններին Պ. Իզմայիլյանցն առաջին անգամ առաջադրում է նաև իր թեկնածությունը. «... թեկնածութիւնը այն մարդու, որը իւր ունեցած դիրքի համար գրեթէ բացառապէս պարտական է իւր անխոնջ աշխատութիւններին քաղաքի օգտին: Դեռ նա իբր քարտուղար քաղաքային դումայի նա, ... շնորհիվ իւր մտաւոր և ոգեկան գերազանցութեան, մասնակից էր վարչութեան գործավարութեանը: Դեռ նա իբր դումայի քարտուղար – նա՝ վարչութեան ոգին էր: Բնական է թէ ինչու քարտուղարութիւնից հրաժարուելով՝ նա ամենայն հեշտութեամբ ընտրուեց վարչութեան անդամ և այն էլ վարչութեան առաջին անդամ, այսինքն քաղաքագլխի օգնական: Այդ ոչ միայն աւելի բարձր այլ և իւր ընդունակութիւնների համար աւելի հարմար պաշտօնում նա ցոյց է տուել գնահատելի և ոչ սովորական դիրքեր: ...Պր. Իզմայլեանի ընտրութիւնը ցանկալի էր մի քանի տեսակէտներից: Նախ որ արժանի էր, իբր քաղաքի գործերին հմուտ և ևիրւած մարդ: Երկրորդ՝ նորա ընտրութիւնը կունենար մի բարոյական խրախուսիչ ազդեցութիւն դորանով ցոյց կը տրուէր որ հասարակութիւնը գիտէ պատիւների արժանացնել նաև մշակ մարդուն, իսկ պ. Իզմայլեանը մշակ էր, բառիս ազնիւ մտքով...»[562]:

Ինչպես հայտնի է[563], ընդդիմադիր կուսակցության (բաղկացած գլխավորապես վրացազգի և մասամբ ռուս պատգամավորներից) ճնշման հետևանքով 1891 թ. ապրիլի 25-ին կայացած ընտրություններում Պ. Իզմայիլյանցը քաղաքագլուխ չի ընտրվում (30 կողմ, 32 դեմ)[564]: Պր. Զուբալովի գլխավորած ընդդիմությունը ջանք չէր խնայում Պ. Իզմայիլյանցին զրկելու նաև հոկտեմբերի 12-ին տեղի ունեցող փոխքաղաքագլուխ ընտրվելու հնարավորությունից, որը, սակայն, ապարդյուն է անցնում[565]: Իշխան Ն. Արղության-Երկայնաբազուկի առաջին

553. **Туманов Г. М.**, Характеристики и воспоминания, книга первая, Тифлис, 1913, էջ 54:
554. Նշվ. աշխ., էջ 60:
555. Նշվ. աշխ., էջ 62 (բնագրում՝ "...говоря об Измайлове, нельзя не остановиться на всей деятельности городского самоуправления за время с 1879 г. по 1890 г., когда во главе управления стоял А. С. Матинов, а фактическим руководителем дел, во многих случаях являлся Измайлов"):
556. "Известия Тифлисской Городской Думы", N4, Тифлис, 1911, էջ 21:
557. Նշվ. հանդեսը, էջ 20:
558. Նույն տեղում:
559. Նշվ. հանդեսը, էջ 19:
560. **Туманов Г. М.**, նշվ. աշխ.,էջ 63:
561. «Մուրճ», 1895, էջ 352:
562. «Մուրճ», 1891, էջ 529-530:
563. Տե՛ս Ն. Արղության-Երկայնաբազուկի 1891 թ. ընտրության մանրամասները սույն աշխատության համապատասխան տեղում (էջ 80-81):
564. «Մուրճ», 1891, էջ 530:
565. «Մուրճ», 1891, էջ 1242-1244:

Պ. Ա. Իզմայիլյանց

շրջանի քաղաքագլխի պաշտոնավարության ժամանակ (1891-1893) ու նաև վերջինիս հրաժարականից (1893) հետո մինչև նոր քաղաքագլխի ընտրության օրը (7-ը նոյեմբերի) Պ. Իզմայիլյանցը վարում է քաղաքագլխի օգնականի, որն է՝ փոխքաղաքագլխի պաշտոնը[566]:

1893 թ. աշնանը նշանակված նոր քաղաքագլխի ընտրությունները, մի քանի անգամ ձախողվելով ու ձգձգվելով (հոկտեմբերի 17[567], հոկտեմբերի 31[568]), ի վերջո կայանում են նոյեմբերի 7-ին. «Թիֆլիսի քաղաքային խորհրդի արտակարգ նիստ է նշանակուած կիրակի, նոյեմբերի 7-ին...»[569]: Ընտրողների բացարձակ մեծամասնությամբ Պ. Իզմայիլյանցն այդ օրն ընտրվում է Թիֆլիսի քաղաքագլուխ. «Կիրակի, նոյեմբերի 7-ին, Թիֆլիսի քաղաքագլուխ ընտրուեց պ. Պօղոս Իզմայիլեանը: Ընտրութեանը ներկայ էին 71 հոգի հաշուած և իրեն պ. Իզմայիլեանցին: Թիֆլիսի նոր քաղաքագլուխն ստացաւ 62 ընտրողական և 8 ոչ ընտրողական քուէ...»[570]:

Ի դեպ, նույն այդ օրերին Պ. Իզմայիլյանցը Սագուրամոյի անտառներում հայտնաբերել էր մի ջրառատ աղբյուր: Մտահոգ Թիֆլիսի ջրամատակարարման խնդրով՝ նա աղբյուրն ուսումնասիրելու նպատակով հրավիրել է մասնագետների, իսկ ջրի նմուշը ներկայացրել Ֆ. Օստենին ստուգման նպատակով (պարզվել է, որ այն Ավճալայի լավագույն ջրերից է և ավելի սառը, իսկ հոսքը՝ օրական 2 միլիոն դույլ: Ի դեպ, կրկնակի ավելի, քան Ավճալայից արդեն քաղաք հասցված ջրերը)[571]:

Սակայն, Պ. Իզմայիլյանցին վիճակված չէր երկարաժամկետ պաշտոնավարություն: Նա վախճանվել է 1895 թ. մարտի 5-ին Պետերբուրգում. «...վախճանուեց մարտի 5-ին Պետերբուրգում, ուր նա գնացել էր քաղաքի գործերի համար և ուր նա վարակուեց այնտեղ տիրող ինֆլուէնցա հիւանդութիւնով, որից յառաջ եկաւ թոքերի բորբոքումն...»[572]:

Պետերբուրգից հանգուցյալի մարմինը փոխադրվել է Նովորոսիյսկ-Քաթում (նավով), ապա՝ Թիֆլիս (գնացքով)[573] ավելի քան 10 օրվա ընթացքում: Քաղաքագլխի մահվան լուրն անմիջապես գուժել են բոլոր լրատվամիջոցները[574]: Առանց չափազանցության հարկ է նշել, որ քաղաքագլխի մահը սգում էր ողջ Թիֆլիսը: Բոլորն էլ գիտակցում էին, որ Թիֆլիսը կորցրել է այնպիսի մի անհատի, որին պատմությունն ու ժամանակը հրապարակ են հանում չափազանց ժլատ կերպով. «Ամենաբարձր պաշտօնեայից սկսած մինչև ամենայետին մշակը, որ փողոցներն է աւելում, անկեղծ կերպով համակրում, սիրում էին Իզմայիլեանին: Քաղաքագլխի պատուաւոր պաշտօնն ունենալով, նա իրեն պահում էր իբրև մի բոլորովին հասարակ մարդ, ամենքի հետ, մշակ լինէր դա, թէ ծառայակից՝ վարւում էր իբրև ընկեր. ընդունում էր ամենքին, ով ուզում էր տեսնել իրեն, ամենայն հաճութեամբ լսում էր խնդրատուներին և ամենքի օգտին անում էր, ինչ որ կարողանում էր...: Պօղոս Իզմայիլեանի մահով ամբողջ Կովկասը կորցնում է, իւր՝ առանց այն էլ սակաւաթիւ, ամեն կողմից ընտիր և շնորհալի զաւակներից մէկին»[575]:

Հանգուցյալին լավ ճանաչողներից մեկը՝ Գիորգի Ծերեթելին, իր խմբագրությամբ լույս ընծայվող «Կվալի» հանդեսում նշել է. «Ցանկացած ազգ կցանկանա ունենալ Իզմայիլների նման մարդիք, որ թանկարժեք երևույթ է: Այդպիսի ընդունակությամբ և կայտառությամբ մարդ ինչ ազգից էլ որ ծնվի (այդ ազգը լինի անկախ թե կախյալ), միևնույն է ֆեոմենը կընկնի և տվյալ ազգը միայն բարիքներ ձեռք կբերի»[576], իսկ «Նոր-Դար» օրաթերթի թղթակիցը, որը մասնակցել էր թաղմանը, նույն թերթում լույս ընծայված հրապարակման մեջ նշել է. «Երբէք Թիֆլիսն, որքան յիշում ենք, այնպիսի թաղում չէր տեսել, որպիսին տեսաւ մարտի 18-ին: Թիֆլիսի քաղաքագլուխ Պօղոս Իզմայլեանի թաղմանը ո՞վ էր ներկայ հարցնելու տեղ, պէտք է հարցնել – ո՞վ չէր ներկայ: Չափազանցրած չենք լինիլ, եթէ ասենք, որ ներկայ էր գրեթէ ամբողջ Թիֆլիսն իւր տասնեակ հազարաւոր բնակիչներով, որ խիտ առ

566. «Նոր-Դար», 1893, N 181, էջ 1:
567. «Նոր-Դար», 1893, N 182:
568. «Նոր-Դար», 1893, N 185, էջ 1:
569. «Նոր-Դար», 1893, N 197, էջ 2:
570. «Նոր-Դար», 1893, N 197, էջ 2:
571. «ივერია», 1893, N 264:
572. «Մուրճ», 1895, էջ 351-352:
573. "Тифлисский листок", 1895, N 55, էջ 2:
574. Այդ մասին տե՛ս "Кавказ", 1895, N 64, 74, "Нива", 1895, N 13, էջ 315-316, "Новое обозрение", 1895, N 3842, 3843; "Тифлисский листок", 1895, N 54, 55, 56, 57, 58, 62, 97, «Նոր-Դար», 1895, N 40, էջ 2, N 42, N 50, էջ 3:
575. «Նոր-Դար», 1895, N 40:
576. «კვალი», 1895, N 12, էջ 2:

խիտ կանգնած էր երկաթուղու կայարանից սկսած մինչև Վերայի կամուրջը, այստեղից մինչև քաղաքային տունը, այստեղից էլ մինչև Վանքի աւագ եկեղեցին, փողոցների երկու կողմերում, մօտ չորս վերստ տարածութեամբ: Լուսամուտները, պատշգամբները, կտորները հո լիքն էին ու լիքը: Շատերը բարձրացել էին անգամ ծառերի կատարները: Ուշադրութեան արժանին այն է, որ այս հսկայական ամբոխը հաւաքուել էր ինքնաբերաբար, սարքովի, շինովի ոչինչ չկար այստեղ: Առաւօտեան ժամը 9-ից արդէն կայարանի դուրս ու ներսը սկիհ էր տալիս հաւաքուած ամբոխից. այդտեղ սպասում էին համքարներն իրենց դրօշակներով, որոնց վրայ սև շղարշ էր անցկացրած: Ներկայ էին պաշտօնական անձեր. կայարանում էին Թիֆլիսի քաղաքագլխի օգնականը բոլոր իրաւասուների և քաղ. վարչ. անդամների հետ, ներկայացուցիչներ զանազան հաստատութիւններից, պատգամաւորութիւններ զանազան քաղաքներից, հանգուցեալի ընտանիքը, ազգականները, բարեկամները, մամուլի ներկայացուցիչներ և այլն: Կայարանի առաջ կանգնած էր քաղաքիս հայ հագևորականութիւնը, որին գլուխ էր անցած թեմիս սրբազան առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսը: Ներկայ էր և մահմեդականների Շէյխ-Ուլ-Իսլամը մի քանի հոգևորականներով, ինչպէս և հրէաների ռաբբին: Ժամը 10-ից 10 րոպէ անց, պլատֆորմին մօտեցաւ սգազգեաց գնացքը: Դագաղը դուրս բերելով վագոնից, հանգիստ տուին կայարանի առաջ և ապա սկսուեց տխուր յուղարկաւորութիւնը: Ամենից առաջ գնում էին համքարների դրօշակակիրները, յետոյ քաղաքային երկսեռ դպրոցների սաները, այնուհետև գնում էին՝ երգեցիկ խումբը, հոգևորականութիւնը, ապա ձեռքերի վրայ բարձրացրած տանում էին դագաղը, որի վրայ փայլում էր քաղաքի արծաթե պսակը: Դագաղին հետևում էր դիակառքը և երկու ուրիշ կառքեր պսակների մէջ կորած: Տխուր հանդիսաւոր յուղարկաւորութեան պատկերը լրացնում էր անվերջ կառքերի շարքը: Յուղարկաւորութեան ամբողջ ճանապարհին իրար վրայ թափուած ժողովուրդը լուռ վշտով հանում էր գլխարկը, խանութները փակւում էին: Հասնելով քաղաքային տան մօտ, այստեղ, Երևանեան հրապարակի վրայ, կրկին անգամ հանգիստ տուին հանգուցեալին: Այստեղից տխուր գնացքը շարունակուեց դէպի Վանքի աւագ եկեղեցին, որի շրջակայքում բառիս բուն նշանակութեամբ ասեղ չէր ընկնիլ գետին: Պատարագիչն ինքն սրբազան առաջնորդն էր, որ յետոյ ոյ մի դամբանական խօսեց շեշտելով այն մեծ կորստի վրայ, որ կրել է քաղաքը: Ս. Առաջնորդը յայտնեց բեմից հանգուցեալի մօրը Վեհափառ Կաթողիկոսի ցանկութիւնը, որ ստացել էր հեռագրով: Ժամերգութեան և թաղմանը ներկայ էին Կովկասի կառավարչապետի օգնականը, Թիֆլիսի նահանգապետը, դատարանական պալատի նախագահը, Կովկասեան գրաքննչական ատեանի նախագահը, Թիֆլիսի կոմենդանտը, նահանգական դատարանի նախագահը, ոստիկանապետը, և այլն բարձրաստիճան անձինք: Գերեզմանի վրայ ճառ խօսեցին քաղաքագլխի պաշտօնակատար պ. Իւանենկոն և իրաւասու պ. Շահ-Ազիզեանը...»[577]:

«Тифлисский Листок»-ի թղթակիցն ավելացրել է. «Քաղաքագլուխ Պ. Ա. Իզմայլովի մահը խոր տրտմութիւն առաջացրեց քաղաքի բնակչութեան գրեթե բոլոր շերտերի մեջ: Թե ինչքան էր հանգուցյալը հեղինակավոր, կարելի է եզրակացնել այն բանից, որ «Նախալովկա»-յի տնատերերը ցուցագրմամբ գումար էին հավաքել Պ. Ա.-ի գերեզմանի վրա «Ինքնակամ նորաբնակիչների կողմից անմոռաց Պ. Ա. Իզմայլովին» գրութեամբ պսակ դնելու նպատակով»[578]:

Ընդամենը օրեր անց Քաղաքային Խորհուրդը կայացնում է հետևյալ որոշումը. 1) Հանգուցյալի ընտանիքին տարեկան հատկացնել 3000 ռուբ, որից 1800-ը՝ ցմահ, իսկ 1200-ը՝ որդուն մինչև չափահաս դառնալը կամ մինչև բարձրագույն կրթության դասընթացներն ավարտելը. 2) Քաղաքային Խորհրդի դահլիճում Պ. Իզմայիլյանցի նկարի տեղադրում և նախկին «Կիրպիչնոյ» փողոցի անվանափոխում ի պատիվ հանգուցյալ քաղաքագլխի՝ «Իզմայլովյան», իսկ «Նովայա» փակուղին, որտեղ գտնվում էր Իզմայիլյանցի տունը[579], պետք է վերանվանվեր «Իզմայիլովյան փակուղի», 3) Քաղաքային ինքնավարության անունից Իզմայիլյանցի գերեզմանին տեղադրել արծաթե պսակ և այլն[580] (կից՝ Սանասարյանի գերեզմանին)[581]: Տարեվերջին Քաղաքային Խորհրդի որոշմամբ 700 ռ. է հատկացնում Պ.

577. «Նոր-Դար», 1895, N 50, էջ 3:

578. “Тифлисский Листок”, 1895, N 57, էջ 2 (բնագրում՝ “Смерть городского головы П. А. Измайлова сильно опечалила почти все слои населения города. На сколько был популярен покойный, можно заключить из того, что домовладельцы “Нахаловки” по подписке собрали между собою деньги на венок для возложения на гроб П. А. с следующею надписью: “От самовольных поселенцев незабвенному П.А.Измайлову”):

579. Հայտնի է, որ 1888 թ. Պ. Իզմայիլյանը բնակվում էր Սապյորնայա փողոցի վրա գտնվող Բաբանասյանի տանը (”Кавказский Календарь на 1889 г.”, Тифлис, 1888, էջ 309): 1893 թ. նա արդեն սեփական տուն ուներ (Նովայա Գոլանդսկայա փողոցում) (”Кавказский Календарь на 1894 г.”, Тифлис, 1893, էջ 458): Պահպանվել է Սիրզոևի և Տեր-Ղուկասովի նախկին հողամասի վրա ինժեներ Կ. Բուրկնիչի նախագծով կառուցված այդ տան նախագիծը (27, մայիս, 1892 թ.), ՎՀ ՊՊԿԱ. ֆ. 192, ց. 8ա, գ. 3278 (Թիֆլիսի քաղաքային վարչության ֆոնդ):

580. “Тифлисский Листок”, 1895, N 56, 58: Հարկ է նշել, որ Իզմայիլյանցի անունն էր կրում նաև քաղաքի պետական ուսումնարաններից մեկը, որի՝ 1912 թ. նորոգման աշխատանքները, ի պատիվ հանգուցյալ քաղաքագլխի, պիտի իրականացվեին քաղաքի գումարներով. ”Училище имени П. А. Измайлова. Гласный А. С. Бабов вошел в думскую училищную комиссию с предложением: устроить в город. средства школу имени покойнаго город. головы П. А. Измайлова в память больших заслуг его перед городом” (“Тифлисский Листок”, 1912, N 208, էջ 2):

581. «Նոր-Դար», 1895, N 49:

Իզմայիլյանցի գերեզմանին հուշաքար կանգնեցնելու նպատակով[582]:

1896 թ. մարտի 10-ին նրա գերեզմանի տեղում բացվում է ճարտ. Ա. Մելիք-Բեգլարյանի և Անդրիոլետիի հեղինակությամբ պատրաստված մի համեստ հուշարձան, որի վրա փորագրված էր «Պօղոս Իզմայլեանին Թիֆլիս քաղաքից»[583]:

Հայտնի է, որ արդեն 1909 թ. Պ. Իզմայիլյանցի հուշարձանը մասամբ քայքայվել էր և կարիք ուներ նորոգության. «Թիֆլիսի վանքի աւագ եկեղեցու գաւթում թաղուած մեր նշանաւոր ազգայինների շարքում՝ յայտնի հերոս գեն. Արշակ Տէր-Ղուկասեանի և նշանաւոր քաղաքագլուխ Պօղոս Իզմայլեանի արձանները, որոնք կառուցուած են Թիֆլիզ քաղաքի հաշուով, քայքայուել, անշքացել են. հարկաւոր է ուշադրութիւն դարձնել»[584]: Նույն թվականին մեկ այլ լրագրի թղթակիցն այդ առթիվ ուղղակի նշել է, թե «Վանքի տաճարի գավթում տեղադրված նախկին քաղաքագլուխ Պ. Ա. Իզմայլովի հուշարձանն ամբողջությամբ քայքայված վիճակում է: Այս դեպքում ժամանակի քայքայիչ ազդեցությանը օգնության են հասել ինչ-որ սրիկաների ձեռքեր, որոնք ջարդել են երկաթե ճաղաշարը և մինչև իսկ հուշարձանից պոկել մարմարի կտորները: Անհրաժեշտ է հուշարձանը վերանորոգել»[585]:

Շուլավերցի աշուղ Հազիրն ունի մի ստեղծագործություն, որը գրել է 1895 թ. ի հիշատակ Պ. Իզմայիլյանցի: Ահա այն.

«Երջանկայիշատակ Պօղոս Իզմայիլեանի մահուան առիթով.

Մայր Տփխիսի հարազատ որդի Պօղոս,
Ազնիւ քաղաքագլուխ, քաջ գործակատար,
Կտրիճ յառաջադէմ, դու անյաղթ հերոս,
Քսան տարի աշխատեցիր մեզ համար,

Ի մանկութենէ սիրեցիր մարդկութիւն,
Տփխիսի վարչութեան եղար ամուր սիւն,
Աշխարհի մէջ թողեցիր անմահ անուն,
Որ կյիշուի Տփխիսի մէջ դարեցդար:

Կեանքըղ ազգիդ համար չխնայեցիր,
Լրագիրներին աշխատակցեցիր,
Հայրենիքիդ պարզերես ծառայեցիր,
Գիշեր ցերեկ կաշխատէիր անդադար:

Բնաւորութիւնդ բարի դու ազնիւ,
Արժանաւոր մարդու՝ գիտէիր պատիւ
Նիհար բարակակազմ՝ գործի մէջ արծիւ,
Դուման չէ ունեցել քեզ պէս ղեկավար:

Դու շնորհալի մարդ էիր բաւականին,
Հսկում էիր մեր երկրի ամէն բանին,
Աշխատելով հասար արդ աստիճանին,
Սիրում էիր ամէն ազգին հաւասար:

Իզմայիլեանց Պօղոս, ու՞ր ես աննման,
Չէ՞ որ դու գործի գնացիր Ռուսաստան,
Այժմ պատրաստ ես, որ մտնես գերեզման,
Ընկերներիդ թողեցիր անմխիթար:

Քսան տարուայ մէջ շատ գործ կատարեցիր,
Ընտիր, ազնիւ բարեկամներ ճարեցիր,
Շատ բարի նորոգումներ հնարեցիր,
Թողիր մեզ համար մշակուած ճանապարհ:

Թէպէտ դու մեզ համար շատ չարչարուեցիր,
Բայց չմոռացուար, վարձատրուեցիր,
Դու էլ նշանաւոր մարդ համարուեցիր,
Շուտ քո մահուան լուրը տարածուց աշխարհ:

Կոյր մահը Հազրուն զրկեց քեզանից,
Դու եւս զրկուար մայրենի տանից,
Ա՜ւաղ, որ շատ շուտ հեռացար մեզանից,
Նպատակըդ մնաց թերի անկատար»[586]:

Պ. Իզմայիլյանցի թիֆլիսյան բնակարաններից հայտնի է 1892 թ. ինժեներ Կ. Բուտկևիչի նախագծով նախկինում Միրզոևին և Տեր-Ղուկասովին պատկանած հողամասի վրա կառուցվելիք տունը[587]:

ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՎԱՆԳՈՒԼՅԱՆՑ

Գ. Եվանգուլյանցը ծնվել է Թիֆլիսում[588] 1843 թ.: Տեղի 1-ին գիմնազիան ավարտելուց հետո (1863 թ.) ուսումը շարունակել է Պետերբուրգի համալսարանում և հասել իրավաբանության թեկնածուի աստիճանի: Եղել է պատմաբան Գ. Եզովի աշակերտն ու ընկերը:

582. “Тифлисский Листок”, 1895, N 294:
583. «Մշակ», 1896, N 30, էջ 3: Նաև՝ “Тифлисский Листок”, 1896, N 49.
584. «Հովիւ», 1909, N 26, էջ 416:
585. “Тифлисский Листок”, 1909, N 245, էջ 2 (բնագրում՝ “Памятник бывшему город. голове П.А. Измайлову поставленный в ограде Ванскаго собора, пришел в совершенную ветхост. В этом случае разрушающему влиянию времени пришло на помощ руки каких-то негодяев, которые изломало решетку и даже отбили куски мрамора от памятника. Необходимо памятник реставрировать”).
586. Ե. Չարենցի անվան գրակ. և արվեստի թանգարան, Ս. Քամալյանի ֆոնդ, IV-10 (մեքենագիր մեկ էջ): Օգտվելով առիթից՝ շնորհակալություն ենք հայտնում Շուլավերի (այժմ՝ Շահումյան) վաստակաշատ մանկավարժ տիկ. Սանդուխտ Ասլանյանին՝ Հազիրի այս ստեղծագործությունը մեզ տրամադրելու համար:
587. ՎՀՊՊԿԱ, ֆ. 192 (Թիֆլիսի քաղաքային վարչություն), ց. 8ա, գ. 3278:
588. Այլ տվյալներով՝ Սղնախում կամ Սղնախից Թիֆլիս փոխադրված հայտնի հայ ընտանիքում (Տե՛ս **Խաստպետյան Ռ.**, Ով է Գրիգոր Եվանգուլովը. սպասում ենք արձագանքի, «Երկիր» օրաթերթ, 1991, N 47, էջ 4):

Պատանեկան տարիներին Գ. Եվանգուլյանցը դերասանական խաղով մասնակից է եղել թատերական ներկայացումների. «Պատկանեանցի թատրոնական գրուածքներում շատ շնորհքով խաղում էր հանգուցեալ Գէորգ Եւանգուլեանցը...»[589]:

1864 թ-ից աշխատակցել է հայ պարբերականներին: «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում, ի պաշտպանություն Չերնիշևսկու, հանդես է եկել Պալասանյանի դեմ: 1867 թ. վերադարձել է Թիֆլիս և աշխատանքի անցել որպես դատական քննիչ, հաշտարար դատավորի օգնական: Այնուհետև վարել է դատախազի օգնականի պաշտոնը: 1876 թ. աշխատանքի է անցել փոխարքայի գլխավոր կառավարության դեպարտամենտում: Ջուգաեեռաբար Գ. Եվանգուլյանցը ընդգրկված էր Ներսիսյան (1878-ից) և Գայանյան դպրոցների հոգաբարձության կազմում, նաև նպաստել է Էրզրումի «Սանասարյան» վարժարանի գործունեությանը[590]: 1882 թ. ընտրվել է դատական դեպարտամենտի անդամ:

Թիֆլիսյան ծիաքարշը

1883 թ. Գ. Եվանգուլյանցը թողնում է պետական ծառայությունը և մտնում երդվյալ հավատարմատարների շարքը[591]. «Փոխարքայութիւնը վերջանալուց յետոյ նա թողեց ծառայութիւնը և սկսեց իբրև երդուեալ հաւատարմատար փաստաբանութիւն անել և կարճ ժամանակի մէջ ստացաւ երկրիս մէջ ամենատաղանդաւոր, հմուտ և բարեխիղճ փաստաբանի անուն: Նա վարում էր երկար ժամանակ և Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութեան խորհրդի նախագահի պաշտօնը...»[592]: Առաջին անգամ Քաղաքային խորհրդարանի անդամ է ընտրվել 1870 թ., իսկ այնուհետև բազմիցս վերընտրվել է[593]:

1884 թ. Վանքի մայր տաճարի վերանորոգման խնդրի առթիվ, ի թիվս այլ պատվավոր քաղաքացիների, Գ. Եվանգուլյանցը ընտրվել է աշխատանքների իրականացմանը հետևող հանձնախմբի կազմում[594]: Թղթակցել է ժամանակի մամուլին, հատկապես «Մշակ»-ին:

1897 թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած քաղաքագլխի ընտրությունների ժամանակ Գ. Եվանգուլյանցը 38 կողմ և 34 դեմ ձայների հարաբերակցությամբ ընտրվել է քաղաքագլուխ (երկրորդ ուժեղ թեկնածուն էր իշխան Գ. Թումանյանցը)[595]: Ինչ-ինչ հանգամանքների բերումով ընտրված պաշտոնում Գ. Եվանգուլյանցի հաստատումը տեղի է ունենում միայն 1898 թ. փետրվարին. «Թիֆլիսի նորընտիր քաղաքագլուխը արդէն պաշտօնապէս հաստատուեց իւր պաշտօնին և փետրուարի 11-ից սկսեց իւր պաշտօնավարութիւնը...»[596]: Նույն տարվա փետրվարի 18-ին Եվանգուլյանցն առաջին անգամ նախագահում է քաղխորհրդի նիստը. «Իւր շնորհակալութեան ճառի մէջ նոր քաղաքագլուխը տեսութիւն արաւ այն ամենի, ինչ կատարել է իւր նախորդների օրերով քաղաքային հինքնավարութիւնը 1875-ից Թիֆլիս ներմուծելու ժամանակից՝ Իզմայլեանի, Մատինեանի, Կիպիանիի և Եազ. Թումանեանի օրերով: Ճառը հաւանութիւն գտաւ ընդհանրութեան և նոյն իսկ Եւանգուլեանի ընտրութեան հակառակ եղած իրաւասուների կողմից»[597]:

Նոր քաղաքագլխի պաշտոնավարության շրջանը հենց սկզբից, սակայն, ինչպես տնտեսական, այնպես էլ վարչաքաղաքական ասպարեզներում բնակոխում է դեպի բարդ, անգամ ճգնաժամային ժամանակաշրջան: Մասնավորապես՝ Թիֆլիսի ձիաքարշի խճողված (օտար ֆիրմաներից ո՞ր մեկին վաճառելու կամ թե քաղաքային շահագործմանը թողնելու) խնդիրը[598] շատ ջանք ու ժամանակ է խլում քաղաքագլխից: 1898 թ. վերջին Կովկասի

589. **Գրիգորեան Զաք.**, Յիշողութիւններ. Հայոց թատրոն Թիֆլիսում 1859-60 թթ., «Հովիւ», 1909, N 46, էջ 732:
590. «Մուրճ», 1901, N 9, էջ 251:
591. «Մուրճ», 1901, N 9, էջ 251:
592. «Տարազ», 1901, N 36, էջ 353:
593. "Новое Обозрение", 1891, N 2425, էջ 1:
594. «Արձագանք», 1884, N 40, էջ 142:
595. «Մշակ», 1897, N 117, էջ 1 (7 հոկտ.): Նաև՝ «Նոր-Դար», 1897, N 172, էջ 1:
596. «Նոր-Դար», 1898, N 25, էջ 1:
597. «Մուրճ», 1898, N 2-3, էջ 380:
598. Մանրամասները տես՝ «Մուրճ», 1899, N 2-3, էջ 328-333:

Քաղաքագլուխ Գևորգ Եվանգուլյանցն ու կինը՝ Նատալյա Եվանգուլյանցը

քաղաքացիական մասի կառավարիչ և ռազմական օկրուգի հրամանատար, մոլի միապետական և ռեակցիոներ իշխ. Գոլիցինը (1838-1907) բառիս բուն իմաստով ջախջախում է Թիֆլիսի քաղաքային ողջ դուման՝ ձերբակալելով և դատական գործ հարուցելով ինչպես Գ. Եվանգուլյանցի, այնպես էլ խորհրդարանի առավել հայտնի դեմքերի նկատմամբ. «Կառավարութեան կարգադրութեամբ դատի են ենթարկուած քաղաքագլուխ պ. Եւանգուլեան, վարչութեան նախկին անդամներ պպ. Իւանենկո և Վերմիշև և ներկայիս անդամներ՝ Խոսրովեան և իշխ. Ալ. Արղութեան»[599]: Ճիշտ է, ի վերջո դատարանը բոլորին էլ արդարացնում է, բայց մինչ այդ մի քանի տարի շարունակ մեղադրյալների գլխին կախված էր «դամոկլեսյան» սուրը[600]:

Ի դեպ, քաղաքագլխի օգնականի (փոխքաղաքագլուխ) թափուր պաշտոնը լրացնելու (նախկին փոխքաղաքագլուխ Իվանենկոն նահանգապետի որոշումով պաշտոնաթող էր) նպատակով մարտի 22-ին կայացած քվեարկությամբ հաղթող է դառնում Մ. Շեստակովը. «Քւեարկութեան ենթարկուեցան Մ. Ս. Շեստակով, Ե. Ե. Խոսրովեան, իշխաններ Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ եւ Վ. Մ. Չերքեզով: Սրանցից ձայների առաւելութեամբ՝ 23 ձայնով ընդդեմ 21-ի՝ ընտրուեց Մ. Ս. Շեստակով»[601]: Նույն ժամանակ ընթանում էր նահանգապետի թեկնադրմամբ ընթացող դատաքննությունը. «Առանձին կարևոր գործերի դատական քննիչ Աբէլին հարցաքննել է քաղաքագլուխ պ. Գ. Եւանգուլեանին, քաղաք. վարչութեան անդամներ՝ պ. պ. Ե. Խոսրովեանին և իշխ. Ա. Արղութեանին, Թիֆլիսի ինքնավարութեան մէջ զեղծումներ գործելու համար: Ապա հարցաքննութեան կ՚ենթարկուեն նախկին անդամներ՝ պ. պ. Իւանէնկո և Վերմիշեան»[602]:

Անսալով վրաց պատրիարք Ֆլավիանի թախանձանքներին՝ վրաց մայր եկեղեցու՝ Սվետիսցխովելի տաճարի նորոգման համար 1899 թ. ապրիլին Գ. Եվանգուլյանցն իր խոսքն է ուղղում հայ մեծահարուստներին՝ հանդես գալու նյութական միջոցների ցնծագին ներդրումներով: Եվ իրոք, հենց առաջին օրն իսկ և շարունակաբար՝ մոտ մեկ ամիս, ստացվում են դրամական խոշոր ցնծագին նվիրատվություններ[603]:

Գ. Եվանգուլյանցի՝ գնալով վատթարացող առողջությունն արդեն 1899 թ. ամռանը լուրջ խոչընդոտ էր լիարժեք աշխատանք ծավալելու համար. «Քաղաքագլուխ Գ. Եւանգուլեան երկու ամսւայ արձակուրդով ուղևորուեց արտասահման, բժշկուելու»[604]:

Քաղաքագլխի բացակայության օրերին նրա պարտականությունը ստանձնում է փոխքաղաքագլուխ Մ. Շեստակովը. «Թիֆլիսի քաղաքագլուխ

599. «Մուրճ», 1899, N 2-3, էջ 341:

600. **Туманов Г. М.**, Характеристики и воспоминания, книга первая, Тифлис, 1913, էջ 73: Ի դեպ, տակավին 1901 թ. խնդիրը լուծված չէր, քանի որ լրատվական մի հաղորդում հայտնել էր. «Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը քաղաքագլխի հետ միասին ստացել է մի ծանուցում, որից երևում է, որ քաղաքագլուխը և քաղաքային վարչութեան անդամները դատի են մատնուած պատժական օրէնքների հետեւեալ յօդուածների հիման վրայ. քաղաքագլուխ Գ. Գ. Եւանգուլեան – 411 և 412, վարչութեան նախկին անդամ Արղութեան – 411, 417, 377, 341, 409, վարչութեան նախկին անդամ Խ. Վերմիշև - 41 և 409…» («Քիւզանդիոն», 1901, մայիս 16, N 1406, էջ 1): Տարիներ անց այդ կապակցությամբ «Кавказское Слово»-ի թղթակիցը նշել է. «При последнем началось и закончилось оправданием известное дело по обвинению всего состава управы в преступлениях по службе» (1914, N 71, էջ 2):

601. «Տարազ», 1899, N 11, էջ 282:

602. «Տարազ», 1899, N 14, էջ 346-347:

603. **Կարապետյան Ս.**, Հայերը և Մցխեթի տաճարը, «Հայոց Աշխարհ», 1999, N 101:

604. «Մուրճ», 1899, N 6, էջ 725: Տես նաև՝ «Տարազ», 1899, N 21, էջ 77:

Գ. Գ. Եւանգուլեանին թոյլատրուած է երկու ամսով արձակուրդ արտասահման, որը յունիսի 26-ին Թիֆլիսից մեկնեց: Նրա պաշտօնը կրկատարէ վարչութեան անդամ Մ. Ս. Շէստակովը»[605]: Ուշագրավ է, որ չնայած Գ. Եվանգուլյանցի՝ արտասահման մեկնելու դրդապատճառը վատթարացած առողջության վերականգնումն էր, բայց հարազատ քաղաքի հոգսերը նրան հանգիստ չեն տվել նաև այդ օրերին. «... քաղաքագլուխ Գ. Գ. Եւանգուլեան արտասահման գնալով, բանակցութիւնների մէջ է մտնելու արտասահմանեան ֆիրմաների հետ քարշակից օգտուելու մասին խորհելու, ինչպէս և էլէքտրական լուսաւորութիւն մտցնելու մասին»[606]:

1900 թ. հունիսի 15-ին առաջնորդանիստ Վանքի բակում Ղուկասյան թանգարանի կառուցման գործին նպաստելու համար Ամենայն Հայոց Սկրտիչ կաթողիկոսը Գ. Եվանգուլյանցին հղել է իր հայրապետական օրհնությունը[607]: Ի դեպ, Եվանգուլյանցը, մինչև իր մահը, ընդգրկված է եղել նաև թանգարանի վարչության կազմում[608]:

Նրա պաշտոնավարության ընթացքում՝ 1901 թ. ապրիլի 10-ին, Թիֆլիսում բացվել է քանդակագործության և և գեղանկարչության առաջին դպրոցը[609]:

Գ. Եվանգուլյանցը վախճանվել է 1901 թ. սեպտեմբերի 16-ի երեկոյան, Հերակլի բաղնիքում. «Հանգուցեալի մահը շատ խոր և սրտաճմլիկ տպաւորութիւն գործեց քաղաքիս ազգաբնակութեան վրայ: Այդ մահը թէ յանկարծ էր և թէ անսպասելի: Իրաւ է, նա վաղուց արդէն տկար էր, բայց ոչ ոք չէր կարծում, թէ նրա բազմարդիւն օրերը հաշւած են»[610]: Հանգուցյալի դին ամփոփվել է Խոջիվանքի գերեզմանատանը[611]:

1902 թ. Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչը հաստատել է Քաղաքային Խորհրդի որոշումը՝ Թիֆլիսում «Տեատրալնայա» փողոցը, ի պատիվ հանգուցյալ քաղաքագլուխ Գ. Եվանգուլյանցի, անվանակոչել «Եվանգուլովսկայա»[612]:

Թիֆլիսում Գ. Եվանգուլյանցը մի քանի բնակարան է փոխել: Օրինակ՝ 1881 թ. նա բնակվում էր Գաւնովսկու փողոցում գտնվող Շաղինովի տանը[613]: Նրա տան հասցեն էր՝ Վողովոզնայա փողոց, N 8, 29[614], իսկ արդեն 1899 թ. Եվանգուլովը բնակվում էր Բալշոյ Վողովոզնի և Սապյորնայա փողոցների հատույթի մոտ գտնվող տանը[615]:

«Ղուկասյան» կրոնապատմական թանգարանը առաջնորդանիստ Վանքի բակում

Գ. Եվանգուլյանցի տունը նախկին Տեատրալնայա, այնուհետև՝ Եվանգուլովսկայա, ապա՝ Լունաչարսկի վերանվանված և Սապյորնայա, ապա՝ Շնելածե, այժմ՝ Թաբուկաշվիլի փողոցների հատույթում

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՂՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ

Իշխան Ալեքսանդր Միքայելյան Արղությանը-Երկայնաբազուկը ծնվել է 1860 թ.: Կրթությունը ստացել է նախ տեղի ռեալական ուսումնարանում, ապա՝ Մոսկվայում: Մասնագիտացել է հատկապես գյուղատնտեսության ոլորտում. «Անդրկովկասում կառավարութեան յանձնարարութեամբ զբաղուել է գիւղական կեանքի տնտես. հետազօտութիւններով: Անդրկով. երկաթուղիների վարչ. յանձնարարութեամբ Բօրչալուի գաւառը ուսումնասիրել է և կազմել նոյն. ընկեր. XXV ամեայ գործունէութեան տեղեկագիրը: Աշխատակցել է տեղական ռուս թերթերին...»[616]: Առանձին աշխատությամբ հրատարակել է Բորչալու գավառի տնտեսական խնդիրների վերլուծությանը նվիրված ուսումնասիրություն[617]:

Մամուլում հանդես է եկել ուշագրավ ուսումնասիրություններով[618]: Թիֆլիսի քաղաքային վարչության անդամ է ընտրվել 1896 թ. նոյեմբերի 11-ին[619]: Ի

605. «Տարազ», 1899, N 23, էջ 554:
606. «Տարազ», 1899, N 25, էջ 595
607. «Լումայ», 1901, գիրք Ա, էջ 348:
608. «Լումայ», 1902, N 5, էջ 266:
609. "Кавказский Календарь на 1913 г.", Тифлис, 1912, էջ 170:
610. «Տարազ», 1901, N 36, էջ 353: Տե՛ս նաև «Մուրճ», 1901, N 9, էջ 251, 478-479: «Մշակ», 1901, N 206, էջ 1: «Լումայ», 1901, գիրք Բ, էջ 478-479: "Новое Обозрение", 1901, N 5822:
611. «Լումայ», 1901, գիրք Բ, էջ 479:
612. "Тифлисский Листок", 1902, N 9:
613. "Кавказский Календарь на 1882 г.", Тифлис, 1881, էջ 213:
614. "Кавказский Календарь на 1886 г.", Тифлис, 1885, էջ 182:
615. "Кавказский Календарь на 1900 г.", Тифлис, 1899, էջ 615:
616. «Տարազ», 1902, N 48, էջ 466:
617. **Аргутинский-Долгоруков А. М.**, Борчалинский уезд в экономическом и коммерческом отношениях, Тифлис, 1897:
618. Տես՝ **Аргутинский А.**, Колонисты и туземцы Борчалинск. уезда. Очерки и наброски, "Новое обозрение", 1895, N 3720, 3721, 3722:
619. "Известия Тифлисской городской думы", N 4, Тифлис, 1911, էջ 20:

թիվս՝ Մ. Ս. Շեստակովի, Ե. Ե. Խոսրովյանի և Վ. Մ. Չերքեզովի, 1899 թ. մարտի 22-ին փոխքաղաքագլխի թափուր պաշտոնի (Իվանենկոն հեռացվել էր նահանգապետի որոշմամբ) համար քվեարկվել էր նաև Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկի թեկնածությունը, բայց անհաջող (ընտրվեց Մ. Ս. Շեստակովը)[620]: Միևնույն անդամության շարքերում վերընտրվել է նաև 1901 թ. հունվարի 8-ին, սակայն նահանգապետի կողմից չհաստատվելու պատճառով 1901 թ. փետրվարի 24-ին դուրս է մնացել ոչ միայն անդամությունից[621], այլև փոխքաղաքագլխի պաշտոնից, որը ստանձնել էր 1900 թ. փետրվարի 21-ից[622]. «... 1901 թ. ենթարկւեց քաղաք. վարչ. միւս անդամների և քաղաքագլխի հետ դատաստանի ու այն թւականին էլ արդարացաւ դատարանական պալատում...»[623]: Քաղաքային վարչության անդամության և խորհրդում՝ իրավասու եղած ժամանակ Ալ. Արղության-Երկայնաբազուկի հոգածության ներքո էին ժող. կրթության, առողջապահության և բարեգործության խնդիրները[624]:

Ալ. Արղության-Երկայնաբազուկը քաղաքագլուխ է ընտրվել 1902 թ. դեկտեմբերի 16-ին, բայց նահանգային իշխանության կողմից չհաստատվելով՝ չի պաշտոնավարել[625]: Հարկ է նշել, որ Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկի ընտրության մերժումը նահանգապետի կողմից բնավ չէր բխում քաղաքի շահերից, քանի որ նույն օրերին ողջույնի բազմաթիվ խոսքերում մասնավորապես շեշտված էր, որ. «Իշխան Արղութեան Երկայնաբազուկ իբրև ծանօթ քաղաք. գործերին և իբրև անկեղծ բարեացակամ քաղաքի բարգաւաճման անշուշտ այժմ կեռապատկէ իրան յատուկ եռանդը և երիտասարդական աշխուժով երեսի վրայ ընկած սիրուն Թիֆլիսը կըբարեկարգէ և կըճոխացնէ»[626]: Դարձյալ վարչության անդամ է ընտրվել 1907 թ. դեկտեմբերի 3-ին[627]: 1910 թ. քաղաքագլուխ Ալ. Խատիսյանի բացակայության ժամանակ Արղության-Երկայնաբազուկը ստանձնել է վարչության շինարարական բաժնի ղեկավարությունը[628]:

Իշխան Արղության-Երկայնաբազուկը երկրորդ անգամ փոխքաղաքագլուխ է ընտրվել 1911 թ. փետրվարի 28-ին[629], իսկ քաղաքային վարչության անդամ հերթական անգամ՝ 1916 թ. «Թիֆլիսի դուման մայիսի 31-ին նորից վերընտրեց 4 տարի ժամանակով իր վարչութեան (ուպրավա) երկու անդամներին – իշխ. Ա. Մ. Արղութեանին և Մ. Ջաբարին, բարձրացնելով նրանց ռոճիկը 6000-ի»[630]:

Ալեքսանդր Միքայելյան Արղության-Երկայնաբազուկի քիֆլիսյան բնակարանի հասցեն էր՝ Ալեքսանդրովյան փողոց, N 32[631]:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԱՄԲԱԿՈՒՄՅԱՆ ՎԵՐՄԻՇՅԱՆՑ

Ծնվել է 1863 թ. հունվարի 2-ին[632]: Սկզբնական կրթությունը ստացել է Թիֆլիսի, ապա՝ Բաքվի ռեալական ուսումնարաններում[633]: 1884 թ. գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի աստիճանով ավարտելով Պետրովսկի հողագործական և անտառամշակման ակադեմիան՝ աշխատանքի է անցնում իշխ. Ս. Կ. Բագրատիոն-Մոխրանսկու կալվածքում[634]:

1885 թ. Ք. Վերմիշյանցն արդեն ընտրվել էր իբրև լիազոր անձ Կովկասում պետական ունեցվածքի նախարարի (Ի. Ի. Տիխեև) մոտ և ստացել էր առաջադրանք՝ ուսումնասիրելու Կովկասում արքունի գյուղացիության տնտեսական դրությունը[635]: Աշխատանքի՝ իրեն հանձնարարված բաժինն էր Ախալցխայի և Ախալքալաքի գավառները: 1886 թ. Ք. Վերմիշյանցն ընտրվում է Կովկասյան գյուղատնտեսական ընկերության քարտուղար, ապա՝ արդյունահանվող արքունի վարելահողերի գնահատող[636]: 1888 թ. ընտրվում է հողագործական գործիքների և մեքենաների Կովկասյան ցուցահանդեսի կոմիտեի համակարգող քարտուղար, իսկ 1889 թ. նրան է վստահվում Կովկասյան գյուղատնտեսական ընկերության խորհրդի անդամությունը[637]:

1891 թ., երբ Վերմիշյանցն ընտրվում է քաղաքային խորհրդի ձայնավոր (անդամ), միաժամանակ արծարծվում են նաև քաղաքային վարչության անդամության մեջ նրան ներառելու հնարավորությունները[638]: Նույն թվականին կայացած դումայի նիստերից մեկում լսվել է Վերմիշյանցի առաջարկը՝ քաղաքային վարչությանը կից «պատրիոտիքական բիւրօ» հիմնելու վերաբերյալ. «Դուման վճռեց պ. Վէրմիշովի այդ առաջարկութիւնն յայտնել քաղաքային վարչութեան զննութեանը, որ վերջինս

620. «Տարազ», 1899, N11, էջ 282:
621. "Известия Тифлисской городской думы", N 4, Тифлис, 1911, էջ 19-20:
622. Նույն տեղում:
623. «Տարազ», 1902, N48, էջ 466:
624. «Տարազ», նույն տեղում:
625. "Известия Тифлисской городской думы", N 4, Тифлис, 1911, էջ 18:
626. «Տարազ», 1899, N48, էջ 466:
627. Նույն տեղում:
628. "Тифлисский Листок", 1910, N 184:
629. "Известия Тифлисской городской думы", N 4, Тифлис, 1911, էջ 19:
630. «Հովիտ», 1916, N21, էջ 335:
631. "Кавказский Календарь на 1909 г.", Тифлис, 1908, էջ 999: Տես նաև՝ նշվ. աշխ. 1909 թ. հրատարակությունը, էջ 1130: Նաև՝ նշվ. աշխ., 1911 թ. հրատարակությունը՝ էջ 763:
632. "Тифлисская дума 1891 г. (краткая биография гласных)", "Новое Обозрение", 1891, N 2425, էջ 1:
633. Նույն տեղում:
634. Նույն տեղում:
635. Նույն տեղում:
636. Նույն տեղում:
637. Նույն տեղում:
638. Նույն տեղում:

Հայր և որդի՝ Ավակում և Քրիստափոր Վերմիշյանցները

մշակէ այդ հարցը: Թէ որքան անհրաժեշտ է պատրիոտիքական բիւրօճ, այդ շատ լաւ գիտէ ամեն մի քիչ շատ կրթւած քաղաքացի, ուստի մենք չենք կասկածում, որ քաղաքային վարչութիւնը եղածին չափ շուտով կը ներկայացնի դումային իր զեկուցումը»[639]:

Շուտով, սակայն, Վերմիշյանցը փոխադրվում է Բաքում և կառավարում Թիֆլիսի Առևտրական բանկի մասնաճյուղը[640]:

Քաղաքային վարչության անդամ է ընտրվում 1896 թ. հոկտեմբերի 7-ին[641]:

1898 թ. կառուցվելիք «Պոլիտեխնիկում»-ը Թիֆլիսում հիմնելու գաղափարը պաշտպանելու և հիմնավորելու նկատառումով Քաղաքային Խորհրդի հանձնարարականով Ք. Վերմիշյանցը գործուղվում է Բաքու[642]:

Նույն թվականի նոյեմբերի 2-ին նահանգային իշխանությունների կողմից Վերմիշյանցը հեռացվում է պաշտոնից[643]: Խնդրո առթիվ Վերմիշյանցի բողոքը մնում է անհետևանք. «...քաղաքային վարչութեան անդամներ պ. պ. Իւանենկօ և Վերմիշեան, Կովկասի կառավարչապետի կարգադրութեամբ հեռացրւած էին պաշտօնից: Այժմ տեղեկութիւն է ստացւել Պետերբուրգից, որ վերջիններիս բողոքը իրանց արձակման մասին՝ անհետեւանք է թողնւած կառավարիչ սենատի կողմից»[644]:

Սկսած 1899 թ-ից պաշտոնավարել է Մանթաշյանի նավթային ընկերությունում[645]:

Վերմիշյանցն էր այն քաղաքացին ու մտավորականը, որն իր պարտքը համարեց ծավալուն մի ուսումնասիրությամբ[646] պատասխան տալ վրացի գրող Ի. Ճավճավաձեի՝ հրապարակ հանած ինչպես հակագիտական, այնպես էլ հակահայ դրույթներ պարունակող գրքույկին[647]: Գիտական պատշաճ մակարդակով և բարեխղճությամբ կազմված հրատարակությունն իր ժամանակին արժանացել է գրախոսների դրվատանքին[648]:

Քաղաքագլուխ է ընտրվել 1904 թ. հոկտեմբերի 11-ին (45 կողմ, 27 դեմ)[649]: Ժամանակի մամուլը լայնորեն լուսաբանել է իրադարձությունը[650]: Դատելով հրապարակված արձագանքներից ու թղթակցություններից՝ Թիֆլիսի մտավորականությունն ընդհանուր առմամբ գոհ էր ընտրության արդյունքից[651]:

Պաշտոնավարել է մինչև 1905 թ. սեպտեմբերի 14-ը[652], այսինքն՝ 1 տարուց էլ պակաս մի ժամանակահատված:

Հակառակ պաշտոնավարության համեմատաբար կարճ ընթացքին՝ Ք. Վերմիշյանցին վիճակված էր իր գործունեությունը ծավալել փոթորկալից մի շրջանում: Մասնավորապես 1905 թ. մոլեգնած հայթրքական ընդհարումների օրերին Ք. Վերմիշյանցից՝ իբրև պաշտոնատար անձ և իբրև հայ, ակընկալվում էր ազգամիջյան կրքերը հանգստացնելու ուղղությամբ առավել խելամիտ և նպատակային գործունեություն: Ինչպես վկայում է ժամանակի մամուլը, Ք. Վերմիշյանցի ջանքերն այդ ուղղությամբ տվել են որոշակի արդյունք. «Այն րոպեից, երբ Բագուի սոսկալի աղէտի լուրը հաստատուեց Թիֆլիսում և ստուգուեց, որ այդ մի հասարակ կռիւ չէ, երբ տեղական լրագրների մէջ տպուեցին առաջին կցկտուր տեղեկութիւնները բռնկուեց ամբողջ ազգաբնակութիւնն, առանց ազգերի խտրութեան: Բացի այն քստմնելի տարրերից, որոնց համար ամեն մի խլրտում հաճելի է և ձեռնտու, ամենքը յուզուեցին և վրդովուեցին: Բողոքի առաջին ձայնը տուեց Թիֆլիսի համակրելի քաղաքագլուխ պ. Քրիստափոր Վերմիշեանը: Մի անձնաւորութիւն, որ դեռ քաղաքագլուխ ընտրուելուց շատ առաջ յայտնի էր իւր մաքուր հասարակական ձգտումներով իբրև գործիչ, իբրև գրչի մարդ և հռետոր: Պ. Վերմիշեանը հեռագրով դիմեց Բագուի յայտնի թուրքերին – Հաջի-Զէյնալ-Աբդին Թաղիեվին, «Каспий» լրագրի խմբագիր Ալի Մարդան Բէգ Թօփչիբաշեվին, հրապարակախօս Աղաեվին, Հասան-Բէգ Մէլիքօվին, ազդեցիկ Աշուրօվին, Հաջիեվին և այլոց, խնդրելով սրանց, որ շտապեն ազդել իրանց կրօնակիցների

639. «Տարազ», 1891, N 5, էջ 89:
640. «Տարազ», 1904, N 24, էջ 222:
641. "Известия Тифлисской городской думы", 1911, N 4, էջ 20:
642. "Каспий", 1898, N 35:
643. "Известия Тифлисской городской думы", 1911, N 4, էջ 20:
644. «Տարազ», 1899, N 21, էջ 506:
645. «Տարազ», 1904, N 24, էջ 222:
646. **Вермишев Х.**, Материалы для истории грузино-армянских отношений; ответ на книжку кн. И. Г. Чавчавадзе-Армянские ученые и "вопиющие камни", СПБ, 1904:
647. **Чавчавадзе И. Г.**, Армянские ученые и "вопиющие камни", Тифлис, 1902:
648. «Տարազ», 1905, N 34: «Լումայ», 1904, N 4, էջ 231-234:
649. «Տարազ», նույն տեղում:
650. "Тифлисский Листок", 1904, N 291: "Новое Обозрение", 1904, N 24: "Новости", 1904, N 305:
651. **М-ч. А.**, Новый городской голова города Тифлиса, "Новое Обозрение", 1904, N 24:
652. Նշվ. հանդեսը, էջ 18:

Քրիստափոր Ավակումի Վերմիշյանցը քաղաքագլխի պաշտոնավարության շրջանում (1905 թ.) և իր հինգ զավակները

վրայ՝ վերջ տալու ամօթաբեր շարժմանը: Միևնույն ժամանակ, պ. Վերմիշեանը դիմեց Կովկասի կառավարչապետի պաշտօնակատար գեներալ-աղիւտանտ Մալամային, խնդրելով, որ նա շուտով միջոցներ ձեռնարկի կոտորածի առաջն առնելու...»[653]: Ընդհարումներից հետո տուժածների ընտանիքներին օգնելու մտահոգությամբ Վերմիշյանցը հանգանակություն է նախաձեռնել[654]:

Վերմիշյանցը եռանդուն կերպով թղթակցում էր զանազան լրագրերին (գրեթե բացառապես ռուսալեզու), սակայն երբեմն նրա հրապարակումներն ու նամակներն աչքի էին ընկնում շոշափված նյութի ոչ պատշաճ մակարդակի իմացությամբ: Ժամանակի մամուլի էջերում կարելի է գտնել Վերմիշյանցի որոշ թյուր դատողություններն ու եզրահանգումները մերկացնող հրապարակումներ[655]:

1906 թ. Ք. Վերմիշյանցի քիֆլիսյան տան հասցեն էր՝ Նիկոլաևսկի փ., N 79[656]:

1907 թ. դեկտեմբերի 9-ին Վերմիշյանցը մասնակցում է Թիֆլիսի ժողովարանում կայացած «Թիֆլիսի առևտրականների փոխադարձ օգնութեան ընկերութեան» անդամների ընդհանուր ժողովին[657]:

1909 թ-ից խմբագրում է Բաքվում լույս տեսնող ռուսերեն “Баку” թերթը, որի առանձին հրապարակումները, ի դեպ, ենթարկվում են խիստ և տեղին քննադատության[658]:

1911 թ. Վերմիշյանցի համար գաղափարական բուռն պայքարի ժամանակաշրջան էր: Նրա գաղափարական հակառակորդներն ու մասնավորապես Ստ. Շահումյանը քննադատում էին Վերմիշյանցին՝ որպես պրոլետարական մամուլի գոյությանը խոչընդոտողի, քննադատություններից խուսափողի և բուրժուազիայի շահերի պաշտպանի: Հատկանշական է, որ այդ բավականին սուր հրապարակումներին[659], ըստ էության, Վերմիշյանցին պատշաճ պատասխան տալ չի հաջողվում: Ի դեպ, իր գաղափարական հակառակորդներին Վերմիշյանցը պատասխանում էր իր իսկ խմբագրությամբ լույս տեսնող “Баку” թերթում:

Գրեթե ողջ 1912 թ. Վերմիշյանցը վատնում է ներքաշված լինելով «Դաշնակցական» մի թռուցիկ տպագրած լինելու պատճառով իր դեմ հարուցված դատական գործի մեջ: Հայտնի է, որ հարուցված մեղադրականը քննվել ու վերաքննվել է «Երեքշաբթի, նոյեմբերի 27-ին, դատաստանական պալատի

653. «Լումայ», 1905, N1, էջ 158: Արյունահեղությունը կասեցնելու նպատակով Կովկասի կառավարչապետին Վերմիշյանցը դիմել է փետրվարի 9-ին (ընդհարումները տևել էին փետրվարի 6-11-ը, «Տարազ», 1905, N 4, էջ 57): Ի դեպ, տարիներ անց Վերմիշյանցը, ամենայն մանրամասնությամբ անդրադառնալով 1905 թ. տեղի ունեցած քաղաքական վայրիվերումներին, հանդես է եկել առանձին հուշագրությամբ (տես՝ Вермишев Х., Из недавняго прошлаго: 29 августа 1905 г. в Тифлисской городской думе, Баку, 1917: Տե՛ս նաև “Кавказское Слово”, 1917, N 7): Հայտնի է, որ այդ աշխատանքն իրագործելու նպատակով հավաստի նյութեր ձեռք բերելու համար 1917 թ. Վերմիշյանցը խնդրանքով դիմել էր Ալ. Խատիսյանցին («Հորիզոն», 1917, N 31):

654. «Տարազ», 1905, N 5, էջ 65:

655. Օրինակ՝ “Тифлисский Листок”, 1906, N 38:

656. “Весь Тифлис” (Справочно-адресный альбом), Тифлис, 1906, էջ 50:

657. «Հովիտ», 1907, N 47, էջ 751:

658. «Հովիտ», 1909, N 42, էջ 662-663; N 46, էջ 728-729: «Հովիտ», 1910, N 7, էջ 103; N 32, էջ 505-506:

659. “Современная Жизнь”, 1911, N 2, 3: Տե՛ս նաև **Շահումյան Ստ.**, Երկեր, հ. 2, Երևան, 1957, էջ 130-131, 134-138:

յատուկ բաժանմունքում, դասային ներկայացուցիչների մասնակցութեամբ քննւում էր “Баку” թերթի խմբագիր Խ. Ա. Վերմիշեանի գործը, որը մեղադրւում էր քրէական բաժնի 129-րդ յօդւածով: Այս գործը առաջին անգամ քննւում էր ներկայ տարւայ մարտի 5-ին: Դատաստանական պալատի յատուկ բաժանմունքը Խ. Ա. Վերմիշեանին ճանաչեց մեղաւոր և դատապարտեց իրաւունքներից զրկման և Սիբիր աքսորման: Վ. Ա. Մակլակովի տւած բողոքի համաձայն կառավարիչ սենատը բեկանեց Թիֆլիսի դատաստանական պալատի որոշումը և վճռեց գործը յանձնել նոր կազմով յատուկ բաժանմունքի քննութեան: ...դատախազի օգնական պ. Վասիլևը գտնում է, որ գործը պէտք է դռնփակ քննւի, որովհետև Խ. Ա. Վերմիշեանը մեղադրւում է „Դաշնակցութիւն„ կուսակցութեան թռուցիկը տպագրելու մէջ: Դատախազի կարծիքով դատարանում այդ թռուցիկի հրապարակով ընթերցումը չըպէտք է թոյլատրւի, որպէսզի պաշտպանւած մնայ պետական իշխանութեան պատիւը: Մեղադրեալի պաշտպան երդ. հաւ. Ի. Մ. Դոլուխանեանը գտնում է, որ պետական մեղադրանքի ներկայացուցիչը, փաստերի հիման վրայ կազմած ենթադրութիւններ չի առաջ բերում, որոնցով կարելի էր հնարաւոր համարել, որ ամբողջովին, և ոչ թէ Ռուսիային վերաբերող թռուցիկի դռնբաց ընթերցումը կարող է վնասել ռուս պետական իշխանութեան հեղինակութեան: Դատաստանական պալատի յատուկ բաժանմունքը կէս ժամ խորհրդակցելուց յետոյ, չը համաձայնւեց պաշտպանի յայտնած կարծիքի հետ և որոշեց գործը քննել դռնփակ:

Դատաստանական պալատի յատուկ բաժանմունքի որոշմամբ Խ. Ա. Վերմիշեանը մեղաւոր ճանաչւեց պատժագրքի 1044 յօդ. առաջին կէտով և դատապարտեց 300 րուբ. տուգանքի կամ անկարողութեան դէպքում 3 ամիս բանտարկութեան...»[660]:

Ք. Վերմիշյանցը հեղինակել է բազմաթիվ գիտական, գաղափարախոսական և հրապարակախոսական նյութեր[661]:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Վերմիշյանցը շարունակել է թղթակցել պարբերականներին, սակայն այդ շրջանի նրա գործունեությունը լուսաբանող տվյալները կցկտուր են[662]:

Ք. Վերմիշյանցը վախճանվել է 1933 թ. և թաղվել Պյատիգորսկի հայկական գերեզմանոցում:

ՎԱՍԻԼԻ ՆԻԿՈԼԱԵՎԻՉ ՉԵՐՔԵԶՈՎ

Չերքեզովների հին ու հայտնի տոհմը, ըստ ավանդության, չերքեզական ծագում ուներ. «Չերքեզովներ՝ Կախեթում և Քարթլիում վրացական իշխանական և ազնվանական ազգանուն է, որն ըստ ավանդության՝ չերքեզական ծագում ունի»[663]:

Վ.Ն. Չերքեզովը ծնվել է 1857 թ. հունիսի 5-ին Կախեթի Չայլուր գյուղում, որը վրաց Չերքեզով տոհմի սեփական կալվածքն էր: Տեղի ռեալական ուսումնարանն ավարտելուց հետո համալսարանական ուսում ստանալու նպատակով Վ. Չերքեզովը մեկնում է Պետերբուրգ և քննություններ հանձնում միաժամանակ երկու՝ լեռնային և հաղորդակցության ուղիների բաժիններում, այն հույսով, որ դրանցից գոնե մեկում կընդունվի: Սակայն արտակարգ պատրաստվածության շնորհիվ Վ. Չերքեզովին ընդունում են երկու բաժիններում էլ միաժամանակ: Որքան էլ որ տարօրինակ է, Չերքեզովը, այնուամենայնիվ, չի ավարտում բաժիններից և ոչ մեկը և Թիֆլիս է վերադառնում առանց ավարտական դիպլոմի և հատուկ իմացությունների[664]: Դա տեղի է ունենում հատկապես նյութական դժվարությունների պատճառով, երբ Չերքեզովը ստիպված էր աշխատանքի անցնել իր բազմանդամ ընտանիքի ու հարազատների կարիքները հոգալու համար :

Թիֆլիսում նախ մասնավոր դասեր է տալիս, ապա քիչ թե շատ մտավոր աշխատանք փնտրելով՝ աշխատում է որպես սրբագրիչ, հետո նաև որպես քարտուղար «Кавказ»-ի խմբագրությունում: Այդ ընթացքում Չերքեզովը զբաղվում է նաև գրական ոլորտի գործունեությամբ և օրինակ՝ 1891 թ. «Новое обозрение» թերթում հրապարակում է ֆելիետոնների շարք:

Դեռևս 1885 թ. Վ. Չերքեզովն ընտրվում է Թիֆլիսի նահանգի ազնվականության միության քարտուղար: Այդ պաշտոնը Չերքեզովը վարում է մինչև 1888 թ., այնուհետև մինչև 1892 թ. նա կատարում է նույն միության գրասենյակի նախագահի քարտուղարի պարտականությունները: 1895 թ-ից Չերքե-

660. «Տարազ», 1912, N 11, էջ 191: Հմմտ. «Հովիտ», 1912, N 11, էջ 175; N 20, էջ 320; N 47, էջ 751:

661. Տես օրինակ՝ **Вермишев Х.**, К вопросу о крестьянском банке, “Новое обозрение”, 1887, N 1228, 1229, 1249. **Вермишев Х.**, Духоборы Ахалкалакскаго уезда, “Кавказ”, 1890, N 174, 175. **Вермишев Х.**, Еще об американской лозе (письмо из Вены), “Новое обозрение”, 1892, N 2792. **Вермишев Х.**, Свод статист. данных о землевладения в Тифлисск. и Кутаис. губ. изд. закавказск. стат. ком. под ред. члена комит. Е. И. Кондратенко, “Кавказ”, 1893, N 220. **Вермишев Х.**, Экспорт кукурузы в Кутаисской губ., “Новое обозрение”, 1896, N 4158, 4162 և այլն:

662. Հայտնի է օրինակ 1922 թ. «Օգնիր Հայաստանին» միօրյա թերթում (10-ը փետրվարի, ուրբաթ) տպագրված Վերմիշյանի՝ «Հայաստանի գիւղացիների գիւղատնտեսական կարիքները» հոդվածը:

663. “Словарь кавказских деятелей”, Тифлис, 1890, էջ 77 (Черкезовы - груз. княж. и двор. фамилия в Картлинии и Кахетии; по преданию происход. от черкесов).

664. **Туманов Г. М.**, Характеристики и воспоминания, книга первая, Тифлис, 1913, էջ 71:

Վասիլի Նիկոլաևիչ Չերքեզով

զովը հիշյալ միության կողմից անդամակցել է Պետական Հողագործական Բանկի Անդրկովկասյան մասնաճյուղին[665]: Դժվար է գուշակել, թե Չերքեզովի գրական գործունեությունը որքան կշարունակվեր, եթե 1898 թ. վերջին տեղի ունեցած դեպքերը[666] կտրուկ չփոխեին իրադարձությունների ընթացքը, երբ իշխ. Գոլիցինի հաստատած ռեժիմից խուսափելով՝ քաղխորհրդի ազգությամբ հայ գրեթե բոլոր իրավասուները, տուրք տալով ստեղծված կացությանը, մի կողմ քաշվեցին և միաոժամանակ ձեռնպահ մնացին քաղաքի կառավարման գործերին մասնակցելուց: Մյուս կողմից էլ իրավասուները թեկնածուների թվում փնտրում էին այնպիսի անհատների, որոնք զերծ կմնային ազգայնամոլությունից. «Ականավոր հասարակական գործիչները չէին համարձակվում գնալ դեպի կառավարում, գիտակցելով, թե իշխան Գոլիցինի օրոք ինչքան սայթաքում է քաղաքային գործիչի ճանապարհը: Թեկնածուն պետք էր փնտրել «անգործների» շարքում: Այդ ժամանակաշրջանում Քաղաքային դումայի անդամների ուշադրությունը ակամա բևեռվել էր իշխան Վ. Ն. Չերքեզովի վրա, որը հայտնի էր որպես բացառիկ ընդունակություններով անձնավորություն և վրացի: Իր ազգային անկողմնակալությունը ցույց տալու նպատակով Դուման ձգտում էր կառավարման օղակում ունենալ գեթ մեկ վրացի: Այդպիսով, կառավարման անդամներ ընտրվեցին Վ. Ն. Չերքեզովը և Մ. Ս. Շեստակովը: Իշխան Չերքեզովը կառավարման համար ավելի նախընտրելի էր, քանի որ նա հայատյաց չէր (այդ ժամանակ Վեղիչկոն, Գոլիցինի աջակցությամբ, ռուսների և վրացիների մեջ ջանաղրոհեն տարածում էր ուժգին հակահայկականություն)»[667]:

1898 թ. քաղխորհրդի կողմից Չերքեզովն ընտրվում է նախ որպես գնման հանձնաժողովի, իսկ նույն թվի դեկտեմբերի 7-ին՝ որպես քաղաքային վարչության անդամ: Այդպիսով, հենց այդ ժամանակաշրջանից էլ սկսվում է Վ. Չերքեզովի կենսագրության նոր՝ քաղաքային գործունեության շրջանը. «Վ. Չերքեզովը իր քաղաքային ծառայութիւնը սկսել է անշարժ կայքերի գնահատողի պաշտոնով՝ 10-12 տարի առաջ...»[668]:

1899 թ. մարտի 22-ին Վ. Չերքեզովը մասնակցում է փոխքաղաքագլխի թափուր պաշտոնի համար տեղի ունեցած քվեարկությանը, բայց անհաջող (ընտրվում է Մ. Ս. Շեստակովը)[669]: Վարչության անդամի պաշտոնում Չերքեզովը վերընտրվում է նաև 1899 թ. նոյեմբերի 8-ին, ապա 1903 թ. նոյեմբերի 17-ին և պաշտոնավարում մինչև քաղաքագլուխ ընտրվելը[670]:

1904 թ. մարտի 22-ին Վ. Չերքեզովն ընտրվում է փոխքաղաքագլուխ և մինչև 1907 թ. հոկտեմբերի 29-ը զուգահեռաբար վարում նաև այդ պաշտոնը[671]:

1905-1906 թվականներին, երբ ողջ Անդրկովկասում մոլեգնում էին հայ-թուրքական (թաթարական) ընդհարումները, Վ. Չերքեզովն իր զուսպ և խաղաղարար կեցվածքով կարողանում է գրավել ժողովրդի համակրանքն ու վստահությունը և 1907 թ. տեղի ունեցած քաղաքագլխի հերթական ընտրությունների ժամանակ Չերքեզովն արդեն չուներ և ոչ մի լուրջ մրցակից[672]: Ըստ էության, Վ. Չերքեզովը քաղաքագլխի պարտականություններն արդեն ստանձնել էր 1905 թ-ից, երբ հրաժարականով պաշտոնավարությունը դադարեցրել էր Ք. Վերմիշյանցը[673]: 1905-1907 թթ. քաղաքագլխի տեղի պաշտոնակատարության վերաբերյալ ժամանակի մամուլը նշել է. «որ նա տարաւ իր ուսերի վերայ վերջին ծանր

665. “Известия Тифлисской городской думы”, Тифлис, 1910, N 7-8, էջ 1:

666. Այդ մասին տես՝ Գ. Եվանգուլյանցի կենսագրականին հատկացված բաժնում:

667. **Туманов Г. М.**, նշվ. աշխ., էջ 73-74 (բնագրում՝ ”Солидные общественные деятели не рисковали итти в управу, зная, как скользок путь городского деятеля при кн. Голицыне. Приходилось искать кандидата среди “безработных”. Среди них внимание гласных того времени невольно останавливалось на кн. В. Н. Черкезове, как человек выдающихся способностей и как на грузине. У думы была тенденция иметь хоть одного грузина в составе управы, чтобы доказать свое национальное безпристрастие. Таким образом в члены управы прошли В. Н. Черкезов и М. С. Шестаков. Кн. Черкезов тем более был желателен для управы, что он не был армянофобом (в то время Величко, при содействии Голицина, усердно культивировал среди русских и грузин неистовое армянофобство”):

668. «Հովիտ», 1907, N40, էջ 628:

669. «Տարազ», 1899, N11, էջ 282:

670. “Известия Тифлисской городской думы”, 1911, N 4, էջ 20:

671. Նշվ. հանդեսը, էջ 19:

672. **Туманов Г. М.**, նշվ. աշխ., էջ 75:

673. «Տարազ», 1905, N 28, էջ 294:

Թիֆլիսը 1900-ական թթ.

տարիները»[674]: 1907 թ. սեպտեմբերի 14-ին Վ. Չերքեզովն ընտրվել[675], իսկ հոկտեմբերի 29-ին[676] հաստատվել է քաղաքագլխի պաշտոնում և մինչև 1909 թ. հոկտեմբերի 29-ը մնալով այդ պաշտոնում՝ հիվանդության պատճառով գործնականում պաշտոնավարել է միայն մեկուկես տարի: Ճիշտ է, օրակարգում էին Ալեքսանդր Արղության-Երկայնաբազուկի ու հատկապես Միքայել Թամամշյանի թեկնածությունները, բայց այդ թեկնածությունները, իրենց աջակիցներով հանդերձ, այնուամենայնիվ, զիջում են Վ. Չերքեզովին[677]: Կարճաժամկետ պաշտոնավարության ընթացքում Չերքեզովը կարողացել է իրականացնել պատկառելի ծավալներ ներկայացնող աշխատանքներ: Դրանցից էին՝ Մուխրանյան կամրջի շինարարությունը, «Արամյանց» հիվանդանոցի շենքը, գիմնազիա՝ Հավլաբար թաղամասում և այլն:

1910 թ. սկզբին Չերքեզովը բուժման նպատակով մեկնել է Պետերբուրգ. «Պետերբուրգից տեղեկութիւն է ստացուել, որ Թիֆլիզի քաղաքագլուխ իշխ. Չերքէզովի առողջութիւնը լաւ է»[678]: Երկու ամիս անց հայտնի է դարձել, որ «Թիֆլիզի քաղաքագլուխ իշխ. Չերքէզովը առողջացած մօտերս կը ժամանէ Պետերբուրգից Թիֆլիզ»[679]: Հակառակ

674. «Հովիւ», 1907, N 40, էջ 629:

675. “Известия Тифлисской городской думы”, N 7-8, Тифлис, 1910, էջ 1:

676. Ի պատիվ նույն օրը (29.X.1907) վախճանված Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի՝ Վ. Չերքեզովը հետաձգել է ծրագրված նիստը. «...նույն երեկոյ Թիֆլիսի Դումայի նիստը լինելով, քաղաքագլուխ Չերքեզօվի առաջարկութեամբ Դուման որոշեց յետաձգել իր նիստը ի յարգանս Հայոց եկեղեցու կրած կորստի» («Հովիւ», 1907, N 41, էջ 645):

677. **Կ. Թէմ**. Քաղաքագլխի ընտրութեան առիթով, «Հովիւ», 1907, N40, էջ 627-629: Ուշագրավ այն պնդումները, որոնք մատնանշում էին Վ. Չերքեզովի արժանիքների հանդեպ Մ. Թամամշյանի ունեցած առավելությունները. «...պ. Վ. Չերքեզովը միանգամայն կորցրել է իր նախկին պաղարիւնութիւնը և դարձել է չափազանց ջղագրգիռ - այդ երեւում էր դեռ անցեալ տարուայ քաղաքային խորհրդի նիստերին, որտեղ նորա ջղայնութիւնը հասնում էր այնպիսի այլանդակ չափերի, որ նորան մօտիկ ճանաչողները ապշում էին նորա բնաւորութեան այդ սուր և տարօրինակ փոփոխութեամբ. նիստերը յաճախ աղմկալի կերպարանք էին ստանում և սպառնում էին տգեղ սկանդալների: Բացի այդ, ուրիշ, զուտ գործնական նկատումներով վարչական կազմի պատուտակները ամրապընդելու և քաղաքային ֆինանսական ներկայ ճգնաժամի համար գործնական ելք գտնելու տեսակէտով ևս՝ պ. Վ. Չերքեզովի քաղաքագլխութիւնը չի կարող ցանկալի պտուղներ տալ, ներկայ հանգամանքներում աւելի կարող էր դրական և գործնական ծառայութիւն մատուցել քաղաքին պ. Միքայէլ Թամամշեանը՝ թէ՛ որպէս պատկառելի հեղինակաւոր անձն, թէ՛ որպէս ֆինանսիստ և գործնական խելքով ու փորձառութեամբ օժտուած իրաւաստու և թէ՛ որպէս անկախ և ինքնակայ անձնաւորութիւն: Ոմանք կարող են առարկել մեզ, որ նա ֆիզիկապէս իբր տկար է, նա, իրաւ է, տկար էր, բայց նա ներկայումս ապաքինուած է, և որպէս ապացոյց – նա ընտրուած է իրաւասու, մասնակցում է եռանդով նիստերին և բացի այդ՝ կարդում է Կովկասագիտութեան կուրսերում հետաքրքիր դասախոսութիւններ բազմամարդ ունկնդիրների ներկայութեամբ: Վերջապէս նորա նոյն իսկ մէկ շաբաթուայ պարապմունքը և անմիջական կառավարութիւնը քաղաքային գործերի - աւելի բարձր է, աւելի արդիւնաւոր, և գործնական հետևանք կարող է ունենալ քաղաքի համար, քան պ. Չերքեզովի իւրաքանչիւր ամսուանը, որը ուրիշ կողմերով ևս տկար է ներկայ հանգամանքներում այդ պաշտօնի համար...» (նշվ. հոդվածը, էջ 629):

678. «Հովիւ», 1910, N 3, էջ 48:

679. «Հովիւ», 1910, N 12, էջ 191:

այդ հուսադրող լուրերի՝ արդեն 1910 թ. ամռանը Վ. Չերքեզովի առողջությունը կտրուկ վատթարանում է, և շատ չանցած՝ 1910 թ. հուլիսի 14-ին, վախճանվում է 53 տարեկան հասակում: Հուղարկավորությունը տեղի է ունենում հուլիսի 18-ին Դիդուբե թաղամասի վրաց եկեղեցու մուտքի ձախ կողմում[680]:

1902-1909 թթ. իշխան Չերքեզովի թիֆլիսյան տան հասցեն էր՝ Սվյատոպոլսկ-Միրսկայա, N 5[681]: Արդեն 1906 թ. Չերքեզովը բնակվում էր Ելիզավետինսկայա N 65 տանը[682], 1908 թ.՝ Նիկոլաևսկի փող., N 29 տանը[683], 1909 թ-ին՝ կրկին Ելիզավետինսկայա N 65-ում[684]:

Խոսելով հանգուցյալ Չերքեզովի պաշտոնավարության տարիների հիմնական ավանդի մասին՝ թղթակից «Դիտող»-ը նշել է. «...իշխան Չերքեզովը Քաղաքային ինքնավարութեան մէջ մտցրեց գործունէության նոր ոգի, ուղղութիւն: Մինչև վերջին տարիները քաղաքի գործերով հետաքրքրւում էր ազգաբնակութեան մի շատ նեղ շրջան, որոնց սովորաբար ասում են՝ բարձր դաս, և քաղաքային գործունէութիւնը կրում էր կարծես նեղ դասակարգային կամ թէկուզ անուանեցէք ազգային գունաւորումն: Վերջին տարիները, իշխան Չէրքէզովի օրոք, գործունեութեան այդ սահմանափակ շրջանը շատ լայնացաւ և իր մէջ ընդգրկեց Թիֆլիզի ամբողջ ազգաբնակութեան շահերը, կարիքները: Քաղաքի գործերով սկսեցին հետաքրքրուել բոլորը, ազգաբնակութեան լայն խաւերը և քաղաքի բարօրութենա խնդիրը դարձաւ ամենի արտին մօտ գործ: Քաղաքային ինքնավարութիւնը գրաւեց ժողովրդի սէրն ու հարգանքը: Այդ է իշխան Չէրքէզովի մատուցած ծառայութիւնը քաղաքին. մեծ ու պատուաբեր ծառայութիւն, որ մեր Քաղաքային ինքնավարութեան պատմութեան մէջ կունենայ իր անմոռանալի էջերը...»[685]:

Դիդուբե թաղի վրաց եկեղեցու բակում տարածված գերեզմանոցը,

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԽԱՏԻՍՅԱՆՑ

Ծնվել է Թիֆլիսում 1874 թ. փետրվարի 17-ին: Հայրը՝ Հովհաննես ու հորեղբայրը՝ Գաբրիելը, ժամանակի հայտնի հասարակական-ազգային գործիչներ էին, իսկ մայրը հայտնի էր գրական աշխարհին «տիկին Մարիա» անունով[686]:

Սկզբնական կրթությունը ստացել է տեղի առաջին արական գիմնազիայում: 17 տարեկանում ավարտելով գիմնազիան՝ ուսումը շարունակել է Մոսկվայի և Խարկովի համալսարաններում և 1897 թ-ին ստացել բժշկի մասնագիտություն: 1898-1899 թթ. եղել է արտասահմանում. «...Բերլինում և Փարիզում, ուր հետաքրքրւում է ինքնավարութեանց տնտեսական խնդիրներով, որոնց մասին նա գրում է այն ժամանակ Թիֆլիսում հրատարակուող եղբ. Թումանեանների «Новое обозрение» առաջադէմ թերթում»[687]: 1900 թ. վերադարձել է Թիֆլիս:

1902 թ. ընտրվել է Թիֆլիսի Քաղաքային Խորհրդի անդամ: Քաղաքային վարչության անդամ է ընտրվել 1906 թ. հունվարի 23-ին[688]: Նույն անդամության մեջ վերընտրվել է նաև 1909 թ. հունվարի 8-ին[689]: Փոխքաղաքագլխի պաշտոնը ստանձնել է 1908 թ. նոյեմբերի 7-ին և մինչև 1910 թ. նոյեմբերի 15-ը մնացել այդ պաշտոնում[690]:

Բացի քաղաքի ինքնավարության գործերին իր եռանդուն մասնակցությունից՝ 1900-ական թթ. Խատիսյանցը հանդես է եկել նաև այլ ոլորտներում. «... հետաքրքրուել է հասարակական և այլ գործունէութեամբ. նա անդամ է շատ հասարակական հաստատութիւնների և ընկերութիւնների, ի միջի այլոց Ներսիսեան Հ.Հ.Դպրանոցի հոգաբարձու: Խատիսեան

680. “Известия...”, նշված համարը, էջ 37:
681. “Кавказский Календарь на 1903 г.”, Тифлис, 1902, էջ 664: Տես նաև՝ նշվ. աշխ., 1904 թ. տարեգիրքը (էջ 695):
682. “Кавказский Календарь на 1907 г.”, Тифлис, 1906, էջ 565:
683. “Кавказский Календарь на 1909 г.”, Тифлис, 1908, էջ 1027:
684. “Кавказский Календарь на 1910 г.”, Тифлис, 1909, էջ 1165:
685. «Հովիտ», 1910, N 19, էջ 300:
686. «Հովիտ», 1910, N 24, էջ 377:
687. «Հովիտ», նույն տեղում:
688. “Известия Тифлисской городской думы”, Тифлис, 1911, N 4, էջ 20:
689. Նույն տեղում: Տե՛ս նաև «Հովիտ», 1909, N 1, էջ 16:
690. Նշվ. հանդեսը, էջ 19: Նշանակալից էր 1909 թ. հունիսի 14-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ. Իզմայիլյանի այցը Թիֆլիս և այդ առթիվ, ի թիվս այլ պաշտոնյաների, կաթողիկոսին ուղղված Ալ. Խատիսյանցի ողջույնի խոսքը (“Кавказ”, 1909, N 135, էջ 2):

տաղանդաւոր դասախօս է և իր պերճախօս լեզուով լայն ժողովրդականացում է տալիս գիտական դրական նորութիւններին»[691]:

Անիի ավերակներն այցելելուց հետո Խատիսյանցը 1909 թ. հրապարակել է իր տպավորությունները[692]:

Տակավին ընտրություններից առաջ, երբ օրակարգի խնդիրն էր. «Ո՞վ է այն մարդը, որ կարող է արդարացնել Թիֆլիզի բազմացեղ ազգաբնակութեան յոյսերը», մարդկանց հայացքներն ակամա կանգ են առել Ալ. Խատիսյանց գործչի վրա. «Մեզ հարկաւոր է ներկայացուցիչ, որ կարողանայ ազգայնական-շովինիստական գծուծ կռիւներից, դասակարգային մանրմունր հաշիւներից վեր պահել քաղաքային ինքնավարութեան դրօշը: ...Մենք կարծում ենք, որ այդ մասին երկու կարծիք լինել չի կարող: Ով հետևել է մեր Քաղաք. Ինքնավարութեան Վերջին տարիների գործունեութեան զարգացման՝ նա նկատած կը լինի, որ իշխան Չէրքէզովի մօտ գործակիցը եղել է Քաղաքային Վարչութեան անդամ պ. Աղէքսանդր Խատիսեանը, որ ունի հարկաւոր պատրաստութիւն արժանաւորապէս ստանձնելու քաղաքի ղեկը»[693]:

Ընտրությունն ի վերջո կայանում է 1910 թ. սեպտեմբերի 20-ին: Արդյունքում 48 կողմ և 2 դեմ[694] ձայների քվեարկությամբ քաղաքագլուխ է ընտրվում Ալ. Խատիսյանցը և նոյեմբերի 15-ից ստանձնում պաշտոնավարությունը[695]: Այն մասին, թէ ինչպիսի դիրք էին բռնել վրացիներն այս ընտրության ժամանակ, հետագայում Խատիսյանցն իր հուշերում նշել է. «Երբ ինձ ընտրեցին քաղաքագլուխ Թիֆլիզում, վրաց ազգայնական թերթերը կը գրէին. -Եթէ պ. Խատիսեանը գիշերը լուսաւորի քաղաքը արեգակով, եւ փողոցները սալայատակի մարմարիոնով, դարձեալ մենք անոր ընտրութեան դէմ կը լինենք, որովհետեւ ան հայ է»[696]:

Թիֆլիսի կյանքում խոշոր իրադարձություն էր «Կովկասյան համալսարան» («Պոլիտեխնիկում») հիմնելու ծրագիրը: Արդեն 1910 թ. Ալ. Խատիսյանցը պայմանավորվածություն էր ձեռք բերել կրթօջախի կայացման գործում նաև Բաքվի քաղաքապետարանի օժանդակությունը ստանալու վերաբերյալ. «Բագուի քաղաքային ինքնավարութիւնը որոշել է յատկացնել կէս միլիօն ռուբլի Կովկասի համալսարանին. յայտնի է, որ Թիֆլիզի քաղաքային ինքնավարութիւնը նոյն նպատակին յատկացրել է 250.000 ռ. եւ 200 դեսեատին գետին»[697]: Հետապնդելով խնդիրը՝ 1911 թ. Ալ. Խատիսյանցը մեկնում է Պետերբուրգ. «Թիֆլիսի քաղաքագլուխը Պետերբուրգից հեռագրում է, որ առաջիկայ Զատկից յետոյ մի առանձին խորհրդաժողով պէտք է լինի ժողովրդական լուսաւորութեան նախարար Կասսօյի նախագահութեամբ և մասնակցութեամբ սենատօր Վատացիի և Ջունկովսկիի, ուր պէտք է քննուի Կովկասեան համալսարանի խնդիրը»[698]:

Ալեքսանդր Հովհաննիսյան Խատիսյանց

Նույն թվականի ապրիլին քաղաքագլխի գլխավորությամբ կատարվում է «Մուխրանյան» կամրջի բացումը. «Ապրիլի 24-ին հանդիսաւոր կերպով բացուեց Թիֆլիսի Մուխրանեան կամուրջը: Ծովացած բազմութեան ներկայութեամբ ռուս հոգևորականութիւնը Սրբազան Էկզարխի գլխավորութեամբ մաղթանք կատարեց. ներկայ էր գերապատիւ Եփրեմ սրբազանը որպէս քաղաքի կողմից հրաւիրուած հիւր: Քաղաքագլուխ պ. Խատիսեանը մի ճառով ներկայացրեց կամրջի պատմութիւնը. ապա Նորին պայծառափայլութիւն կոմսուհի Ե. Ա. Վօրօնցովա-Դաշկովան մկրատով կտրեց կամրջի ժապաւէնը և զինուորական երաժշտութեամբ ու կէցցէների տարափի տակ առաջինը անցաւ կամուրջը աւտոմօբիլով և անցուդարձն ազատ յայտարարուեց»[699]:

691. «Հովիտ», 1910, N 24, էջ 377:
692. **Խատիսեան Ալ.**, Անիում (Ճամբորդական յուշեր), «Գեղարուեստ», 1909, N 3, էջ 145-148:
693. «Հովիտ», 1910, N 19, էջ 301:
694. «Հովիտ», 1910, N 24, էջ 383:
695. Նշվ. հանդեսը, էջ 18: Ի դեպ, քաղաքագլուխ ընտրվելու կապակցությամբ ժամանակի մամուլում տպագրված նյութերը շեշտում են տեղի ունեցած ճիշտ ընտրությունը. «...ուրախ ենք ո՛չ իբրև հայ մամուլի անդամներից մէկը՝ որ տեսնում է մի պատուաւոր ու պատասխանատու պաշտօնի կոչուած հայազգի մէկին, ուրախ ենք՝ որովհետև ընտրուած է մի արժանաւոր յաջորդ հանգուցեալ Չէրքէզովին, որ՝ ինչպէս իր նախորդը՝ իր մէջ մոռացնել կը տայ թէ ինքը ազգաբնակութեան միայն այս կամ այն մասի, ցեղի, ազգի անդամն ու ներկայացուցիչն է, միայն նրա շահերի պաշտպանը: Նոր քաղաքագլխի անցած հասարակական գործունէութիւնը լաւագոյն գրաւականն է, որ նա կարդարացնէ ո՛չ միայն վստահութեամբ իրան քուէ տուած ձայնաւորների յոյսերը, այլև պատմական Թիֆլիզի ամբողջ ազգաբնակութեան...» («Հովիտ», 1910, N 24, էջ 370):
696. **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, N 5, էջ 57:
697. «Հովիտ», 1910, N 29, էջ 464:
698. «Հովիտ», 1911, N 12, էջ 192:
699. «Հովիտ», 1911, N 17, էջ 272:

Ալեքսանդր Խատիսյանցը մի խումբ հայ մտավորականների հետ

1912 թ. Ա. Խատիսյանցը մեկնում է Բաքու. «Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը զեկուցեց Բագու մեկնելու հետևանքները սենատոր Վատացիին, որը ցանկութիւն յայտնեց, որ ըստ կարելւոյն շուտ դրուի պոլիտեխնիկումի շինութեան հիմքը»[700], նաև. «Քաղաքագլուխն ուղարկեց Բագու քաղաքագլխի պաշտօնակատար Յարութիւնեանին, Թիֆլիսի դումայի խորին շնորհակալութիւնն արտայայտող հեռագիր՝ պոլիտեխնիկումին արած նուիրաբերութեան համար»[701]:

1912 թ. ընտրությունների ժամանակ Խատիսյանցը վերընտրվում է նույն պաշտոնում. «Քաղաքային դումայի ամսիս 9-ի նիստում, գրեթէ միաձայն, առաջիկայ քառամեակի համար քաղաքագլուխ ընտրուեց Ա. Խատիսեանը»[702]: Հազիվ 20 օր անց Ա. Խատիսյանցը ստիպված Պետերբուրգ է մեկնում «Դաշնակցություն» կուսակցության մի շարք անդամների դատաքննության գործով. «Յունուարի 30-ին Թիֆլիսի քաղաքագլուխ Աղեք. Խատիսեանը գնաց Պետերբուրգ, ուր կանչուած է «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործով»[703]:

Շարունակելով բեղուն գործունեությունը նաև 1913 թ.՝ տարեվերջին Խատիսյանցի առողջական վիճակը վատանում է. «Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսեանը հիւանդ է սուր յօդացաւով. տաքաթիւնը ցերեկով 38, իսկ երեկոները՝ 39: Բժշկում են մի խումբ բժիշկներ և յոյս ունին բժշկել մի ամսուայ ընթացքում»[704]: Հիվանդության շրջանում քաղաքագլխին փոխարինում է Ալ. Արղության-Երկայնաբազուկը. «Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Հ. Խատիսեանը տկարութեան պատճառով նրա պարտականութիւնները կատարում է քաղաքագլխի անձնափոխանորդ իշխ. Ա. Մ. Արղութեանը»[705]:

1914 թ. Ա. Խատիսյանցի համար ծանր տարի էր. փետրվարի 9-ին վախճանվում է մայրը՝ գրական և հասարակական գործիչ, հայերենի գիտակ և ուսուցիչ Մարիամ Խատիսյանցը[706]:

1915 թ. հունիսի 24-ին Ալ. Խատիսյանցի նախագահությամբ կայացել է 1914 թ. ընթացքում Թիֆլիսում կառուցված լավագույն շենքերի մրցանակաբաշխությունը. «...առաջին մրցանակը չէ տրվել. երկրորդ մրցանակին արժանացել է Բօզարջեանի տունը Գուդօվիչա փողոցում (կառուցումն ճարտարապետ Օհանջանեանի), իսկ երրորդ մրցանակը տարել է Շահմուրադեանի տունը Օլգինսկայա փող. N 52 (ճարտարապետ Տէր-Սահակեան)[707]:

Առաջին աշխարհամարտի օրերին Ալ. Խատիսյանցը, իր անմիջական պարտավորություններն ու պարտականությունները կատարելուց զատ, իբրև ճշմարիտ քաղաքացի հանդես է գալիս ժողովրդին հուսադրող, զգաստացնող ու նաև խրատող կոչերով ու ճառերով: Օրինակ, խորհուրդ էր տալիս այդ ծանր օրերին լինել ավելի խնայող ու տնտեսվար. «Թիֆլիսի քաղաքագլուխը հրատարակել է մի կոչ Թիֆլիսի քաղաքացիներին, որով յորդորում է հանգըստութեամբ կրել ժամանակաւոր զրկանքները, դէն ձգել ամեն մի շռայլութիւն, մոռանալ բոլոր աւելորդութիւնները, որոնք անթոյլատրելի են մանաւանդ ներկայումս և կրճատել իրենց կարիքները և անպէտք ծախսերը»[708]:

1916 թ. քաղաքագլխի գործուն մասնակցությամբ են ընթանում արևմտահայ փախստականներին օգնող միության աշխատանքները[709]:

1917 թ. Ա. Խատիսյանցի նախաձեռնությամբ Քաղաքային Խորհուրդը որոշում է կայացնում լեհ գրող Հ. Սենկևիչի անվամբ կոչել Թիֆլիսի փողոցներից և դպրոցներից մեկը: Այդ կապակցությամբ քաղաքագլուխը շնորհակալական նամակ է ստանում լեհ գործիչ, երդվյալ հավատարմատար Լեդնիցկիից[710]:

---

700. «Հովիտ», 1912, N 50, էջ 795:
701. Նույն տեղում: Հարկ է նշել, որ կառուցվելիք «պոլիտեխնիկում»-ի տեղի ընտրության հարցը տարակարծությունների ու երկար քննարկումների տեղիք է տվել: Ի վերջո հաստատվել էր Նավթլուղի թաղամասում կառուցելու տարբերակը, որին կողմնակից էր նաև ինքը՝ Խատիսյանը: Որոշումը, սակայն, հասարակության կողմից միանշանակ հավանության չի արժանացել: Առանձնապես դժգոհ էին վրացի որոշ գործիչներ, որոնց տեսակետները հրապարակվել էին ժամանակի մամուլում: Վերջիններս պնդում էին, թե հաստատությունը Նավթլուղում հիմնելը իբր բխում էր ոչ թե քաղաքի ողջ բնակչության, այլ միայն հայերի շահերից («ცნობა», N 19, "Закавказская Речь", "Тифлисский Листок", 1912, N 292):
702. «Հորիզոն», 1912, N 5, (11 յունուարի):
703. «Հովիտ», 1912, N 5, էջ 79: Տե՛ս նաև «Հովիտ», 1910, N 14, էջ 210-211; N 15, էջ 233:
704. «Հովիտ», 1913, N 43, էջ 687:
705. «Հովիտ», 1913, N 44, էջ 703:
706. «Հովիտ», 1914, N 7, էջ 102 («Հանգուցեալի գրական աշխատութիւնները կազմում են 1877-78 թուականներին լոյս ընծայած «Արևելեան հարց» (Восточный вопрос), «Հեղինէ», «Նոր ճանապարհի վրայ», «Փեսայ որսողներ», «Դժբաղդ կին», և այլն վիպական երկերը: Հանգուցեալը 30 տարի սրանից առաջ իր տան սալօնում մի խումբ առաջաւոր և ինտելիգենտ հայ կանանց հետ խորհրդակցելով՝ գլխաւոր հիմնադիրներից մէկն եղաւ այժմեան Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան, որի նախագահն էր շատ տարիներ և որի օգտին այժմ թողել է կտակով 10.000 ռ.»):
707. «Մշակ», 1915, N 138:
708. «Հովիտ», 1916, N 8, էջ 128:
709. «Համբաւաբեր», 1916, N 36, էջ 1132:
710. «Մշակ», 1917, N 31, էջ 3:

1917 թ. Խատիսյանցի՝ Թիֆլիսում քաղաքագլխի պաշտոնը վարելու վերջին տարին էր. «1917-ի ռուսական մեծ յեղափոխութեան հետևանքով, Վրացի ազգն երկրին կառաւարութիւնը ուզեց իւր ձեռքը ամփոփել, որով Պր. Խատիսեան թողնելով Թիֆլիզ անցաւ Ալեքսանդրապոլ նոյն քաղաքագլխի պաշտօնով: Յաջորդ 1918 թ. Հայկական Հանրապետութիւնը կազմուելով, Պարոն Խատիսեան Նախագահ և Վարչապետ անուանուեցաւ Ազատ հայրենիքի: Հայաստան և Հայ ժողովուրդը դեռ մեծամեծ վտանգներու մէջ կ' ապրեէին, պէտք էր բարեկարգել երկրի քաղաքական և տնտեսական վիճակը, պէտք էր կազմել և զինել Հայ քաջարի բանակը: Թշնամիք թէև յաղթած էին, սակայն դեռ երկաթի օղակ մը կը կազմէին նորածին Հանրապետութեան շուրջը. Հայոց անակնկալ կերպով յաղթական դուրս գալը անհաւասար կռուի միջէն, աւելի շարժեց և գրգռեց ուժգնօրեն հարեւան ցեղերուն նախանձն. օգնութեան կանչեցին Մեծամասնականները և Քեմալականները նուաճելու ահռչ Հանրապետութիւնը: Սակայն շնորհիւ իմաստուն վարչութեան Վսեմ. Նախագահին և Դիւցազն բանակին, ի դերև ելան անարի թշնամիներու վատ խորհուրդներն և փորձերն, և նոր նոր դափնիներով զարդարուեցան Հայկական Հանրապետութեան Կառավարութիւնն և հերոս մարտիկներու փայլուն զէնքերը և Պր. Ա. Խատիսեանի անհատական կորովի ղէմքը...»[711]:

Խատիսյանցի վարչապետության շրջանի (1919 թ. փետրվար - 1920 թ. մայիս) գործունեության բնութագրի խտացումն է Հռոմի Պապի Հայաստանի Հանրապետություն այցելած նվիրակի հետևյալ խոսքերը. «Հայկական Հանրապետութեան Նախագահ-Վարչապետը վերին աստիճանի զարգացած մի մարդ է և ունի վարչական ամեն ընտիր յատկութիւններ. Նա կարող է Եւրոպական ո՛ր և է պետութեան մը Նախագահ լինել»[712]:

1920 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի անկախության 2-րդ տարեդարձի օրը, Ա. Խատիսյանցը գտնվում էր Թիֆլիսում, որտեղ Արտիստիկ ընկերության թատրոնի շենքում կայացած ցերեկույթում նրան դիմավորեցին ջերմ ողջույներով. «Թատրոնը ծայր է ծայր լցրած բազմութիւնը երաժշտախմբի նուագածութեամբ ոտացի արաւ Խատիսեանին: Վերջինս զգացուած ճառով խօսեց հայ աշխատաւոր դասակարգի գործունէութեան մասին, որ ունեցաւ անճնուէր ղեկավարներ «Դաշնակցութիւնից», մատնանշեց թէ հայի ազատագրութեան ճանապարհը ծածկուած է տակաւին տատասկներով...»[713]:

1920 թ. դեկտեմբերի 16-ին Խորհրդային Հայաստանի իշխանությունների պարտադրմամբ Ալ. Խատիսյանցը ստիպված թողնում է հայրենիքը և դեկտեմբերի 20-ին ժամանում դեռևս անկախ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիս: Մինչև 1921 թ. փետրվարի 13-ը, այսինքն՝ 53 օր, Խատիսյանցը մնում է Թիֆլիսում և ապա անցնում արտասահման ու բնակություն հաստատում Փարիզում: Այդ օրերին Թիֆլիսում տիրող կացության և իր զգացումների մասին իր հուշերում Խատիսյանցը նշել է. «...կը զգայի, որ թէեւ ես ծնուած եմ Թիֆլիսում, 17 տարի աշխատած եմ այնտեղ քաղաքային ինքնավարութեան մէջ, վարած եմ քաղաքի առաջին պաշտօնը, բայց որ ես հիւր եմ այս քաղաքում...»[714]:

1920-1930 թթ. տպագրվում են Ալ. Խատիսյանցի հուշագրությունները նախ հոդվածաշարերի, ապա աշխատությունների տեսքով[715]:

Ալեքսանդր Խատիսյանցը վախճանվել է 1945 թ. մարտի 10-ին և թաղվել Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը: Տապանաքարին միայն ֆրանսերենով արձանագրված են իր և տիկնոջ անունները.

Ալ. Խատիսյանի տապանաքարը Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը (լուսանկարները Գ. Գևոնյանի)

711. «Բազմավէպ», 1920, N 9, էջ 261:
712. Նույնի՝ էջ 262:
713. «Մշակ», 1920, N 25, էջ 4:

714. **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, N 1, էջ 99:
715. Տես՝ **Խատիսեան Ա.**, Քաղաքապետի մը յիշատակները, «Հայրենիք», 1932, NN 7-12, 1933, NN 1-5: Առանձին գրքով՝ Պէյրութ, 1991: Նաև՝ «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» աշխատությունը (Աթենք, 1933 և Պէյրութ, 1968):

ALEXANDRE
KHATISSIAN
1874-1945
XENIA
KHATISSIAN
1894-1975

Անդրադառնալով Ալ. Խատիսյանցի քաղաքագլխության տարիներին Թիֆլիսի կրած փոփոխություններին՝ Մ. Սուլյանն իր հուշերում նշել է. «Չի կարելի մոռանալ, որ Խատիսեանի քաղաքագլուխ դառնալու օրից Թիֆլիսը շատ բարեփոխվեցաւ ու գեղեցկացաւ: ...Թիֆլիսի բոլոր քաղաքամասերը Խատիսեանի շնորհալի կարգադրութեամբ պայծառացան...»[716]:

Քաղաքագլխի գործունեությանը գնահատանքով է արտահայտվել նաև 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի դեսպան (մինչ այդ՝ Իտալիայի հյուպատոսը Տրապիզոնում) Ջակոմո Գորրինին. «...Ալեքսանդր Խատիսյանի նախագահությամբ, որը նախկինում Կովկասի և Վրաստանի մայրաքաղաքի անուն վաստակած և գերազանցապես հայերով բնակեցված Թիֆլիսի հմուտ և գործունյա քաղաքապետ էր»[717]:

Ալ. Խատիսյանցի քիֆլիսյան բնակարանի հասցեներից հայտնի են երկուսը՝ Գանովսկայա փող., N 9 (1908 թ.)[718] և Բեբուտովսկի փողոցի վրա գտնվող (N30) սեփական տունը (1909 թ.)[719]: Հայտնի է, որ այդ տանը Խատիսյանցը բնակվել է նաև 1911 թ.[720]:

1957 թ., երբ իր հուշերը թղթին էր հանձնում նախկին մենշևիկյան Վրաստանի կառավարության անդամ Դմիտրի Շալիկաշվիլին[721], Ալ. Խատիսյանցի վերաբերմամբ գրել է հետևյալ տողերը. «Այդ ժամանակաշրջանի համար բնութագրական էր այն, որ Թիֆլիսի քաղաքագլուխը հայ էր՝ Խատիսովը: Ընդ որում նա ոչ թե ինչ-որ վրացացած հայ էր, այլ հարյուր տոկոսով հայ, ընդհանուր ոչինչ չուներ Վրաստանի և վրացիների հետ, և, ամենայն հավանականությամբ, իրականացնում էր այն, ինչ իրենից էր կախված, որպեսզի իր հայրենակիցները իրենց տնտեսական գերազանցության շնորհիվ Թիֆլիսում գրավեին առաջին տեղը...»[722]:

716. **Սուլեան Մ.**, Թիֆլիսը իմ մանկութեան ժամանակ (անտիպ), ՀՀՊՊԿԱ, ֆ. 428, ց. 2, գ. 104, թ. 20:

717. Ջակոմո Գորրինիի անտիպ նյութից՝ սիրով տրամադրված Ալեքս Քանանյանի կողմից, թ. 14 (բնագրում՝ «...sotto la presidenza di Alessandro Khayissian, gia operoso e abile sindaco della citta di Tiflis, capitale del Caucaso e della Georgia, ma popolata prevalentemente di Armeni, e da essi al piu alto grado valorizzata»):

718. "Кавказский Календарь на 1909 г.:, Тифлис, 1908, էջ 1026:

719. "Кавказский Календарь на 1910 г.:, Тифлис, 1909, էջ 1165:

720. "Кавказский Календарь на 1912 г.:, Тифлис, 1911, էջ 804:

721. Դ. Շալիկաշվիլին 1921 թ. (հունվար-մարտ) Անկարայում եղել է Վրաստանի դեսպանը: Նրա որդիները՝ Օթարն ու Մալխազը (Ջոն), եղել են ամերիկյան զինված ուժերի գեներալներ:

722. "Свободная Грузия", 1994, 29 հունվար, էջ 14 (Воспоминания Димитрия Шаликашвили) (բնագրում՝ "Характерным для тогдашней эпохи являлось то, что тифлисский городской голова был армянин, Хатисов. Был это к тому же не какой-нибудь огрузинившийся армянин, но армянин стопроцентный, ничего общего с Грузией и грузинами не имевший, и делавший, наверное, все от него зависящее, чтоб земляки его благодаря своему экономическому превосходству играли бы в Тифлисе первую роль..."):

ՎԵՐՋԱԲԱՆ

Շենացնել. այս է այն սրբազան առաքելությունը, որին կոչված է և որով հազարամյակներ շարունակ առաջնորդվում է մեր ժողովուրդը: Հավատամքին հավատարիմ հայը շենացրել է բոլոր այն վայրերը, ուր դիպել է ոտքը, լինի հարազատ բնօրրանում, թե օտար մի երկրում, որտեղ որ ակամա հայտնվել է պատմական անցքերի բերումով:

Հայ մարդու քրտինքով են շենացել հայրենիքին մոտ և հեռու գտնվող անթիվ գյուղեր, քաղաքամասեր, իսկ երբեմն էլ ամբողջ քաղաքներ: Երևույթն առկա է փոքրասիական քաղաքներից սկսած մինչև Կոստանդնուպոլիս, Նոր-Ջուղայից մինչև Թավրիզ, ապա՝ Աստրախանից մինչև Լվով ու Ղրիմ, Նոր-Նախիջևանից Արմավիր, ապա՝ Սբ. Խաչ, Մոզդոկ ու Ղզլար, Բաքվից՝ Շամախի, Շաքի ու Ջաքաթալա, ապա՝ Գրեմ, Թելավ ու Սղնախ, հետո՝ Դուշեթ, Գորի և Ախալցխա ու վերջապես՝ Թիֆլիս:

Տփղիս-Թիֆլիս-Թբիլիսիի քաղաքագլուխների բազմադարյան պատմությունը առավելագույնս հաստատում է վերոնշյալը և առանձնակի տեղ զբաղեցնում հայ ժողովրդի քաղաքաշինական և մշակութային պատմության մեջ:

Որևէ քաղաքի և մասնավորապես Թիֆլիսի՝ գոյացման, ձևավորման ու զարգացման խնդիրների ուսումնասիրությանն անհնար է ձեռնամուխ լինել առանց քաղաքի առաջին դեմքը հանդիսացող քաղաքագլուխների գործունեության պատմությունն ուսումնասիրելու:

Ձեռնարկելով Թիֆլիսի քաղաքագլուխների կենսագրական ու հատկապես քաղաքագլխի պաշտոնը ստանձնած տարիներին նրանց գործունեությանն առնչվող տվյալների ուսումնասիրման և ներկայացման աշխատանքը՝ արդեն իսկ նշանակում է խորամուխ լինել հայ մարդու ստեղծագործ էության մեջ, հաղորդակից լինել նրա երազանքներին, մաքառումներին ու նվաճումներին:

Պատմական Հայաստանի սահմանագլխին գտնվող Տփղիս-Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնը մոտ ութ դար շարունակ վարած հայտնի 47 անձերից 45-ը ազգությամբ հայեր էին: Այլ խոսքով, քաղաքը հայ քաղաքագլուխների կողմից կառավարվել է բոլոր ժամանակներում, լինի դա Վրաստանի թագավորության հզորության, թե պարսից, թուրքաց և կամ ռուսաց տիրապետությունների օրոք:

Համաձայն աղբյուրագիտական տվյալների Թիֆլիսի բնակչության կազմն առնվազն միջնադարից և մինչև ԺԹ դարի սկիզբը գլխավորապես բաղկացած է եղել հայերից: Անշուշտ տրամաբանական է, որ գերազանցապես հայաբնակ մի քաղաքի քաղաքագլուխն ինքնաբերաբար հայազգի լիներ (այլ խնդիր է, թե ինչու՞ էր գերազանցապես հայաբնակ), բայց այն փաստը, որ Թիֆլիսը հայազգի քաղաքագլուխներով շարունակել է կառավարվել նաև 1840-1917 թթ. ընթացքում, երբ այլևս քաղաքաբնակ հայերը, բացարձակ մեծամասնություն կազմելով հանդերձ, բնակչության ընդհանուր թվի կեսն էլ չէին կազմում (տե՛ս վիճակագրական աղյուսակը, էջ 10), կարոտ է ու արժանի հատուկ լուսաբանման: Այստեղ տեղին է նշել, որ քաղաքագլուխների և Քաղաքային Խորհուրդների (դումա) իրավասուների կազմում ազգությամբ հայ պաշտոնատարների մեծաթիվ լինելն ամբողջ ԺԹ դարի ընթացքում և մինչև 1917 թ. հատուկ է եղել ոչ միայն Թիֆլիսին, այլև Անդրկովկասի բազմաթիվ այլ քաղաքներին:

1918 թ-ից ի վեր Թբիլիսին քաղաքաշինական առումով թևակոխել է բոլորովին նոր, աննախադեպ և, հատկանշական է, նաև անբնական ժամանակաշրջան: Քաղաքագլխի պաշտոնում հայտնված և իրար հաջորդած բացառապես վրացազգի պաշտոնատարները, շփոթված հանկարծ բաժին ստացած քաղաքժառանգությունից անցած ավելի քան 80 տարիների ընթացքում չունենալով և չտիրապետելով քաղաքաշինական մշակույթին և փորձառությանը, ոչ միայն ի վիճակի չեն եղել քաղաքը նոր արժեքներով բարձրացնելու (եթե զանց առնենք խորհրդային չափանիշների համեմատ հրամցված ու կյանքի կոչված միօրինակ նախագծերը, Խոջիվանքի հայոց գերեզմանատան հազարավոր շիրմաքարերից կառուցված Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի շենքը, ապա և նույն գերեզմանատան մնացորդների տեղում հիմնադրված վրաց առաջնորդանիստ նոր եկեղեցին և համանման այլ կառույցները), այլև անկարող են եղել գոնե պահպանել եղածը:

Այո, ով չի ստեղծում, նա չի պահպանում և կորցրածի համար չի ցավում: Այս իմաստով բավական է մտաբերել ոչ հեռու անցյալում (1991 թ. դեկտեմբերի 22-ից 1992 թ. հունվարի 6-ը) տեղի ունեցած խիստ հատկանշական այն դրվագը, երբ վրաց իշխանությունների և ընդդիմության միջև ծայր առած բախումների արդյունքում Թբիլիսիի կենտրոնում ոչնչացան կամ վնասվեցին բազմաթիվ բարձրարժեք շենքեր, ինչպես՝ Միքայել Արամյանցի 5 հարկանի տունը (հետագայում՝ «Մաժեստիկ», ապա՝ «Թբիլիսի» հյուրանոց, ճարտ. Գ. Տեր-Միքելյանց), բարեգործ Աբյանցի եռահարկ տունն ու Եսայի Փիթոյանցի կառուցած «Արտիստիկ ընկերության» շենքը (այժմ՝ Ռուսթավելու անվ. դրամատիկական թատրոնը) և այլ կառույցներ[723]:

Արդեն ութ տասնամյակ սոսկ վայելելով գլխավորապես հայ քաղաքագլուխների ջանքերով և հայկական կապիտալի արդյունքում ստեղծված քաղաքը՝ իրար հաջորդած վրացի նորելուկ քաղաքագլուխները հին Թիֆլիսն այսօր հասցրել են ծայրահեղ քայքայված ու վթարային վիճակի: Ցավալի է, բայց և հատկանշական, որ այսօր էլ, երբ շատ շենքեր 80 և ավելի տարիների ընթացքում երբևէ չնորոգվելու պատճառով հայտնվել են գրեթե օրհասական վիճակում, վրացի քաղաքագլխի համար ստեղծված նման իրադրությունից դուրս գալու ելքը ոչ այլ ինչ է, եթե ոչ միջազգային օգնությունը...

Ստորև, մի աղյուսակով ցանկանում ենք ներկայացնել 1921 թ-ից ի վեր պաշտոնավարած թվով 34 վրացի քաղաքագլուխների որոշումներով շուրջ 800 տարիների ընթացքում Թիֆլիս երևույթը հեղինակած հայ քաղաքագլուխների գերեզմանների ոչնչացման պատկերը.

N	Քաղաքագլուխ	Ծննդյան, մահվան տարեթվերը	Քաղաքագլխի պաշտոնը վարած տարիները	Քանի՞ տարի է պաշտոնավարել	Որտե՞ղ է թաղված	Գերեզմանն ի՞նչ վիճակում է
1	Վասակ ամիրա (շահապ) Արծրունի	ԺԲ դարի կես	Անհայտ	Անհայտ	Կարինի (Էրզրում) Սբ. Աստվածածին եկեղեցու բակի գերեզմանոց	Ոչնչացվել է 1915 թ-ից հետո
2	Քուրդ ամիրա (շահապ) Արծրունի	ԺԲ դարի 2-րդ կես	Անհայտ	Անհայտ	Հաղպատի վանք	Պահպանվում է
3	Շաղին (Բաղին)	ԺԳ դարի 2-րդ կես	Անհայտ	Անհայտ	Անհայտ	Անհայտ
4	Մելիք Էնալ	ԺԷ դար	Մոտ 1646-1673	Մոտ 27 տարի	Հավանաբար Խոջիվանքի գերեզմանոց	Չի պահպանվել
5	Մելիք Բայանդուր	ԺԷ դար	1650-ից	Անհայտ	Հավանաբար Խոջիվանքի գերեզմանոց	Չի պահպանվել
6	Մելիք Խոջա-Բեհբուդ	Ծն. անհ.-1662	Մինչև 1662	Անհայտ	Խոջիվանքի գերեզմանոց	Չի պահպանվել
7	Մելիք Աշխարհբեկ	ԺԷ դար	1662-ից	Անհայտ	Խոջիվանքի գերեզմանոց	Չի պահպանվել
8	Մելիք Ավթանդիլ	ԺԷ դար	Մոտ 1678-1698	Մոտ 20	Խոջիվանքի գերեզմանոց	Պահպանվում է
9	Մելիք Ամիր Բեհբուդյանց	ԺԷ դար	Անհայտ	Անհայտ	Հավանաբար Խոջիվանքի գերեզմանոց	Անհայտ
10	Մելիք Ասլամազ Ամիրյան Բեհբուդյանց	ԺԷ-ԺԸ դարեր		Անհայտ	Հավանաբար Խոջիվանքի գերեզմանոց	Չի պահպանվել
11	Մելիք Գիորգ Ասլամազյան Բեհբուդյանց	Ծն. անհ.-1711		Անհայտ	Հավանաբար Խոջիվանքի գերեզմանոց	Չի պահպանվել
12	Մելիք Զուրաբ Գիորգյան Բեհբուդյանց	Ծն. անհ.-1742	1712-1742	30	Խոջիվանքի գերեզմանոց	Ոչնչացված է
13	Մելիք Աշխարհբեկ Բ. Բեհբուդյանց	Ծն. անհ.-1734	Անհ.-1734	Անհայտ	Խոջիվանքի գերեզմանոց	Ոչնչացված է

723. **Կարապետեան Սամուէլ**, Թբիլիսեան ողբերգութիւնը եւ աւերուած ճարտարապետական կառոյցները, «Ազատամարտ», 1992, N 9, էջ 13:

14	Մելիք Աղա Աշխարհբեկյան Բեհբուդյանց	Ծն. անհ.-1768	1734-1768	34	Խոջիվանքի գերեզմանոց	Ոչնչացված է
15	Մելիք Անտոն	ԺԸ դար	1746-1751	5	Հավանաբար Խոջիվանքի գերեզմանոց	Չի պահպանվել
16	Մելիք Սահակ Շերգիլյանց	ԺԸ դար	1751-1760	9	Հավանաբար Խոջիվանքի գերեզմանոց	Չի պահպանվել
17	Մելիք Ավետիք Աղայան Բեհբուդյանց	Ծն. անհ.-1795	1768-1795	27	Խոջիվանքի գերեզմանոց	Ոչնչացված է
18	Մելիք Դարչի Ավետիքյան Բեհբուդյանց	1764-1832	1795-1801	6	Խոջիվանքի գերեզմանոց	Գերեզմանը չի պահպանվել, տապանաքարը բեկորված է 2 մասի
19	Հովհաննես (Իվան) Իզմիրյանց	Ծն. անհ.-1850	1840-1843	3	Թիֆլիս	Չի պահպանվել
20	Ստեփան Գաբրիելյան Խատիսյանց	Ծն. և մահ. թվ. անհայտ	1844-1845	2	Թիֆլիս	Չի պահպանվել
21	Մովսես Տեր-Գրիգորյանց (Տեր-Գրիկուրով)	Ծն. և մահ. թվ. անհայտ	1845-1846	2	Սբ. Բեթղեհեմ եկեղեցու բակ	Ոչնչացված է
22	Հովհաննես Սիմոնյանց Շադինյանց	Ծն. և մահ. թվ. անհայտ	1847-1848	2	Թիֆլիս	Չի պահպանվել
23	Թովմա Դավթյան Փրիդոնյանց	Ծն. և մահ. թվ. անհայտ	1848-1849	2	Թիֆլիս	Չի պահպանվել
24	Զաքարիա Ստեփանյան Ամիրաղյանց	Ծն. և մահ. թվ. անհայտ	1850-1851	2	Թիֆլիս	Չի պահպանվել
25	Հովսեփ Աֆանասյան Միրիմանյանց	Ծն. և մահ. թվ. անհայտ	1851-1852	2	Թիֆլիս	Չի պահպանվել
26	Ավետիք Աստվածատրյան (Բոգդանի) Սվեչնիկով	Ծն. և մահ. թվ. անհայտ	1853-1856	3	Թիֆլիս	Չի պահպանվել
27	Սողոմոն Դավթյան Սարաջև	Ծն. և մահ. թվ. անհայտ	1856-1857	2	Թիֆլիս	Չի պահպանվել
28	Անդրեյ Դավթյան Մանանով	Ծն. և մահ. թվ. անհայտ	1857-1858	2	Թիֆլիս	Չի պահպանվել
29	Վարդան Աստվածատրյան Արշակունի	Ծն. անհ.-1862	1858-1860	2	Թիֆլիս	Չի պահպանվել
30	Սողոմոն Զաքարյան Աբիսողոմյանց	Ծն. և մահ. թվ. անհայտ	1860-1861 և 1865-1866	4	Սբ. Նշան եկեղեցու բակ	Ոչնչացված է
31	Սողոմոն Միրիմանյան Միրիմանյանց	Ծն. և մահ. թվ. անհայտ	1861-1862	1	Թիֆլիս	Չի պահպանվել
32	Գևորգ (Եգոր) Գրիգորյան Փրիդոնյանց	1816-1892	1862-1864	2	Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու բակ	Ոչնչացվել է 1973 թ. եկեղեցու շրջապատի «բարեկարգման» ժամանակ
33	Գալուստ Հարությունյան Շերմազան-Վարդանյանց	1814-1892	1864-1865	1,5	Օրյոլի մարզի Չալեսնոյե գյուղի եկեղեցու բակ	Անհայտ
34	Երեմիա Գևորգյան Արծրունի	1804-1877	1866-1868	2	Վերայի հայոց գերեզմանատուն	Ոչնչացվել է
35	Նիկողայոս Հովհաննիսյան Ալաղաթյանց	Ծն. անհ.-1875	1868-1869	1,5	Թիֆլիս	Չի պահպանվել
36	Դմիտրի Թումանյանց	Ծն. և մահ. թվ. անհայտ	1869-1870	1	Թիֆլիս	Չի պահպանվել

37	Յազոն Դմիտրյան Թումանյանց	1827-1883	1870-1874	4	Սբ. Կարապետ եկեղեցու բակի տոհմական գերեզմանոց	Ոչնչացվել է 1981 թ.
38	Դմիտրի Իվանի Ղիփիանի	1814-1887	1875-1879	4	Մամա-Դավիթ վրաց եկեղեցու բակում	Պահպանվում է
39	Անտոն Սողոմոնյան Ղորղանյանց	1838-1902		Չի պաշտոնավարել	Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցու բակի գերեզմանոց	Ոչնչացվել է 1938 թ.
40	Ալեքսանդր Ստեփանյան Մատինյանց	1843-1909	1879-1891	12	Առաջնորդանիստ Վանքի բակի գերեզմանոց	Ոչնչացվել է 1936 թ.
41	Նիկողայոս Բարսեղյան Արդության-Երկայնաբազուկ	1845-1916	1891-1893, 1895-1896, 1903-1904	5	Սանահինի վանքի տոհմական գերեզմանոց	Պահպանվում է
42	Պողոս Ալեքսանդրյան Իզմայիլյանց	1852-1895	1893-1895	2	Առաջնորդանիստ Վանքի բակի գերեզմանոց	Ոչնչացվել է 1936 թ.
43	Գևորգ Գրիգորյան Եվանգուլյանց	1843-1901	1897-1901	4	Խոջիվանքի գերեզմանոց	Ոչնչացվել է 1936 թ.
44	Ալեքսանդր Միքայելյան Արդության-Երկայնաբազուկ	1860-մահ. թվ. անհայտ	1902	Չի պաշտոնավարել	Անհայտ	Չի պահպանվել
45	Քրիստափոր Ավակումյան Վերմիշյանց	1863-1933	1904-1905	1	Պյատիգորսկ քաղաքի հայոց գերեզմանոց	Տեղեկություն չունենք
46	Վասիլի Նիկոլայևիչ Չերքեզով	1857-1909	1907-1909	2	Դիդուբե թաղի վրաց եկեղեցու բակի գերեզմանոց	Պահպանվում է
47	Ալեքսանդր Հովհաննիսյան Խատիսյանց	1874-1945	1910-1917	7	Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանոց	Պահպանվում է

Ինչպես հստակ նկատելի է ներկայացված աղյուսակից, շուրջ 800 տարվա ընթացքում պաշտոնավարած 47 քաղաքագլուխների գերեզմաններից, ցավոք ոչ պատահականորեն պահպանվում են միայն այն երկուսինը, որոնք ազգությամբ վրացի են (Դ. Ղիփիանի և Վ. Չերքեզով)։ Նրանց գերեզմաններն անկորուստ տապանաքարերով գտնվում են համապատասխանաբար՝ վրաց Մամա Դավիթ և Դիդուբե թաղամասի եկեղեցիներին կից գերեզմանոցներում։ Մինչդեռ ազգությամբ հայ 45 քաղաքագլուխներից բոլոր նրանց գերեզմանները, ովքեր թաղված են Թիֆլիսում (ևս մեկը՝ Կարինում. Արևմտյան Հայաստան, այժմ՝ Թուրքիա) հիմնականում ոչնչացվել են։ Պահպանվել են միայն մի քանի այն քաղաքագլուխների տապանաքարերը, ովքեր չեն թաղվել Թիֆլիսում (օրինակ՝ Քուրդ ամիրա, Ն. Արղության-Երկայնաբազուկ, Ա. Խատիսյան)։

Ցավալի է, բայց փաստ, որ վերջին շուրջ ութ տասնամյակների ընթացքում վրացազգի մերօրյա քաղաքագլուխները, փոխանակ Թիֆլիսը կերտած առաջին դեմքերի գերեզմանները հարգանքով ու ակնածանքով վերաբերվելուն և պահպանելուն, գլխավորել ու իրականացրել են այդ նվիրական գերեզմանների միտումնավոր ավերման ու անհետացման ստոր ծրագրերը։ Ինչպես նաև, փոխանակ քաղաքագլուխների ապրած կամ կառուցած շենքերին հուշատախտակներ փակցնելուն՝ անվերջ ու անհոգ քանդել կամ այլափոխել են այդ շենքերը։

Եվ ուրեմն ինչպե՞ս ակամա չմտաբերենք օրինակ քաղաքագլուխ Մատինյանցի թողած ազգային հոգսերին չառնչվող կտակի առթիվ Գրիգոր Նիկողոսյանի՝ խոր ցավով հայտնած ու երիցս ճշմարիտ խոսքը. «պէտք է օրհնե՞լ թէ անիծել այն հայի յիշատակը» կամ թե «Հովիտ»-ի թղթակցի 1914 թ. տված միանգամայն դիպուկ գնահատականը. «...ազգային շահերը և քաղաքայինը միանգամայն տարբեր են։ Ամենայետ ընկած փոքր հայկական գիւղում մի դպրոց ու բաղանիք չեմ փոխիլ Թիֆլիզի քաղաքային վարչութեան բոլոր հայ անդամների հետ՝ իրենց իրաւասուներով»։

Այո՛, ինչը որ չես կառուցել Հայրենիքումդ, կառուցել ես ավազի վրա:

Պատմությունը հիշողություն է, դաս է, սակայն հայն այսօր էլ մեծավ մասամբ շարունակում է շենացնել օտար հողն ու հանգչում օտարության մեջ: Իրենն անմշակ՝ հայն այսօր էլ ժամանակը, եռանդն ու ավյունը վատնում է ուրիշների պարտեզները ծաղկեցնելով: Ջոհ՝ ժամանակավոր, անհեռանկար ու թվացյալ բարեկեցության գայթակղությանը «ի վայելումն այլոց» էլի քանի՞ կովկասյան փարիզների վերածած թիֆլիսներ պիտի ստեղծենք աշխարհիս չորսբոլորն ու միառժամանակ հետո ի մի բերենք և արձանագրենք անգաղափար նվիրումների հերթական մի պատմություն, ինչպիսին է սույն աշխատությունը:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբիսողոմյանց Սողոմոն 15,26,52, 53,105
Աբիսողոմով 7
Աբյանց 104
Աբովյան Խ. 55
Աբրահամ Կրետացի 36
Ագրիպպինա, կին՝ Ե. Արծրունու 64
Ազիզյանց Հովհաննես 16
Աթաբեկյանց Մ. 24,25
Ալադաթյանց Բաղդասար 14
Ալադաթյանց Նիկողայոս 16,67,105
Ալադաթյանց Հովհաննես 13
Ալավերդյանց Կարապետ 17
Ալեքսանդր Բ կայսր 76
Ալեքսեև Յ. 17
Ալի Մարդան Բէգ Թօփչիբաշև 94
Ալխազյանց 43
Ալխազյանց Պ. 17,18
Ախշարումյանց Հ. 18,19,20
Ախվերդով 12
Աղա-Մահմատ խան 39
Աղաջանյանց Գիգոլ 16
Աղան 94
Աղունակյանց Հովհ. 18,19
Ամիլախվարով Գեորգի 14
Ամիրաղյանց Զաքարիա 13,48,105
Ամիրանաշվիլի Զ. 26
Ամիրանով 7
Ամիրյանց Պ. Հովհ. 19
Անանյանց Հովսեփ 13,16
Անանյանց Ն. 17
Անդրեաս, որդի՝ Ե. Արծրունու 64
Անդրիաձե Իրակլի 26
Անդրիոլետի 88
Անտոնյանց Սարգիս 17
Աշխալ բէկ, տե՛ս Մելիք Աշխարհբեկ
Աշուրով 94
Ասատուրով Գեուրգ 7
Ասատուրով Իժան 7
Ասլամազ 30,33
Ասլամազյանց Հ. 17
Ասլան, որդի՝ Խոջա-Բեհբուդի, եղբայր՝ մելիք Աշխարհբեկի 32
Ասկիլով Գրիգոլ 17
Աստվածատրյանց Հարությունքհն. 72
Աստվածատրյանց Ստեփան 15
Ավալիշվիլի Ն. 71
Ավալյանց Պողոս 16
Ավետիսյանց Եղիա 16
Ավետիք, որդի՝ Մելիք Աղա Բեհբուդյանցի 36
Արամյանց Միքայել, բժիշկ 62103
Արամյանց Ս. 22,23,24,25
Արապյան Պողոս, տպագրիչ 37
Արարատյան Ա. 55
Արարատյանց Քրիստափոր 15,16
Արզուխաթուն 28,29
Արծրունի Գևորգ աղա 63,65,66
Արծրունի Երեմիա 15,16,52,55, 63-67,105
Արծրունիներ 6
Արղութեան Ալ. 90,97
Արղության-Երկայնաբազուկ Ալեքսանդր 2,23,24,26,91,92,100,106
Արղության-Երկայնաբազուկ Նիկողայոս 22,24,80,81,82,83,85,106
Արղության-Երկայնաբազուկ Ն. 24
Արղության-Երկայնաբազուկ Մովսես 15,16,17,18
Արղության-Երկայնաբազուկ Պ. 22
Արղության-Երկայնաբազուկ Սողոմոն 41
Արղության Մարիամ 83
Արղուն 29
Արշակունի Վարդան 14,49,50,52,105
Արսենիոս 39
Արվանիտակի Ն. 23,24
Արվանյանց Ա. 23,24
Արվանով Ք. 18

Բ

Բաբայանց Ա. 15
Բաբանասյանց Արտեմ 14
Բաբանասյանց Ալեքսանդր 15,16,17
Բաբանասյանց Գ. 15
Բաբանասյանց Հարություն 16
Բաբանասյանց Պ. 17,18,19
Բաբանասով Չաուան 7
Բագրատիոն-Մոխրանսկի Ս. 92
Բաժբեուկ Մելիքյանց 14,59
Բաժբեուկ-Մելիքյանց Միքայել 16
Բաժբեուկ-Մելիքյանց Օ. 15
Բաղի, որդի՝ Քայխոսրոյի 30
Բայսողոլյանց Սողոմոն 14
Բայսողոլով 7
Բայսողոլով Արտեմ 60
Բաստամյանց Բ. 16
Բաստամյանց Ստեփան 16
Բաստամով 7
Բարաթաշվիլի Իեսե 37
Բարաթով Լեոնիդ 15
Բարխուդարյանց Ս. 17,18
Բարյաթինսկի 74
Բաքրաձե Վալերիան 26
Բեզիդողանյան 7
Բելոյ Ե. 16,17,46
Բեկ Ֆ. 22,23,24
Բեհբուդ, եղբայր՝ Մելիք Աղա Բեհբուդյանցի 36
Բեհբուդ, որդի՝ Աշխարհբեկի 35
Բեհբուդյաններ 6,8,30,32
Բեհբուդյանց Բարսեղ 71
Բեհբուդյանց Լ. 17
Բեհբուդյան Կ.Ա. 84
Բեհբուդով գեն., տե՛ս Բեհբուդյանց Բարսեղ
Բերիև Դմիտրի 15
Բիբիլաուրի Աբրամ 16
Բոզարջյան 100
Բոյախչյանց Հովհաննես 16
Բոչկովսկի Վ. 18
Բոցշիկ Ա. 24
Բուզգուլով 7
Բուխրաշվիլի Շոթա 26
Բունիաթյանց Մ. 17,18
Բուչկին Իվան 16
Բուջիաշվիլի Կոտե 26
Բուտկևիչ Կ. ,ինժեներ 88
Բուրհարտ 22

Գ

Գաբաշվիլի Կոստանտինե 26
Գաբունիա Գուրամ 26
Գասպար, տանուտիրոջ օգնական 32
Գասպարով Հարություն 7
Գարսոև 7
Գեգեճկորի Ալեքսանդր 26
Գեգեշիձե Գիորգի 26
Գեմչուևց Օհաևեզ 60
Գերասիմով Ա 18
Գեուրգով Դավիթ 7
Գեուրգով Կարապետ 7
Գեուրգով Միքայել 7
Գզիրբեժոև 7
Գեորգի, արքայազն, որդի՝ Հերակլ թագավորի 38,39
Գևորգ, որդի՝ Ե. Արծրունու 64
Գիորգի Գ թագավոր (1156-1184) 27
Գիորգի թագավոր 34,83
Գիորգի Լաշա 29
Գիորգի, տանուտեր 32
Գոգեբաշվիլի Յ. 21
Գոգոբերիձե Ի. 19
Գոզալով Գևո 60
Գոլովինը Ե. Ա. 12
Գոլուբև Ն. 17
Գոչաշվիլի Գիորգի 26
Գոտհարդտ Պ. 20
Գորրինի Ջակոմո 102
Գվիշիանի Միխեիլ 26
Գրիբոեդով 63
Գրիգոր, որդի՝ Ե. Արծրունու 64,84

Գուլակով 7
Գուլասպյանց Զաքարիա 13,14
Գուլիբաշով 7
Գուլուլով 7
Գուրգենբեկով 7
Գևորգ արքեպիսկոպոս 87
Գևորգի, հիշ. 1772 թ. 37
Գևորգ, որդի՝ Սահակ Շերգիլյանցի 37
Գևորգ, որդի՝ Քայխոսրոյի 30

Դ

Դանդուրյանց Ս. 24
Դանիել, որդի՝ Ռոստոմի 30
Դավթյանց Զաքարիա 16
Դավիդով Լ. 18
Դավիդով Ս. 18,19
Դավիթ 30
Դավիթ Նազարյան, իշխան 64
Դավիթ, որդի՝ Սահակ Շերգիլյանցի 37
Դավիթ, ազգական՝ Զազայի 36
Դավիթ, տանուտիրոջ օգնական 32
Դավիթ Զ. Նարինը (1230-1293) 29
Դավիթ Է. Ուլուն (1247-1270) 29
Դավիթ թագավոր (1156) 27
Դավիթ կաթողիկոս 36
Դարչո Բեհբուտով, տե՛ս Մելիք Դարչի
Դեդունյանց Շաքար 16
Դեմետրե թագավոր (1125-1156) 27
Դեմուրյանց Դավիթ 16
Դիդարյանց Գևորգ 15
Դիդարյանց Եղիա 15
Դիդարյանց Ս. 17,18,19
Դիժևիցա-Կովվաչ Ա. 15
Դիլակբերով 7
Դոլուխանեան Ի. 95
Դուլուխանյանց Մ. 17,18
Դումբաձե Վլադիմեր Էլիզբարի 26

Ե

Եգանյանց Հարություն 16
Եգանյանց Սարգիս 13
Եղիսուբով Եղիս. 14
Եզով Գ. 89
Ենիկոլոպյանց Բեժան 16
Ենիկոլոպյանց Ջհանգիր 15,16,17
Եվանգուլյանց Գևորգ 23,89,90,91,106
Եվանգուլյանց Շերմազան 30
Եվանգուլով 7
Երմիշյանց Տ. 23,24
Երմոլով, գեներալ 11

Զ

Զաալյանց Զաալ 13
Զաբլոցկի Պ. 18
Զազա, ազգական՝ Դավթի 36
Զալենսկի Ա. 17,18
Զալիև Կուզանով Ստեփան 7
Զամբախիձե Գիորգի 26
Զարգարյանց Սիմեոն 16
Զաքարբեկով 7
Զաքարիա վարդապետ 36
Զաքարիա Քանաքեռցի 30
Զէյդլ 9
Զողելավա Իվանե 26
Զոհրաբով 7
Զուբալով Նիկողայոս 15,16,19,85
Զուրաբ, որդի մելիք Գիորգիի 33

Է

Էլիմիրզյանց Լ. 17
Էլիմիրզովներ 79
Էլչ Բուղդա բեկ 34
Էմինինց Եովան 60
Էյխվալդ 11
Էնֆիաճյանց 60
Էնֆիաջյանց Ավետիք 59
Էնֆիանջյանց Համբարձում, տպարանատեր 14,15,59,61
Էնֆիաջյանց Տ. 23,24,26
Էստատ, եղբայր՝ Սահակ Շերգիլյանցի 37

Թ

Թաթոն 7
Թակոն 7
Թամամշյանց Ալեքսանդր 13,17,18,19
Թամամշյանց Զաքարիա 13
Թամամշյանց Միքայել 97
Թամամշն 7,74
Թանդոյանց Իսահակ 13,14
Թավլղարով 7
Թարխանյանց Ավետիք 13,16
Թոդրիա Սիլիբիստրո Էսի 26
Թումանյանց Գ. 89
Թումանյանց Դմիտրի 67,105
Թումանյանց Յազոն 17,26,68,69,74,89,105
Թումանով Իգնատ 41

Ժ

Ժերեբցով Ն. 18
Ժուրուլի Գ. 24

Ի

Իգնատև Պ. 18
Իզանշաղինով 7
Իզդանով 7
Իզմայիլյանց Պողոս 17,18,19,20,74,80,81,83-89,106
Իզմիրյանց Գրիգոր 14,61,68
Իզմիրյանց Հովհաննես 12,26,45,105
Իզմիրով 7,61
Իզմիրով Դանիել 60
Իմամ-ղուլի-խան 33
Իսադ-փաշա 34
Իսան Սկրտում 7
Իսան Սողոմոն 7
Իսկանդարյանց Թովմա 13
Իստամանյանց Սողոմոն 14,15
Իսրայելյանց Ս. 20
Իվանենկո Ա. 22,23,82,87,90,93
Իվանով 83
Իվանով, ճարտարապետ 52
Իփրումով 7

Լ

Լազարյանց Միքայել 16
Լազարև գեներալ-մայոր 39,41
Լելաշվիլի Միխեիլ 26
Լեկիշվիլի Նիկոլոզ 26
Լեոնիդ Գորու վրաց եպիսկոպոս 71
Լիթանիշվիլի Օթար 26
Լոբժանիձե Բախվա 26

Խ

Խալաթյանց Ասատուր 13
Խախուտով 7
Խամփերվան, կին՝ մելիք Գիորգիի 33
Խանկալամով 7
Խանջին Ի 17,18
Խաչատրյանց Վ 17
Խաչատուրով Նասղիդ 17
Խատի, եղբայր՝ Սահակ Շերգիլյանցի 37
Խատի, որդի՝ Աշխարհբեկի 35
Խատիսյանց Ալ. 24,25,69,92,98-102,106
Խատիսյանց Գաբրիել, Ալ.
Խատիսյանի հորեղբայրը 17,61,98
Խատիսյանց Դ 17,18,19
Խատիսյան Հովհաննես, Ալ.
Խատիսյանի հայրը 98
Խատիսյանց Մարիամ 100
Խատիսյանց Ստեփան 13,26,45,104
Խատիսով 7
Խարազյանց Ա. 23,24
Խարազով 7
Խեչումյանց Արտեմ 14,15
Խլեբնիկյանց, ուստաբաշի 16
Խոջա-զադա, որդի՝ Աշխարհբեկի 35
Խոսրովյան Ե. 18,19,20,22,23,90,92
Պետրովսկ 92
Խոսրոև, տե՛ս Խոսրովեան Ե.
Խրիմյան Հայրիկ 66
Խուդադով 7

Ծ

Ծատրյանց Ավետիք 13
Ծերեթելի Գիորգի 21,84,86

Ծովյանց Ալեքսանդր 16
Ծովյանց Գեո 16
Ծուրինով 7

Կ

Կագարով Սողոմոն 17
Կալինաանի 7
Կակո, զառափ 60
Կարև Գ. 24
Կանևսկի Ա. 18
Կասումյանց Մկրտիչ 13
Կարախանյանց Ալեքսանդր
Կարապետ արքեպիսկոպոս 56
Կարապետ, որդի՝ Քայխոսրոյի 30
Կարինյանց Հակոբ վարժապետ 48
Կարցով Վ. 17
Կերիոն Ալավերդու վրաց եպիսկոպոս 71
Կիկոծե Միխայիլ 15,16
Կյուրիկե թագավոր 27
Կնորինգ, գեներալ-լեյտենանտ 6,39, 41
Կոլուբանսկի 21
Կոկչան Ն. 23,24
Կոճլամազաշվիլի Իոսեբ 26
Կոնիև Գրիգոր 16
Կորգանով Ա., տե՛ս Ղորղանյանց Անտոն
Կորինետլի Ս. 19
Կոտրին Անդր. 16
Կվյատկովսկի Ադամ 16
Կուգլեր Կարլ 16
Կուզանով 7
Կուկիի կամուրջ 59
Կուկուջանեանց Աւթանդիլ 9
Կուկուջանով 7

Հ

Հազիր աշուղ 88
Հախնազարյանց Գրիգոր 15
Հախնազարով 7
Հախվերդյանց Ավթանդիլ 13
Հակովբ Ջուղայեցի կաթուղիկոս 32
Համբարձումյանց Պետրոս 13,14,15
Հաջի-Զէյնալ-Աբդին Թաղիև 94
Հաջիև 94
Հասան-Բեգ Մելիքով 94
Հասրաթով Ստեփան 7
Հեջուբյանց Ա. 18,19
Հեջուբյանց Հեջուբ 13
Հեջուբով 7
Հեքիմ-աղա 83
Հերակլ Բ թագավոր, Թեյմուրազ Բ-ի որդին 36,37,39
Հովհաննես, որդի՝ Մելիք Աղա Բեհբուդյանցի 36,38
Հովհաննիսյան հայր Վահան 25
Հովնանյան Հ. 55
Հովսեփ 39
Հովսեփ Արքեպիսկոպոս Երկայնաբազուկ-Արղութեան 39
Հովսեփ, հիշ. 1772 թ. 37
Հովսեփ, որդի՝ Մանգոյանց Օհաննես 36
Հովսեփ, որդի՝ Մելիք Աղա Բեհբուդյանցի 36
Հովսեփ, որդի՝ Քայխոսրոյի 30
Հովսեփյանց Խեչո 16
Ջամոյանց Հակոբ 13
Ջամոյանց Հովսեփ 13
Ջելիև Իսահակ 16

Ղ

Ղալամքարյանց Բարսեղ 16
Ղամազով 7
Ղամբարով 7
Ղայթմազյանց Ղորխմազ 15,16
Ղևփիանի Դմիտրի 15,16,17,18,26, 70, 71,72,89,105
Ղողոբերիձե Լևան Դավթի 26
Ղորղանյանց Ա. 18
Ղորղանյանց Անտոն 72,73,74,105
Ղորղանյանց Գ. 18,19
Ղորղանյանց Ն. 18
Ղորղանյանց Սողոմոն 72
Ղուլյանց Գ. 20,22,23
Ղուկաս Կարնեցի կաթողիկոս 38,39, 41

Ճ

Ճավճավաձե Ի. 21,93
Ճավճավաձե Նիկոլայ 58
Ճիլաշվիլի Գիորգի, գեն. 71

Մ

Մաղաքյան Պ. (Սայաք) 55
Մաթոսով Հակոբ 7
Մալակով 7
Մալամա գեներալ-աղյուտանտ 94
Մալինին 22
Մախաք լեռ 31
Մակար եպիսկոպոս 60
Մակլակով Վ. 95
Մաղրաձե Միխեիլ 26
Մամիկոնյանց Կ. 15
Մամիկոնյանց Հովհաննես 15
Մամինով Ի. 15
Մայսուրյանց Իսահակ 13
Մանանով 7
Մանանով Անդրեյ 14,49,105
Մանգոյանց Օհաննես 36
Մանգև 7
Մանդենով 7
Մանթաշյանց Ալ. 25,93
Մանթաշյանց Սիմեոն 17
Մաչաբելի Ի. 19
Մաչայիձե Բագրատ 26
Մատինյանց Ալեքսանդր 17,18,19, 20,73-76,78,79,80,85,89,105
Մատինով 7
Մատթեոս կաթողիկոս 51,66
Մարգարյանց Հովհաննես 15,16
Մարիամ, կին՝ Մելիք Աղա Բեհբուդյանցի 36
Մարկոսյանց Հ. 20
Մարտիրոսյանց Գալուստ 16
Մեբուրնությանց Ստեփան 15
Մելաձե Ալեքսանդր 26
Մելաձե Պավլե 26
Մելիք Աղա Բեհբուդյանց, որդի՝ Աշխարհբեկի 33,35,36,38,104
Մելիք Ամիր Բեհբուդյանց 32,33,104
Մելիք Անտոն 35,37,104
Մելիք Աշխարհբեկ, որդի՝ Խոջա-Բեհբուդի, եղբայր՝ Ասլանի 32,34,104
Մելիք Աշխարհբեկ Բ 32,35,104
Մելիք Ասլամազ Բեհբուդյանց 104
Մելիք Ավետիք Բեհբուդյանց 36,37, 38,39,44,104
Մելիք Ավթանդիլ 32,104
Մելիք Բայանդուր 9,30,31,104
Մելիք-Բեգլարյանց Ա. 20
Մելիք-Բեգլարյան Ա., ճարտ. 88
Մելիք Գիորգի 33,104
Մելիք Դարչի 6,8,9,11,32,38,39, 41,42,43,44,105
Մելիք Ջուրաբ 33,34,104
Մելիք Ջուրաբով 7
Մելիք Էնալ 30,31,104
Մելիք խոջա Բեհբուդ 30,31,32,104
Մելիքյանց Արտ. 15,16
Մելիքյանց Գրիգոր 14,15,16
Մելիքով Ջուրաբ 32
Մելիք Շերմազանով 7
Մելիք Սահակ Շերգիլյանց 104
Մելիք-Սահակյաններ 37
Մելիք Սահակով 7
Մելքո, հայր՝ Սահակ Շերգիլյանցի 37
Մելքո, ծկնավաճառ 56
Մեհքի-Աղա-Հյուսեին 46
Մեհրաբյանց Միքայել 16
Մեսանտլով 7
Մեսխիա Ս. 84
Մեսխիշվիլի Ջաուր 26
Միքելաձե Դաթա 84
Միլով Ն. 15
Միխայիլ Նիկոլաևիչ, կայսր 72
Միխայլով Պլատոն 16
Միրզոյան Գ. 55
Միրզոև 7,88
Միրիմանյանց Գրիգոր 15
Միրիմանյանց Զաքարիա 14
Միրիմանյանց Հովսեփ 13,48,49, 50,105

Միրիմանյանց Սողոմոն 13,53,105
Միրիմանով 7,61
Միքելյանց Հակոբ 14,15
Մկրտիչ կաթողիկոս 91
Մկրտումյանց Գրիգոր 14,15,16
Մղեբրյանց Լ. 17
Մղեբրյանց Սիմոն 14
Մոիսև Վ. 19
Մոլիեր 71
Մովսես, որդի՝ Մանգոյանց Օհաննեսի 36
Մորից Ֆոն Կոցեբու 11
Մունթոև 7
Մուշրիբով 7
Մուրադյանց Սարգիս 14
Մուրավյով, գեն. 48,49,50,51,52

Յ

Յազիկով կապիտան 9
Յակիմով Պ. 23,24
Յուզբաշյանց Պետրոս 16,17
Յուզբաշև 7

Ն

Նաղիր Շահ 36
Նազար խօջա 34
Նազար, տանուտեր 32
Նազարբեկով Նազար 7,60
Նազարյանց Ն. 17,18,19,20,22,23
Նազարյանց Ս. 55
Նալբանդյանց Միքայել 15
Նարիմանյանց Զաքարիա 15,16
Ներսես Աշտարակեցի 43,51
Նիկոլաճե Նիկո 19,21,22,84
Նիկոլայ Ա կայսր 52,64,65
Նիկոլաևիչ Մ. 14
Նիորաճե Միխեիլ 26
Նոմիկոս Ի. 18

Շ

Շաբուրյանց Սողոմոն 15,16
Շաղին (Բաղին) 29,104
Շաղինյանց Ալեքսանդր 16
Շաղինյանց Գաբրիել 15,18
Շաղինյանց Իվան, տե՛ս Շաղինյանց Հովհաննես
Շաղինյանց Հովհաննես 17,26,46, 47,105
Շաղինյանց Մ. 15
Շաղինյանց Նիկողայոս 16
Շաղինով 91
Շալիկաշվիլի Դմիտրի 102
Շահ-Աբաս Փոքր (1642-1666) 9,30
Շահազիզեան 87
Շահբուդաղով 7
Շահմուրադյան 100
Շահվերդյան 83
Շահվերդյանց Ա. 17,18,19
Շահրուբան, կին՝ Ասլամազի 32
Շահումյան Ստ. 94
Շամխարովներ 79
Շանշյանց Ն. 17,18,19
Շանշյանց Պետրոս 61
Շարիմանյանց Գրիգոր 16
Շաքար, որդի՝ Սահակ Շերգիլյանցի 37
Շաքարով Գաբրիել 7
Շաքարով Գևորգ 7
Շաքարով Եսայի 7
Շաքարով Սողոմոն 7
Շաքարով Ստեփան 7
Շելկոեզով Սող. 16
Շեստակով Մ. 23,26,90,91,92,96
Շերբարոք 29
Շերգիլյանց Սահակ 35,37
Շերգիլով 7
Շերմազան 30
Շերմազան, որդի՝ Սահակ Շերգիլյանցի 37
Շերմազանյանց Գալուստ 12,14,15, 26,50,55-63,105
Շեյլոկ 71
Շեյխ-Ուլ-Իսլամ 87
Շեքսպիր 71
Շիմկևիչ Ա. 19,20
Շիոև 7,72
Շիոևներ 79
Շիուկով Կ. 18
Շոլկոև Ս. 15
Շոշիթայիշվիլի Բադրի 26

Ո

Ոսկիև Գրիգոր 7

Չ

Չելոկան 19
Չեխով 79
Չերնիշևսկի 89
Չերքեզով Վ. 23-25,90,92,95-98,106
Չիթախով 7
Չիկոանի Գ. 18,19
Չիկվանճե Ֆիլիպ 15,16,17,18,19
Չխեթիա Շ. 9
Չմշկյան Մ. 59
Չմշկյանց Ե. 17,18
Չորանյան Պավել 44
Չուղուրեթ 59
Չրելան Ստ. 23,45

Պ

Պալասանյան 89
Պաչավյան-Արծրունիներ 63
Պապ, տանուտեր 32,37
Պապ, որդի մելիք Գիորգիի 33
Պապյանց Ն. 17,18,19,20
Պապունաշվիլի Սամադավլե 36
Պասկևիչ 63
Պատկանյան Գաբրիել 48
Պարակով Իլար. 16
Պարկուզատով 7
Պարոն-Սարգսյանց Ն. 18,19
Պետրոս, որդի՝ Մանգոյանց Օհաննեսի 36
Պետրոսյանց Զաքարիա 16
Պիշնով Եգոր 16
Պողոս Ղարադաղցի 55
Պոնդոյանց Հովսեփ 15,17
Պոնդոև Հ., տե՛ս Պոնդոյանց Հովսեփ
Պռոշյան Պերճ 60,68
Պուշկին 79

Ջ

Ջաբար Մ. 24,92
Ջալալյանց Սարգիս արքեպիսկոպոս 61
Ջաղաթյանց Ստեփան 13
Ջամասպյանց Հովհաննես 17
Ջանաղով Յ. 24
Ջանելիձե Թամազի 26
Ջանյանց Ստեփան 16
Ջանշյանց Ավետիք 14
Ջավախիշվիլի Գիվի 26
Ջինճարաձե Գիորգի 26
Ջուղելի Սիմոն 26
Ջունկովսկի 99

Ռ

Ռակին Ա. 18
Ռակովիչ Վասիլի 13
Ռամուսիո 9
Ռեյտեր Կ. 22
Ռոբերտ Կեր Փորտըր 11
Ռոսլավլև, ոստիկանապետ 58
Ռոստոմ 30
Ռոստոմ, Քարթլիի թագավոր (1638-1658) 31
Ռոտինյանց, բժիշկ 60,61
Ռոտինով 7
Ռոտիշչև 44
Ռուսուդան թագուհի 29,34
Ռևազով Աղա 13

Ս

Սաատսազով Ի. 23,24
Սադուն Արծրունի 28
Սադունեանց Սահակ եպիս. 62
Սահպով Հովհաննես 15
Սալտուխ 27
Սահակյանց Գասպար 16
Սահառունի Ս. 55

Սայիքյանց Թ. 17
Սանասարյան 88
Սանվելով Սողոմոն 7
Սանվելով Օսեփ 7
Սարալիձե Բորիս 26
Սարաջև Սողոմոն 7,49,105
Սարաջև Զաքարիա 13
Սարաջև Սողոմոն 14,26
Սարգիս իշխան 27
Սարգսյանց Գրիգոր 14
Սարգսյանց Սողոմոն 13
Սենկևիչ Հ., լեհ գրող 100
Սերեբրյակյանց Լ. 17,18
Սիլյանդեր Ա. 18,19
Սիմեոն կաթողիկոս (1763-1780) 32,36
Սիմոնյանց Պետրոս 60,61
Սկուդիերի, ճարտարապետ 46
Սոլաղով 60
Սոկոլով Պ., տե՛ս Սոկոլովսկի Պյոտր
Սոկոլովսկի Պյոտր 13,17,18
Սոնին, ինժեներ-գնդապետ 46
Սպարապետյանց Վարդան 13
Սվեչնիկով Ավետիք 48,49
Ստեփան 35
Ստեփան, եղբայր՝ Մելիք Աղա Բեհբուդյանցի 36
Ստեփան, որդի՝ Մանգոյանց Օհաննես 36
Ստեփանյանց Հարութիւն 17
Ստեփանյանց Միքայել, վաճառական 67
Ստեփանյանց Պ. 17
Ստեփանյանց Ստեփան 16
Ստեփանով Ալեքսեյ 7
Ստրախով Ի. 17,18
Սրվանձտյանց Գարեգին եպիս. 62
Սուլեյման շահ, ծ. 6
Սուլթանյանց Հովհաննես 13
Սուլյան Միքայել 102
Սուխիշվիլի Վլադիմեր Պավլեի 26
Սուխոտին Ա., գեներալ-մայոր 37
Սունդուկյան Գաբրիել 60,61,62
Սունդուկյանց Միքայել 16,17,18
Սուվորով 83
Սուրղունով Մկրտում 41

Վ

Վալլինգ Հերման 16
Վախթանգ Ե Շահնավազը (1658-1675) 30
Վախթանգ թագավոր 6,34
Վախուշտի 9
Վահրամ իշխան 27
Վաշաձե Թամազ 26
Վասակ ամիրա 6,104
Վասակ իշխան 27
Վասիլև 95
Վատացի, սենատոր 99
Վարդան-Բաբյանց Շաքար 16
Վարդանյանց Բարսեղ 16
Վարդանյանց Հ. 15
Վարդանյանց Ղազար 13,14
Վելիչկո 21,96
Վեյդենբաում, ծ. 6
Վեյման Վ. 22,23,24
Վերմիշյանց Հ. 19
Վերմիշյանց Ք. 22-24,26,90,92-95, 97,106
Վիլյամ Ժորժ 61
Վորոնցով Մ. 13,45,46,48,52
Վորոնցովա-Դաշկովա Ե., կոմսուհի 99

Տ

Տեր Աբրահամ 38
Տեր-Աբրահամյանց Գևորգ 16
Տեր-Ալեքսանդրյանց Ե. 18
Տեր-Ասատրյանց Գաբրիել 16
Տեր-Ասատուրով 7, 9
Տեր-Գրիգոր 38
Տեր-Գրիգորյանց Մ. 26,45,46,105
Տեր-Հովհաննիսյանց Հովսեփ 13
Տեր-Ղազարյանց Հ. 15
Տեր-Ղազարով 7
Տեր-Ղուկասեան Արշակ գեն. 88
Տեր-Մելքիսեթյանց Ս. 15
Տեր-Մինասյանց Ղ. 24
Տեր-Միքելյանց Ի. 19,20,22,23
Տեր-Միքելյանց Գ., ճարտ. 50,104
Տեր-Միքելով Գաբրիել, տե՛ս Տեր-Միքելյանց Գ., ճարտ.
Տեր-Նիկողոսյանց Հովհաննես 16
Տեր Շմավոն Տեր-Իսաև 7
Տեր-Պողոսով 7
Տերջանյանց Հաջի-Մերոբ 16
Տեր-Սահակյան ճարտ. 100
Տեր-Սարգսյանց Ն. 19,20
Տեր-Ստեփանյանց Ի. 20,22,23,24
Տեր-Ստեփանյանց Հ. 17
Տեր-Ստեփանյանց Ս. 23
Տերունյանց Ե. 19
Տիգրանյանց Հ. 20
Տիխեև Ի. 92
Տյուրյան Կ. 20
Տվերդոխլեբովիչ Նիկոլայ 16
Տրետյակով Ա. 18,19
Տուգուրելով Միքայել 14

Ց

Ցերետելի, տե՛ս Ծերեթելի Գ.
Ցիտլին Փ. 17,18,19
Ցուգաղուզով 7
Ցուրինով Ն. 20

Ու

Ուստա Իասով 7

Փ

Փարունբեկյանց Սողոմոն 14
Փիթոյանց Եսայի 104
Փիթոյանց-Յաղույանց Ն. 20
Փիթոյանցներ 78
Փիթոև 7,73
Փիրով 7
Փորակով 7
Փրիդոնյանց 73
Փրիդոնյանց Գևորգ 53,60,105
Փրիդոնյանց Եղիա 15,26,60
Փրիդոնյանց Թովմա 13,105
Փրիդոնով 7
Փրիդոնով Եգոր, տե՛ս Փրիդոնյանց Եղիա
Փուղինյանց Եղիա 15,17
Փուղինյանց Իսահակ 13
Փուղինով 72
Փուղինով Ե., տե՛ս Փուղինյանց Եղիա
Փուղիև 7

Ք

Քայխոսրո 30
Քայխոսրո, Դ. Ղիփիանիի եղբայրը 70
Քանանյանց Գ. 23,24
Քափանակով 7
Քեթխուդյանց Թովմա 16
Քեղխուդյանց Մարիամ 72
Քեթխուդով 7
Քեփինով 7
Քիշմիշև 7
Քոչարյանց Մ. 17,18,19
Քուրդ ամիրա 6,27,28,104,106

Օ

Օզերով Ա. 18,19
Օկոև 7
Օհաներով Գաբրիել 7
Օհաջանյան ճարտ. 100
Օնիկով Ա. 15
Օպոչինին 22
Օտյանց Գ. 24
Օտտեն Ֆ. 86
Օրբելիանի Գրիգոլ 58
Օրբելիանի Պապունա 36
Օրբելյան վրաց իշխաններ 27,28
Օրլովսկի, գավառապետ 84

Ֆ

Ֆեոդորով Միխայիլ 15
Ֆլավիան վրաց պատրիարք 90
Ֆյոդորով Միխայիլ 14
Ֆրանց-Նիկոլաուս-Ֆինկ, հայագետ 59

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաշի 70
Աբաս-Աբադյան հրապարակ 54,63
Աբասաբատ, տե՛ս Աբաս-Աբադյան հրապարակ
Ալավերդի, տաճար Կախեթում 71
Ալեքսանդրովյան հրապարակ 48,50
Ալեքսանդրովյան փողոց 92
Ախալցխա 103
Ախալցխայի գավառ 92
Ախալքալաքի գավառ 92
Անդրկովկաս 64,70,91,96
Անի 27,98
Աստրախան 50,79,103
Ավճալա 86
Արհեստավորաց ուսումնարան 74
Արմավիր 103
Արտիստիկ ընկերություն 101,104
ղԱրսենալ փողոց 72
Արցախ 72
Արևմտյան Վրաստան 70

Բ

Բազել 61
Բաթում 86,93
Բաքու 64,92,93,94,99,103
Բեբուտովսկի փողոց 102
Բեթղեհեմի Սբ. Աստվածածին եկեղեցի 46
Բերլին 98
Բերդ (քաղաքամաս) 9
Բոժե-Պրոմիսլե 51
Բոլշոյ-Վոդովոզնի փողոց 78,91
Բորժոմի կիրճ 70
Բորչալու 92
Բրիտանական թանգարան 84

Գ

Գայանյան օրիորդաց ուսումնարան 67,89
Գանովսկայա փողոց 91,102
Գանձու դուռ 8
Գյուլիստան գավառ 72
Գոլիցին 96
Գոլովինսկի պողոտա 83
Գոլտատի 73
Գորի 71,103
Գրաֆսկու փողոց, Թիֆլիսում 71
Գրեմ 103
Գուդովիչի փողոց 100
Գևրգեան ճեմարան 79

Դ

Դաղի վանք 28
Դաճուբ 63
Դեղոմի դուռ 9
Դիդուբե թաղի վրաց եկեղեցի 106
Դիլիջան 57
Դորպատ 61
Դունայ, տե՛ս Դաճուբ
Դուշեթ 103
Դուռնուկ 60

Ե

Ելիզավետսկայա 98
Եվրոպա 11
Երևան 57,63,83
Երևանյան հրապարակ 58,87
Երևանու դուռ, Թիֆլիսում 8

Զ

Զալեսնոյե գյուղ 63
Զաքաթալա 103
Զրկինյանց Սբ. Կարապետ եկեղեցի 81

Է

Էրզրում, տե՛ս Կարին 27
Էրիվանցովի փողոց 69

Թ

Թավրիզ 33,56,103
Թբիլիսի հյուրանոց, տե՛ս Մաժեստիկ հյուրանոց
Թելավ 103
Թիոդուպոլիս, տե՛ս Կարին 27
Թիֆլիս գրեթե բոլոր էջերը
Թուրքիա 6
Թուրքմենչայ 63

Ի

Իզմայիլ բերդաքաղաք 83
Իտալիա 102

Լ

Լայպցիգ 56
Լերմոնտովի փողոց, Թիֆլիսում 54
Լվով 103

Խ

Խոջիվանք 36,37,58,91,103,104,106

Ծ

Ծաուկիսու դուռ 9
Ծիրանավոր Սբ. Աստվածածին, տե՛ս Խոջիվանք 31,37

Կ

Կախեթ 95
Կարին 27,89,104
Կարս 33,36
Կիրպիչնոյ փողոց 87
Կոմենդատսկու փողոց 72
Կոստանդնուպոլիս 103
Կովկաս 12,63,64,70,78,79,83,86,91-93,102
Կովկասյան թանգարան 57
Կովկասյան համալսարան 99,100
Կովկասյան լեռներ 11
Կուկիա թաղամաս 72
Կ.Պոլիս 51
Կուսանաց վանք Թիֆլիսում 34,36

Հ

Հալվաբարու դուռ 9
Հալուաբար, տե՛ս Հավլաբար
Հաղպատի վանք 28,104
Համադան 63
Հայաստան 14
Հայաստանի Հանրապետություն 101
Հավլաբար 37,58,98
Հերակլի բաղնիք 91
Հնդկաստան 67
Հովնանյան ուսումնարան 68

Ղ

Ղարաչինար գյուղ 72
Ղզլար 103
Ղրիմ 65,71,103
Ղուկասյան թանգարան 91

Ճ

Ճիպինենց քարավանսարա 9

Մ

Մաժեստիկ հյուրանոց 103
Մահկանաբերդ 6,28
Մանջուրիա 78
Մարիամյան օրիորդաց ուսումնարան 67
Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտ 103
Մելիքենց բաղնիք 8
Մեծ Էնագեթ 73
Մեծ-Ծուռ փողոց, Թիֆլիսում 54
Մեյդանի Սբ. Գևորգ եկեղեցի 39
Մետեխ 9
Մերեթ գյուղ 70
Միջին Ասիա 78
Միքայելյան արհեստավորաց դպրոց 68,69

Մնացականովի կամուրջ 74
Մոզդոկ 54,103
Մոսկվա 65,67,73,91,98
Մորո-Ջորո վանք 28
Մցխեթ 51
Մուխրանյան կամուրջ 98,99
Մուղնու առաջին փակուղի 54

Ն

Նագորնայա փողոց 69
Նախիջևան Հին 55,57
Նավթլուղ թաղամաս 76
Ներսիսյան դպրոց 64,67,89,98
Նիկոլաևսկի փողոց 94
Նովայա փակուղի 87
Նովայա Բասմաննայա, փողոց՝
Մոսկվայում 67
Նովորոսիյսկ 86
Նորաշեն Սբ. Աստվածածին եկեղեցի 38,54
Նոր Գետիկ (Գոշավանք) վանք 28
Նոր-Նախիջևան 103
Նոր-Ջուղա 103

Շ

Շամախի 50,103
Շաքի 103
Շիրվան 64
Շորագալ 60
Շորապանի գավառ 73
Շուլավեր 88
Շուշի

Չ

Չայլուր գյուղ 95

Պ 61
Պատմական Հայաստան 103
Պարսկաստան 6,56,63,64
Պետերբուրգ 50,51,61,63,65,83,86,89, 95,98, 99,100
Պեր Լաշեզ գերեզմանատուն 101,106
Պյատիգորսկ 95,106
Պոլիտեխնիկում, տե՛ս Կովկասյան համալսարան

Ջ

Ջգրաշեն եկեղեցի 9,73
Ջուղա 57

Ռ

Ռուսաստան 7,18,21,25,42,43,50, 64,78,88
Ռուսթավելու անվ. դրամատիկական թատրոն 104

Ս

Սադովայա փողոց 83
Սալիան 50,52
Սանահին 83
Սանահինի Սբ. Ամենափրկիչ եկեղեցի 28,106
Սանասարյան վարժարան 89
Սապյորնայա փողոց 78,91
Սարդարապատ 63
Սբ. Բեթղեհեմ եկեղեցի 105
Սբ. Աստուածածին եկեղեցի Կարինում 27,104
Սբ. Դավիթ վրաց եկեղեցի 71
Սբ. Էջմիածին 31,32,51,60,61,79
Սբ. Խաչ(Մաջառ) 103
Սբ. Կարապետ եկեղեցի 69
Սբ. Նշան եկեղեցի Թիֆլիսում 32,33
Սբ. Նշան եկեղեցի, Ղարաչինար գյուղում 72
Սբ. Սիոն վրաց մայր եկեղեցի 66
Սբ. Ստեփանոս եկեղեցի 34
Սեյդաբադ 9
Սերգեևյան փողոց 53,83
Սիբիր 58,78,95
Սիւնիք 25
Սղնախ 103
Սոլոլակ թաղամաս 53
Սորբոնի համալսարան 84
Սվյատոպոլսկ-Միրսկայա փողոց 98
Ստավրոպոլ 53,71
Սևանա կղզի 28

Վ

Վան 63
Վանքի ավագ եկեղեցի 79,80,83, 87,106
Վասպուրական 63
Վարագ վանք 51,66
Վելիամինովսկայա (հետագայում՝ Չնելաձե) փողոց 54
Վերա 52,67
Վերայի կամուրջ 74,87
Վողովոզնայա փողոց 91
Վոլոգդա 70
Վրաստան 6,14,21,29,33,37,39,41,42, 43,70,79,102,103

Տ

Տաճկաստան 79
Տյուբինգեն 58
Տրապիզոն 102
Տփղիս, տե՛ս Թիֆլիս

Փ

Փարիզ 79,83,84,98
Փոթի 53

Ք

Քարթլի 31,83,95
Քվիշխեթի գյուղ 70,71
Քութայիսի 73
Քութայիսի նահանգ 71,73

Օ

Օլգինսկայա փողոց 100
Օռլով 63
Օրթաճալա 58
Օքսֆորդի համալսարան 61
Օքրողանա 36

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ, ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ, ՄԱՄՈՒԼԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀՀՊՊԿԱ, ֆ. 332, ց. 1, գ. 102:
ՎՀՊՊԿԱ. ֆ. 192, ց. 8ա, գ. 3278:
ՎՀՊՊԿԱ, ֆ. 213, ց. 1, գ. 2001:
ՎՀՊՊԿԱ, ֆ. 214, ց. 1, գ. 3413:

Մատենադարան, ձեռ. N 2803, թ. 193ա: N 3045: N 8810:

Աբրահամ Կրետացի, Պատմություն, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, 1973:
Աղաբեկեան Մ., Հայկական թատրոնի անցեալը, «Փորձ», 1879, N 10:
Ամառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատոր Ե, Երևան, 1962:
Ավագյան Ս., Վիմագրական պրպտումներ, Երևան, 1986:
Ավչյան Ս., Գրական ակնարկներ, Թբիլիսի, 1978:
Արասխանեանց Ա., Քաղաքային ընտրութիւնների առիթով, «Մուրճ», 1897, N 1, N 5:
Արշարունի Ա., Մոսկվայի համալսարանը ու հայ առաջավոր ինտելիգենցիան, Երևան, 1955:
Բզնունի Դ., Գրիգոր Ավետյան,, Երևան, 1963:
Գեղամեանց Եղիշէ ա. ք., Պատմական քաղուածներ, «Հովիտ», 1910, N 8, N 12:
Գրիգորեան Զաք., Յիշողութիւններ. Հայոց թատրոն Թիֆլիսում 1859-60 թթ., «Հովիւ», 1909, N 46:
«Դիւան Հայոց պատմութեան», գիրք Գ, Սիմէոն Կաթողիկոսի յիշատակարանը, հրատ. **Աղանեանց Գիւտ քահանայ**, Թիֆլիս, 1894:
«Դիւան Հայոց Պատմութեան», գիրք Դ, Ղուկաս կաթողիկոս, հրատ. **Աղանեանց Գիւտ քահանայ**, Թիֆլիս, 1899:
«Դիւան Հայոց Պատմութեան», գիրք Զ, Դաւիթ կաթուղիկոս, մասն առաջին, 1801-2, հրատ, **Աղանեանց Գիւտ քահանայ**, Թիֆլիս, 1904:
«Դիւան Հայոց Պատմութեան», գիրք Ը, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, 1767-1776, հրատ. **Աղանեանց Գիւտ քահանայ**, Թիֆլիս, 1908:
«Դիւան Հայոց Պատմութեան», գիրք Թ, Հովսեփ կաթողիկոս Արղութեան, մասն առաջին, 1778-1800, հրատ. **Աղանեանց Գիւտ քահանայ**, Թիֆլիս, 1911:
«Դիւան Հայոց Պատմութեան», գիրք ԺԱ, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, մասն III, 1777-79, հրատ, **Աղանեանց Գիւտ քահանայ.**, Թիֆլիս, 1913:
«Դիվան Հայոց Պատմութեան. Ղուկաս Կարնեցի», նոր շարք, հատոր Ա, աշխատասիրությամբ **Վարդան Գրիգորյանի**, Երևան, 1984:
«Դիվան Հայ Վիմագրության», պրակ 6, Երևան, 1977:
Երեմեան Ա., Ռուսահայ թատրոնի պատմութիւնը (սկզբից մինչև 70-ական թականը), «Բազմավէպ», 1933:
Երեմեան Ա., Ռուսահայ թատրոնի պատմութիւնը, «Բազմավէպ», 1934, N 9-10:
Երեմեան Ա., Ռուսահայ թատրոնի պատմութիւնը, «Բազմավէպ», 1935:
Երիցեանց Աղ., Գրիգոր Արծումու և նրա քսանը հինգ տարւայ գրական գործունեութեան առիթով (1865-1890), Թիֆլիս, 1890:
Երիցեանց Աղէքսանդր Դ., Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի որ ի Թիֆլիզ, հ. Ա, Թիֆլիս, 1898:
Երիցեանց Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX – րորդ դարում, մասն Բ, Թիֆլիզ, 1895:
«Երեւակ», հանդէս ութօրեայ, 1866, N 134:
«Ե-ԺԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1988:
Զարյան Ռ., Մի նորահայտ պիեսի մասին, «Սովետական գրականություն և արվեստ», 1952, N 5:
Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938:
Զաքարեայ սարկավագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870:
«ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հատոր Բ, Երևան, 1978:
Լեո, Երկերի ժողովածու, չորրորդ հատոր, Երևան, 1984:
Լէօ, Գրիգոր Արծրունի, հատոր 1, Թիֆլիս, 1902,
Լէօ, Գրիգոր Արծրունի, Թիֆլիս, հատոր 2, 1902-3:
Լէօ, Գրիգոր Արծրունի, հատոր 3, Թիֆլիս, 1905:
«Կալվածագրեր», կազմեց՝ **Աբրահամյան Հ.**, Երևան, 1941:
Խասապետյան Ռ., Ով է Գրիգոր Եվանգուլովը. սպասում ենք արձագանքի, «Երկիր» օրաթերթ, 1991, N 47:
Խատիսեան Ալ., Անիում (Ճամբորդական յուշեր), «Գեղարուեստ», 1909, N 3, էջ 145-148:
Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, N 5:
Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, N 1:
Խատիսեան Ալ. Քաղաքապետի մը յիշատակները, «Հայրենիք», 1932, NN 7-12, 1933, NN 1-5: Առանձին գրքով՝ Պէյրութ, 1991: Նաև՝ «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» աշխատությունը (Աթէնք, 1933 և Պէյրութ, 1968):
Խուցեան Խորեն քհն., Թիֆլիսի Ս. Ստեփանոս Կուսանաց անապատի պատմութիւնը, Թիֆլիս, 1914:
Կարապետեան Սամուէլ, Թբիլիսեան ողբերգութիւնը եւ աւերուած ճարտարապետական կառոյցները, «Ազատամարտ», 1992, N 9:
Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Աղրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999:
Կարապետյան Ս., Հայերը և Մցխեթի տաճարը, «Հայոց Աշխարհ», 1999, N 101:
Կ. ԹԷմ., Քաղաքագլխի ընտրութեան առիթով, «Հովիւ», 1907, N 40:
Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա., Երևան, 1932:
Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Զ, Երևան, 1934:
Հայ պարբերական մամուլը. մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ **Քաբլոյան Մ. Ա.**, Երևան, 1986:
Հայապատում. պատմիչք եւ պատմութիւնք Հայոց յօրինեալ եւ հաւաքեալ ի **Հ. Ղեւոնդեաց Վ. Մ. Ալիշան**, Վենետիկ, Ս. Ղազար, 1901:
«Հայերեն արձանագրությամբ առարկաներ», աշխատասիրությամբ **Եվգինե Մուշեղյանի**, Երևան, 1964:
Հարությունյան Ս., Սիհրիդատ Ամերիկյան, Երևան, 1959:
Հովհաննիսյան Ա., Գ. Ախվերդյան և Գ. Շերմազանյանի նամակափոխանակությունը Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների մասին, «ՊԲՀ», 1963, N 2:
Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, Բ, Երևան, 1987:
Ղաֆադարյան Կ., Հաղբատ, Երևան, 1963:
Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957:

Ճեմճեմեան Հ. Սահակ, Նամականի Պօղոս Արապեան տպագրիչի, «Բազմավէպ», 1982:
Մանուկյան Ս., Պռոշյան Պ., Երևան, 1964:
Մարգարյան Հ., Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երեվան, 1980:
Մարգարյան Հ., Մահկանաբերդցիների (Սադունեաննե-րի) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հատոր ԺԸ, Պէյրութ, 1998:
Մելիքսեթ-Բեկ Լ., Համքարների ելույթը Թբիլիսում 1865 թվականին, Գ. Սունդուկյանը և հայ մտավորականները, «Խորհրդային Վրաստան», 1938, N 19, 3 սեպտեմբեր:
Մելիքսեթ-բեկ Լ.Մ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936:
Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955:
Մարտիրոսյան Վ., Վրաց իրավունքի հուշարձանները վիրահայության մասին, «ԼՀԳ», 1991, N 5:
Մարտիրոսեան Վ., Հայերը Վրաստանի առեւտրատնտեսական կեանքում, «Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան», Երևան, 1996:
Միրաղեան Գ., Վրաց թատրոնի անցեալը եւ ներկան, «Գեղարվեստ», 1909, N 3:
Մնացականյան Աս., Հայտնաբերված է Գ. Շերմազանյանի, Խ. Աբովյանի դասընկերոջ, կոմեդիայի երկու ձեռագիր, «Գրական թերթ», 1948, N 37:
Նիկոլաշվիլի Ն., Հայ և վրաց գրական գործիչների բարեկամության պատմությունից, «Սովետական Վրաստան», 1957, N 8:
Նիկողոսեան Գ., Կտակներ քաղաքներին և ուտիացու բողոքը, «Հովիւ», 1909, N 3:
Շահնազարյան Ա., Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990:
Շահումյան Ստ., Երկեր, հ. 2, Երևան, 1957:
Շերմազանեանց Գ., Կենսագրութիւն Սահակ եպիսկոպոսի Սադունեանց, «Մասիս», 1875, N 1759:
Շերմազանեանց Գ., Մի քանի խօսք Ֆաթ-Ալի շահի վերայ եւ ցուցակ նրա որդիների, դուստրների և թէ նրանք եր՞ք, ինչ՞ մօրէ են ծնած, ու՞մ հետ են ամուսնացած և նրանցից ոմանք ինչ՞ ձիրքեր և տիտղոսներ են ունեցած, նույնպէս նրա կանանց ինչ ցեղէ, ինչ՞ ազգէ լինելն և ինչ՞ ձիրքեր կամ տիտղոսներ են ունեցել, «Արարատ», 1876, էջ 132-139, 182-188, 214-219, 251-257, 301-305:
Շերմազանեանց Գ., Ճանապարհորդութիւն Հայաստանումը: Գ. Շ-ի յիշատակարանից հանած: 1842 թիւ 12 օգոստ. Մաղարթա Նախավկա վանքումը, «Արարատ», 1877, էջ 17-27, 57-67, 92-102, 134-148, 179-185, 208-221, 254-262, 293-308, 331-336, 370-383, 405-419, 447-460, 1878, 17-29, 46-53:
Շերմազանեանց Գ., «Անեկդոտներ, զվարճալի զրոյցներ, համառոտ դէպքեր և առակներ մեծ մասամբ ազգային կեանքից առած», ժողովածու, Թիֆլիս, 1878:
Չմշկեան Մակ., Թիֆլիզը 1865 թ. եւ Կռոյի տղա Մինասը, «Հովիտ», 1915, N 25:
Պռոշեանց Պ., Հայոց թատրոնի սկզբնաւորութիւնը Թիֆլիսում, «Թատրոն», N 1, Թիֆլիս, 1893:
Պ. Տ., Թիֆլիս կէս դար առաջ եւ այժմ, «Մասիս», 1886:
Սարգսեան Լ., Ներքին տեսութիւն, «Մուրճ», 1901, N 4:
Միւլիւկ, Ճանապարհորդութեան տպաւորութիւններ, «Փորձ», 1879, N 10:
Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հատոր Բ., Երևան, 1981, էջ 9:
Ստորագրութիւն Թիֆլիզոյ, «Գարուն», 1866, N 1, 2, 4:
Վահան Հ. Յովհաննիսեան, Ինչպէս տեսայ Հայաստանը, «Բազմավէպ», 1961:
«Վրաց ժամանակագրություն», թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները **Պարույր Մուրադյանի**, Երևան, 1971:
«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Գ, Երևան, 1955:
«Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները», Երևան, 1998:
Տէր-Աստվածատրեանց Հ., Բառարան հայ կենսագրութեանց 1441-1904, Ա, Թիֆլիս, 1904:
Տիւրեան Կ., Շաբաթ մի՛ Տփղիս (ուղևորի յիշատակարանէն), «Հանդես Ամսօրեայ», 1890:
Քիշմիշեան Ալ., Հայոց թատրոնը Մոսկուայում 1858-68 թթ., «Տարազ», 1908, N 2:

«Արձագանք», 1884, N 40:
«Արարատ», 1889, յուլիս:
«Արարատ», 1909:
«Արձագանք», 1891, N 12, N 41:
«Արձագանք», 1892, N 15:
«Արևելք», 1891, N 2352:
«Բազմավէպ», 1847:
«Բազմավէպ», 1920, N 9:
«Բազմավէպ», 1934, N 4:
«Բիւզանդիոն», 1901, մայիս 16, N 1406:
«Գիտական նյութերի ժողովածու», 1950, N 2:
«Լումայ», 1901, գիրք Ա, Բ:
«Լումայ», 1902, N 5:
«Լումայ», 1904, N 4:
«Կովկաս», 1846, N 19:
«Կովկաս», 1847, N 24, 25, 27, 28:
«Կռունկ Հայոց Աշխարհի», 1861, N 4, 6:
«Կռունկ Հայոց Աշխարհի», 1862, N 1, 1863, N 2:
«Համբաւաբեր», 1916, N 36:
«Համբաւաբեր», 1917, N 30:
«Հայկական Աշխարհ», 1866, N 8-9:
«Հայկական Աշխարհ», 1867, N 1:
«Հիւսիսափայլ», 1859, N 1:
«Հովիտ», 1914, N 18:
«Հովիտ», 1907, N 20:
«Հովիտ», 1907, N 23:
«Հովիտ», 1910, N 7, 14, 15, 19, 24, 29, 32:
«Հովիտ», 1911, N 12, 17:
«Հովիտ», 1912, N 5, 11, 20, 47, 50:
«Հովիտ», 1913, N 43, 44:
«Հովիտ», 1914, N 7:
«Հովիտ», 1916, N 8, 14, 21:
«Հովիւ», 1906, N 31:
«Հովիւ», 1906, N 33:
«Հովիւ», 1907, N 40, 41, 47:
«Հովիւ», 1909, N 1, 26, N 34, N 36, N 37, N 42, 46:
«Հովիւ», 1910, N 3, 12:
«Հորիզոն», 1912, N 5:
«Հորիզոն», 1917, N 31:
«Մասեաց Աղաւնի եւ Ծիածան Հայաստանեայց», 1860, Բ:
«Մարտակոչ», 1923, N 105:
«Մեղու Հայաստանի», 1861, N 40:
«Մեղու Հայաստանի», 1883, N 97:
«Մշակ», 1872, N 10:
«Մշակ», 1875, N 49:
«Մշակ», 1879, N 13:
«Մշակ», 1891, N 5:
«Մշակ», 1891, N 22:

«Մշակ», 1891, N 60:
«Մշակ», 1891, N 127:
«Մշակ», 1896, N 39:
«Մշակ», 1897, N 117:
«Մշակ», 1899, N 198:
«Մշակ», 1900, N 96:
«Մշակ», 1901, N 206:
«Մշակ», 1902, N 9:
«Մշակ», 1915, N 138:
«Մշակ», 1917, N 3:
«Մշակ», 1920, N 25:
«Մուրճ», 1890:
«Մուրճ», 1891:
«Մուրճ», 1892:
«Մուրճ», 1893:
«Մուրճ», 1895:
«Մուրճ», 1896, N 6:
«Մուրճ», 1897, N 1:
«Մուրճ», 1899, N 2-3, N 6:
«Մուրճ», 1901, N 9:
«Մուրճ», 1902, N 11:
«Նոր-Դար», 1891, N 29:
«Նոր-Դար», 1892, N 21:
«Նոր-Դար», 1893, N 181, N 182, N 185, N 197, N 218:
«Նոր-Դար», 1895, N 40, N 42, N 50:
«Նոր -Դար», 1896, N 59:
«Նոր-Դար», 1897, N 172:
«Նոր-Դար», 1898, N 25:
«Սովետական Գրականություն», 1956, N6 (164):
«Փորձ», 1879, N 10:
«Տարազ», 1899, N 1,2, 11, 14, 21, 23, 25, 48:
«Տարազ», 1901, N 36:
«Տարազ», 1902, N 2, 48:
«Տարազ», 1904, N 24:
«Տարազ», 1905, N 5, 28, 34:
«Տարազ», 1912, N 11:
«Տարազ», 1916, N 8-10:
«Տարազ», 1919, N 7:
«Ֆրանսահայ տարեգիրք. 1927», Ք տպի, Փարիզ, 1927:

“Акты, собранные Кавказскою Археографическою коммиссиею”, том I, Тифлис, 1866.
“Акты, собранные Кавказскою Археографическою коммиссиею”, том II, Тифлис.
“Акты, собранные Кавказскою Археографическою коммиссиею”, том VIII, Тифлис, 1881.
“Акты, собранные Кавказскою Археографическою коммиссиею”, том IX, Тифлис, 1884.
“Акты, собранные Кавказскою Археографическою коммиссиею”, том X, Тифлис, 1885.
“Акты, собранные Кавказскою Археографическою коммиссиею”, том XI, Тифлис, 1888.
“Акты, собранные Кавказскою Археографическою коммиссиею”, том XII, Тифлис, 1904.
“Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века”, сборник документов, том III, Ереван, 1978.
“Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800 гг.”, сборник документов, том IV, Ереван, 1990.
Абовян Х., Раны Армении, Ереван, 1977.
А. К., О чем говорит история, “Тифлисский листок”, 1910, N 187.
Аргутинский-Долгоруков А. М., Борчалинский уезд в экономическом и коммерческом отношениях, Тифлис, 1897.
Аргутинский А., Колонисты и туземцы Борчалинск. уезда. Очерки и наброски, “Новое обозрение”, 1895, N 3720, 3721, 3722.
Арцруни Е., Вопрос о железной дороге в Индию, “Сборник сведений о Кавказе”, том II, 1872.
Бакрадзе Д., **Берзенов Н.**, Тифлис в историческом и этнографическом отношениях, СПб., 1870.
“Братская помощь пострадавшим в Турции армянам”, 2-ое издание, Москва, 1898.
Вейденбаум Е., Путеводитель по Кавказу, Тифлис, 1888.
”Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии”, том 1 (с 1768 по 1774 г.), под редакцией **Цагарели А. А.**, СПБ., 1891.
Вермишев Х., К вопросу о крестьянском банке, “Новое обозрение”, 1887, N 1228, 1229, 1249.
Вермишев Х., Духоборы Ахалкалакского уезда, “Кавказ”, 1890, N 174, 175: **Вермишев Х.**, Еще об американской лозе (письмо из Вены), “Новое обозрение”, 1892, N 2792.
Вермишев Х., Свод статист. данных о землевладения в Тифлисск. и Кутаис. губ. изд. закавказск. стат. ком. под ред. члена комит. Е. И. Кондратенко, “Кавказ”, 1893, N 220.
Вермишев Х., Экспорт кукурузы в Кутаисской губ., “Новое обозрение”, 1896, N 4158, 4162:
Вермишев Х., Материалы для истории грузино-армянских отношений; ответ на книжку кн. И. Г. Чавчавадзе-Армянские ученые и “вопиющие камни”, СПб., 1904.
“Весь Тифлис” (Справочно-адресный альбом), Тифлис, 1906.
Гогебашвили Я., Правда о Тифлисе, Тифлис, 1897.
Дубровин Н., Ист. войны и владыч. русск. на Кавказе, том III.
Думин Станислав, **князь Чиковани Юрий**, Князья Царства Грузинского, том IV, Москва, 1998.
Джабарь М., 35-летие Тифлисской гор. думы, “Тифлисский листок”, 1909, N 298
Ениколопов И., Первая перепись в Тифлисе, “Вечерний Тбилиси”, 1970, N 15.
“Вечерний Тбилиси”, 1958, N 135, 22 октября.
“Закавказье”, 1907, 14 июля.
“Закавказье”, 1911, N 68.
“Известия Тифлисской Городской думы”, 1909, N 8.
“Известия Тифлисской Городской думы”, 1910, N 7-8, 11.
“Известия Тифлисской Городской думы”, 1911, N 4, N 12.
“Известия Тифлисской Городской думы”, 1914, N 5-6.
“Известия Тифлисской Городской думы”, 1916, N 1-3.
"Известия Тифлисской Городской думы", 1919, N 9.
“Кавказ”, 1856, N 29, N 30, N 51.
“Кавказ”, 1857, N 12, N 17.
“Кавказ”, 1865, N 16.
”Кавказ”, 1889, N 190.
”Кавказ”, 1892, N 35.
“Кавказ”, 1895, N 64, N 74.
“Кавказ”, 1896, N 88, N 203.
“Кавказ”, 1903, N 246.

"Кавказ", 1909, N 135.
"Кавказ", 1914, N 31.
"Кавказ", 1916, N 265.
"Кавказский Календарь на 1846 г.", Тифлис, 1845.
"Кавказский Календарь на 1850 г.", Тифлис, 1849.
"Кавказский Календарь на 1851 г.", Тифлис, 1850.
"Кавказский Календарь на 1852 г.", Тифлис, 1851.
"Кавказский Календарь на 1853 г.", Тифлис, 1852.
"Кавказский Календарь на 1854 г.", Тифлис, 1853.
"Кавказский Календарь на 1855 г.", Тифлис, 1854.
"Кавказский Календарь на 1856 г.", Тифлис, 1855.
"Кавказский Календарь на 1857 г.", Тифлис, 1856.
"Кавказский Календарь на 1858 г.", Тифлис, 1857.
"Кавказский Календарь на 1859 г.", Тифлис, 1858.
"Кавказский Календарь на 1860 г.", Тифлис, 1859.
"Кавказский Календарь на 1861 г.", Тифлис, 1860.
"Кавказский Календарь на 1862 г.", Тифлис, 1861.
"Кавказский Календарь на 1863 г.", Тифлис, 1862.
"Кавказский Календарь на 1864 г.", Тифлис, 1863.
"Кавказский Календарь на 1865 г.", Тифлис, 1864.
"Кавказский Календарь на 1866 г.", Тифлис, 1865.
"Кавказский Календарь на 1867 г.", Тифлис, 1866.
"Кавказский Календарь на 1868 г.", Тифлис, 1867.
"Кавказский Календарь на 1870 г.", Тифлис, 1869.
"Кавказский Календарь на 1871 г.", Тифлис, 1870.
"Кавказский Календарь на 1872 г.", Тифлис, 1871.
"Кавказский Календарь на 1873 г.", Тифлис, 1872.
"Кавказский Календарь на 1874 г.", Тифлис, 1873.
"Кавказский Календарь на 1875 г.", Тифлис, 1874.
"Кавказский Календарь на 1876 г.", Тифлис, 1875.
"Кавказский Календарь на 1877 г.", Тифлис, 1876.
"Кавказский Календарь на 1878 г.", Тифлис, 1877.
"Кавказский Календарь на 1879 г.", Тифлис, 1878.
"Кавказский Календарь на 1880 г.", Тифлис, 1879.
"Кавказский Календарь на 1881 г.", Тифлис, 1880.
"Кавказский Календарь на 1882 г.", Тифлис, 1881.
"Кавказский Календарь на 1884 г.", Тифлис, 1883.
"Кавказский Календарь на 1885 г.", Тифлис, 1884.
"Кавказский Календарь на 1886 г.", Тифлис, 1885.
"Кавказский Календарь на 1887 г.", Тифлис, 1886.
"Кавказский Календарь на 1888 г.", Тифлис, 1887.
"Кавказский Календарь на 1892 г.", Тифлис, 1891.
"Кавказский Календарь на 1897 г.", Тифлис, 1896.
"Кавказский Календарь на 1898 г.", Тифлис, 1897.
"Кавказский Календарь на 1900 г.", Тифлис, 1899.
"Кавказский Календарь на 1901 г.", Тифлис, 1900.
"Кавказский Календарь на 1903 г.", Тифлис, 1902.
"Кавказский Календарь на 1904 г.", Тифлис, 1903.
"Кавказский Календарь на 1905 г.", Тифлис, 1904.
"Кавказский Календарь на 1906 г.", Тифлис, 1905.
"Кавказский Календарь на 1907 г.", Тифлис, 1906.
"Кавказский Календарь на 1908 г.", Тифлис, 1907.
"Кавказский Календарь на 1909 г.", Тифлис, 1908.
"Кавказский Календарь на 1910 г.", Тифлис, 1909.
"Кавказский Календарь на 1913 г.", Тифлис, 1912.
"Кавказский Календарь на 1915 г.", Тифлис, 1914.
"Кавказский Календарь на 1916 г.", Тифлис, 1915.
"Кавказский Календарь на 1917 г.", Тифлис, 1916.
"Кавказское Слово", 1914, N 71.
"Каспий", 1898, N 35.
Кобяков Ю., К истории Тифлисскаго Городского Самоуправления. Михайловское Ремесленное училище, "Известия Тифлисской Городской думы", Тифлис, 1914, N 5-6.
М-ч. А., Новый городской голова города Тифлиса, "Новое обозрение", 1904, N 24.
Мурадян П. М., Армянская эпиграфика Грузии. Тбилиси, Ереван, 1988.
"Нива", 1895, N 13.
"Новое обозрение", 1884, 14.03.
"Новое обозрение", 1891, N 2425, 2427.
"Новое обозрение", 1895, N 57, N 3842, N 3843.
"Новое обозрение", 1901, N 5822.
"Новое обозрение", 1904, N 24.
"Новости", 1904, N 305.
"Словарь кавказских деятелей", 1890.
"Современная жизнь", 1911, N 2, 3.
"Тифлисские Амкары, из записок **Юрия Федоровича Ахвердова**", Тифлис, 1883.
"Тифлисский листок", 1887, N 238.
"Тифлисский листок", 1893, N 254.
"Тифлисский листок", 1895, N 54, 55, 56, 57, 58, 62, 97, 294.
"Тифлисский листок", 1896, N 49.
"Тифлисский листок", 1902, N 9, 12.
"Тифлисский листок", 1904, N 291.
"Тифлисский листок", 1906, N 38.
"Тифлисский листок", 1909, N 220, 245, 298.
"Тифлисский листок", 1910, N 184.
"Тифлисский листок", 1912, N 208, 292.
"Тифлисские объявления", 1880, N 124.
Туманов Г. М., Заметки о городском самоуправлении на Кавказе, Тифлис, 1902.
Туманов Г. М., Характеристики и воспоминания, книга вторая, Тифлис, 1905.
Туманов Г. М., Характеристики и воспоминания, книга первая, Тифлис, 1913.
Чавчавадзе И. Г., Армянские ученые и "Вопиющие камни", Тифлис, 1902.
Чхетия Ш., Армяне в Тбилиси в шестидесятых годах XIX века, "ИФЖ', Ереван, 1958, N 3.
Чрелаев С., Тифлис в XIX столетии, "Тифлисский листок", 1901, N 291.
Хаханов А. С., Два эскиза из культурной жизни грузин, СПб, 1905.
Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898.

ჯინჭარაძე გიორგი, რამ დაბვამხო ქართველობა?, "შანსი", 2000, N 1.
ამირანაშვილი ჯემალ, მრავლისმეფელი საარქივო ცნობა, "ასავალ დასავალი", 2000, N 36.
დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XIX სს.), წიგნი პირველი, შეადგინეს: **ნიკო ბერძენიშვილმა** და **მამისა ბერძენიშვილმა**, თბილისი, 1962.
"ასავალ დასავალი", 2001, N 10, 5-11 მარტი.
«კვალი», 1895, N 12.
«მოგზაური», 1999, N 2.

ԳՈՒՆԱՎՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Թիֆլիս. Բերդի թաղ, նկ. XX դ. սկիզբ:
2. Քաղաքային խորհրդի (դուման) շենքը (նկ. Ս. Դարչինյանի):
3. Սբ. Նշան եկեղեցի:

4-5. Սբ. Նշան եկեղեցին 2002 թ. հոկտեմբերի 20-ի հրդեհից հետո: Բակում գտնվում էր Աբիսողոմյանց տոհմի գերեզմանոցը:

6. Սբ. Կարապետ եկեղեցին նախքան վրացականացումը: Բակում թաղված է եղել քաղաքագլուխ Յ. Թումանյանցը:
7. Սբ. Բեթղեհեմ եկեղեցին մինչև վրացականացումը: Բակում թաղված է եղել Մ. Տեր-Գրիգորովը:
8. Կուսանաց Սբ. Ստեփանոս եկեղեցին կառուցված և ձորոգված Թիֆլիսի Բեհբուդյան մելիքների ջանքերով:
9. Վերայի Սբ. Խաչ եկեղեցին, որի բակում թաղված է եղել քաղաքագլուխ Ե. Արծրունին:
10. Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցին, որի բակում թաղված է եղել քաղաքագլուխ Եղիա Փրիդոնյանցը:

11-12. 1991-1992 թթ. ոչնչացված հայաշեն կառույցները Ռուսթավելու (նախկին Գոլովինսկի)պողոտայի վրա (նկ. Ս. Դարչինյանի):

13-15. Արամյանցի տունը՝ հրդեհի զոհ դարձած, 1991թ. դեկտեմբերի 22-ից մինչև 1992 թ. հունվարի 6-ը տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում (նկ. Ս. Դարչինյանի):

1

2

3



4

5

8



9

11

12

13

14

15

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

RAA ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

ԳԻՏ. ԽՄԲԱԳԻՐ **ԴԵՐԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ**
ՍՐԲԱԳՐԻՉ **ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՋԵՎԱՎՈՐՈՂ **ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**
ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՄԱՐԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ **30 ԱՊՐԻԼ 2003**
ՏՊԱՔԱՆԱԿ **500**
ՏՊԱԳՐՎԱԾ Է **PHOTOGRAVURE ZAVEN & FILS** (ԲԵՅՐՈՒԹ)

ԵՐԵՎԱՆ 2003